



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltn  
✓ S18



m.

# ԵՒՍԻԶԵՐԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻԳ

## ԹԱՐԳՄԱՆԵԱԼ



## ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ

# Ա . Ն . Յ Ա Հ Ա Ր Ե Ա Խ Ո Վ Ա Յ

# Ի ԽԱՍԳԻՒՂ Կ ՊՈԼԱՅՑ

1870

17



4518-60

28. 5. 93

## ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

Յ Ռ

Մեր ժամանակակից երիտասարդութիւնն երբ կը տեսնէ Եվրոպաց մյա աշարկու սրճաններն որք տասն և հինգ սարիներէ ի վեր նախնի Հիսուսութիւնին (Ար-Ալյուանի) մէջ ի տես դրուած են, կը զարմանայ անտարակոյս նոցա տարօրինակ զգեստուց, անհեթեթ ասրզներուն, խոժոռ և հսկայական դիմաց նկարագրոյն վրայ, և թերևս զանոնք բանաստեղծական երևակայութեան արարածներ կը կարծէ, իրեն անհաւատալի գալով թէ հաղիւ քառասուն երկու տարիներէ յառաջ կ. Պօլոյ մէջ նոցա նախատիպը կ'ասլրէին և կը շարժէին իրենց բոլոր կատաղութեամբն, որոց վոյրի հայեցուածոյն և առ ձեռն ունեցած եարադանին առջև կը դողային չէ թէ միայն դժբաղդ դայեաներն, այլ նոյն իսկ վեհապետն, ասոնք միանգամայն ծառաները (գուղարը) կը գոչէին ռիրենք: Մայրաբաղաքիս այս ինքնակոչ ախոյանները մէկ կողմէն կը կողոպտէին անխղճաբար զրայեաս և միւս կողմէն նոցա բընական պաշտուան կը հոչակէին զիրենք: Որդային գորդըն (իտալին) ամէն նշանաւոր տօնի օրեր կը փը.

ուեր բերդաղրանց և բաղմամարդ սլողոտոյներուն  
մէջ ստակ հաւքելու դիտմամբ :

Եթէ րայևան հանգիստ օր անցընել ուզեր , կը  
սլարտէր կաշառել Նենիչէրիս թէ իր և թէ ա-  
նոնց տօնի օրերը : Ենիչէրեաց զօրանոցներունառ.  
ջեւն ո՛չ կին , ո՛չ երիտասարդ և ո՛չ մաքուր հագ-  
ուած մարդ կը համարձակէր անցնել առանց քսա-  
կը լի ունենալու : Ասոնք և ասոնցմէ բիւրիցո  
բարբարոսական բաներ կը գործուէին երեք հարիւր  
եօթանասուն և երեք տարիներ շարունակ նոյն խոկ  
կառավարութեան առջև Ենիչէրիներէն՝ որոնց  
ջնջմանն համար միայն քանի վայրկեան բաւեցան , և  
միայն մէկ կամքով մը՝ ուժգին հողմոյ առջև զըտ-  
նուած յարդի նման ցիր ու ցան եղան , իրենց ե-  
տել թողլով զզուելի՛ յիշատակ և անա՛րդ անուն «  
Սակայն այն երկաթեայ և անիտիոխո կամքը , որ  
ծնունդ առաւ արքայական դիակի մ'առջե , տասն  
և իննամետայ միջոցի մէջ կրցաւ ուժ ստանալ , և  
ինչողէս տասն և երեք դար յաստջ ալ Սեծն  
Յուստիանոս Պրասինոսներն ու Վեևտացիները ջըն-  
ջելու համար Հիսկալոտրօմի հրապարակին մէջ երե-  
ստն հազար դիակներ փոեց՝ դիէլիսսար գործակից  
ունելով , նոյնակու և փառահեղ և յաւերժայիշա-  
տակ Սուլթան Մահմուտ իւր գահոցիցը սլահօլանու-  
թեանն ու հարստակայն անգորդութեանն համար  
Ենիչէրեաց Ոճագին կործանումը հոչակեց՝ անվե-  
հեր գործակցութեամբ Հիւուին Փաշոյին և իւր

# ԵԿՆԻՉԵՐԻՔ

Ա.

ԹԱԴԱՒՈՐԱԿԱՆ ԳԼՈՐԳ ԱՆԱԻՆ ՆԱԽԻՆ ՄԱԿԱԶԿԵ

ՊԻՇԱԴՐՈՒԹԵԱՆ արժանի և տարօրինակ  
տեսարան մը 1807 մարտ 1 ին կը ներկայանար ի  
Կոստանդնուպոլիս , ուր դեռ սուաջին անգամ տե-  
ղի կ'ունենար այսպիսի տեսարան մը այն օրէն ի  
վեր՝ յորում Մէհէմմէտ Բ. իւր առիւծային եղունգ-  
ներն՝ ըրած աշխարհակալութեանը վրայ դնելով՝  
Քրիստոնեայ աշխարհին առջև հոչակեց թէ Բիւ-  
զանդիոնի Սուսմալու կը յաջորդէ , խաչին՝ մահիկ ,  
և Կոստանդիանոսի սերունդին՝ Օսմանի սերունդը :  
Ինչպէս երբեմն Արևելեան կոյսրութիւնն՝ այնպէս  
աւ հիմայ Օսմանեան պետութիւնը՝ զեղիսութիւն-  
ներէ թուլացած՝ և անոր պէս թէ՝ անիշխանութենէ  
և թէ եղծումներէ տկարացած՝ և իւր անզօրու-  
թեան հիւանդութիւնն զգալու միջոցին յանկարծ  
արտօնացեալ գտնուեցաւ բուն իսկ իւր մայրաքա-

Ղաքին մէջ՝ այնպիսի հղոր թշնամիէ մը՝ որ աւելի փառասիրութեամբ իրեն դէմ կ'ելնէր՝ քան թէ թշնամութեամբ։ Անգղիացի նաւատորմիղը՝ Սըր Ճօհն Տիքուօրթըն ծովասլետին հրամանաց տակ՝ անանցանելի սեսլուած Հելեստոնտոն անցաւ, և բանադի ժովու (Քիլիտ-Խւլ-սլահը) սոսկալի անունը կրող բերդէն իրեն դէմ ուղղուած տկար թնդանօթներն արհամարհելով՝ Սուլթանաց գահոյիցն առջեւ Խանաց կղղիներուն մօտ՝ խարիսխ ձգեց։

Սուլթանի ալրային մէջ սարսափ մը տարածուեցաւ երբոր Բրիտանական դրօշակաց Պրոսլոնտիսէ մէջ ծածանիլը տեսնուեցաւ։ Քիչ մնաց որ կանանց ճիշն ու ներքինեաց հեծեծանքն համոզէին դՍուլթան Սէլիմ Գ. սուանց արիւն թափելու անձնատուր ըլլալ իւր թշնամեացը։ այլ այն ատենուան Գաղղիոյ դեսպանը՝ Սէսլասղիէն՝ դիտնալով որ Անգղիացիք լոկ վախցունելու համար եկած էին՝ և չէ թէ Յամանցւոց վնասելու՝ զամենքը քաջալերեց՝ և ժողովրդեան հայրենասիրութիւնը վառելով՝ Դրան սլաշտօնեսյրն ստիպեց կարեոր միջոցներ ձեռք առնել թշնամին վանելու համար։ Այս զօրապետն ու իր դեսպանատան սլաշտօնեայրն՝ այնչափ յաջողութեամբ գրգռեցին զՅամանցիս՝ և այնչափ լաւ կարգադրեցին տաճկական կառավարութեան գանձին ու նաւարանին մէջ գտնուած պատերազմական մթերքը՝ որ Անգղիական տորմղին Խանաց կղղիներն հանելէն երեք օր ետքը՝ Կոս-

աւանդնուալօլսոյ դիմադրելու յարմար ափունքներն հաղար երկու հարիւր թնդանօթներով ամրացան :

Արդարեւ հետաքրքրական բան մ'էր այն աղմուկն ու ջանքն՝ որ յաջորդեց դանդաղ լոռոթեան մը՝ յորում դարերէ ի վեր կը քնանար ամարն լուտամալու : Խոլամութեան այժմեան մայրաքաղաքն , որ այսպէս յանկարծակի պաշարուեցաւ թշնամիէն , խիստ շատ շփոթեցաւ՝ ինչպէս նաև Բիւզանդիոնը գրեթէ երեք հարիւր յիսուն տարի առաջ՝ երբ Թորքաց խուժանը Այիա-Վօֆիոյ գմբէթին վրայ մահիկը սրարդեց : Ճամկներու մէջ իմամները՝ և հասարակոց մունետիկներն հրապարակաց ու փողոցաց մէջ՝ արքունական Խաթթի-Շէրիֆին հրամանաւը՝ դէնքի կը կանչէին բոլոր հաւատարիմ Միւսլիմաններն՝ իրենց հայրենիքն ու կրօնքը պաշտօպանելու : Ասոնք ամեն կողմէ զանազան գէնքեր ի ձեռին կը դիմէին և կը հաւաքուէին ծովեղերեայ ամրութեանցը մէջ՝ զանոնք պաշտօպանելու և կատարելսգործելու համար . նաև Յոյն , Հայ և Հրէայ հալատակներն՝ իրենց եկեղեցական գլոխներէն առաջնորդեալ ու քաջողերեալ թնդանօթները կը քաշէին , կամ քար , տիղմ , խոխ . ու ճիւղ կը կրէին՝ ամրոցներ կանգնելու համար (1) : Կայսերական սէրային դռները բայց

(1) Հայոց Աստուածաբան Յովհաննէս Ս. Պատրիարքն՝ ինչպէս նաև Յունաց Գրիգորիոս Ս. Պատրիարքն իրենց եպիսկոպոսերով հանդերձ՝ բահ ՚ի ձեռին մարտկոցներուն մէջ բանեցան՝ Քրիստոնէից ոյտէս օրինակ տալով :

ուեցան և արքունական սլարտէզը զինուորներով ու քաղաքացիներով լեցուեցաւ, որոց հաստատ որոշմունքն էր մեռնիլ իրենց վեհապետին վերջին ապաստանարանին պատնէշներուն վրայ : Իսկ սպասոնեայք ու զօրասլետք իրենց գրասենեակներն ամրոցներու մէջ փոխադրեցին՝ և անտի հրամաններ կուտային :

**Անդղիացւոյ ի Կոստանդնուպօլիս ըրած արշաւանքին նպատակն էր Գաղղիական աղդեցութիւնը ջնջել Թուրքիոյ մէջէն՝ և Սուլթան Սէլիմը Նարօլէօն կայսեր դէմ հաստատուած Եւրոպական նիղակակցութեան միանալու ստիպել : Այս նիղակակցութիւնը թէև կը յիշէր՝ թէ Գուոը Գաղղիոյ նոր վեհասլետը չուղեց ճանչել նախ, և թէ՝ Կոստանդնուպօլիս խրկուած (հռչակաւոր) զօրասլետ Պրին՝ դատարկածեոն Բարիլ դարձաւ . այլ հիմայ կը տեսնէր որ 1804 էն իւլիս իրերն ուրիշ կերպարանք առին, և Աւսդէրլիսի մէջ Ռուսաց սլարտութիւնը (2 դեկտեմբեր 1805) անբացատրելի ուրախութեամբ լցուց Օսմանցւոց սիրտը : Սէսպասղիէն զօրասլետը Սուլթանին մտերիմն ըլլալով՝ թէ իւր ճարսիկութեամբն և թէ հաստատամութեամբն յաջողեցաւ նիղակակցութեան մեքենայութիւնքն ունայնացնել, և Գաղղիոյ օգտակարագոյն ըլլալ զբաղմունք մը տալով անոր՝ համողեց զՍէլիմ՝ որ Ռուսիոյ դէմ սրատերազմ հրատարակէ :**

Այն ատենները՝ Ռուսիա դաշնադրութիւններն

ոտնակոխ ընելով՝ ինքնակամ Վլահիոյ ու Մոլոտ-  
իոյ մէջ հաստատեց այն Հոսքօտարներն՝ <sup>(1)</sup> զորս  
մերժած էր Սուլթանն առաջուց . Անդղիա ալ  
զէնք առնելով՝ Ռուսիոյ պահանջմանցը նեցուկ եւ  
զած էր : Անդղիա՝ Նարօլէօնի ղէմ իւր ունեցած  
հակակրութենէն կուրացած՝ չի տեսաւ բուն իր օ-  
գուտը , և իւր այն ատենուան նիզակակցին հա-  
մար կը պահաջէր ընդլայնումն սահմանաց , պա-  
հանջմունք մը՝ որուն համար յետոյ շատ զղջա-  
ցաւ . յանձնումն Մօլո-Վալաքէան իշխանու-  
թեանց ի ձեռս Ռուսաց , վանումն ղեսպանին Գաղ-  
ղիոյ՝ ի կոստանդնուպոլաց , յանձնումն Հելեսպոն-  
տոսի բերդերուն ու Օսմանեան նաւատորմղին՝ առ  
Մեծն Բրիտանիա , ահա զատնիք պահանջելու և  
հաստատալու հրամանն ունէր Անդղիացի ծովա-  
պետը :

Այս պահանջմանց վրայ բանակցելով՝ իւր նա-  
ւահանգստին մէջ կը հանգչէր Անդղիական տոր-  
միղը , որ կը բաղկանար 8 երկայարկ , 2 ֆրէկադ ,  
2 քօրվէդ և 2 ումբակիր նաւերէ : Ճօհն Տիրուոր-  
թըն ծովապետը անմիջական կերպով կը կառավա-  
րէր Թագաւորական Գէորգ անուն նաւը , իսկ իրեն  
փոխանորդ Լէվի ծովապետը կը կառավարէր Քա-

(1) Սլաւերէն բառ է . (Խօսքօդ , իշխան) այս անունը կը տըր-  
ոի ընդհանըապէս Վլահիոյ ու Մոլոտաւիոյ այն իշխաններուն՝  
որք հսլատակ են Սուլթանին :

նօրօն ըսուած երկայարկը , որ 80 թնդանօթ կը կրէր : Գնդասոլետն ալ էր Ազր Սիսնէյս Սմիթ : Բոլոր նաւերը պատերազմի սլատրաստ էին : Իւր նաւուն տախտակամածին վրայ լուռ ու անշարժ կեցած՝ դիտակով կը նկատէր Տիքուօրթըն սլաշտ պահողական սլատրաստութեանց ճամբայները . այլ փոխանորդին սրինգն իւր այս դրադմանէն ետ կեցոց զինքը՝ խմաց տալով թէ նաւակ մը մօտեցաւ նաւուն : Յիսնամեայ այր մը նաւակին դուրս ելնելով՝ թագաւորական Գյորգին վրայ ելաւ :

— Ուրեմն , սլարո՞ն ասպետ . Հարցուց ծովապետը վեր ելնողին , Դուռը վերջասկէս մեր արդար սլահանջմունքն ընդունիլ վճռեց :

— Պարօն ծովապետ , սլատասխանեց այն մարդը , որ իւր հագուստին օղակին վրայ Մելիտինէի (Մալթա) ասպետուց կարգին վորրիկ խաչը կը կրէր , բռնութիւնը միայն կրնայ տիվանին յամառութիւնը սլատրել : Զէ՛ թէ միայն Կաբօլէօնի դեսպանը Կոստանդնուպօլսէն ետ չի խրկուիր՝ այլ և ինքը կը կարգադրէ այն ամրութիւնքը՝ զոր Թուրքք կը կանգնեն յասլահովութիւն : Սպանիոյ դեսպան Տալմենարա մարքիզն ալ անոր հետ համաձայն կը դործէ : Ասոնք իրենց հաղատակներն ու նաւաստիները դինեցին , և ծովեղերաց ամրութեանցը մէջ հոսկէ ալ կրնամք որոշել զանոնք : Այլ եթէ ձեր վսեմութիւնը իւր հրամանաց տակ գտնուած նաւերուն հրամացէ յառաջ ընթանալ :

տնտարակոյս մէկ վայրկեանի մէջ այն անկարգ ու  
անսպի խուժանը սկիտի ցրուի :

— Կը հաւստա՞ս, յարեց ծովասլետք՝ սարա-  
կոյս ցուցնող ժմիտով մը :

— Օսմանեան բանակին զօրաւորագոյն մասը,  
սպատասխանեց ասպետը, հիմոյ Աղրիանուլօլիս կը  
գտնուի մեծ վեզիրին հրամանացը տակ : Պաշտօն-  
եայր ալ անոր կ'ընկերանան՝ հոս իրենց երեսիո-  
խանները ձգելով : Քանի որ անոնք հոն կը յու-  
սան որ Ռումուրի բաշային հետ միանալով՝ Իտ-  
անուրի մօտերը սկիտի ջնջեն Միքելոն զօրապետին  
ներքե դրուած Ռուսական բանակը՝ հոս յարմար-  
առենն է որ ձեր վսեմոթիւնը իրեն մայրաքաղա-  
քին մէջ տակում ձգէ : Յիշեցիք, ծովապետ,  
թէ որչափ դիւրութեամբ անցաք Հելլեսպոնտոսի  
ոյն հոչակառ նեղուցը, որ ցայն վայր անմատոց  
էր համարուած, քարուտան վաշան վախուն անմի-  
ջապէս չի թողուց իւր դիրքը, Եէնիչէրիք ալ ծո-  
վը չի նետեցին իրենց հրադինուց սրբիչներն ու  
սուխներն, և չէ թէ միոյն Գասղղիացւոց քաջալե-  
րութեանցն առջեւ խօսցան՝ այլ և երդում ըրին  
սպաննել՝ դիրենք վախուստէ ետ դարձունել վոր-  
ձողները :

— Յաջողոթիւնն իմ յանդգնութիւնս ստո-  
գիւ արդարացոց, սպատասխանեց Սըր Ճօհն Տի-  
քուօրթըն, այլ եթէ այսօր Եէնիչէրեաց ոյն աւ-  
րուած բանակը այնչափ անհնաղանդոթեամբ չի

վորուիր ու չի վոխէր , քաջ զիտէք որ իմ յանց  
դրդնութիւնս անպատճառ կործանար սիտի ըլլար  
մեղ : Նաև չեմ ծածկեր քեզ թէ մեծ անհան-  
գոտութիւն ունիմ մեր վերադարձին վրայ : Փորձը  
դուցէ Թրքաց սովորեցուց : Սէսլասդիէն Տէլասքուր-  
սի զօրապետին թիկնապահը Հեղեսպոնտու մնաց :  
Զարմանալի չէ որ նեղուցին երկու կողմերն պատշ-  
նէցներ կանգնեն , ու բերդերն ամրացունեն , որ-  
պէս զի մեր նուերուն մեծ մաս հասցունեն մեր  
վերադարձին :

— Ուրեմն կ'երեսոյ թէ միտք ունիս , սլարոն  
ծովապետ , չոպասել այլ ևս քու առ Դուռն ըրած  
վերջին սլահանջմանդ պատասխանին , այլ գործն  
սովորել՝ Կոստանդնուպոլիսյ և իւր արուարձանացը  
դէմ յարձակում մ' ընելով :

— Անտարակոյս , յարեց ծովապետը՝ իւր ժա-  
ժամացոյցը նայելով , այլ պէտք է այն լուրերուն  
համեմատ վարուիմ որոց այսօր առաջընէ ի վեր  
կը սպասեմ :

— Յետոյ դառնալով քիչ մը հեռուն ակնածու-  
թեամբ կեցող սրսշոնակալաց՝

— Պարօնայր , ըստ , դեռ բնաւ նշան մը  
չըրած սյն նաւակը՝ զոր սամաք խրկեցի . ամեն-  
սին չերեխիր :

— Դեռ ո՞չ , ծովապետ , պատասխանեցին :  
Սըր Ճոհն Տէրուորթըն դարձեալ դիտակն  
առնելով՝ լոին նկատեց Եւրոպիոյ ու Ասիոյ եր-

կու ավունքը : Իր առջև մեծվայելչութեամբ կը սրարզուէր կոստանդնուպօլիս , և իբր անտառ կը ներկայանային անոր սպիտակ մինարէներն ու արքունական ձամիներուն փալփլուն գմբէթներն , ուրոնք ասդիս անդին սիրեալ՝ անսահման քաղրին բազմադիմի ճակտին վրայ իբր սպակներ կ'երեւէին . անոր թիւրաւոր գոյնզգոյն տուները՝ սոսեաց ու նոճեաց պուրակներովն ընդհատեալ՝ հնոյն Բիւզանդիոնի եօթը բլուրքը կը ծածկէին՝ իբր երփաներանգ գորդ մը : Զախ կողմը վաճառականութեան գանձիւրը լի՛ և սէրային հրազդէններէն պահպանեալ նաւեր՝ Ոսկեղջեր խորերը կը յառաջանային . ֆաջ կողմը կը տարածուէր Պոսիոր , որուն բերանը Օսմանեան նաւոց շարքովն ընդհատեալ էր , նաւեր՝ որք Թօվիխանէի մարտկոցները խրիսուպօլսոյ ( Խւսկիւտար ) մարտկոցներուն կը միացունէին , այսինքն Առիոյ վեհապետութիւնը Եւրոպիոյ վեհապետութեանն հետ . և այս պատերազմական տեսքը այն մողական ուրուազրութեան նոր գեղ մը կ'աւելցնէր :

— Փառաւոր կողոսլուտ , դոչեց ծովապետը դիտակն անութը դնելով . ոյլ ցաւալի է . որ լոկ պատերազմական ցոյց մ'ընելու կուգանք հոս . սակայն այս գեղեցիկ ծաղկիկը խիստ արժանի էր վերաբերիլ Մեծին Բրիտանիոյ Միացեալ թագաւորութեան նախնի թագին : Այլ , պարօն ասպետ , աւելցոց ծովապետը , դու Մելիտինէի նաւարանին

մէջ սլաշտօն վարած ես՝ ոյդ կղզւոյն Բրիտանաւ կան ստացուածոց միանալէն առաջ . ուստի բընականաբար կը հասկընաս թէ հոսանաց ընդդիմութիւնն ու օդին գէշութիւնը բոլորովին կը դրժուարացունեն ձեռնարկութիւնս : Եթէ մինչև Պուփորի բերանը չը յառաջանամ՝ և յարձակմանս կեդրոնը Խրիստովոլոց , սէրային մարտկոցներուն ու Թօփիսանէի նուագանին միջոցը չը դնեմ՝ անկարելի է որ յաջողիմ :

— Զեր վսեմութիւնը , սլատախանեց պերճարանութեամբ Մելիտինէի ասպետը , շատոնց հրաբուչքներու վարժեցոց զմեղ . քանզի Անգլիոյ բարեկամներն ալ մեծ համոզում ունին թէ՝ չէ թէ միայն մեր թշնամեացը վրայ պիտի յաղթանակէր՝ ոյլ և նոյն խսկ բնութեան վրայ , որն որ որբան ձեր ձեռնարկութիւնը տարժանելի հանդիտոցունէ՝ այնքան մեծագոյն վառօք պիտի սլակէ ձեր յաջողութիւնը :

— Թող փոխուի հովը , սլատախանեց ծովաչափը , և ես անմիջասլէս կը շարժիմ . սակայն ամեն բանէ առաջ պէտք է որ լուր առնեմ Պ . Պանքքէտ Պէմբնկիմէն , զոր երեք օր առաջ խրկեցի , ինչպէս որ գիտես , քննելու համար թէ բնչ կ'ըլլայ ի Հելեսպոնտոս ,

« Կոյն վայրկենին՝ ծովասլետին դրօշակիրը զինքըն ընդմիջեց՝ ձեռքովը ցոյց տալով անոր՝ առաջատառը մակոյէ մը՝ որ Ասիոյ ծովեղերքէն դէսլ

ինաւատորմիղը կը յառաջանար :

— Մեր մակոյկն է, պոռաց Ալր Ճօհն Տեր քուօրթըն մեծ ուրախութեամբ .

Եւ դիտուկը յայն ուղղելով՝

— Պէմէնկհիմը կը բերէ մեղ, յարեց . Վեր ջապէս իրմէ պիտի առնեմ այն լուրերն՝ որոց այնչափ ատենէ ի վեր կ'սպասեմ :

Յետոյ ասպետին դառնալով՝

— Պէմէնկհիմը, ըստու, կարծեմ բարեկամդէ :

— Այո, սլարոն ծովալետ :

— Աղնիւ երիտասարդ մ'է նա : Իմ պաշտօնակալս անվտանգ չի կրնալով ի Հեղեսպոնտոս խորկել և հոն մեղ դէմ եղած սլատրաստոթեանց վրայ լուր մ'առնել փափաքելով՝ դինքը յօժարամիտ գտայ այս սլաշտօնս ընդունելու : Եւ որովհետեւ Աւողիան ո՛չ Գաղղիոյ՝ ո՛չ Դրան հետ պատերազմ ունի այսօր, Պէմէնկհիմ, իրը Աւողրիացի՝ և Կոստանդնուպօլսոյ Աւողրիական դեսպանին գործարկալ, դիւրու ու անկասկած կրնայ ցամաքի կողմէն յառաջանալ մինչեւ նեղուցը : Վերադարձին ձգած ըլլովու է իւր ձիերը Մալդէրէ դիւղը, զոր դիմացդ կը տեսնես . նաև իմ մակոյկս գտած է ժայռի մը ստորոտն՝ ուր իրեն կ'ըսպասէ, քիչ հեռի Օսմանցոց տուներէն, և ահա հիմայ մեղ կուգայ :

— Քանի՞ ժամէն, ծովալետ, հարցուց ասպետըն՝ անհանգստութեամբ, կը յուսաս որ մեր տոր-

միղին հասնի մակոյկը :

— Վեց լաւ թիեր ունի, և էն չառը մէկ քառորդէն կը հասնի Թագաւորական Գէորգին : Այլ ի՞նչ կը նշանակէ այդ անհանդառութեամբ խառն հարցումդ :

— Տաճկական նաւակ մը կը նշմարէմ՝ որ քիչ մ'առաջ Մալդէբէ - Պուրնու ըսուած հրուանդանին ետին սլահուըտեցաւ, և հիմայ կ'երևայ թէ ձեր մակոյկին ճամբան կտրել կ'ուզէ :

— Ստուգի՛ւ, ստուգի՛ւ, զոչեց ծովապետը. բայց ո՛րչափ ծաղրելի բան : Բաւական յանդուգն չեն անոնք որ մակոյկս ճանձրացունել կը ձեռնարկեն մեր տօրմզին հրադինուցը տակ : Աակայն դեռ շատ հեռու է գայրզը . ընդհակառակին՝ հրաշալի կերպով կը յառաջանայ իւր առագաստովն ու թիւ երովը, և չեմ կարծեր որ անոր հասնի : Տեսէք, հաղիւ տասը վայրկեան հեռու է մենէ :

— Աակայն գայրզը վերջապէս պիտի հասնի անոր, կրկնեց ասպետը՝ երկայարկին շրթանցը վրայ կոթնելով . իւր ընդարձակ առագաստովը ծովուն վրայ կը սահի, և ծովու բաղի սկզբ ջրին վրայ կը թռչի :

Նաւուն բոլոր բազմութիւնը տախտակամածին վրայ խռնեցաւ, և ակնապիշ ու լոխն՝ երկու նաւակիները կը նկատէին : Արդէն տաճկական գայրզը մերձեցած էր Անդղիական նաւակին : Ծովապետն հրամայեց թնդանօթ մ' արձակել և պատժել յան-

զուղի թշնամին՝ այլ այս հրամանը չի կատարուած։ գայլզը մակոյկին վրայ ինկաւ, և այնպէս իւր սուր քիթն անոր առագաստին մէջ մխեց՝ որ ճեղքեց զայն : Նոյն պահուն Անդիական դրօշակն այս հարուածէն ցնցուելով՝ ծովի ինկաւ : Թագաւորական գէորգին նաւաստիները կատաղութեան ճիչ մը բարձին .

— Կրակ ուրեմն, դոչեցին թնդանօթաձիգներուն :

Այս երկու նաւակներն այնչափ իրարու կից էն՝ ին՝ որ անկարելի էր գայլզը զորնել՝ առանց մակոյկին ալ վնասելու :

Սակայն ծովապետին հրամանաւը տասն և հինգ նաւաստիք անոր մակոյկը մոտան, և արագ թիավարութեամբ ծովը պատռելով՝ ընկճեալ նաւաստեաց օդնութեան փութացին :

Գայլզը կը վարէին ութ ցնցոտիներ հագած Օսմանցիք, որք ատրճանակ, սուր և դաշոյն կը կրէին։ Եատ շքեղ հագուած պատանի մ' ալ, որ թանկադին Լահօրէ գօտի ու արրք կը կրէր, գայլզին մէջի սյն յանգուգն անձինքը կ'առաջնորդէր։ որոնք պատերազմելու սկսած էին : Առաջին կրակին երկու Անդղիացի նաւաստիք վիրաւորուեցան։ Պէտքնկիմ քաջութեամբ դէմ դրաւ երկիցս կը բակով՝ և Օսմանցիներէն մին ծովը նետելով, որն որ ինկած ատեն՝ իրենց գլխաւորին լահօրէ գօտին պատռեց։ Յետոյ մակոյկին նաւաստիքը՝ գայլզին նա-

ւաստեացն հետ մօտանց խառնուեցան և կռուի ըստ կսան . այլ ուրիշ զէնք չունէին՝ բայց եթէ իրենց սովորական դանակներն ու թիերն . իսկ Թուրքերն իրենց սուրերն անոնց գլխին վրայ ճօճելով՝ յաղթական ճիշեր կ'արձակէին : Ծովուն երերուն աւիքներն ալ յաճախ իրարմէ զատելով երկու նաւակները՝ կ'արգիլէին կռուին առաւել եւս արիւն պուշտ ըլլաղն . այլ Օսմանցիք վերջապէս յաղթել սկսան : Պէմէնկհիմ նոյն ժամուն իրենները խրախուսելով՝ զոչեց :

— Ահա ծովապետին մակոյկը օդնելո՛ւ կուգայ : Արդարեւ թագաւորական Գէորգին մակոյկը կը մօտենար՝ անբացատրելի արագութեամբ ալիքները պատռելով : Վարդք կրող և Տաճկական նաւակը կառավարող պատանին՝ իրեններուն աչք ըրաւ հեռանալու , և Պէմէնկհիմը ձեռքով բարեւելով՝ բառ անոր Գաղղիարէն :


— Զեղ կ'սպասեմք սէրային մարտկոցներուն մէջ . կը յուսում որ մեր հրաւերը սկիտի ընդունիք : Գայըգին մէջինները թիերնին ձեռք առնելով կրստանդնուպօլիս ուղղուեցան , իսկ ծովապետին մակոյկին մէջի : Անգղիացիք՝ անոնց փախուստ տեսնելով՝ ետենուն կրակ ըրին . այլ ասով ուրիշ բան ըրած չեղան՝ բայց եթէ գայըգին արագութիւնը կրկնապատկել տուին : Անգղիացիք անոնց ետենէն սննդեցան , այլ շուտով հասկցան թէ օդին մէջ թռչուն հալածելու պէս բան մ'էր ըրած .

նին : Երբոր երկու Անգղիտական մակոյկները տորմիղին կը մօտենացին , զայրղը Պրոպրնտիսի վրայ կետի մը սլէս կ'երեւէր :

Դանքրէտ Պէմէնկհիմ Սըր Ճօհն Տիքուօրթը նի նաւուն տախտակամածն ելու : Ծովագետը՝ երիտասարդին երթեւեկութեանը վրայ անմիջառողէս լուր առնել փափազելով՝ իւր սենեակը տարաւ զայն . Մելիտինէի ասպետն ալ՝ ծովագետէն մեկնելու հրաման առնելով՝ հրամայեց որ իւր թիավարներն որսորդաստուին :

— Եթէ թոյլտութիւն ընէր , սլարոն Քիննասոր ասպետ , կը փափազիմ ձեր նաւակովը Կոտանդնուովիս վերադառնալ , ըստ Պէմէնկհիմ . քոնզի նորին վսեմութեան նաւակները , յարեց ծովագետին երեսն ի վեր ժալտելով , ասրահովութեան բաւական նշան չունին այսօր :

— Բոլորով որտիւ , սիրելիդ իմ Դանքրէտ , պատասխանեց ձեր ասպետը . ուրեմն կ'ագասեմ ձեր խօսակցութեան վախճանին :



## ԱՆՁԻՆՔ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐՔ

Բերայի վայուաշէն գեղեցիկ տան մը սենեկին մէջ՝ երկու կանայք՝ զանազան ձեռագործներով, գրքերով ու ճերմակեղէններով լի վայելուչ սեղանի մը քով նստած ցած ձայնով կը խօսակցէին՝ մերթ ընդ մերթ անհանգստութեան նայուածքներ նետելով կիսաբաց սլատուհանէ մը : Առտու էր, և երկնից երեսը կապուտակ ամսկերով ծածկուած, այլ առեն առեն բացուելով արեգակնային ճաճանչներ կը տեղային, որոնք հեռուէն կը լուսաւորէին Մարմարայի ծովուն վրայի Անդղիական տորմղին թնդանօթները :

Այս կիներէն մին, որ գրեթէ 36 տարեկան էր, արդարեւ տեսնելու արժանի գեղեցկութեան տիւրար մ'էր : Իւր դիմաց նկարագիրքը գաղտնի կը սկսէիծ մը կ'արտայայտէին, այլ և բոլորովին կը պահէին այն մեծվայելչութիւնն ու հրապոյրքը՝ որոնցմով կը դատոի Հայոց իդական սեռը : Եւրոպական հագուստ կը կրէր, և իւր գեղեցկութեան չքնաղ վայելչութիւնը կը յայտնէր թէ այս կինը լոկ յարեելս չէ ապրած, այլ և ուրիշ տեղեր ալ տեսած է : Իւր պայծառ ու սպիտակափայլ գոյնը ևս առաւել կը փայլեր՝ իւր մետաքսանման ու սևաթոյր հերաց թանձրախիտ հիւսքերէն, որոնք

բոլորակածեւ կը շրջասլատէին իւր ձուածև դէմքը :  
իւր խոշոր աչերը , որոց վրայ ստուեր կը ձգէին  
երկայն ու սկզբուկ թարթիչներն , զգացմանց ու ա-  
նուշութեանց անսպառ աղբիւր մը կ'ստանային՝ երբ  
կիսափակ աչերով՝ շողշողուն ու հրասփիւռ նայ-  
ուածներ կ'արծակէր :

Իրեն հետ խօսակցողը 18 ամեայ երիտասար-  
դուհի մէր , նուաղ գեղեցիկ անկէ՝ այլ աւելի  
փափիկիկ : Բարձրահասակ ու վարդի պէս թարմ  
ըլլալով՝ վառվուն և ուշիմ բնաւորութիւն մ'ու-  
նէր , բոլորովին տարբեր իւր ընկերակցին լուրջ ու  
վեհ ձևէն : Հերմինիա Քիննատօք , ինչպէս որ կը  
կոչուէր այս երիտասարդուհին , կատարեալ տիպն  
էր այն գեղեցիկ խառնուածքին որ , Անգղիական  
ու արևելեան արեանց միութենէն յառաջ կուգայ :  
իւր գլխին խարտիչագեղ գանգուրները այտերէն  
կճեսյ ուսերուն վրայ թափթփելով՝ առաւել հըրա-  
պուրիչ կ'ընէին իւր մէծ , սկաթոյր ու կլորակ ա-  
չերը՝ գունոց հակաղրութեամբը :

Հերմինիա ծնաւ ի Մէլիտինէ , և կ'ըսումք թէ  
այս ծնունդը մահ պատճառեց իւր մօրը : Հօրն  
համար ալ կ'ըսէին թէ Հնդկաստանի մէջ սպաննուե-  
ցաւ՝ հոն տեղի Անգլօ-Հնդկական ընկերութեան  
ծառայելու միջոցին : Ուստի Քիննատօք ասպե-  
տը , իրը եղբայր անոր սպաննուած հօրը , Հերմի-  
նիայի բնական խնամակալն եղած էր : Սակայն ճը-  
մարիտ էր թէ՝ Մէլիտինէի մէջ ոչ ոք կը ճանչէր

այս Երիտասարդուհւոյն հայրն ու մայրը . և քանզի  
միշտ ամէն գաղտնի բան սխալ կամ ուղիղ կրո-  
ուի և կը մեկնուի , չարալեզու մարդիկ կը պնդէին  
թէ ասպետը Հերմինիայի հարազատ հայրն էր , և  
թէ՝ ուրիշ շատ ասպետաց պէս՝ սրբոյն Յովհան-  
նու դինուորական կարգին լուծմանէն և ամուրիու-  
թեան իր միայ դրած պարտուց խափանմանէն  
վերջն ալ՝ ստավատիր պատուասիրութենէ ըստի-  
պեալ՝ չէր համարձակեր խոստովանիլ իւր մեղքը ,  
որ լոկ իւր խիղճը կը ծանրացունէր (1) :

Սարդոց սխալ գաղափարն ու հարեանցի դա-  
տաստանը՝ այդ անհաւանական պատճառին կուտար  
Մէլիտինէի ասպետին մելամաղձութիւնն ու խղճի-  
խայթը , որն որ պէտք եղածէն շուտ ծերացած էր  
աւելի վշտերէն՝ քան թէ տարիքէն . այլ անոնք որ  
գիտէին անոր Երիտասարդութեան ատեն ըրած ա-  
րութիւնքն ու քաջագործութիւնքը՝ համոզուած էին  
թէ զանազան առիթներու տալու էր իւր այս մե-  
լամաղձութիւնը :

Ինչ և իցէ՝ ասպետը հայրական գորով կը ցու-  
ցընէր այդ Երիտասարդուհւոյն , զոր իւր եղբօրոր-

(1) Ուխտաւորք սրատշպանելու և խնամելու համար՝ սրբոյն  
Յովհաննու ասպետք կամ Հիւանդախնամք ըսուած կրօնական  
կարգը նախ յԵրուսաղէմ հաստատուեցաւ 1099 ին խաչակրաց  
արշաւանաց ատեն . Երբ Սալահ-իտ-Տին Երուսաղէմն առաւ՝  
Աքքեա փախան ասոնք , անկէց ալ Հռողոս՝ 1310 ին . Երբ Ար-  
քայման հոնկից ալ զիրենք հալածեց՝ Մէլիտինէ հաստատուեցան .

դին կը կոչէր. և երբ Անգղիացիք Մէլիտինէի տիւրեցին, ինքն ալ Ռուսիա զնաց ասպետաց մեծ կարգին մնացորդացն հետ՝ և մին եղաւ այն վերակացուներէն՝ որք Պօղոս Ա. Զարին յանձնեցին այդ կարգին նախագահութիւնը, որն որ այրիացած էր Հօմսրէնիոսի (1) հրաժարելէն յետոյ :

Քիննատօք ասպետը յիրլանտա ծնաւ, և էր ջերմեռանդ Հոռվմէաղաւան, ինչպէս է նաև այն կղզւոյն բնակչաց մեծ մասը : Եւ որովհետեւ Բեղըրսալուրի կծու կլիման իւր եղբօրորդւոյն առողջութեանը կը մնասէր՝ նախ իդալիա զնաց, յետոյ Պիոս Է. Պապին հետ ուղևորեցաւ ի Բարիզ՝ Նաբօլէօն Ա. Վեհապետին թագառութեան ատեն, և հոն Հերմինիայի դաստիարակութիւնը կատարելագործեց: Ճամբորդութիւն շատ սիրելուն և նուազ մառախչապատ երկնից տակ ասլրիւ փախազելուն՝ Արևելք եկաւ: Երուսաղէմ, Ասորւոց երկիրն ու Յունաստան պտտելէն վերջը՝ եկաւ Կոստանդնուպոլիս հաստատուեցաւ՝ նոյն կարգին նախնի թշնամիրը՝ Թուրքերը լրտեսելով և առթի մը սպասելով՝ որպէս զի Ռուսիոյ հետ միացած՝ Արշիպեղագոսէն կղզի մը խլէ, ուր դարձեալ հաստատուի ասպետական կարգը՝ ինչպէս որ եղած էր երբեմն ի Հոռոց :

— Սիրելիդ իմ սլարօնուհի Պէնֆէլտ, կըսէր ընկերուհւոյն՝ երկու կանանց երիտասարդագոյնը, զորս նստած տեսանք իրենց ձեռագործի սեղանին

(1) Այս կարգին վերջին գլխաւորն էր :

շուրջը . սրտիս կսկիծը քեզ վատահելէս իւլեր , ինք դինքս թեթեւցած կ'զգամ , և այլ ևս առանձին չի պիտի տրանջամ բախտիս դէմ :

— Ի՞նչ եղար , Հերմինիա , ըստ ընկերուհին . Եթէ ուրիշ մը ըսածներդ իմանար՝ անտարակոյս պիտի ըսէր թէ մեծ յուսահատութեան մէջ կը գըտնըւիս , և թէ հազիւ աշխարհ եկած՝ անոր վշտաց բաժակը ցմրուր քամեցիր :

— Աւա՛ղ , սիրելի՛ դիմ պարոնուհի , ըստ երիւտասարդուհին՝ հառաչելով . կա՞յ արդեօք բան մը որ աւելի ցաւալի ըլլայ՝ քան թէ սիրել մէկը և չի կը նալ զայն արտարերել , մանաւանդ երբ քաջ դիտնայ թէ բոլորովին անկարելի է միանալ անոր հետ՝ որուն համար կ'ապրի աշխարհի մէջ :

— Երբ հիւանդ մը իւր ախտին տեսակը կը ճանչէ , պատասխանեց պարոնուհին՝ ժպտելով , կիսով շափ դարմանուած կ'ըլլայ այն , հաւաստի եմ՝ որ եթէ անգամ մը սիրտդ ընդունէր այն խօսքերը դորս կրնաս յաջողութեամբ լուծել , անշուշտ պիտի թողուիր այն յիշատակը . . . :

— Շատ անգամ փորձեցի զայդ , ըստ Հերմինիա՝ պսդոնուհին ընդմիջելով . դեռ երեկ կը յուսայի թէ իւր բացակայութիւնը պիտի երկարի և թէ ասով՝ դիւրաւ պիտի կրնամ՝ զայն մոռնալ . այլ այս առառու առած նամակդ բոլոր կասկածներս վերանորոգեց , և կը խոստովանիմ ալ թէ սիրահարութեանը բոլոր ուժգնութիւնը դրդուց : Կը վերադառ-

նայ ուրեմն, սիլուհիդ իմ, և զուցէ վաղը հոս պիտի ըլլայ նոյն ժամուն :

— Այլ այն ամուսնութիւնը՝ զոր հօրեղբայրով, ասոլեալը, այնքան եռանդեամբ որոշեց . :

— Ալ երբէք վախճանին չի պիտի հասնի :

— Զգուշացիր, Հերմինիա, զի սկարոն Դանքըէտ Պլէմէնկիմ . . . :

— Սիրտս չի տանիր զայն :

— Սակայն քու վրադ հայրական Խրաւունք ունեցող անձին խօսք առաւ :

— Բայց ոչ երբէք ինձմէ :

— Այլ քու լութիւնդ . . . :

— Կը վկայէք բաւական . թէ ինծի ո՞րչափ ձանձրակի ու ատելի էր իւր յամառութիւնը . ինչո՞ւ չուզեց հասկնալ զայն :

— Բայց զիս մտիկ ընել խոստացար, ըստ պարոնուհին՝ յայտնի զայրացմամբ, և դարձեալ կը տեսնեմ թէ հիմայ նորէն ձեռք կ'առնես քու առջի ցնորքներդ :

— Շատ աղէկ . ըսէ՛, մտիկ կ'ընեմ :

— Դո՛ւ ալ գիտես որ քեզ անկարելի է անոր հետ ամուսնանալ, և երբէք չեմ կարծեր որ սիյնշափ անխոհեմ ըլլաս . ընդհակառակն՝ աղէկ գիտեմ որ քու պարտքդ կը ճանչես, և չի սկիտի ուզես յամառիլ այն յարաբերութեան վրայ՝ որ հաւանականաբար խիստ զէշ հետեւանք պիտի ունենայ : Բայց որովհետեւ անզամ մը սկարոն Պլէմէնկիմ խնդրեց

ձեռքդ՝ և հօրեղբայրդ ալ այս բանը վճռեց, սիւոք  
է որ դու ալ ուրիշ միջոցներ ձեռք առնես : Աս  
մուսնացի՛ր անգամ մը, իմս Հերմինիա, և սիւտի  
տեսնես թէ քու գաղափարքդ ու միտումներդ ու  
րիշ ընթացք սիւտի առնեն :

— Բայց ահա ինքը կը վերադառնա՛յ, տիկին,  
և եթէ նորէն զինքը տեսնեմ. և չի կրնայ ինքը  
հետս խօսիլ՝ նայուածքո՞վս ինձ յիշեցունէ խոստ-  
մունքս, զորս, աւա՛զ, լու պահեցի ցայսօր . . . :

— Ես յանձն կ'առնեմ զինքն հեռացունել,  
պատասխանեց սլարոնուհին ջերմութեամբ : Եւ իւր  
աչերն սլահիկ մի կենդանացան, այլ քիչ ատենէն  
իրենց սովորական մելամաղձութիւնն զգեցան :

— Պո՞ւ, դոչեց երիտասարդուհին՝ շփոթած :

— Պիտի հնաղանդի ինծի, այո՛, սիւտի հնաղանդի:  
Հերմինիա գլուխը ծռեց՝ նոյն սլահուն անվլս-  
տահութեան նայուածքներ ձգելով իւր բարեկամուհ-  
ոյն վրայ : Պարոնուհին ձայնը վոխեց՝ և վայելչա-  
գոյն ձև մ'առաւ :

— Հոգ մ'ընէր, հրե՛շտակս, ըստ՝ երիտասար-  
դուհոյն ճակտոն համբուրելով . հոգ մ'ընէր . նա-  
յինք քիչ ատենէն ընելիք ծառայութեանս համար  
շնորհակալ չտիտի՞ ըլլաս ինձ :

Հերմինիա՝ Պէնֆէլտի սլարոնուհոյն սիւ սիւ  
նայելով՝

— Քեզմո՞վ, տիկին, զինքը ճանչցայ, ըստ,  
և քեզ ըիւրաւոր շնորհըներ կը պարտիմ, քանզի

միտքդ դրիր հօրեղբօրս ներկայացնել այդ երիասաւ սարդը՝ երբ Բարիզ էինք։ Միշտ զինքը դովելով կը խօսէիր ինձ։

— Խարեցի՞ զքեզ։

— Ոչ, և երախտագէտ եմ ասոր համար։ այլ այսչափ ատեն անցնելէն յետոյ սրտիս վիճակը քեզ ծանուցած ատենս՝ ինչո՞ւ խօսքը կը փոխեմ։ Այս, երբ խօսքն անոր վրայ է՝ կը նկատեմ թէ անտարբերութեամբ ու պաղուկ պաղուկ կը խօսիս, և քանի որ այնչափ ջերմութեամբ անոր վերագտանալը կը փափագէիր՝ հիմայ ինչո՞ւ կռւզես որ չի վերադառնայ երբէք։

— Սիրելիդ իմ Հերսինիս, քեզի համար, քեզի համար միայն։ քանզի զքեզ կը սիրեմ, քանզի ամեն բանէ աւելի քու երջանկութիւնդ կ'ուղեմ, և համաղուած եմ թէ իւր բացակայութիւնը միայն կրնայ դարմանել այն չարիքը՝ զոր քեզ համար կը նախատեսեմ։ Քենէ, աւելի ապրած եմ, սիրելի աղջիկս, յաւելցուց Պէնֆէլտ սլարոնուհին՝ հառաշելով, և իմ բոլոր կեանքս ինձ համար երկարատեւ ու տաժանելի զոհողութիւն մ'ելած է։ Գուցէ օր մը կարենամ ըսել քեզ ինչ որ կրեցի, և այն ատեն ուշադրութեան արժանի կացութիւնդ ըղդալով սկիտի խրախուսուիս։

Այս երկու կանանց խորհրդաւոր խօսակցութիւնը՝ ծերունի ասպետին ներս մտնելովն ընդմիջեցաւ։ Տեսանք արդէն թէ ինքն առաւօտուն դուրս էր եւ

լած՝ լուր առնելու համար :

Տեղին Պէնֆէլտ պարոնուհւոյն աջը կը համարեմ ըստ զպարոնուհին և իւր եղբօր աղջիկն բարեելով :

— Ի՞նչ լուրեր ունիս, պարո՞ն ասպետ, հարցուց պարոնուհին՝ հետաքրքրութեամբ :

— Հուրս ան է որ՝ քիչ ատենէն ԱԾՐ Ճօհն Տիքուօրթընի Անգղիական տորմիղը Թրքաց մայքարաղաբը սկիտի ոմբակոծէ :

— Եւ իւր ասլարդիւն յարձակումները սկիտի ընէ Խրիսուալսոյ պատնէշներուն դէմ, այնպէս չէ:

— Այսօր առտուընէ հովը փոխուեցաւ, պարոնուհի :

— Բայց, հօրեղբայր, ըստ Հերմինիա, եթէ ըստ պէտի պէտի ըլլայ՝ պէտք է շուտով մոռածել մեր անձին ապահովութեանը վրայ . քանզի բոլոր այս փայտեայ տուները հրոյ ճարակ պիտի ըլլան :

— Տուի հրամաններս, պատասխանեց ասպետը : Մեր բոլոր ծանրագին կահ կարասիքը ստորերկրեայ մառանը դնել ու փոսկել տուի . երկու ձիեր պատրաստ՝ քեզ ու պարոնուհւոյն կ'ըսսլան : Այսօր կոիւն սկսելուն պէս՝ ես ինքնս զքեզ Պէօյիւք-Տէրէ գիւղը պիտի տանիմ, և նորէն ետ պիտի դառնամ՝ պարոն Դանքրէտ Պէմէնկիմին հետ հոս տեսնուելու համար . . . :

— Այսպէս, ինքղինքդ վտանգի մէջ պիտի դընէս . և ի՞նչու, ըստ Հերմութեամբ երիտասար-

Դահին՝ ասպետն ընդմիջելով :

— Ասլրի՛ո, Եղբօրորդի՛ս. միթէ Մէլիտինէի ասպետ չե՞մ. և քանի որ Թրքայ դէմ սլատե բազմ կաց . . . :

— Նախ, յարեց Քիննատօքի Եղբօրորդին, ներէ ինձ որ քեզ յիշեցունեմ թէ Մէլիտինէի յարգը չի՞ք այլ եւ . . . :

— Չիկա՞յ այլ եւս, մռմռայ ծերունին՝ գուռ զարար ծեռքերը կուրծքին վրոյ խաչածե դնելով :

— Հետեւարար, շարունակեց Հերմինիա՞ իւր հօրեղբօր բարեկութեանն համար ժալտելով, ո՞րքան ահարկու ալ ըլլայ սուրդ, սակայն կը տարակու ախմ . . . :

— Շատ ծե՞ր եմ, ըսել կ'ուզես Հերմինիա՞ :

— Եթէ մեծն Սիտ (1) ալ ըլլայիր՝ չի՞ր կը նար 500000 մարդու առանձինն գիտադրել, ո՞չ ալ՝ Պ. Պանքրէտ Պէմէնկիմի օդնութեամբն ու գործակցութեամբը : Վերջապէս, հօրեղբայր իմ, յայտնասլէս կ'ըսեմ քեզ թէ՝ շատ կը սիրեմ զքեզ և դրեզ երբէք չեմ թողուր ու եէ կերալով՝ վրտանգի մէջ դնելու կեանքդ, որ ինձ այնչափ կարենոր է երջանկութեանս համար :

Եւ այս վերջին խօսքերն այնսլիսի շնորհալի ժայիւ-

(1) Սիտ էր Քասղիլիացի ղիւցազն, (ծն. 1060 ին. մեռ. 1099 ին), որ անուանի եղաւ Սևերուն դէմ ըրած շահատակութեամբը :

տոով մ' ընկերացած էին՝ որ ծերունին իւր դժկա-  
մակութիւնը մոռնալով՝ ծռեցաւ համբուրեց Հեր-  
մինիայի ճակատը՝ հոն այնպիսին ներողութիւն մը  
դրոշմելով զոր երբէք չէր զլացած անոր :

Կոր անձ մը սրահը մտաւ. ասի Գանքրէտ Պէ-  
մէնկհիմն էր :

— Հօրեղբօրմէս մանրամասնաբար իմացայ ծեր  
նաւամարտը, ըստ Հերմինիա՝ քաղաքագէտ երի-  
տասարդին. չիմացա՞ք ծեր այս օրուան ոսոխին ա-  
նունը :

— Ոչ, օրիորդ. ոչ ոք զայն գիտէ :

— Գուցէ խորհրդաւոր ապետ մ'է, Ոսկեղա-  
րու կը Անեղանին կամ Սուլթան Սալահ-էտ-տինի  
ասպետներուն ալէս, յաւելցուց երիտասարդուհին.  
և հետդ գաղղիարէ՞ն խօսեցաւ այն Թուրքը :

— Այո՛, օրիո՛րդ :

— Արդարեւ արտաքոյ կարգի բան : Եւ հիմայ  
թո՛ղ հօրեղբայրս ըսէ՛ թէ Թուրքերն երբէք չե՞ն  
աղնուանար :

— Պարոն ասպետը շատ իրաւունք ունի, ը-  
ստ Պէմէնկհիմ : Ի՞նչ կրնաս յուսալ, օրիո՛րդ,  
այնպիսի մարդերէ՝ որք գլուխնին կը սափրեն և մօ-  
րուքնին կը սնուցանեն, այնպիսի մարդերէ՝ որք կը  
հաւատան թէ լուսինը Մուհամմէտի թևը մտաւ,  
և թէ իւլ-Պօրաք մատակ ձին երկինք տարու այս  
հոյակապ հրաշագործ . վերջապէս ի՞նչ կը յուսաս  
այնպիսի մարդերէ՝ որք մատերով կերակուր կու-

տեն, կը աստին, և որ չարագոյն է՝ կիներն  
հարկմներու մէջ կը բանտարկեն, և յաւիտեան  
զանոնք կը ծածկեն բարակ թիւղպէնտներով :

— Թրքաց անկումը լո՛կ իրենց կրօնքէն յառաջ  
կուզայ, ըստ ասպետը :

— Այլ սակայն, ըստ Պէնֆէլտի պարոնուհին,  
այս կրօնքը ո՛չ Արար Խալիֆայից քաղաքականու-  
թեանը խոչընդոտն եղաւ, ո՛չ հարաւային Սոլա-  
նիոյ տիրող Մաւրիտանացի թագաւորաց, ոչ աշ-  
բուն իսկ Օսմանեան աշխարհակալութեան : Օսման  
Ա. էն սկսեալ մինչև ցՄեծն Սիւլէյման, որ Վի-  
էննան սլաշարեց՝ և Գաղղիոյ Ֆրանսուա Ա. քրիս-  
տոնեայ թագաւորին հետ նիզակակցութեան դա-  
շինք կռեց՝ ընդդէմ կարողոի Ե. :

— Քաջամարտիկ վեհապետաց փոխադարձ յա-  
ջորդութենէն յետոյ, որն որ գրեթէ 120 տարի  
մը տեսեց, ըստ Պէմէնկհիմ, Մեծին Սիւլէյմանի  
յաջորդները զինուորական կեանքը լրին՝ հարկմնե-  
րու հեշտութիւնքը նախամեծար համարելով, և իշ-  
խանութիւնն անիրաւ ու անօրէն հարկաժողով իշ-  
խանաց ձեռքը թողլով՝ ուշադրութիւն չըրին այն  
զեղխութեան ու երկպառակութեան գարշահոտ  
վէրքին հսկայական աճմանն, որն որ բնուկանաբար  
այս երկրին անթիւ գանձերը երեցած չերեցած կը  
լափէ : Ահա Օսմանցւոց անկման հումառու սլատ-  
մութիւնը :

— Վերջապէս կը կարծես թէ անդարմանելի՞ է

ասիկայ , ըստ Հերմինիա : Օսմանցւոց սլէս հզօր  
ու խոհեմումիտ աղդ մը անշուշտ անասնոթեան  
մէջ կորուելու չէ նախասահմանուած : Մանաւանդ  
որ հիմայ անոնցմէ ոմանք ալ Եւրոպա դաստիա-  
րակուեցան , և արդարեւ , հօրեղբայր իմ , յիշէ այն  
երիտասարդը՝ զոր Սուլթան Սէլիմ անցեալ տարի  
Գաղղիա խորկեց . Նէճիալ էֆէնտին ըսել կ'ուզեմ ,  
զոր Բարիզ ճանչցանք՝ շնորհիւ Պէնֆէլտի սկարո-  
նուհւոյն :

— Միայն սկարոնուհին յարգած ըլլուռ համար  
պայն տունս ընդունեցի , ըստ ասպետն՝ իւր եղրօ-  
րոդին ընդմիջելով :

— Հօրեղբայր իմ , անաշառ խօսէ՛ , դո՛ւ , որ  
իրր կրօնամոլ կը յանդիմանես զԹուրքս , դո՛ւ ալ  
կրօնական նախասպաշտմունքդ մէկդի՛ ձգէ :

— Ճշմարիտ , սրատասխանեց ասպետը , մեր  
սրբազն հաւատքին վրայօք սցսալէս խօսիլդ լսողը՝  
պիտի կարծէ թէ հեթանոս ես , կամ ջերմ հետե-  
սորդ Աօլդէռական դոլրոցին :

— Ի՞նչ ըսեմ քեզի , յաւելցոց երիտասար-  
դուհին . այո՛ , թէի օտար եմ այս երկրին՝ սցլ կը  
սիրեմ զայն՝ թէ իւր բնական զեղեցկութեանն՝ և  
թէ անակնունելի սրատահարացն համար : Տեսած  
քաղաքներէս և ոչ մէկը վրաս այսշտի տպաւորու-  
թիւն ըրաւ . հիմոց կարծէս հեթանոսի մը սլէս հո-  
գեփոխութեան կը հաւատամ , և կ'երեւակայէմ թէ  
երբեմն Պասիորի զովագին ծործորացը մէջ շնչած

ըլլամ՝ սա մելամաղձական նոճիներուն ներքեւ որ գուցէ անծանօթ նախահարցս նուիրական մնացորդ ները կը հանգչին : Այլ կը տեսնեմ, յաւելցուց Հերմինիա՝ նկատելով որ ասովետին մտախոհ ճակա առ տիսրիւ կ'ըսկոի, կը տեսնեմ որ երբէք չես հանիր եղերերդացս : Ասոր համար ալ չե՛ս ուզեր երբէք հետո շրջագայիր այդ մեծվայելուչ Օսմանեան զերեղմատանց մէջ, որք թէ ինձ և թէ բոլոր տէղացւոց՝ տիեզերաց հրապուրիչ բուրաստանները կը թոին :

— Ընդհակառակին Մէլիտինէի ասպետներն, բառ Պլէմինկիմ, շնորհակալութեամբ պարտին նրեկառել այն տեղերն՝ որբ իրենց փառաց յաղթանակներէն մին կը կազմեն (1) . քանզի այդ տապանները . . . :

Այլ Պ. Պլէմինկիմ անմիջապէս խօսրն ընդհառեց . քանզի ինքն ալ դիտեց՝ առանց պատճառն խմանալու թէ այս խօսակցոթիւնը տանտէրը կը վրշտացուներ, որն որ ցաւակի յիշատակի մը մէջ ընկրդմած կ'երենէր :

— Ճշմարիտ չէ՞ պարոնուհի, փութաց յաւելու Հերմինիա՝ խօսակցոթեան նիւթը վոխելով, ճշմարիտ չէ՞ որ Կէճիս է ֆէնտին շնորհալի, ոքրամիտ ու յուսովից երխտասարդ մ'էր :

(1) Հեղինակը՝ 1203—4 ին կոստանդնուպոլիսյ՝ Խաչակրաց ձիոքով առումք կ'ակնարկէ :

— Հերմինիս օրիորդն ալ այնքան բարի ու նետողածիս է , ըստ Պետրոսին՝ Երիտասարդուչին ընդմիջելով :

— Այլ ոչ միշտ , սպառնեն , ըստ Հերմինիս՝ Ստորիական զեսպանատան սպառնոնելին դառնալով :

— Աէճիու է Գիւնտին արդարեւ Հերմինիոյի զավեստիցն արժանի է , ըստ Պենգիլտի սպառնահին , և սույզ է որ երեք տարի Բարիու կենալով՝ չէ թէ միայն իւր տամնունքն աւարտեց՝ այլ և աշխարհի մէջ սպահանջուած կատարեալ կրթութիւնն առացաւ : Աշտուի նու թէ ՞ ։ Վեհափառութիւնը զինքն հրաւիրեց իւր քովր դառնալու , և թէ շոտով զինքր սիստի տեսնեմք նշանաւոր զիգր մը բանած՝ և աջակից եղած այն վերանարութեանց՝ զորս իւր վեհագետը մնաղիր է զործագրել՝ տերութեան վերածնութեանն համար :

— Ա երանորոգութիւն , վերանորոգութիւն . անեն տեղ միայն ոց բառ կը բարի սցոր , բառ Մելիտինեի սպետք՝ ծաղրելով :

— Քանողի , ինչովէս որ կ'երեի , սպասախանեց սպառնուհին , մինչև հիմոյ բարձագիմի և անտանելի չարաշար զեղծում՝ եղած են :

— Ստողիւ Թորքաց արդի ինքնակալն ալ Ժաքուլնոց (1) հետ միացաւ , բառ Մելիտինեի սպետք՝ ծաղրելով :

(1) Բահուոր ու վրէժինզիր աստկապետականը՝ 1780 թ Պատմ. զեղափոխութեան տահն :

— Համբերեկներ ուրեմն, զոչեց սովոր՝ զբայիր շարժելով . եթէ Յքիտանական տորմիոր զինքը ճամբու չի կարենաց բերել ԱԵՆիշերիք աղեկ խելքը զւոյիր կը բերեն անոր . . . :

— Բայց մի անտարեր, սկսած պարունակին՝ չի կրնալով լու ծածկել իւր ոյս խօսքերէն ստացած դրդիոք, կրնաքը տուրինի ու բառագրեալ վեհապետի մը դեմ դրդուել այն վաստարաց մարդոց վրեժինդրամիւնն որոնք տուրել սրճանի ևն կոչուիլ շարադարձաց ու ոճրազործաց դաւակիցը՝ քան թէ կանոնաւոր զօրք, իրր թէ ազատ ըլլացին զործել ամեն ականկ եղեռն :

— Սակայն ստնք ալ, պարունակի՛, բայտ ապետ, մեծ զինուրական մարմին մ'եղած ևն տուենով, և ոյս աերութեան ամեն յազիթ անուկոցը կը կցի ԱԵՆիշերի տնտեր :

— Այլ զուն ինչ աղեկ զիտես, պարունակետ, բայտ պարունակին, թէ այժմ ստնք պրուելի վաստիթեանց տորին զիբենքը, և թէ ոյս տեղերուն թշուտ ժողովորդն, որ ականոյ ճիռ կը ծըսէ սցդ խոժամառ կարգին ահաւելի լուծին, սնտարակոց պիտի օրհնէ այն մարդուն ձեռքին զօր անոնց բանութիւններէն զանի ապատելու պիտի զործածէ :

— Եսու Առջմաններ սցդ զաղախարն տնեցան, և անմիտն ԱԵՂԻՄ . . . :

— Ա'ողաշեմ, պարուն, բայտ պարունակին՝ ուր

Արնելով, ձգենք այս խօսքը :

**Պէնֆէլտի** սրաբոնուհին պատուհանէն վար նայեցաւ . մեծ շփաթութիւն մք նկարուեցաւ երեսին վրայ :

Խոկ Գառնըրէտ Պլէմէնկէիմ՝ երիտասարդուհոյն նստած աթոռին յենլով՝ փութաց առիթք ձեռքէ չի հանել, և Հերմինիոյի քանի մք սովորական վայելուչ խօսքեր ուզգեց, զորս մեծ անտարքերութեամբ մոտիկ ըրտ . Հերմինիա : Ըստ որում՝ այս մասին վարձուու մէկն էր Պլէմէնկէիմ, իւր ձեռնարկութեան անցածողութիւնը՝ ժամանակին անպատեհութեամբ տուառ, ուստի որոշեց յարմարագոյն ժամու մք սպասել անոր հետ խօսելու համար :

Յանեարծ զորոէն շատ մք ձայներու խոռնի ի խոռն մեծ շշնկոց մք բառեցաւ՝ թմրուեներու զուտումին հետ խոռնածած : Ասպետն ու Պլէմէնկէիմ՝ պատուհանները վազելով՝ տեսան որ Անզդիական առրմիզը առազատաները սրաբզած՝ Պրոպրնուսի ծովոն մ, ջ կը շարժի . Կ'երեար թէ Կառասնդնուալոյիս զարնել սիստի սկսի :

— Վերջապէս յարձակելու վճիռ տուած է ծոս պատկետը, զոշեց Գառնըրէտ :

— Փախչինը, ըստ Հերմինիա՝ սրաբոնուհոյն թէր յափշտակելով :

— Այս, այս, սրաբոնիստեց Պէնֆէլտի սրաբոնուհին . քանզի քաղաքը սրաշտապանող Աշնիշէն բիր տառել ահարկու . և քան թէ յարձակողք :

— Մի տճապարեր , ըստ «Քիննալոր տալեռ» ,  
ահա կը զանաց տրմիզը , և կ'երեի թէ ծովալեա-  
որ մխոքք վախեր է . որչա՞վ Հետարրրութեամբ  
կ'ըսպասէի որ ուժակոծէ : Խնչ դժբախտոթիւն :

Խոժժանին ձիշերեն հաւասաց տալեռ՝ թէ չէ  
սխալած խը դաստանին մէջ : Արդուրե Բրիտա-  
նական տօրմիզը քիչ առենէն հեռացաւ և շոտով  
հօրիզօնին մշտ շներուն մէջ աներեւոթացաւ :

Քանի մը վայրկեանէն նոր աղմաւէ մը լուե-  
ցաւ Շերուի մեծ փազոցն . այն առեն ալ ժողո-  
վուրդին խառնաշխով ճխորին հետ կը լուէին նու-  
հրացան պարագեռ ձայներ , հեծկլստանը ու հեծե-  
ծանը : Ասպետին ծառաներեն մին ալ արտափա-  
հար սրահը վազեց և պօռաց :

Ըստուեր , կորուեցանիր : Օղուզովիրը մեր թա-  
գը կը զարնեն :

— Ռորի զաները կզակեցէր , շուտ , զոչեց տա-  
պեար . լեցուցէր հրացաններն , և պատհանաց ե-  
տեր պահութեցէր : Եղիւ , որարոն Ոլեմենկիւմ .  
նախ մեր զիսկանցը վրայ թող կոխեն վատերն՝ և  
ասրա հու մտնեն :

## ՕՃԱԳ

Օդուզպիր՝ Երեսունումէկ ըսել է թքքերէն, և  
այս անունը կը կրէին իրենց այն հռչակաւոր խորմ-  
բին մէջ՝ Երեսունումէկերորդ խմբեակին կամ օր-  
դաշին Եւնիչէրիներն : Այս խմբեակն այնչափ հըռ-  
չակաւոր եղաւ իւր անկարգութեամբքն ու անգը-  
թութեամբն՝ որ անոր ջնջմանէն 15 տարի վերջն-  
ալ կը դողային րէայէք՝ (հսկատակը) Երբ այն անու-  
նը լսէին :

Թող ներուի ինձ՝ որ այս սկատմութիւնը չի-  
շարունակած՝ կարճառու կերպով մը Եւնիչէրինե-  
րուն այն հռչակաւոր օճազին (¹) սկատմութիւնն ու-  
կազմակերպութիւնը յիշատակեմ, որոնք Երկար ա-  
տեն Օսմանեան Սուլթանաց հզօր նեցուկներն ե-  
ղան, այլ հուսկ յետոյ միասսակարագոյն հանդիսա-  
ցան՝ իրենց սարսափելի ոճիրներովն :

Եւնիչէրիք հետեւակ զինուորներ էին՝ իրենց կող-  
մութենէն սկսեալ կոյր ու խստակիր հնաղանդու-  
թեան ենթակայ : 1330 ին՝ Օրխան (²) թագաւոր-

(1) Օճազ՝ վառարան ըսել է թքքերէն . ըստ Եւնիչէրեաց՝ ի.  
թենց ամբողջ մարմինը կը նշանակէ :

(2) Ոմանք կ'ըսնն թէ Մուրատ Ա. ին ատեն (1362) հատուա-  
տւեցան Եւնիչէրիք . ոմանք ալ՝ Պայազիտ Ա. ին ատենները  
(1389) :

թին ատենը՝ սուրբ համարուած հաճի Պէքթաշ ա-  
նուն տէվրիշ մը՝ յանուն Մուհամմէտի օրհնեց զայն  
գունդն, և Եէնիչէրիներուն, այսինքն նորդնդե-  
րուն Երկնից պաշտպանութիւնը խոստանալով՝ ա-  
նոնց առաջին գլխաւորացը գլխուն վրայ դրաւ իւր  
աստի վերարկուին թեր : Այն ատենէն ի վեր բո-  
լոր Եէնիչէրիք արարողութեանց ատեն այն այլան-  
դակ սքուֆաները կը կրէին, որոնք թաղիքէ միայն  
կը շինուէին, և որոց վերի մասին ծացրը քա-  
ռանկիւնի ձեռվ կտրուած՝ ուսերուն վրայ կ'իջնէր՝  
ճիշդ տէվրիշին թեին ձեռվն :

Երկար ատեն Եէնիչէրեաց խումբն անխտիր՝  
Օսմանեան սկետութեան հպատակ Երիտասարդ Քը-  
րիստոնեայներէ և Եւրոպացի թրքացած գերիներէ  
ալ կը կազմուէր . այլ յետոյ վճռուեցաւ որ լո՛կ  
Միւսդիւման Երիտասարդներ ընդունուին :

Երկար ատեն Քրիստոնէից դէմ ըրած սկառե-  
րազմներնուն մէջ՝ Թօրքաց քաջայաղթ ու հզօր հան-  
դիսանալուն սպառմառն էր այս կանոնաւորապէս  
կազմակերպեալ հետեւակ զօրաց խուռն բազմու-  
թիւնն, որով դիւրաւ կը յաղթէին Եւրոպացի աւա-  
տական ձիաւորացն ու այն գէշ զինեալ հսրկաւ-  
ուաց գնդերուն՝ զորս թշնամիք իրենց դէմ կը  
հանէին : Այլ Երբ Եւրոպացիք հաստատուն ու կա-  
նոնաւոր հետեւակ զունդեր կազմեցին Ժէ . զարու-  
սիփրներն՝ Օսմանցոց ներշնչած սարսափը նուա-  
զեցաւ, և քանզի ասոնք սազմագիտթեան նորա-

նոր գիւտերը ո՞չ կ'ընդունէին և ո՞չ կը սովորէին  
տակաւ առ տակաւ իրենց կատարեալ անկարողու-  
թիւնն իրենք ալ զգացին . ասի իրենց հնաղանդու-  
թիւնը վերուց՝ և խստասրտութիւնն ամեցուց ,  
այնպէս որ՝ անդադար կ'ապստամբէին իրենց գրւ-  
խաւորացը դէմ՝ անսլատիժ մնալիքնին քաջ գիտ-  
նալով :

Մարդուս միտքը չի կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս  
այս դիւցազնական ու քաջարի ժողովուրդը գոռո-  
ղութեամբ ու ծուլութեամբ մինչեւ այն աստիճան  
հասաւ՝ որ չէ թէ միայն արհամարհէլ սկսաւ ուզ-  
մագիտութեան յառաջադիմութիւնը , որք այնչափ  
հարկաւոր էին իր զօրութեան պահպանութեանն  
համար՝ այլ և իւր նախահայրներէն ժառանգած ար-  
հեստն ալ մոռցաւ : Այսօր ո՞վ կը տարակուսի թէ  
ֆուրք հնարեցին բերդերու վրայ յարձակելու հա-  
մար այնչափ սկիտանի ըլլող խրամներն ու օճառը-  
տոյտ պատնիշավակներն , և թէ նախ իրենք գոր-  
ծածեցին արշաւանաց ատեն գետերէն անցնելու  
համար սկէտք եղած նաւելի լսստերն :

Եէնիչէրեաց օճազը 199 օրդայներէ կաղմուած  
էր , որք թէ՝ մայրաքաղաքին և թէ՝ գտւառաց մէջ  
սկսուած էին՝ առանց երբէք իրենց դիրքը փոխե-  
լու : Խրաքանչիւր օրդա՝ անհաւասար թուով ան-  
ձերէ կաղմուած էր , և տարբեր ատեններու մէջ կը  
փոխուէր բոլոր խումբը . նոյն խակ Եէնիչէրեաց ա-  
ղաճն կամ տղիտութենէն և կամ խորամանկութե-

Նէն՝ չէր կրնար Երբէք կառավարութեան իմացու-  
նել՝ իւրաքանչիւր օրդայի՝ կամ Եէնիչէրեաց ցու-  
ցակին մէջ արձանագրուածներուն իրական թիւր :  
Մինչդեռ օրդաներէն ոմանք Հաղիւ Երկերկու հա-  
րիւր զինուոր ունէին՝ հոչտկաւորն օրոգ-պիրք 10000  
էն աւելի զինուոր ունէր :

Մէհամմէտ Բ., Եէնիչէրեաց թիւր 12000 ի հա-  
սուց . Սիւլէյման Ա. 40000 ի . Մուրատ Գ. . 60000 ի  
և Մէհամմէտ Գ. . ամբողջ 100000 ի հանեց ; Մէ-  
համմէտ Ե. ի ատեն 200000 Եէնիչէրի կար . այլ վեր-  
ջը յաջորդող թագաւորք կիսով չափ նուազցուցին  
սյս թիւր , որ արդարեւ չափաղանց կը թուի՝ Երբ  
մտածենք թէ Թուրքական հետեւակ զօրքը միայն կը  
կազմէր զանի , զի հետեւակը բաղդատմամբ բազմա-  
թիւ էին գաւառաց անկանոն զինուորներէն ու ծի-  
աւորներէն :

Աղաէն՝ այսինքն Եէնիչէրեաց կառավարչէն յէ-  
տոյ բարձրաստիճաններն էին Վէյևէն-Պաշլն ու Փևահ-  
ևա-Պէյը , որ անոր տեղասլահն ըլլալով՝ հրամաններ  
կը հանէին ու սլաշտոնները կը կարգադրէին . Վտաւ-  
պօլ-Աղասրն , որ մայրաքաղաքիս օրդաներուն մաս-  
նաւոր կառավարիչն էր . Եէնիչէրի էֆէնտին , այսին-  
քըն Եէնիչէրեաց դատաւորն , որոյ վճիռները միայն  
Աղան կրնար քննութեան առնուլ . Վէօհիւր-Աղասրն ,  
այսինքն Եէնիչէրեաց Երեսիոխանը՝ Բ. Պրանքով .  
Պաշ-Չառչը , որ ցուցակներուն վերատեսուչն էր , և  
նոր զինուորները կ'արձանագրէր . ամենէն վերջը կու

գար Յորբա-Զառւշը, որ զործադիրն էր վճիռներու :

Իւրաքանչիւր օրդա մէյմէկ Զօրպաճի ունէր, այսինքն ապուրի տեսուչ : Ասի զարմանալի չ'է զի քազանները դրօշներէն աւելի նուիրական էին իրենց համար : Յտա-Պաշրն, այսինքն սենեկաց տեսուչը, իւրաքանչիւր օրդաի երկրորդական աստիճանաւորն էր, որոյ կը յաջորդէր Վէքիլ-Խարճը, այսինքն մատակարար : Երկրորդական աստիճանաւորաց կրօրդէն էր Աշճը-Պաշրն, այսինքն խոհարարապետը, որ ամենէն սլատկառելի էր, զի նուիրական կաթսայից ամենէն յաճախո մօտեցողն էր, և գերազանց էր քան Պայրաքտարն, այսինքն դրօշակիրը : Պիտկէվէշին կամ յիսնապետը՝ Գիարա-գուլոքմիններէն մէկ աստիճան միայն վեր էր : Վերջապէս Ասքաններն, այսինքն Չրկիրները, որք նուիրապետական սանդուխը կը ներկայացնէին :

Այքունի պահապան զինուորներն ալ Եէնիչէրիններէ բաղկացած էին, և վերնագոյն աստիճանի Զօրպաճիններէ կը կառավարուէին : Ասոնց արտաքին տեսքը համանման էր : Նոյնպէս էին Պօստանձիք ալ, գունդ մը՝ 2500 հոգիէ բաղկացած, որ բացարձակապէս սահմանեալ էին ի սրաշտպանութիւն արքունի Աէրայներու, պարտէզներու, և ագարակաց : Անոնց գլխաւորն զՎուսբոր կը կառավարէր, և հոգաբարձու էր ջուրց, անտառաց, որսի, ձկնորսութեան միանգամայն արքունի տան գատաւորի պարտքերն ալ իր վրայ ունէր : Այս մահու դատապարտութեան

բարձր պաշտօնեայն ցորեկ առեն դուրս չեր եներ  
ընաւ . միայն գիշերները կը շրջէր պետութեան  
գործակալաց վրայ հսկելու : Այսպէս էին Պալքանիք  
ալ , այսինքն կայնակիրք , գունդ մը՝ 400 հոգիէ  
բաղկացեալ , որոց յանձնուած էր արքայազնոց  
պահպանութիւնը : Գնդին պահպանները , Փէփիք  
ու Սօլաք կոչուած , իրենց գլխոյն վրայ կը կրէին  
փետրաւոր սաղաւարտներ . Երկայն ոսկեհուռ պատ-  
մուման կը հագնէին՝ նախնի Բիւզանդիոնի ար-  
քունեաց սովորութեանը հետևելով : Որսորդու-  
թեան վերակացուները , ազուաներու , բուերու ,  
շուներու տեսչին պէս Եէնիչէրեաց օրդաներ կը  
կառավարէին , և բարձրագոյն տիտղոսներ ու աս-  
տիճան ունէին :

Ոճագին զինուորներն Յ կարգերու կը բաժնուէին .  
այսինքն՝ նախ պաշտօնի մէջ եղողներն , որք մի-  
այն թոշակ կ'ընդունէին . Երկրորդ՝ պաշտօնի սպա-  
սողները , որք թոշակ չ'էին առներ տակաւին , ու  
իրենց մասնաւոր արհեստից արդեամբ կամ որ և է  
կերպով կ'ասլրէին . ասի Եէնիչէրեաց նախնական  
օրինաց դէմ զեղծում մ'էր . և երրորդ՝ ակնկա-  
լուք , որք արհեստաւոր քաղաքացիներ ըլլալով՝ Եէ-  
նիչէրեաց ցանկին մէջ գրուած էին , ասրբ կրելու  
և անոնց առանձնաշնորհութեանց մասնակցելու ար-  
տօնութիւնն ունէին :

Եէնիչէրեաց թոշակը խիստ չափաւոր էր , այն-  
պէս որ աստիճանաւորք չ'էին կրնար իրենց առ-

բուստը հայթայթել՝ եթէ յափշտակութեան ու  
ժողովուրդէն արտաքոյ կարգի անիրաւ տուրքեր  
առնելու չըդիմէին : Նախնի օրէնք արգիլած էին  
Եէնիչէրեաց ամուսնանալ, հերկաղրելով զանոնք  
զօրանոցներու մէջ բնակիլ . այլ բաւական ատէ-  
նէ ի վեր շտա օրինաց սկս այս օրէնքն ալ ոտնակոխ  
ըրած էին :

Այս դունդին մէջ անկարգութիւն մտնելուն  
ակս՝ աններելի թոյլտութեամբ մը զանց առ-  
նուեցան նախնի թագաւորաց ու մասնաւորա-  
բար Սուլթան Սիւլէյմանայ կանոնները : Եէնի-  
չէրիք այլ ևս զինուորական զօրութիւն մը չ'էին,  
այլ զինեալ ու մնայուն խուժան՝ տարբեր մարդոց-  
մէ բաղկացած, որք օրդաներու մէջ կը դասուէին՝  
յափշտակութեան փափաքով, հաւաստի ըլլալով որ  
ամուր ապաստանարան տիտի, դտնեն՝ որչափ մէ-  
ղասլարտ ալ ըլլան : Եւ ո՛չ սկաշտոն մ՛ունէին այն  
նորընծայք . ո՛չ վարձ կ'ընդունէին և ո՛չ զօրա-  
նոյներու մէջ կ'երևէին երբէք . այլ Եէնիչէրեաց  
սրբական տակ՝ միանգամայն իրենց տան ու բազ-  
կաց վրայ դրոշմեալ իրենց օրդային յատկանիշնե-  
րէն սկասսարեալ՝ կրնային անպատճիժ դործել ա-  
մէն ոճիր, բաւ էր թէ ապստամբութեան ու աղմուկի  
ատեն պատրաստ ըլլային յարձակման, ու իրենց  
ուսերուն վրայ բիսֆէնք կրէին՝ երբ խմանային թէ  
կաթսաները դուրս ելած էին : Եէնիչէրիք, իրենց  
ուրիշ արտօնութիւններէն զատ ունէին նաև իրենց

մեծաւորներէն միայն դատուելու և տուրք չը վճարելու արտօնութիւն :

Հիմայ նորէն ձեռք առնենք մեր պատմութեան թելը : Կոստանդնուպոլայ Տաճիկ ժողովուրդը ճամփարը վազեց՝ շնորհակալ ըլլալով Աստուծոյ՝ Անդղիական տորմիղին հրաշխաք իմն մեկնելուն . նոյն սկահուն մուկահինք (1) աւ մինարէից բարձունքէն կաւետէին կէսօրեայ աղօթից ժամը : Ամեն կողմէ կը լսուէին էզանը , այսինքն աղօթից հրաւէրը կը ըրկնողաց երկարածիկ ու ներդաշնակ ձայներուն յօդս գանդիւն տալը : Բարեպաշտագոյն միւսիւմանք՝ իյուպի նախասլատիւ մզկիթը կը դիմէին , որ այդ անունն առած է այն մարտիրոսէն՝ որ Կոստանդնուպոլայ առաջին պաշարման ատեն սպաննուեցաւ . և Մէհամմէտ Բ . էնդասեցաւ ի կարգս ուրբոց իսլամեան կրօնի :

Այս նշանաւոր ճամին Ստամբոլի նաւահանգըստին խորերը հեռաւոր թաղի մը մէջ կը գտնուի : Երբ անոր արարողութիւնքը վերջացան և ժողովուրդը յամը ու չափաւոր քայլերով դուրս ելնելով բարձրագոյն թաղերը տանող ուղիները ձեռք առաւերկու արք միւսներէն բաժնուելով նոճաստան մը մտան , որ Մէլիմ Գ . վեհապետին մօտ՝ Վալիտէ-Սուլթանին շիրիմը կը հովանաւորէր , և յառաջընթանալով փոքրիկ սրճարանի մը առջեւ կեցան ,

(1) Այսպէս կը կոչուի այն իմամը որ մինարէին շէրիֆէին աղօթից հրաւէրը կը կարդայ :

որն որ գեղատեսիլ կերպով կառուցուածէր ոյն դամ-  
քարանաց մէջ՝ որոց կոնածեւ սխներուն վրայ քան-  
դակեալ սարրքներն ասդին անդին սփոռուած կ'ե-  
րեային բարձրագլուխ խոտերու և վայրի բոյսերու  
երեսն, որոնք բնականաբար կը բուսնին գերեզմա-  
նաց վրայ :

Արճավաճառը դուրս ելաւ խանութէն՝ զանոնք  
ընդունելու համար խորին յարգանքներ ընելով . զի  
կ'երեար թէ յարմար չէր դատեր որ այն նշանաւոր  
օտարականքն ալ խառնուին այն ամբոխին հետ' որ  
խանութին բոլոր նատարանքը գրաւած կը ծխէր . նաև  
դրան դուրսը փսխաթ փոեց, որու վրայ եկան նըս-  
տան . յետոյ չպուք ու քահվէ բերաւ անոնց : Այս  
երկու օտարականաց մին լահօրէ սարրք կը ող պա-  
տանին էր, որ, ինչպէս որ տեսանք, յանդզնեցաւ  
ընկլմել թագաւորական Գէորգին նաւակը՝ տորմը-  
դին թնդանօթներուն ներքեւ, և որ ՍԵՐ Ճօհն Տի-  
բուօրթընի նաւապետական մակոյկին մերձենալու  
ատենը՝ մեկնելով Գանքըրէտ Պէմէկհիմի Գաղղիա-  
րէն շնորհաւորութիւն ըրաւ : Թէ՛ և մեծ աղնուու-  
թիւն կը փայլէր այս օտարականին դիմացը վրայ՝  
այլ սրճավաճառը քաղաքավարական խօսքեր չըրաւ-  
անոր, այլ ընկերականին ըրաւ, որուն սսլիտակ  
թաղեայ գլխանոցէն, որ մինչեւ իւր կոնակը կ'իջնէր,  
և հաստարեստ մուշտակէն, որ ծածկուած էր ար-  
ծաթասլատ սրբնածածոց տախտակներով, կ'իմասցուէր  
թէ Եւնիչէրական օրդաներէն մէկուն խոհարարա-

պետն էր : Զէլինկի կամ փետրոյ տեղ՝ իւր գլխա-  
 նոցին ճակատը պղնձեայ պատեանի մէջ մխուած էր  
 փղոսկրեայ դդալ մը՝ փոքրիկ բուստերով սմնեալ :  
 Երկու ձեռքով ալ դիւրաւ հանելու համար խաչա-  
 ձեւ գրուած ատրճանակներով ու եադաղաներով լի  
 զինարան մը գրեթէ իւր մէջը կը գօտեպնդէր . աս-  
 կից ալ կախուած էր բայ ի ոսկեթել մետաքսեայ  
 անձեռոցէ մը՝ պղնձաբուն խարազան՝ 15 փոքր նր-  
 շաններով ձևացած , որուն ծայրը կապարեայ գըն-  
 տակներ կային : Մուշտակին տակ կրած երկար վե-  
 րարկուին քղանցքը գոտիին մէջ ամփոփեալ էին ,  
 որուն ծայրէն կախուած 7—8 կարծ շղթաները հա-  
 մակեզրոն կիսաշրջանակաց նման փորին վրայ կ'կ-  
 նային : Աշխաղին սպիտակափառ մօրուքը մերկ  
 կուրծքին վրայ կը ծածանէր՝ և սյլսնդակ հակադ-  
 րութիւն մը կ'ընծայէր իւր այն թաւ պեխերուն նը-  
 կատմամբ՝ որք սևաթոյր երենագոյն նկարուած՝  
 և աղեղնածեւ մինչեւ աչքերը կը բարձրանային :  
 Վերջասկս՝ այս սրատկերը լրացունելու համար  
 կապուտակ սպի մը իւր դէմքը կը բաժնէր ձախա-  
 կողմեան քունքէն սկսեալ մինչեւ աջակողմեան այտը :  
 — Փա՛ռք Աստուծոյ , որդեա՛կ իմ , ըստ խո-  
 հարարապեար սրատանւոյն՝ լուրջ լութենէ մը վեր-  
 ջը . ահա անհաւատից երկրէն վերադարձար , և  
 վերադարձ աւետեցիր ծննդեանդ տեղւոյն այնպի-  
 սի յանդգնութեամբ մը որ երկնից գոները քեզ կը  
 բանայ : Հիմայ ալ որ աղօթիք սրբուեցար ու մաք

թեցար՝ կը յուսամ որ մեզ հետ պիտի մխանաս  
մերժելու համար այն դժոխային նորութիւնքը՝ զորս  
մեր անդօր բատիշահին (1) ուղեղին մէջ դրին կես-  
վորք (2) : Գիտե՞ս ինչ կ'ուզեն . Եէնիչէրեաց քա-  
ջաբաղուկ ու սոսկալի խումբին մէջ այն անիծեալ  
փոփոխութիւնքը մտցունել , և յետ այսորիկ մխայն  
պաշտօնի մէջ ըլլողներուն վարձք տալ : Յո՞ղ ցու-  
ցակները քննեն , կ'ըսեն , և թող վերջանա՞յ ոյլ  
ես այն ռոճիկը՝ զոր մեռնողք ըստ բարի սովորու-  
թեան կը թողսւն կենդանեաց՝ լոկ անոնց անունը  
տալով : Միով բանիւ մեր կորուսոր կը մտածեն :  
Անշուշտ չես մոռցած թէ մատղաշ հասակէղ ոկր-  
սեալ արձանագրուեցաւ անունո՞՝ Յդուզ-Պիրաց այն  
անմահ օրդային ցուցակին մէջ : Յդուզ-Պիրք միշտ  
արժանի են իրենց նախնի համբաւին . սուրբ հաւատքը  
կը սնուցանէ իրենց սիրտը : Իրենց բոլո՞ր արիւ-  
նը թափելու պատրաստ են նախահարց սովորու-  
թիւններն պահպանելու համար : Դեռ երէկ մայ-  
րաքաղաք վերադառնալով՝ մեղ սպառնացուած փո-  
փոխութեանց դէմ ցոյց ըրին՝ Յրանկաց թաղէն  
անցած ատեննիս ատրճանակ ու հրացան պարակ-  
լով : Տեսնելու էր թէ այն անհաւատ շուներն ի՞նչ-  
ոկէս եղջերուաց վոհմակի պէս առջենէս ցրուած կը

(1) Շահ կը նշանակէ թագաւոր , բատիշահ ալ ինքնակալ :

(2) Կեավուր անհաւատ ըսելէ : Այս բառը դժբակտաբար շատ  
ճանօթէ է Թուրքիոց քրիստոնէից :

փախչէին, և ինչպէս իրենց տանց մէջ կը փակւուէին՝ մեր փառայնղց փաղանները լոկ տեսնելով սարսափած։ Առ այժմ անոնց ներշնչած սոսկու մովսիս շատացանք, այլ ուրիշ ատեն . . . :

— Ա' ալի-Օսման աղայ, պատասխանեց սրա տանին, այն ճակատագիրը որ գլուխո կը մնչէ, ուզեց որ ո՛չ հայրս ճանչեմ և ո՛չ մայրս։ Քու գըթա սըրութիւնդ հոգ տարաւ նուաստիս մինչեւ այն օրն՝ յ'որում Նորին Մեծութիւնն սուլթան Սէլիմ՝ վեհապետն մեր (իւր թանկագին օրերն Աստուած յոգնաթիւ ու երիցս երջանիկ ընէ), բարերարութեամբք լեցունելով զիս՝ իւր պալատականաց ցանկն անցուց զիս։ Երեք տարի առաջիմ այն բարձրաստիճան տէրս Գաղղիա զիս խրկեց՝ Եւրոպայի կըթութիւնքը, մանաւանդ զինուորականը սովորելու համար՝ մեծին Կաբոլէօնի դպրոցին մէջ, որն որ մեր դարաւոր թշնամի Մոսկովներուն յաղթողն է։ Օտար երկիրներ տեսնելէ վերջը՝ նոյնպէս անձնանուէր կը վերադառնամ հայրենիքս, նոյնպէս լի անոր սիրովն՝ ինչպէս որ էի չի մեկնած։

— Կեցցես, Գոչեց Յղուզ-պիրի խոհարարասկետը՝ արժանի ես մեզ, և չեմ տարակուսիր թէ մեր մէջը նշանաւոր սկիտի հանդիսանաս։ Երբ բոլորովին մերն ըլլաս՝ այն առեն իմաց պիտի տամ մեր հաւատոց յաղթանակին՝ և նորելուկներէն մեզ դէմ լարուած որոգայթին ջնջմանն համար որոշած ծրագիրնիս։ Ոճագին ուժգին բողոքներն և մէկ քա-

Նի գլխատեալներ բաւական են տեղի տալու ըստիակել զԱռևլթանն . ապա թէ ոչ . . . :

— Ասէ , հայր իմ . գոշեց Կէճիալ . Ես երախտավարութառայ մ'եմ առ Առևլթանն իմ բազմամեայ Տէրս : Ինչ որ հրամայէ ինձ պարու անձին կը համարիմ անտրտունջ կատարել զայն :

— Ինչ որ մեզ հրամայէ<sup>o</sup> , գոռաց Ամի-Օսման ծուռ ծուռ ընկերին երեսը նայելով : քաջ խորհէ . քանզի վեհասլետք՝ այսօր կան վաղը չիկան . այլ Ենիչերեաց խումբն յաւիտենական զօրութիւն ունի :

— Միայն Աստուած է յաւիտենական , փափը սաց պատանին :

Եւ զայս ըսելով՝ մասիաթին վրայ ոտք ելաւ՝ որպէս զի նորէն գոտիին մէջ դնէ այն սուրբ՝ Պոքրիչ մ'առաջ դուրս քաշած էր :

Նոյն պահուն խումբ մը մարդիկ ծանրութեամբ սրճարան մտան : Ասոնցմէ ոմանք՝ Ոճազին նշանաւոր գլխանոցը՝ կամ հաստ կերպասէ շինուած քարձր ու շքեղ Վարդոցը կը կրէին , որն որ օրդայից զրեթէ փոքր հագուստը կը ներկայացունէր . ոմանք ալ՝ իրենց ցնցոտի և պատառուեալ հագուստներէն կը ճանչցուէին՝ թէ Եւանաք-Գիապիալը՝ այսինքն թնդանօթաձիգ զինուորներ էին , որը նոյնալէս Ենիչերիք էին : Ամի-Օսմանին բարեւ տալէ վերջը .

— Ուստա՛ (1) , ըստ թնդանօթաձլուներէն մին ,

---

(1) Ուստաւ բառը կը նշանակէ տէր , ուսուցիւ , վարպետ ևն :

Եյուսէն եկած ատեննիս՝ բան մը գտանք, մէկ  
քանի անմիտներ շրջապատելով զմեղ՝ ըսին թէ  
ձերն է. և սկզբեցին՝ թէ անշուշտ ձեր գոտիէն ին-  
կած է :

— Ի՞նչ բան է այդ, հարցուց ծերը :

— Ուկեզօծ շրջանակով պատկեր մը :

— Պատկեր մը, փափաց Ամ-Օսման՝ իր  
թու յօնքերն ամփոփելով : Կեախուր կարծեցիր  
զիս :

— Ես չ'ուստա՛, պատասխանեց նամաքը,  
այլ ոտ . . . ը յարեց՝ իւր ընկերքը ցոյց տալով :  
Ներեցէք անոնց :

Նոր եկողները լոիկ մնջիկ նստան ոյտ մախա-  
թին վրայ՝ զոր սրճագործը մոռեց դրանն առջեւ,  
Աշճի-Պաշիին և Նէճիսկի փոխթին մօտ : Յետոյ  
շրապուքնին վառեցին :

— Այս երիտասարդը ո՞վ է, հարցուց ցած  
ձայնով պատկերը դանողը՝ զ'Նէճիսկ մատնանիշ  
ընելով :

— Բարեկատմ՝ է, սրատասխանեց Ամ-Օսման,  
որ անհաւատից երկրէն վերադառնոլով՝ ամրարիշա  
Անգղիացւոց զէմ արիացաւ երէկ :

— Ստուած օրհնէ զինքն, ըստ թնդանօթա-  
ձիգն : Ահա՛, ուստա՛, ահա՛ քսաննէինդերորդ օր-  
դայի Եէնիչէրի՝ Քիւլտ Եուտաֆը որ նոյնովից  
այց ելաւ կեախորաց երկրին նաւային գործոց ծա-  
ռայելով : Արնայ ողատել ձեզ՝ թէ ինչե՛ր տեսա-

այն բարբարոսաց մէջ :

— Ո՞վ պիտի պատմէ , սկսեց Քիւրտն Եռևուժ՝  
հաւանութեան ծեռով մը . ո՞վ պիտի պատմէ թէ  
մինչեւ ո՛ր աստիճան անասնացան այն քրիստոն-  
եայ կոչուած կուապաշտ աղինք : Մէկդի՛ ձղէ իրենց  
ի կրօնս անբարեպաշտութիւնը . հանրածանօթ շու-  
ներ են ամէնն ալ : Կենաց ամենապարզ և սովո-  
րական բարուց մէջ անգամ յայտնի թշնամիներ  
են ուղիղ բանին . զոր օրինակ , ծնունին կը սափ-  
րեն , և գլխու գէսը կը թողուն որ աճի . ձախէն աջ  
կը կարդան , կը գրեն . երբ բարեւ տան՝ անամօթա-  
բար գլուխնին կը բանան . շատերն ալ ցերեկը կը  
քնանան , գիշերը արթուն կը կենան : Շիտակն ըսե-  
լով՝ բազմութիւն մ'են անսրբոց , զորս աչքով տես-  
նողն անգամ չի կրնար հաւտալ :

— Հապա կիներնի՞ն , Եռևուժ , հապա կի-  
ներնի՞ն , հարցուցին միաձայն՝ քրքիջ բառնալով :

— Իրենց կանանց գալով՝ չեմ գիտեր թէ՝  
իւրաքանչիւր ուրուք բնական ամօթխածութիւնը կը  
ներէ՞ ինձ որ այն անամօթ էակաց վրայ խօսիմ :  
Կախ ամէն քրիստոնէի հարէմը բաց է ո՛ և է մէ-  
կուն , կամ մանաւանդ՝ շուկայ մ'է՝ ուր իւրաքան-  
չիւր ոք կրնայ մտնել աղատաբար՝ և մեկնիլ՝ ա-  
ռանց քննուելու :

— Աստուած , Աստուած իմ . կարելի՞ բան  
է , փսփատցին մնացեալ ծխողներն :

— Այս կին անունը կրող արարածներն , աւել .

ցուց Փիւրտ Եռևուժ, չ'են ամշնար փողոց ելնել՝  
անքօղ, ինչպէս որ հոս ալ ի Պէյ-Օղու կը տես-  
նենք. այլ իրենց երկիրն եռապատիկ չարագոյն է :

— Դեռ ինչե՞ր կընեն, ըսէ՛, ըսէ՛, Եռևուժ :

— Կոնակնին, կուրծքերնին ու բազուկներնին  
կը բանան, դլուխնին ծաղիկներով ու թանկագին  
քարերով կը բեռնաւորեն, և այսպէս՝ ցոյցեր ընել  
կ'երթան արամքք լի սրահներու մէջ, որոնք կը յա-  
փրշտակեն զանոնք, իրենց կրծից վրայ կը սեղմեն,  
և գետնին վրայ կը շրջշրջին ըստ եղանակի իրենց  
դժոխային նուագածութեան : Այս խայտառակ  
հանդեսներն ալ պա՛ր կը կոչուին . . .

— Շունե՛ր, շունե՛ր, մրմռացին զինուորներն «  
Հոգիդ սիրես՝ կարելի՞ բաներ են ասոնք. հարք,  
եղբարք, ամուսինք ի՞նչ կ'ըսեն :

— Պիտի հաւատա՞ք, գոչեց 25 րդ. օրդայի  
Եէնիչերին, սլիտի հաւատա՞ք ինձ եթէ ըսեմ  
ձեզ՝ թէ նոյն իսկ հարք, եղբարք ու լծակիցք զի-  
րենք ի պար կը տանին, և զանոնք դիմացնին ելնո-  
գին կը յանձնեն, և սյն թշուառական շուները,  
շան ծնունդները՝ գոհ սրտով տուն կը վերադառ-  
նան՝ եթէ իրենց կիները վստահացունեն զանոնք  
թէ խիստ լաւ զբունեցան :

— Ճշմարիտ կը խօսիս, ըստ խոհարարապե-  
տը, մարդուս միտքն հաղիւ կրնայ ըմբռնել այդպի-  
սի ճոռմարանութիւններ : Ուրեմն այդպիսի վայ-  
րենիներն մեղ օրինակ տալ կ'ուզէ մեր բատիշահը :

— Եղբայր, ըստ ծխողներէն մին, չըսիր թէ  
այդ վատ կիները գեղեցիկ ալ են. ճամբորդութիւն  
մ'ընելու միտք ունիմ, և ասոր համար՝ մանրամա-  
սըն տեղեկութիւններ առնելու եմ :

— Մի տարակուսիր, և այս մասին գատաւոր կը  
կարդեմ զքեզ այն պատկերին նկատմամբ զոր կցու-  
ալի դուռը գտանք : Ճշմարիտ Աստուած, այն անկ-  
րօն կինը նոյն իսկ զՄարդարէն կրնար որսալ :  
Նայէ, Նայէ :

Զայս ըսելով՝ զինուորը բացաւ իր ձեռքն, յո-  
րում ճոխ շրջանակի մէջ առնուած կլոր կենդանա-  
նագիր մը կը պահէր :

— Ի՞մս է, պօռաց խոհարարապետին բարեկա-  
մըն՝ պատկերը յափշտակելով՝ և զայն իր կրծից  
վրայ պահելով :

Եւ բարկութեան հրովը փառեալ աչերով՝ ձեռ-  
քը սրոյն երախակալին վրայ տարաւ յայտնել ու-  
ղելով թէ պատրաստ էր իր ստացուածքը պահօլա-  
նելու Եւ ի վեաս իսկ անձին :

Սշնր - Պաշիին կատաղի ակնարկը՝ մեղմացուց  
իամաքին ցասումն, և ստիլեց զալատանին՝ որակէս  
դի աչերը խոնարհեցունէ : Ցետոյ հանդարտագոյն  
ճայնով մ'ըստ :

— Երիտասարդութիւնը միշտ իր անմոռութիւն-  
ներն ունի, և պարտիսք ներել անոր : Փափաքճը -  
Յղու, գոչեց՝ սլատկերը գտնողին գառնալով՝ և  
ուսին թեթև հարուած մը տալով, անտարակոյս

եմ՝ որ մեր բարի միւսիւլման թնդանօթաձիգներու օղնութեամբն, յորոց մին ալ դու ես, չեմ տարակուսիր, կըսեմ, որ սոյնօրինակ պարագայի մը մէջ՝ այսսլիախ առար մը ձեռք բերելէ ետ չիսլիտի կենաս :

— Աղէկ ըսիր, ուստա՛, պատասխանեց թընդանօթաձիգը . այլ այն եղանակն՝ որով այս պարոնըն սպառնացաւ ինձ . . .

Խոհարարասլետն երկրորդ ակնարկով մը մեղմեց այն պատասխանը՝ զոր Նէմիպ կը պատրաստուէր տալ դժկամակեալ զինուորին, և ուզելով այս խօսակցութեան վերջ տալ բոլորովին՝

— Որդեակ, ըստե, փսխաթին վրայ յոտս ելնելով, ինչու կը նստիմք . սէտք է որ սերայ երթամ . վասն զի այսօր օրդայից վարձերուն վըմարման օրն է : Նաև նոր լուր սէտք է առնեմ :

— Նոր լո՛ւր, յարեց Փապաքճը - Պղղուն՝ գըլուսը շարժելով : Սուլթան Սէլիմ խան Գ. մեր շնորհալից վեհապետը՝ լսածիս նայելով սատանային դրդմամըը կը պատրաստուի Նիզամը - ջնտիսի նորագումար զօրսականաց հագուստն հազցունել մեզ . այսինքն կ'ախորժի մեր մարմինը կաշեայ գոտիներով սեղմել կեավուռներու նման, և նիզամակիր հրացաններով մարզել զմեղ՝ տղունման : Թուղ աշխատի, մեք ալ այն ատեն, ուստա՛, քեզ նորն ալ հինն ալ ցոյց կուտանք : Անդնելնի և յաղթաբազուկ Եէնիչէրէքս գուցէ ալիտի

ստիպեն հանգուցեալ Ապտ-իւլ-Համիտի որդւոց  
մին բանտէն հանել և գահին վրայ նստեցունել :

Նէմիալ չիկրնալով իր զսցրոյթը զսպել՝ հայհո-  
յանաց կծու խօսքեր սլիտի արձակէր անոր դէմ,  
երբ ծերունի խոհարարապետն իր շուրջն եղողներէ  
հեռացունելով՝ իր երիտասարդ բարեկամը նաւամա-  
տոյցին ճամբան առաւ տարաւ : Երբ այսպէս մինակ  
մնացին՝

— Որո՞ւ սլատկերն է այդ, հարցուց ծերը  
յանդիմանական ճայնով մը :

— Քեղի՞ ինչ, սլատասխանեց սլարդաբար՝ ե-  
րիտասարդն :

— Ի զուր ինէ կը ծածկես, յարեց ծերունի  
Եէնիչէրին, Նէմիալ, Նէմիալ, սնհաւատից երկիրն  
հոգիդ մեղկացուց : Միայն անուամբ միախւրման  
մնացիր : Մեր հաւատոց թշնամի կին մը կը սի-  
րես : Այո՛, այո՛, երանի թէ, երբ զբեզ երախայ  
ինձ մատուցին, և երբ հազիւ աչեւու լուսոյն  
կը բացուէին, երանի՛ թէ անմի ջառէս զլուխդ  
սլատին զարնէի և ջախջախէի :

— Հայր իմ, յանդգնեցաւ ըսել երիտասար-  
դըն, ի՞նչ չարիք հասուցին քեզ քրիստոնեայք՝ որ  
այնչափ կ'ատես դանոնք :

— Ինչ չարիք հասուցին ինձ, թշուառական,  
դոչեց Եէնիչէրին, և իւր շրթունքը կատաղութենէ  
կը դողային . միթէ չիրաւեր որ մեր հաւատոց վը-  
նասակար թշնամիներն են :

— Եւ միթէ , յարեց Երիտասարդն , մեր սըրքաղան մարդարէն Մուհամմէտ՝ չիսիրահարեցաւ խոյայի գուստը Սովիտային , որ Ահարոնի սերունդէն հրէուհի մ'էր , և Յուղայի Քայլսար թագաւորին այրի Քիենանին , որոյ հետ ըստ օրինաց ամուսնացաւ՝ թէ և այլակրոն էր նա : Իր անկողնոյն սլատիւն ունեցող գերեաց մէջ Ս . Գիրքը շի՞ յիշեր զհրաշալին Ռիխանա , գուստը Քօրայեան Ամբու Հրէին , և զերկու խալտի կանայս , Ղնիրին ու զՄարիա :

— ԶՔրիստոնեայս , զՔրիստոնեայս , յարեց Խոհարարապետն՝ լի զայրացմամբ՝ Երիտասարդին խօսքերուն համար : Այո՛ , այո՛ , կ'ատե՛մ , կ'անարգե՛մ զանոնք՝ աւելի այն մահուանէն ի վեր : Վրէժ առնելէ առաջ և ոչ մէկուն կըսեմ թէ ինչ ըրած են ինձ այն զզուելի էակներն : Այսկայն վրէժս սոսկալի սլիտի ըլքայ : Վայ անոնց , վայ անոնց բարեկամացն և վայ անոնց՝ որք ինձ նման չ'են հալածեր զանոնք :

Երիտասարդը՝ ծերունւոյն ցասումն իջուցնելու համար՝ քանի մը անոյշ խօսքեր մէջ բերաւ . այլ խոհարարապետը զինքը մղելով՝

— Գնա՛ , կորսուէ՛ , ըստ անոր , բարեկա՛մք Քրիստոնէից . ալ երեսդ չի տեսնե՛մ : Մեր օրդային ցուցակին քու անունդ ջնջել ախտի տամ : Այո՛ , գո՛ւ ալ Նիզամը-Ճէտիտի (1) խումբերուն մէջ զը-

(1) Նոր—գունդ զօրաց :

նա , խառնուէ . այն անհաւատներու և վատ ուրացողներու խումբներուն մէջ՝ որք իսլամութեան անարդանք են : Քու նմանեացդ քով զընա , և իմ անէծքս ա՛լ նետի պէս խղճմտանքիդ վրայ չի պիտի թօթափին : Աա միտյն կը խնդրեմ Բարձրեալէն՝ որ եթէ մեր նուիրական վաշտերուն հաւատքը նորահաստատ ամողարիշտներուն վրայ յաղթանակէ , և եթէ ես ալ (իցիւ թէ շուտ) զայն տեսնեմ , դու գէթ իմ ճեռքէս չընդունիս մահացու հարուածը :

— Հայր իմ , հայր իմ , գոչեց երիտասարդը՝ բազուկները տարածելով . այլ ծերունին հեռացած էր արդէն , և առատահոս արտասուօք Կէճիպի աշերը շլայած ըլլալով՝ չի կրցան ծերունւոյն բռնած ճամբան որոշել : Քիչ մ'ատեն կեցաւ շանթահար : Արդարեւ Ստամպօլի մէջ իր միակ բարեկամու ու սլաշտարսնն Ալի-Օսման եղած էր . և իր ծնողը զինքը երեսի վրայ թողնելէ ի վեր՝ նա զինքը սնուցեր ու խնամեր էր իրը իւր որդին :

Թէե մեծ յոյս ունէր Կէճիպ թէ գուցէ օր մը առատարար վայելէ Սուլթանին շնորհը , որուն մեծանձնութեանը կը օլարտէր իւր ի ֆրանսա ճամբորդութիւնն ու գաստիարակութիւնը , ուստի պահ մ'ըսթափեցաւ . սակայն այնսլիսի բարեկամ մը կորսընցունելուն շատ վշտացաւ . զի ո՞ւր անոր նման մէկը պիտի գտներ : Այն երիտասարդներն , դորս յԵւրոպս երթալէն առաջ կը ճանչէր սէրային մէջ :

անշուշտ սլետութեան զանազան գաւառայր մէջ ցրուած էին . այս խորհամանկ ու անձնական շահույ աեղւոյն մէջ՝ արդարեւ չէր յուսար այն ծերունի ուստային պէս մտերիմ և վեհանձն բարեկտմներ գտնել : Բայց աէրային մէջ ունեցած իր նախոկին ընկերակցաց մին իր սրտին մէջ կենդանի յիշասակ ձգած էր տակաւին :

— Անկարելի է որ Սէֆէր մտնայ դիա , կ'ըսէր այլ ո՞վ գիտէ թէ ցարդ կ'առրի՞ , և ո՞ւր է :

Մինչդեռ այս մելամաղձոտ գողափարաց մէջ ընկղիմած մենաւոր տան մը պատին կրթնցուցած էր ճակատը , որն որ Էյուալի թաղին նոմիներուն մէջէն կը բարձրանար , իգական ձայն մը՝ « Աէմի՛պ Աէմի՛պ » գոչեց :

Գլուխը վեր առնելով երիտասարդը մէկ ակընթարթի մէջ նկատեց ճամբուն վրայ նայող տան մը վանդակապատ պատուհանները : Խորին ըսութիւն մը կը տիրէր անոր բոլորտիքը . « Աէմիտ որիշ բան շը տեսաւ հոն , այլ կանաչագոյն տուն մը , որուն դրաներըն ու պատուհանները փակուած էին : Այս տան արտաքին տեսքը , որն որ Օսմաննեան ամէն երեւելի տանց պէս երկու մասերու բաժնուած էր , մին կանանց համար , հարէմիկք անուամբ , և միւսն՝ որանց համար , սէլամլըք անուամբ , կը յայտնէր թէ տնօր երջանիկ տէրը՝ խիստ հարուստ անձ մը կամ նըշանաւոր ոլաշոնէից մին ըլլալու է :

Երիտասարդն հառաչեց , կարծելով թէ՝ այն

Խորհրդաւոր ճայնը դուցէ իր զանազան զգացմամբք յուղեալ սրտին ճայնն էր, այլ որչափ զարմացաւ երբ տանն ստորին դստիկոնին վանդակաց մին վեր քաշուելով՝ հաղիւ եօթնստասնաժեայ թրքուհւոյ մը շնորհալիր դէմքը շուքին մէջ փայլեցաւ, որն որ ժը պիտ մ'արձակելով՝ ձեռքով զնէմիալ կը հրաւիրէր :

Երիտասարդը երկմտեցաւ մօտենալու . այլ երիւ տասարդուհին ըսաւ անոր համարձակ :

— Մի՛ վախեր, մի՛ վախեր . այս ճամկան մկանաւոր է . ամուսինս ձիով դուքս ելաւ՝ իւր բոլոր մարդերովն, և Սուլթանին սկրայը գնաց, ուստի աներկիւղ կրնանք խօսակցիւ : Սակայն ինչո՞ւ չես մօտենար . ինչո՞ւ այդպէս երեսու կը նայիս : Աւրեմն այդշափ այլոյլա՞ծ է դէմքս, Նէմիալ, որ միտքդ չի ձգեր զյիշտատակ քու սիրելի Երլուզիդ, դստեր Վոլու - Խոլրահիմի : Անհաւատից երկիրն երժալէդ առաջ՝ ես դեռ տղայ էի, դու ինչ աւելի չափահաս էիր, և այնչափ դեղեցիկ՝ որչափ ես այժմ : Գիտե՞ս որ, երկու տարի առաջ՝ ծերունի Պէյի մը հետ ամուսնացուցին դիս . . .

— Խեղճ Երլուզդ, ըսաւ Նէմիալ՝ համակրական խօսքով մը երիտասարդուհին ընդմիջելով :

— Ինչո՞ւ խեղճ կը կոչես դիս . ստուգիւ ամէն Օսմանեան կիներէ երջանկադոյնն եմ ես : Վյուլթանուհւոյ մը չափ աղամանդներ ու մարդարիտներ ունիմ, զոյգ մը դեղեցիկ կովեր, և սլույտ ընելու համար՝ արագա, վեցաթի քայլք մը, և վեց

սև աղախիններ ինձ ծառայելու սահմանուած :

— Արդարեւ երջանիկ ես, այո, երջանիկ ես սյլ միթէ ասոնք կը բաւե՞ն զբեղ երջանկացունելու, սկատասխանեց Նէմիպ :

— Ի՞նչ կ'ըսես, Նէմիպ. Ես ծեր ամուսինս ուրիշ ո՛ւ և է մէկու հետ չ'եմ փոխանակեր : Բանի մը կը վախագի՞մ, անմիջապէս կը կատարուի . ուղած ատենս դուրս կելնեմ, և յաճախ՝ երկու երեք օր բարեկամուհեացս տունը կը կենամ և ինք գէթ չիտրանջար : Եթէ երբեմն յանդիմանէ զիս, գիտե՞ս ինչ է յանդիմանութիւնը . կը գանգատի թէ ինչո՞ւ բաւական չ'եմ զրօնուր, ինչո՞ւ ձեռքս անցած ստակներն առատարար չմ'ե վատներ : Եւ յապացոյց ըսածներուս ճշմարտութեանը՝ նայէ՛ ահա, կ'ուզե՞ս որ ոսկիներով գօտիդ լեցունեմ . սկառ-սլուած քսակս վաղը դարձեա՛ւ կը լեցուի :

— Եւ ի՞նչ է ամուսնոյդ արհեստը, Ե՛լուրդ . հարցուց Նէմիպ անոր խօսքերէն շլացած :

— Ոչինչ . լոկ Եէնիշէրեաց երեսուն երեքեռորդ օրդային չորսամիութեան տիտղոսը դնած է : Վահիր պէյս իր օրդային աստիճանները կը ծախէ այժմ :

— Ուրեմն մարդուն հարստութեանը կը նային և ո՛չ արժանեաց՝ զանի պաշտօնի հասցնելու համար, աւելցուց երիտասարդն : Գիտե՞ս, Ե՛լուրդ, որ եթէ Ենի-Զերեաց բոլոր խումբն այս կերպով հաւաքուէր . . .

— Կը զարմանամ վրադ , Նէճիպ . ստոյգ է որ Աւալուռիստանէն եկած ըլլալդ կըցուցնես՝ այս բաները չը դիտնալով : Լծակցիս բարեգործութիւնքը միայն սկաշտօն ծախելու մէջ չ'են կայանար . այլ յաճախտ առատ վարձ առնելով շատեր կը սկաշտուանէ ընդդէմ հզօր թշնամեաց և նոյն իսկ օրինաց :

— Եւ կարելի՞ է այդ , փսիխաց Նէճիպ :

— Որչա՞փ քրիստոնեայ րայտաներ իրենց ընչից կէսը բարեսիրտ Վահիր սլեյիս նուիրելով՝ աղատեցան մահու դատապարտութենէ :

— Սուլթանին սկաշտօնեայք ալ կը լոե՞ն այս բաները տեսնելով . . .

— Եւ կրնա՞ն յանդգնիլ բերան բանալու և ճիկ մը հանելու : Ասոնց գլուխն անմիջապէս սկարկին մէջ կը նետուի : Կը յիշես անշուշտ որ Եէնիչէրիք իրենց մեծերէն կը դատուին , որք միշտ զանոնք կ'արդարացնեն : Եկո՛ւ , քուզում , եթէ կ'ուզես յառաջդիմել և հարլստանալ տշխարհիս մէջ , եկու Եէնիչէրի եղիր : Ես քեզի հարիւր քսակ ըստակ կուտամ , զորս ամուսնոյս տալուդ սլէս անմիջապէս իւր Օրդային աստիճանաւոր կ'ընէ զքեզ : Կը տեսնես , սիրելի՛դ իմ Նէճիպ , որ դեռ կը սկահեմ զայն խանդն ու քաղցր յիշատակն անոր՝ որ նախ սէր աղղեց ինձ : Այն ատեն մանուկ ըլլսլով՝ բան չէի ղղար քու առջեւ : Այլ այժմ աւելի վործառու եմ : Ուստի , հոդիս , ասկէ ետ-

քը յաճախս տեսնուինը : ԱԵր բարեսիկա Վահիրը  
մեր տեսակցութիւնը չը պիտի կրնայ խմանալ :  
Քանի մը ոսկիտվ սպասուհեացս լռութիւնը կը գը-  
նեմ . և երբ տնի ափիոնի ցնորից մէջ ընկղմի՝ մեր  
կրնանը հեշտալի ժամեր սնցունել . . .

ԵՇԼՈՐԸ ‘յանկարծ լոեց’ տան ներքին կողմէն  
զինք կոչող ձայն մը լսելով :

— Մօրաքոյրս իմինե-Քառը’նն է , ըստ , առ այ-  
ժըմ սկէտք է բաժնուիլ . վաղն այս ատեն հոս գըտ-  
նուէ . այն ատեն յարմարագոյն վայր մը կը գըտ-  
նենք խօսակցելու :

Յետոյ պատանւոյն ճուկատը համրուրելով՝ վար  
քաշեց վանդակը , և Նէմիալ առանձին մնաց ճամ-  
րուն մէջ :

— Թշուա՞ռ ԵՇԼՈՐԸ , վախոաց Նէմիալ . մե՛զը  
որ այս բանական էակը վարուի իրր անբան անասուն ,  
և չը գիտնայ զիւր ոլարտիս , ո՛չ , երբէք չի պիտի  
գամ այս վիժածը , այս զզուելի կինը տեսնելու .  
այժմէն կը սլժգամ անոր վրաց խորհելով :

Հազիւ քանի մը քայլ յառաջացաւ՝ և տհա-  
մեծ աղմուկ մը լսեց խառնաշփոթ ճիչերու և ոտնա-  
ձայններու : Նէմիալ պատի մ’ապաւինեցաւ , և ահա  
տեսաւ որ Եէնիչէրիք երեք ջրհաններ բարձած կը  
վագէին , և անոնց ետևէն կու գար ծերունի ՀԵՐ-  
ԵԿԱ մը՝ մօրուքը վիետելով և աղաղակելով . բազմա-  
թիւ շուներ խեղճին ետևէն կը վագէին՝ հանդերձին  
քղանցքը խածնելով , և իրենց հաջիւնովը անոր ա-

Դաղակը կը խեղդէին : Զրհանակիրք Նէմիալէն քիչ  
մը հեռու կեցան , և իրենց գործիքները վար դնելով  
ձեռքերնին կապած կանգ առին :

Յանուն կենդանի Աստուծոյ , պօռաց Հրեայն՝  
կուրծքը ծեծելով և սոսկալի հառաջներ արձակելով ,  
տունս կ'այրի՛ , մոխի՛ր կը դառնայ . . . Եթէ քիչ մը  
ուշանաք , ալ կը լմննայ բանս . 500 զրուշ չը խօս-  
տացա՞յ ի սկզբան Եթէ ձեր սլարտքը կատարէք . և  
դուք 10.000ի հանել չըստիպեցի՞ք զիս . ահա կան-  
խիկ կուտամ ձեղ . գէթ աճապարեցեք . հուրը կը  
յառաջանայ այժմ . . .

— Յառաջ , տղաք , ըստ Զրհանակրաց գըլ-  
խաւորն . Հրեայն 10,000ին կրկինը պիտի վճարէ :  
— 20,000 , վայ ինձ , հոգի՞ս պիտի առնէք . . .  
երբէ՛ք չեմ տար :

— Եռն շան որդի , ըստ Զրհանակրաց մեծա-  
սորը՝ խարազանով Հրեային երեսը ծեծելով . հոգ  
մ'ըներ , ուզես չուզես պիտի տաս . Եթէ կ'ուզես  
հետեւէ մեղ . քաջ գիտենք որ մառանացդ մէջ 500  
քսակ ստակ պահած ես . այդ ստակներն ի զօրանոց  
պիտի տարուին , Եթէ կրնաս՝ վաղը եկու բաժին  
ուզէ մենէ :

Եւ Եէնիչէրիք իրենց ճամբան շարունակեցին  
խընդալով : Հրեայն , Եէնիչէրեաց զլխաւորին թե-  
զանիքը բռնած՝ Ֆէնէռի խորտուբորդ փողոցներուն  
մէջ կը վազէր , հաջող շուներէն խածուելով :

Նէմիալ , այս բռնաւորական ու սնիրաւ եղելու-

թենէն վշտացած , վերջապէս նաւահանգիստն հաս-  
 սաւ , մաքսատան ծովափիխն առջև : Բազարի օր էր ,  
 և հրապարակին մէջ մեծ բազմութիւն ժողվուած էր :  
 Միւսլիւմաններէ դատ , կը տեսնուէր նաև Յոյն ,  
 Հայ , Պուլկար և Հրէայ ժողովուրդք , զորս հարիւ-  
 րաւոր նաւակներ Պալաթիայէն , Թօրիանէն ,  
 Խասդիւղէն և այլ արուարձաններէն կը տանէին կը  
 բերէին : Զանազան օրդաններու Եէնիչէրիք , հարուստ  
 անցորդները լրտեսելով , անսնց առջև իրենց վե-  
 րարկունները կը փոէին , և կատաղի նայուածք մը  
 կը նետէին՝ իրենց աջ ձեռքը տարձականաց կոթին վր-  
 այ դնելով : Այսպէս , իւրաքանչիւր ոք իր կարողու-  
 թեանն հսմեմատ կը ստիպուէր այդ վերարկուին  
 վրայ ստակ նետել . . . Իւրաքանչիւր խանութ ճակ-  
 տին վրայ ո՛ր և է օրդայի մը յարգելի նշանակը կը  
 կրէր . ինչպէս անճունի գծագրութեամբ ձուկ մը  
 կը ցուցնէր թէ խանութպանը 25րդ օրդային կը վե-  
 րաբերի : Նէմիալ այդ խանութին մէջ Քիւրտ Եռ-  
 սուֆը նշմարեց , իյուսլի սրճարանին պերճախօսը .  
 ուրիշ տեղ զինուց դէղ մը՝ 64րդ օրդային ներկայու-  
 թիւնը կը նշանակէր . հոս ալ Նէմիալ Եռսուֆին  
 ընկերաց մէկը ճանչեց՝ իր դլխուն վրայ կրած ան-  
 հեղեղ վաթթոցէն , որ իր գրասեղանին առջև  
 նստած էր խոժոռ զիմօք : Նէմիալ ուրիշ խանութ-  
 իւնը վրայ տեսաւ խորսիսի ձևեր , որ օրուգպիրի  
 նշանակն էր :

Այս խանութներուն տէրերը կամ վարձուոր ները օճագին արձանագրեալ ըլլալով՝ տեսակ մը տարօրինակ առուծախ կ'ընէին : Մրգա վաճառը, մսածախը, բանջարածախը, առանց իրենց խանութներուն մէջ վաճառք ունենալու՝ կը նստէին, և երբ Հրեայ մը կուգար իր ասլրանքը ծախելու՝ կը գրաւէին զանոնք, ըսելով թէ իրենց սեպհականեալ է ծախելու իրաւունքը . և զանոնք ծախելէ յետոյ հաշիւ մը կը բանային, որով, տուրքին զատ եղած շահը Եէնիչէրիին գրսլանը կը մտնէր : Երջանիկ էր բայան, եթէ գէթ իր կեանքը սլահէր կամ հայհոյանքէ և ծեծէ աղատէր :

Նէճիալ դիտեց նաև որ առուծախի մէջ սլակաս կշխու կամ սխալ չափեր կը գործածեն, և որ այս սլիախ անկարգութեանց քննութեանն համար ոստի կանութենէն ընտրեալ սլաշտօնակիցք անգթաբար կը ծեծէին զայն գնողս՝ որք այս մստին գանգատիլ կը յանդդնէին :

— Ահա Եէնիչէրեայ հռչակաւոր գունդը, ըստ Նէճիալ՝ հեռանալով. ահա Սուլթան Օրխանաց զինուորները, զորս ատենով Համի—Պէկիթաշ տէրպիչն օրհնեց ի պաշտպանութիւն կայսրութեան, որ Մեծին Սիւլէյմանայ խիստ և արդար օրինօք բարեկարգեցաւ : Բայց այս խումբն առաջակաց ջոլիք դարձեր է, որ անտանելի տանջանօք կը նեղէ ժողովուրդն ու նոյն խել վեհասակետը :

Նէճիալ դէսլ ի Տիլան-Կօլու գացող ժողովրդոց

հետևելով Աղ-Մետանը հասաւ , որ Հնոյն Բիւզանցիոնի Զիարձակարանն է . Սուլթան Աէլիմ՝ Ահմէտայ հոյակապ մզկիթը կը մտնէր . 60 սօրաք (թիկնապահ) ուկեհուռ զգեստներով , և սպիտակափետուր բարձր սաղաւարտներ ի դլուխ անցքմը կը սրահապանէին , յորմէ Սուլթանն անցնելով ի սէրայ սկիտի վերադառնար : Պաշտօնեայք , կանաչ թափչէ մուշտակներ հագած , դաշոյննին մերկացած կը սլուցտէին հետաքրքիր ամբոխին վրայ հսկելու , զոր և կը ծեծէին առանց խարութեան սեռի և կրօնի : Սուլսքաց խումբը 400 անձէ բաղկացեալ և չորս խմբակի բաժանեալ , Եէնիչէրեաց կը վերաբերէր , ինչպէս և Փէյիքք , որ ուրիշ խումբ մը կը կազմէին , և երկար նիզակներ ու արոյրէ ուկեզօծ սաղաւարտներ կը կրէին , որոյ դագաթը կը ծածանէին սև փետուրներ , ըստ նմանութեան թիկնապահաց Բիւզանդեան ինքնակալաց : Այս երկրորդ խումբը թագաւորին ուղեկցելու համար 12 հոգի յատկացուցած էր :

Մեր վէսլին դիւցաղնը փութաց երթալ իւր վաղեմի տէրը տեսնելու , այն բարի և համբոյր Սուլթան Աէլիմը , որմէ այնչափ ցոյցեր ընդունած էր համակրութեան և ոիրոյ : Իր ասկադայն այնչափ չեր հոգար որչափ կը փափազէր ներկայանալ Աէլիմայ . իւր խորին երախտագիտութիւնն արտայացնելու համար : Այլ Աէլիմ խիստ կարեւոր մըտածմանց մէջ ընկղուեալ կընա՞ր ճանչել այդ լքեալ

որդեզիրը : Երեք տարի անցած էր անկէ ի վեր : Արնա՞ր յիշել ինքնակալ մը՝ այդշախ հեռաւոր միջօցի մէջ պատահած դէպք մը :

Մինչ Նէմիալ կը խորհէր թէ ինչպէս կրնայ ներկայանալ Սուլթանին՝ տեսաւ զուարթաղէմ երիտասարդ մը, որ իրեն մօտեցաւ, և զինքն անուամբ կոչելով վիզը փաթթուեցաւ :

— Սէֆէ՛ր, սիրելի դ իմ Սէֆէր, դո՞ւ ես . . . գոշեց Նէմիալ :

— Նէմիալ, ի՞նչ կ'ընես Հոս, հարցուց երխուասրդը : Երթանք յարքունիս . Ն. Վեհափառութիւնը դիտէ ի Ստանդոլ վերադառնալդ, և այս առաւ հարցուց թէ սէրայն եկա՞ծ ես :

— Իրա՞ւ կըսես, վեհասլետին մեծանձնութիւնը զիջա՞ւ իր անարժան ծառայն ի յուշ ածելու :

— Լոէ, ըստ Սէֆէր՝ ականջն ի վար ցած ձայնով : Հոս մեր ինքնակալին թշնամիներէն շրջապատեալ ենք . Եէնիշէրիք մեզ կը դիտեն : Զգեստուական է զանոնք մեր դէմ ի թշնամանս գրգռելու :

— Ուրեմն նոր զինուորաց մէջ դասեցար, հարցուց Նէմիալ՝ անոր գլխուն կարմիր բըրդէ գըլխարկը և վերարկուն դիտիլով :

— Էստ Ն. Վեհափառութեան հրամանին, անոր ծառայութենէն ելնելով՝ Նիզամր-Շէտիտի գունդին խառնուեցայ դնդապետի պաշտօնով : Հետքու ի սլալատ եկու, ուր մեր մանկութեան ոսկի օրերը պիտի յիշենք, որք, աւա՛զ, շատ հեռի

Են մենէ : Յիշէ' այն ատենն , յորում մեր Ալեքսանդրին զուարթ աչացն առջև մեզ սիրելի է . գոծ մականները (ձիրիդ) կ'արձակէինք՝ խստերախնժոյդներու վրայ հեծած , անվասա նետերով ըստառագէն : Յիշէ' այն ատենն , յորում ամեն առտու կ'աղօթէինք մեր ինքնակալին կենաց բարօրութեանըն ու երկարութեանն համար , ինչպէս նաև անորթշնամեաց : Կորագլուխ պարտութեանն համար : Յիշէ' այն ատենն , յորում ոսկեթել պատմումանաւ գանգուրք զուսովքս ծալի ծալ , բատիշանին՝ իրր երախսայրիք մեր երախտագիտական զգացմանց Պայրամ ամսոյն անճրեոյն առաջին կտթիլները կը մատուցանէինք մենական յախճապակաց մէջ :

Երկու բարեկամներն Ադ-Մէյտանի ամբոխը մեծ դժուարութեամբ ճեղքելով՝ դէսլի կայսերական դուռն սէրացին ուղղուեցան : Երբ Այխ-Վոֆիաի առջեէն կ'անցնէին՝ մեծ աղմուկ մը լսեցին , որոյ անմիջապէս յաջորդեց խորին լութիւն մը : Բոլոր անցորդք՝ շուարած ու դողդոջուն՝ մէկդիքաշուեցան՝ ընդարձակ անցք մը ձգելով :

— Գաղաններք , գաղաններք . . . գոչեցին :

Նոյն միջոցին քարա-քուլուքիներն յամրաքայլ կը քալէին զոյդ զոյդ՝ իրենց ուսերուն վրայ կը ընկ ցող մը , որմէ իրենց կարգին ապուրը սլարունակող կաթսայք կը կը կախուէին : Կաթսայակը բաց առջեէն կ'երթար օրդացին Աշճի-Պաշլն , հինգ ոտք երկար վայտէ հսկայական զգալով մը զին-

եալ , լոիկ մնջիկ դուշացող ժողովրդեան վրայ դաժան տկնարկներ կը նետէր անդադար , և յարգանաց ամենափոքր թերութիւն մը զործողները կը սլատժէր խստիւ :

Կաթսաներուն անցնիլը կ'իմացնէին շղթայք , որ կաթսայակրաց քայլերը կանոնաւորելու եղանակու կը շառաչէին . այս արծաթաղօծ շղթայք քարաբուրքիներու կուրծքէն կախուած էին : Անհեղեղ փաթթուցներ դրեթէ և ոտք երկայն և 3 ոտք լայն այլանդակ կերպով կապուած՝ խոհանոցի ահոելի պաշտօնէից գլխոցը վրայ դետեղուած էին , և այս տեսիլն ամբոխին սարսափի կ'ազդէր : Այս սարսափն աւելի ես կ'աճէր ի տես ատրճանակաց և այն խարազանաց , որոց ծացրէն կասլարի գնտակներ կը կախուէին :

Երբ կաթսայներն անցան , ամեն մարդ վերստին գուարթացաւ . և երկու երիտասարք կրցան իրենց ուղին շարունակել :

— Բարեբախտաբար , ըստ Աէֆէր՝ առ Նէմիպ , այս ապուրապաշտից վայրագոթեան զոհ չ'եղանք . զի կտթսայից խոհանոցէն ի զօրանոց փոխաղրիլը դուն ուրեք տեղի կ'ունենայ՝ առանց եարադանի հարուածներ տալու :

— Առաւել յարգանք կուտան իրենց կաթսայից՝ քան իմամբ-ազամին մեծ դրօշին երամ նոյն իսկ Քուրանին :

— Կը հաւատամ . և զիտես որ եթէ օրդու

մը պատերազմի մէջ կաթսայ մը կորուսնէ՝ անոր ամեն պաշտօնեայք կը հրաժարին, և ուրիշ օրդայներու ընդունելի չեն կրնար ըլլալ այլ ես :

— Կոապաշտութիւն, սիրելիդ իմ Սէֆէր, կոապաշտութիւն. և կը յիշեմ որ դեռ ես Եւրակա չը գացած՝ այս խռովարարք ուրիշ օրդայներու կաթսայները խլելով՝ դիւրաւ ապստամբութիւն կը յարուցանէին, և ասով՝ կը ստիպէին զանոնք՝ որ իրենց հետեւին :

— Մեր վսեմախոհ Վեհապետն այս զեղծումները բառնալ ուղեց, ըստ Նիզամը-Ճէտիտի գնդապետը. բայց աւազ . . .

— Ինչո՞ւ, բարեկամ, հարցուց Նէճիպ :

— Վասնզի չը պիտի յաջողի :

— Ի՞նչ պատճառաւ :

— Անոր չափազանց բարեսրտութեանը պատճառաւ : Այս պահուն, սիրելիդ իմ Նէճիպ, մեր Սուլթանին իրաւանցն ու բարեկարգութեանցը դէմ կը դաւաճանին . եթէ այդ դաւաճանաց գլխաւորները գլխատուէին՝ դաւն իր խանճարրոց մէջ սլիտի խեղդուէր : Մուստաֆա բաշայն ու Ստամբոլի մեծ միջինին . որք պաշտօնէից՝ իշխանէի բանակն երթալէն ի վեր յանձն առին անոնց տեղ իրերը կառավարել՝ մատնիչ են . և Եէնիչէրեաց ապստամբութեան հուրը կ'արծածեն, և մեղ դէմ կը գրգուէն ոմբածիզներն ու եսամաքները, որք Նիզամի զօրաց հետ զՊոսփոր կը պաշտպանեն : Սէլիմ ա-

նոնց դաւերը գիտէ , այլ կը համբերէ տակաւին :  
Արարին երեսն սպիտակացնել ուզողը ժամանակն  
ու օճառը կը վատնէ : Մեր հեգ Վեհապետն ուշ սիւ-  
տի ղարթնու : Աստուած սլահէ զանի՝ իր Օսման  
ու Խոլրահիմ նախորդաց աղետալի քախտէն :

Եւ զայս ըսելով՝ Մէֆէր ու Նէմիալ արքունա-  
կան շքեղ դռնէն մտան յասլարանս Սուլթանաց :

## ՍՏՈՒԵՐՆ ԱՍՏՈՒԺՈՅ

Նէմիոլ ու Աէֆէր, երկու բարեկամք անցան  
արքունեաց առաջին դաւթէն, որ անկանոն պատ-  
ուար մ'ունի արքունի զրամատունը ներփակող,  
և զինատուն մը, որ երրեմն Սրբուհւոյն Խրինիի ար-  
քունական եկեղեցին էր . և քանի մը նկարագրա-  
կան շէնքեր, հոս հոն ցըրիւ կառուցուած : Յետոյ  
հասան ի դուռն կեղրոնական (Պոդա քարուտ), որ  
տեսակ մը մարտկոց է՝ երկու աշտարակիկներով զօ-  
րացած, և այս դռնէն երկրորդ դաւիթ մը կ'եր-  
թշցուի : Այս ահռելի վայրերը, հին յաղթանա-  
կօք ու զինուք զարդարեալ, խորհրդաւոր սարսափ  
մը կը ներշնչեն զննողներուն . զի անյիշատակելի  
ժամանակներէ ի վեր հոս ի տես կը դրուէին այն  
դժբաղդ գլուխները՝ զորս տիվանին կասկածոտ  
քաղաքականութիւնը ի սուր դատապարտած էր :  
Այս երկրորդ դաւիթին մէջ, որոյ վրայ հովանի  
կը ճգէին երկու շարք նոճեաց և լայնատերև ծա-  
ռոց, և որ երջանկութեան դուռ կոչուած շէնքի մը  
կը յանդէր՝ ժողովուած էին Ա. Պօլսոյ սլահապան  
Եէնիչէրիք՝ առանց օրդաններու, Փէյիքներու և սօ-  
շաքներու, որք անբաժան էին ինքնակալէն :

Այս բոլոր կարգերը, որոց վրայ կը հսկէին  
աստիճանաւորք ու գլխաւորք, կարմիր սքուֆաներ

կը կրէին, որք իրենց զինուորական համազգեստը կը կազմէին. միայն սքուֆան միաձև էր. այլ միւս հագուստներուն գոյնը Եէնիչէրեաց կոմքին ձրգուած էր : Պաշտօնական օրեր խիստ երկար պատմումաններ կը զգենուին. այլ որովհետեւ քղանցը կ'արդիլէին իրենց գնացը՝ անոնց ծայրերը կ'ամփոփէին գոտիներնուն մէջ : Իրենց զէնքերն աւ զանաղան էին որպէս և զգեստոց գոյները . ոմանք մէջքերնին եարադաններ ունէին, այլք արծաթպատեանով դաշոյններ ու ատրճանակներ, որք խաչած շարուած՝ լահօռ շալէ գոտիներնուն տակ զետեղուած էին :

Եէնիչէրիք սէրային գաւթին մէջ կը կենային իրենց խմբեակներու կարգին և թուոյն համեմատ, իրենց թոշակին ու այս առթիւ Սուլթանէն իրենց տրուած ճաշին սպասելով : Այս զօրաց առջև, որ իբր ի մարտի՝ զուգահեռական շարուած էին, արքունի խոհանոյին սպասաւորք 600 պղընձէ անօթներ դրած էին : Նշանը տրուելուն պէս՝ զինուորք՝ ըստ սովորութեան կերակրոց վրայ կը թափէին, ուժգնակի մխելով իրենց դգալներն, զորս պըղընձէ սպատեաններու մէջ դրած՝ սքուֆաներուն վրայ կը կրէին . այլ այնպիսի պարագաներու մէջ երբ Եէնիչէրիք կը զայրանային, և երբ օճագներու գըլուխները կը տաքնային՝ կերակուրին չէին մօտենար՝ ինչպէս Հռովմայ նուիրական հաւերն (<sup>1</sup>), ասի՝ մօտա-

(1) Հռովմայի մէջ ատենով մասնաւոր տեղ մը հաւեր կը պա-

լուտ ապստամբութիւն կը նշանակէր և սարսափ կ'աղղէր :

Որոշեալ նշանը տրուեցաւ, այլ Եէնիչէրիք չը շարժեցան իրենց տեղէն։ Աէֆէր ու Նէմիալ կոյժակնահար մնացին։ Քառորդ մը յետոյ՝ արքունեաց աստիճանաւոր մը տխրութեամբ յառաջանալով՝ հրամայեց որ ի խոհանոց փոխազրեն կերակուրները, որոց շոգիններն տակաւին կ'ելնէին։

Կարմիր կաշիէ մեծ տոսլրակներ բերուեցան, որը օրդաններուն թոշակները կը պարունակէին, և վճարումն սկսաւ. Խորաքանչկըր խումբ ըստ կարգի կը կոչուէր իրեն զլիսաւորին կամ յօրպաճիին անուամբը։ Այս զլիսաւորաց խորաքանչիւրը կը ներկայանար՝ ձախ ձեռքին պարապ քղանցը աջ ձեռքով բռնած, և Թուրքական հանրածանօթ բարեւը (դէմիննի) կուտային՝ աջ ձեռքը բերնէն ճակտին տանելով. յետոյ խոր զինուորներն իրենց յատկացած տոսլրակները կ'առնէին կը տանէին, և սակա կը բաշխէին։ Այս թոշակի բաշխումը զէնքի տակեղող զօրաց չ'էր ըլլար միայն, այլ և ծառայից սրաշտպաննեալ մարդոց ու տղայոց, և շատ տարիններէ ի վեր մեռած զինուորներուն ընտանեացը։ Ասկէ յայտ է թէ ո՛րչսափ կաշառ կ'ուտէին աստիճանաւորք, զի ստակ կ'առնէին նոյն խոկ այն Եէ-

հէին, երբ նոյն հաւերն գարի չուտէին, ժողովուրդը շարադուշակ դէպքի մը նշան կը համարէր զայն ։

նիչերեաց հոմար՝ որոնք դեռ թոշակ առնելու չէ։  
ին որոշուած։

Այս միջոցին թնդանօթի գոռումներն իմացուցին թէ Սուլթանը ճամփէն կը վերադառնայ յարքունիս։ Աէֆէր կռահելով թէ ինքնակալը իմացած է օճազին դժկամակութեան նշանները, գուշակեց որ նա չը պիտի մտնէր յարքունիս մեծ դռնէն՝ դայթակլութեան առիթ չը տալու համար։ Ուստի տարաւ իւր բարեկամը դէսլի այն չէնքերը՝ որք երկրորդ գաւթին խորերը կը գըտնուին, և երկուքն աւ՝ Եղշանկութեան դռնէն անցնելով՝ իշխանին թիկնապահաց սենեակը հասան, որ դահի սրահին կից էր։

Աէճիս՝ իւր նախկին պաշտօնակցաց շնորհառոթիւնքն ընդունելէ յետոյ՝ սենեակի մը վարագոյրով գոցիլսծ դրանը քով առաջնորդուեցաւ լոիկ, որ ինքնակալն իր բարձրագոյն պաշտօնէից հետ կը խօսակցէր։ Պատանին կամացուկ մը վարագոյրը վեր առնելով՝ դահուն սրահը դիտեց գաղտնի։

Աէլիմ Գ. ինքնակալն ինքնակալաց, բաշխող թագաց ու թագաւորութեանց աշխարհի, պաշտօնեայ սրբոց քաղաքացն Մէրքէի և Մէտինէի, ուրն Կամասկոսի, — բուրումն Պրախտին — ոլաշտականն օրհնեալ քաղաքին Երուսաղեմայ, վեհապետ Արարիոյ, Ավրիկէի, Ֆրաքի, Պասրոյի, և Պալտատի, աթոռանիստ մայրաքաղաքի Խալիֆայո թեան, ստուերն Աստուծոյ ի վերայ երկրի։

կը նստէր ոսկեթել գահին վրայ , մեծավայելուչ  
ամսիովանիի մը ներքեւ , որոյ տասն ծայրերէն մար-  
դարտայեռ ծոսկեր կախուած կ'օրօրէին : Այ կողմը  
կեցած էր սուսերակիր մը , որ արքունեաց մեծ աս-  
տիճանաւոր մ'էր , ամենուրեք Սուլթանին ետևէն  
կ'երթար , և էր դահիճ մը կայսեր հրամանաց անմի-  
ջական գործաղիր :

Գեղանկար գզրոցի մը մէջ երկու աղամանդա-  
կապ սարրֆներ կը փայլէին , որոց ճակտին վրայէն  
փետուր մը կը բարձրանար . պատոին վրայ ալ կա-  
խուած էր նահապետական սուրն ըստ աւանդու-  
թեան . ասոնք Օսմանեան կայսերաց համար թագի  
և արքունի գաւաղանի տեղ կը ծառայեն : Այս  
սենեակը , որ ընդունելութեան սենեակ (Որդ օտա-  
սը) կը կոչուէր , չորս դուռ ունի , որոց խրաքան-  
չիւրն այլ և այլ գործածութեանց սահմանուած է :  
Առաջին գոնեն միայն Սուլթանը կը մտնէ . երկ-  
րորդէն կը մտնեն անոնք՝ որք այս թոյլտուութիւնն  
ունին . երրորդը կը գործածուի ղետպանաց իրենց  
պետութեանց կոմէն առ բատիշահն մատուցած ըն-  
ծայներուն . իսկ չորրորդը , որ Պատժոյ դուռ սոսկա-  
լի անունը կը կրէ , կը բացուի միայն այն ատեն՝ երբ  
Վէզիր մը կամ բաշա մը , կամ ո՛ր և է բարձրագոյն  
սրաշտօնեայ մը՝ մատնութեամբ կամ ուրիշ ծանր  
յանցանօք ի մահ դատասլարտուած՝ գահին սենեա-  
կը կը մըտնէ վերջին վճիռը առնելու : Այս դրան  
ետև՝ դժբաղդ դատապարտեալը՝ դեռ վիզը դահճին

չը տուած մահմետական աղօթարանի մը մէջ կը գտնէր ինքզինքը՝ վերջին աղօթքն ու դղջումը մատուցնելու, և ազբխոր մը՝ վերջին լուացումն քնելու ի վրկութիւն հոգւոյ:

Աէճիալ անզուսպ ուրախութեամբ իւր վեհապետը նկատեց՝ առանց նայուածքը խոնարհեցնելու հարկ եղած յարգանքը մատուցնելու համար: Աէլիմայ ազնիւ քնաւորութիւնը ջերմագին կը սիրէր, այն բարի հոգւոյն, այն ընտիր մասց որ Թոռքիոյ դառնագոյն սրարագայից մէջ իսկ անոր վերածնութեան գաղափարն ունեցաւ, և անոր գլուխ ելնելուն վրայ վստահ կեանքն ու գահն ի վտանգի կը դնէր հպատակաց բարօրութեանը համար:

Աէլիմայ բոլոր բարութիւնք ու ձիրք իր գեղեցիկ գիմաց վրայ կ'անդրագառնային, զորս կը հոգեւորէին խոշոր սև աչեր-յաճախակի մելամաղձոտ: մուսուլեան սարքքը՝ վետուրներով ու աղաժանդեայթանկագին հիւսքերով պճնեալ, սև, խիստ ու կարծ մօրուքը, աւելի պատկառելի կը հանդիաայնէին իւր կերպարանը: Գրեթէ 45 ամեայ էր յայնժամ, թէև ճակատը խորչոմներ կը կրէր, տաղոկալի թագաւորութեան մը տաղնապանացը նշանակ, սակայն գօրաւոր կաղմ ու արտաքոյ կարգի քնական կարողութիւն մը կ'երեւէր անոր վրայ: Իւր դիմաց մէծ վայելչութիւնը կը կրկնապատկէր զգեստուց չքեղութեամբն ու մեծագին ականց վայըմունքովը, որք իր կանաչ թաւշէ երկար մուշտակին կոճակնե-

ԱՌ ԿԸ ՃՆԱՍՅՆԵՒՆ :

ՍԵԼԻՄ Գ. • Հ'Է ԹԵ ՄԻԱՅՆ ԱՄԵՆԵՆ ԿՐԹԵԱԼ ՕՄ-  
ՄԱՆՍՅԻՆ ԷՐ, ԱՅԼ և ՀՆՈՐԴԱԼԻ ՔԵՐԹՈՂ և Պարին  
ԱԼԵՐՃԱԽՈՍ ՀԵՂԲԻՆԱԿՐ : ԱՐՄԱՐԱԳ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԳՐՐ-  
ՔԵՐԸ ԼԱւ ուսած էր, և ո՞չ թէ ի զարմացմանէ  
Լամ ի նորասիրութենէ ՊՐՊԵԱԼ՝ այլ ներքին հա-  
մոզմամբ կ'ուզէր Օսմանցոց մէջ մտցնել ԵՎՐՈՍԻԿ  
արհեստական յառաջդիմութիւնը :

Նորին ՎԵՀԱՓԻԱՌՈՒԹԵԱՆ առջեւ յոտս ու աչք  
ի գետին կը կենային խորհրդականաց ու ՍԵԼԻՄԱՅ հա-  
ւատարմագոյն ծառայից երեքը՝ տախտակամածը  
ծածկող մեծաշուր օթոցին վրայ : Ասոնցմէ մէկն  
էր Իպրահիմ էֆէնտին՝ նախկին Քեահեա-Պէյը, այ-  
սինքն արտաքին գործոց սլաշտօնատան քարտու-  
ղար, որ պաշտօնէն ընկած էր հակառակ հրամանին  
ՍԵԼԻՄԱՅ՝ ԵՀՆԻՉԵՐԵԱԳ մէկ ապստամբութեանն ա-  
տեն . իսկ Մահմուտ էֆէնտին, խորհրդականն էր  
Սուլթանին, և ԱՀԱՄԵՄ Պէյն, անոր աւագ թիկնա-  
պահը : Այս երեք խորհրդականնք Սուլթանը հա-  
ւաստի ըրին թէ ապստամբութեան ոգին ԵՀՆԻՉԵՐ-  
ԵԱԳ մէջ տարածուած է մեծ ՎԵՂԻՐԻՆ քայլաքամ-  
այսինքն անոր առժամանակեաց գործակատար  
Մուստա բաշայի գրգռութեամբ, ինչպէս և ՋԵՂԻ-  
ԻՒ-ԻՍՂԱՎԻՆ՝ այսինքն մեծ միտիղիին գրդմամբ .  
զատնք ըսելով Սուլթան ՍԵԼԻՄԱՅ ոտիցն առջեւ  
ընկան՝ հրաման խնդրելով զանոնք ձերբակալելու և  
սպաննելու :

— Երկուքն ալ քիչ ատենէն հոս սլիտի ներ՝  
կոյանան . անոնց կը սպասեմ , սպատասխանեց  
Աէլիմ :

— Ուրեմն արդարութիւնը սլիտի կատարուի՛ ,  
գոչեց իսլրահիմ էֆէնտի՛ զուարթ ակնարկ մը նե-  
տելով Պատժական Պրան վրայ :

— Թող ներէ ինձ Ն . Վեհափառութիւնը ,  
փափաց Մահմուտ էֆէնտին խոնարհելով , քարու-  
ճիներն իրենց սպաշտոնին գլուխոր հրաւիրեմ , փոել  
տամ աղօթարանին զորդը , և ապտեադի աղրիւրին  
մէջ մաքուր ջուր տամ լնուլ՝ իրենց վերջին նա-  
մազին համար :

— Գնա՛ , ըստ Աէլիմ . Աստուած ընդ մեզ  
է . և կը զամ որ անոնց վրայ մեծ ոճիրներ չը  
դտնեմ :

Կոյն միջոցին գլխաւոր ոստիկանը ներս մտնե-  
լով՝ յիշեալ երկու անձանց գալուստն իմացուց :

— Կողեմ , աւելցուց Աէլիմ , որ անոնց կե-  
նաց ու աղատութեան վրայ ոչ ոք ձեռք դնէ աւ  
ուանց իմ հրամանիս :

— Ակնարկ մը միայն յարեց աւագ թիկնապա-  
հըն Ահմէտ-Պէյի , և դատասլարտութեան դուռն  
անմիջապէս կը բացուի :

Մուստա-Բաշան մտաւ գահուն սենեակը՝ Յէյի-  
իլ-իսլամին ետևէն : Պուրուշ կեցած էին սպառա-  
գէն , անշարժ ու լոին՝ Պօստանձի պաշրք , այսին-  
քըն արքունեաց սլահապան դինուորք , որք կը ճան-

չուէին իրենց երկար ու կարմիր սքուֆաներէն, ուրոց ծայրը մինչեւ կռնակին կէսը կը հասնէր. իսկ քարուճիք այլուստեք կու գային : Երբ դրան վարադոյրն իջաւ նորեկներուն ետեւէն՝ մահու դալուկ մը քայմաքամին և միւֆրիին դէմքը սլատեց : Երբ պաշտօնական բարեւը Սուլթանին մատուցին՝ այսպէս խօսեցաւ Սէլիմ :

— Հօճա, ըստ օրինաց կրօնի գլխաւորին, և դու, Լա՛լա (կառավարիչ), կրկնեց՝ Քոյմաքամին դառնալով, — և այս տիտղոսներն ըստ քաղաքական սովորութեան կուտար անոնց — 19 տարի է որ փառապանծ քեռւոյս Սուլթան Ազրո-Խուլ-Համիտի մահը զիս Օսմանեան գահին վրայ բարձրացուց . կը հարցնեմ ձեզ, կարելի եղածին չափ չ'աշխատեցայ սկետութիւնը ամրացնելու և զօրացնելու՝ վարելով զայն արդարութեամբ և առաքինութեամբ :

— Ինքնակալսց և ոչ մէկը Զեր Ակհավառութեան չափ բարիք ըրաւ այն անթիւ հսկատակաց, պատասխանեց Մուստա-Փաշայն՝ դլուխը մենչեւ յերկիր խոնարհելով :

— Պաղրեցուցի պաշտօնէից եղծմունքը, և հըսկատակաց տառապանքը թեթեցուցի . միրիին տարեկան մուտքը 200,000 քսակի չը բարձրացուցի՞ , մինչ ինէ առաջ այս գումարին կէսը հազիւ կը մըտնէր հասարակաց գանձին մէջ :

— Ճշմարիտ է, պատասխանեց միւֆրին՝ ձեր մտկ կերսկասով սկատած սամոյը մուշտակին եզերքը

վրայէ վրայ բերելով ու կուրծը ծածկելով, Աստուածական մէջ գուշակ է առաջ գործութիւնը, կրկնեց Սէլիմ։ Փառագութեան այնչափ բարեղործութեանց :

— Երբ իդահ ելայ, ի՞նչ վիճակի մէջ գտայ ծոյն վային զօրութիւնը, կրկնեց Սէլիմ։ Փառագութեան անդադար կը խլէին և իհուր կը ծախէին Մալթացի ծովասլատուկք։ Ես Ֆրանսայէն ճարտար նաւակերտներ չը բերի<sup>5</sup>, որ մեր նաւարանը վերականգնեցին, և միայն Ստամբոլի, Ռոտոսի և Սինալի նաւահանդիստներէն երեք տարուան մէջ քսան երկային նաւեր հայթայթեցին մեզ։ Այժմ, նաւատիքս, վոխանսկ գողնութու և ինձ հպատակ գաւառացիներս հարստահարելու, նաւուղղութիւն և ծովու վրայ մեր թշնամիները յաղթելու արուեստը կ'ուսանին։ Յամաքային զօրաց վրայ ըրած բարեկարգութեանցս մէջ ի՞նչ թերութիւն կը տեսնէք։ Կը ըսեմ որ խորվարաք ոմանք զանոնք ամպարիչտ և խրամ կրօնից ոգւոյն հակառակող կ'անուանեն։ Մէր Ա. Գրոց մէջ չ'է գրուած։ «Պատերազմ՝ անհաւատից դէմ ի՞նչ միջոցով որ կրնաս»։ Արդի նաւային զօրութիւնս չ'է որ ՂԱքեա ոլաշտուանեց Դիւցաղնարար ընդդէմ Նարօկոնի։ և այս ալ սյդ սկզբան գործադրութիւնը չ'է :

— Այո՛, Վեհափառ Տէր, պատասխանեց միւֆրին՝ կեղծաւորութեամբ։ Զեր խոհականութիւնը մերինէն զերազանց է, և մենէ աւելի զարաւ

գայն կը զննէ : Եւ եթէ յանդդնեցանք տղիտու  
թեամբ մերժել Զեր գովելի բարեկարգութիւնքը ,  
որովք կրօնից ու տէրութեան փառքը կ'աճեցնէք և  
մեր միտքը դատապարտեցէք և ո՛չ մեր սիրտը :

— Թէ գլուխնիս և թէ ժողոանդութիւննիս ,  
ԶԵՐՆ են ամեն բան , կրկնեց Սուստո-Բաշան . և  
քանի՛ երջանիկ սիրտի ըլլանք՝ երբ զանոնք զոհենք  
ի յարատեռթիւն փառաց պետութեան :

— Կ'ըսուի թէ Եէնիչէրիք ապստամբիւ կը ըս-  
պառնան , կրկնեց Սէլիմ , և երկուքդ ալ կ'ամ-  
բաստանուիք իրր գրգուիչ իրենց կրօնական մոլեգ-  
նութեան :

— Այդ զրապարտութիւնքը մերժելու համար ,  
որովք զմեզ Զեր Վեհափառութեան առջեւ աղար-  
տել ուղեցին , ըստ Յէյխ-Իւլ-Խալամը՝ աչերը դէպ  
յերկին բարձրացնելով , ուրիշ բան չ'եմ խնդրեր՝  
բայց միայն հրաման՝ անոնց զօրանոցները երթալու-  
և նոցա հետ խօսակցելու . և գլուխս գրաւ կը դը-  
նեմ՝ եթէ զանոնք իրենց սլարտուց մէջ չը բերեմ  
վերստին :

Սէլիմ գիտէր թէ այս բողոքները անկեղծ չ'է-  
ին . սակայն արիւնչեղութենէ ալժդալով ի բնէ , և  
յուսալով թէ սիրտի ուղղեն զիրենք՝ իրենց անցու-  
ցած վտանգը յիշելով , իւր անձնական ասկահովու-  
թիւնն առ ոչինչ գրեց :

— Աղա՛տ էք , ըստ , կը հաւատամ ձեր զըլջ-  
ման : Փոխանակ սլատժոյ՝ նոր վարձատրութիւններ

ու սլատիւներ ձեղ կը սպասեն , բաւ է թէ համաշ  
զէք ՇԵՔՆԻՉՔԻԱ՝ որ իմ միակ իղձս հալատակաց  
երջանկութիւնն է , և սիրելի ընէք անոնց իմ կար-  
գադրութիւններս :

Պատժոյ դուռը ծածկող վարագոյրը շարժեցաւ  
յանկարծ՝ իրր դողդոջուն ձեռքէ մը մղեալ . միւս  
դրան վարագոյրը բարձրացաւ , և երկու պաշտօնա-  
կալները դողալով , ո՞չ յերկիւղէ , այլ յուրախու-  
թենէ , ժակիտ ի շուրթ՝ Պօտանձիներու շարքին մէ-  
ջէն անցան , որոց վրայ ակնա՛րկ մ'անգամ նետելու  
չ'էին համարձակած՝ ներս մոռած ատեննին :

— Աւա՛զ , փախսաց Աէֆէր՝ անոնց մէկնիւը  
տեսնելով . եւ հառաշելով՝ Նէճիսի ձեռքը սեղ-  
մեց տիսրութեամբ :

— Ես ալ նոյնակս այս երկու մատնիչներու  
զշջման շ'եմ հաւատար պատասխանեց Նէճիսի՝  
քանի մը քսյլ առնելով ,

— Դժբաղդ Աէլիմ՝ զանոնք ազատ թողլով՝ իւր  
մահուան դատակնիքն ստորագրեց , ըստ Աէֆէր :

‘Եյն ատեն՝ ոստիկանաց արծաթ գաւաղան-  
ներն դետնի վրայ հնչեցին և հազիւ 20 ամեաց  
երկու երիտասարդք յառաջ մատեան ընդ սկաշտ-  
սկանութեամբ բազմաթիւ ներքիննեաց :

— Յահզատէնե՛րը , փախսացին պահապանք ի-  
րարու :

Նէճիսի ճանչեց Մահմուտն ու Մուստաֆայն ,  
դերկու թագաւորագունս , որք համիտի որդիքն ու

Սէլիմայ եղրօրորդիքն էին, առ որ կուգային մատուցնել իրենց ողջոյները : Երբ գահի սենեակը մտան՝ Նէճիպ իւր առջի դիրքն առաւ դրան քով, և վորքը իւր ծերպէ մը գաղտնապէս նայիլ սկսու :

Նէճիպ, Սէլիմայ անմինջական ծառայութեանը մէջ չը մտած, Մահմուտ շահզատիին կը ծառայէր՝ անոր հետ փակուած ըլլալով այն քէօշքերէն մէկուն մէջ, որք արքունի սլարտիզին միջավայրը կառուցուած են, և յորս իրենց թշուառ օրերն անցունելու ստիպուած են արքայազունքը ըստ Օսմանեան սովորութեան : Նէճիպ երիտասարդ Մահմուտին վըրայ համարձակութիւն և աշխոյժ կը տեսնէր, որք կ'երաշխաւորէին թէ այն հաստատ և ուղիղ բնաւորութիւնը պիտի ունենար եթէ երբէք ի գահ բարձրանար : Մինչ անոր Մուսթաֆա եղրայրը ծոյլ անհոգ վոփիոխամիտ և անփոյթ էր իր միտքը յոդնեցնող ո՛ր և է ուսման, Մահմուտ, Ընդհակառակին, անյագութեամբ կ'ուսնէր Արար դաստիսրակին իրեն յանձած թուրք, սլարսիկ, արար մատեանները : Իր դաստիարակ ծերունի ներքինւոյն սահմանափակ հմտութեամբը չը բաւականանալով, ինքզինք բանաստեղծական ընթերցանութեանց տուառ, յորս մնունդ կը գտնէր իւր բորբոքեալ երեակայութիւնը. ինք ալ գրեց բանաստեղծութիւններ, որոց մէկ քանին քիչ շատ գեղեցիկ են :

Սէլիմ իւր եղրօրորդիներն ընդունեց սովորական քաղցրաբարոյութեամբ : Նախորդ Սուլթանաց

ակս խիստ կասկածոտ չ'ըլլալով , որք զարքայաց-  
ղունս քաֆէսին մէջ փակած՝ տարին անգամ մը  
միայն դուրս կը հանէին , Սէլիմ կ'ընդունէր զանոնք  
երբ ուզէին , և յաճախ ինք կ'երթար՝ անոնց ա-  
ռանձնոթիւնն սիոփելու :

— Որդեակ , ըստ Սէլիմ՝ առ Մուստաֆա ,  
եթէ երբէք բարձրեալը զբեղ ի զահ կոչէր՝ ինձ  
յաջորդելու , ի՞նչ սիտի ընէիր նախ և առաջ :

— Խցիւ թէ Մարգարէն հեռացնէ այդ օրը ի-  
նէ , սլատասխանեց շահզատէն դողալով :

— Պատասխանէ՛ շարունակեց Սէլիմ . որո՞ւ  
սիտի վստահէիր :

— Արօնից սրբազն սլաշտօնէից , Եէնիչէրեաց  
անխախտ խումբերուն , սլատասխանեց Մուսթա-  
ֆա՝ զաշերը խոնարհեցնելով :

— Խոկ դո՞ւ , հորդուց Սէլիմ՝ առ Մահմուտ ,  
որո՞ւ սիտի վստահէիր :

— Խնձի , սլատասխանեց սլատանին՝ դուռը-  
թեամբ :

— Ի՞նչ նալատակաւ :

— Ժողովուրդոց մեծոթեանն ու երջանիու-  
թեանը :

— Բայց դժբախտաբար , միշտ դիւրին չ'է այս  
բանս , ըստ Սէլիմ հառաջելով :

— Կամքը ոյժ կուտայ , շարունակեց Մահմուտ :

— Բայց գիտե՞ս ո՞րչափ ընդդիմութեանց յաղ-  
թել հարկ է երբեմն :

— Օսմանայ սուրը , կրկնեց Երիտասարդ արքայադունն , ամենակարող է Փատիշահին ձեռացը մէջ :

— Ո՞վ քեզ այս համոզումը ներշնչեց , հարցուց Սէլիմ շուարելով :

— Մեր խռովութեանց սղատմութիւնը , բազմաթիւ Սուլթանաց դժբախտութիւնը , ապերասան զօրաց յաղղնութիւնը . . .

— Լոէ , իսեղճ պատանի , գոչեց Սէլիմ՝ Մահմատի աջը սեղմելով սրտայոյզ : Զես գիտերինչ վտանգաց կ'ենրթարկէ զքեզ այդ անխռհեմ խոռքերը : Բարեբախտաբար , աւելցուցուց ցած ձայնով՝ չորսղին կեցող պաշտօնէից վրայ անհանդիստ ակնօրկներ ձգելով , բարեբաղդարար այդ խոռքերը չը պիտի լսեն Եէնիչէրիք :

Մուսթաֆա իւր Մահմատ եղբօր վրայ դաժան նայուածք մը նետեց , և հոգւոյն չարութիւնը իւր շրթանց ցուրու ժպաին մէջ նկարուեցաւ :

Այս միջոցին՝ Սուլթանին խորհրդական Մահմատ էֆէնտին գահոյից սրահը վերադարձաւ՝ մասնեան մը կրելով ի ձեռին . Սէլիմայ մերմենալով՝ նշանացի արտօնութիւն խնդրեց իւր օիլոջ ականջըն ի վար խոռելու : Մատեանը ինքնակալին առջերանալուն պէս՝ երեսին գոյնը նետեց յանկարծ , և զայրացմամբ ու գթով առ Մուսթաֆա նայելով՝

— Այօնական կործիքներդ , ըստու , կերեւի թէ քաղաքացւոց ուշ ծանրթթէ է , որպէս և արքունիւոց .

օրինաց խստութիւնն առ ոչի՞նչ կը համարիա , որ կ'արգելու քեզ դրսի հետ յարաբերութիւն ունենալ :

— Աստուած , օդնէ՛ ինձ՝ բարեխօսութեամբ Մարդարէին , գոչեց Մուսթաֆա : Հայր իմ , տէ՛ր իմ , անմե՛ղ եմ , կ'երդնո՛ւմ ի հոգի մօրս :

— Ինչո՞ւ ինքողինքդ արդարացնել կը ջանաս՝ մինչ ոչ ո՛ք կ'ամբաստանէ զքեզ , տե՛ս այս մատեանը . Գուրան է . արքունեաց ծառայ մը անծանօթ մարդէ մ' առնելով՝ քեզ պիտի տար դադոնի : Այս մատեանը թուղթ մը կը պարունակէ , որոյ վրայ այս խօսքերը գրուած են . « Շահզատէ՛ , բոլորովին վստահ եղիր յ'Աստուած , շուտ կը յանդի ամպարշտութեան թագաւորութիւնը . ճշմարիտ միւսլիւմանք իրենց աչերը միշտ դէսլ ի քաջէսը կը դարձունեն , ուր խալամութեան յոյսը կը տածի :

— Անմե՛ղ եմ , գոչեց Մուսթաֆա՝ մինչեւ յ'երկիր խոնարհելով . զիս կործանել կ'ուզեն . ասի Թող չը զրգոէ դԶեզ , բարեգո՛ւթ տէր , ընդդէմ հաւատարիմ ծառայիդ . . .

— Գնա՛ , ընդմիջեց Սէլիմ . զքեզ չ'եմ դատապարտեր յանցանաց համար՝ որոց անզէտ ես դուցէ . բայց գիտցիր որ ինէ ընդունած այնքան խը . նամներէդ յետոյ՝ եթէ մատնես զիս , Աստուած միքանդիր պիտի ըլլայ :

Մուսթաֆա և Մահմուտ իրենց ներքինեաց խմբեակին հետ՝ մեկնեցան դէսլ ի նոճիաստանն այն ,

որով հովանաւորեալ է սէրային սլարտէղը, և ան-  
յայտ եղան :

Քանի մը վայրկենէ յետոյ՝ Սէֆէր ու Նէմիալ  
գահոյից սրահը առաջնորդուեցան. անխօսուկ կեցած  
էին յոտս՝ սպասելով որ Ն. Վեհափառոթիւնը  
խօսք ուղղէ իրենց :

Տակաւ առ տակաւ փարատեցաւ Սէլիմայ ճակ-  
տէն՝ կոկիծի ամպը, որ կը ծածկէր զայն քանի մը  
վայրկեան առաջ, և Փատիշահը՝ գոհութեան ակ-  
նարկներ արձակեց դէպի ի երիտասարդն, որ Յտարի  
քաղաքականութեան մայրաքաղաքին մէջ ժամանակ  
անցուցած էր, բարեբախտութիւն մը՝ որուն Սէլիմ,  
իր այն բարձր դրից մէջ կը նախանձէր սրտագին՝  
որն որ չափազանց ուսումնասէր ըլլալովն հանդերձ  
կը դդար որ՝ դատապարտեալ էր խոր տգիտութեան  
մէջ մնալու ի մասին յառաջադիմութեան մարդկային  
մտաց : Քանից այս դժբախտ ինքնակալը՝ Ուսիոյ  
վեհապետ Մեծին Պետրոսի վտանգալից ու իառայեղձ  
կենսագրութիւնը կարդալով՝ իւր երևակայութեան  
թեօքը սլացած էր ի նաւարանն Սաարտամա (1) :

Քանից այդ մեծ մարդուն յարատել համբերութեանը  
վրայ զարմացած էր, որ իւր ժողովուրդը մոլեռան-  
դութեան ու տգիտութեան խանձարուրէն աղատեց :

(1) Քաղաք ի Հոլանտա, յորում 1697 ին նաւաշինութեան  
արհեստն ուսուաւ Մեծն Պետրոս՝ իրը պարզ գործաւոր աշխատե-  
լով՝ Բէդրոս Մեքայէլօվիլ անուամբ :

Պետրոսի կոխւն ընդդէմ կղերականաց ու Սղբէ-  
լիձ ըստած անկարգ զօրականաց՝ քանիօն կը նմա-  
նէր այն կռւոյն, զոր Սէլիմ կը բաղձար յարուցա-  
նել իւշէմայից ու Եէնիչէրեաց դէմ։ Բայց ո՞ւր էր  
այն երկաթեայ կամեցողութինը՝ որ Մոսկովեան  
ինքնակալին տրուած էր ի վերուստ։ Սէլիմաց ոգին  
բացորոշակի կը տեսնէր այն զեղծմանքը՝ որոց բար-  
ձումը շատ հարկաւոր էր։ այլ գթած բնաւորու-  
թիւնը գործադրութեան միջոցին կը տկարացնէր  
դանի։ ասով՝ ի զուր կը փորձէր համոզելով ըստա-  
նալ՝ ինչ որ զօրութեամբ չ'էր կրցած ձեռք բերել։  
թէև ուզեց Մեծին Պէտրոսի սլէս այնպիսի վաշտեր  
կազմել՝ որք կարենան մլոցիլ կերպով մը արտօ-  
նութիւններ ստացող զինուորաց ապստամբութեան-  
ցը դէմ, որով Նիզամը-Ճէտիտի վատահել կը ստար-  
տաւորէր մայրաքաղաքին սկահալանութիւնը, և զըր-  
ուել զԵնիչէրիս՝ պետութեան զաւառներուն մէջ,  
ինչսլէս Զարն ըրաւ Սղբէլիձներուն։ այլ ընդհան-  
ուակն իր վրայ ըռնացող օրդաներուն իշխանութեանը  
ներքեւ մնաց, այն օրդաներուն՝ որ զեկ։ Պոլիտ կը լե-  
ցընէին, թէև ինք բանաւոր սլատրուակ մ'ունէր  
դանոնք հեռացնելու այն պահուն, յորում Ռու-  
զինուորք իր գտառաց մէկ քանիին վրայ յարձա-  
կած էին։

Քանի մը վայրկեան լոելէ յետոյ՝ Սէլիմ խօ-  
սեցու Նէմիորայ։

— Ուզեցի տեսնել զքեղ, և իմ կայսերական

գոհունակութիւնս յայտնել այն եռանդին համար՝  
զոր ուսմանցդ ընթացքին մէջ ցուցիր, և յանդի-  
մանել զբեզ միանգամայն՝ այն մեծ յանդգնու-  
թեանդ համար, — որ շատ անգամ կետանքդ է  
վկանգի ձգեց, — երբ Անգղիական նաւատոր-  
միղըն Ստոմալոլի առջև կը կենար :

— Զեր Վեհափառութիւնը թող ներէ իւր ա-  
մենախոնարհ ծառային, սլատասխոնեց երիտասար-  
դը՝ դոզդոջուն ձայնով : Վկայ է Աստուած, եր  
ջանիկ սկիտի ըլլոյի՝ եթէ արիւնս թափէի ի պաշտ-  
անութիւն ինքնակալին՝ որ այնքան բարիքներով  
լցուց զիս, և զոր սրտազին կը սիրեմ՝ իրը հեռ  
և երախտագետ զաւակ :

Ճշմարտութեան այնպիսի եղանակաւ արտա-  
սանեց այս խօսքերը՝ որ Աէլիմայ սիրտը շարժե-  
ցաւ :

— Աստուած բարեհաճեցաւ, շարունակեց Կէ-  
ճիպ, զիս աշխարհի վրայ նետել՝ առանձին և  
ծնողաց համբոյրներէ զուրկ . վեհապետիս բարեսրը-  
տութիւնն ընդունեց զիս իւր սերային մէջ՝ մինչե-  
ցարդ երկնային օդնութեան մ'ասիսցոյցներն ինձ  
տալով : Ինչպէս մերժեմ այն մասաւոր իրա-  
ռունքը, զոր ունիմ՝ կատարելու առ Զերդ վեհա-  
փառութիւն ունեցած պարտուցս համար, թէ՛ և ի-  
դին արեանս :

— Մեծ է Աստուած և բարեզութ, կրկնեց  
Աէլիմ՝ աչերն յերկին բարձրացնելով : Ո՞վ դիտէ

թէ Աստուած ծնողացդ գրկին զրկած չ'է զքեզ  
քու օգտիդ համար . ո՞վ գիտէ թէ օր մը զանոնք  
չը պիտի գտնես . ո՞վ գիտէ թէ , եթէ կ'ապրին ա-  
նոնք , իրենց հայեցուածքը լոիկ առ քեզ չ'են  
ողղեր :

— Ո՞վ Աստուած , փախսաց Կէճիպ՝ ծընրադ-  
րելով , կարելի՞ է , կարելի՞ է . . . կրնամ յու-  
սալ . . . Ո՞վ ինքնակալ , դու , որոց հսկող աշ-  
քըն ամեն գաղտնեաց մէջ կը թափանցէ , դու ո-  
րոյ անսպառելի բարութիւնը կը հսկէ բոլոր հը-  
պատակաց թշուառութեանը վրայ . . . , եթէ գի-  
տես բան մը . . .

— Արդեակ , ընդմիջեց Աէլիմ , շատ կը փու-  
թաս խօսքերուս մեկնութիւնը լսել պարզ մաղ-  
թանք մը ճշմարտութեան յայտնութիւն մը կար-  
ծելով :

Կէճիպ՝ դալկացեալ ու սկսրտասեալ՝ յ'ոտա  
ելաւ , իւր թարթիչներուն ներքև արտասուք կը  
դլորէին : Իւր կոկորդին մէջ խեղդեց հեծեծանքը՝  
Աէլիմին սկատկառելով : Նոր լութենէ մը յետոյ ,  
Փատիշահը դարձեալ Կէճիպսց դառնալով՝

— Քանի որ վերադարձած ես , ըստ պէտք է  
պաշտօն մը տամ քեզ՝ իշխանիդ ծառայելու :

— Տէ՛ր իս , կրկնեց Կէճիպն երկչուութեամբ .  
Թրանսայի մէջ առած ուսմունքս կը ներեն ինձ  
գուցէ՝ Աէֆէրոյ հետ Կիզամը-ճէտիտի նորակաղմ  
վաշտին մէջ մտնել . խիստ երջանիկ սկիտի-

ըլլամ՝ Եթէ իրը պարզ զինուոր իսկ ծառայեմ այդ  
գունդին մէջ, որ ձեր նուիրական անձին պահպա-  
նութեանն անձնուէր է :

— Յա լդ օրդային մէջ գրուած չե՞ս, հարցուց  
Աւելիմ. Լաւ, շարունակեց՝ Մահմուտ էֆէնտիխ  
ձեռքէն թուղթ մ'առնելով, որ ձերմակ մետաքսէ  
պահարանի մը մէջ փակեալ էր. առ այս վկայա-  
գիրը, Նէմիալ. Եէնիչէրեաց աղան դեռ Էտիրնէի  
բանակը չը գացած՝ այս թուղթն անոր տար, որ-  
պէս զի, ըստ հրամանիս, գնդասետ /ընէ/ զքեղ  
օդուզպիրի օրդային : Այս վտանգաւոր գնդին մէջ  
կ'ուզեմ հաւատարիմ պաշտօնեայներ ունենալ.  
ինչ որ լսես ուշադիր եղիր, և աղաչէ առ Ասո-  
ւած՝ կայսրութեան փրկութեանն համար :

— Եւ կայսեր, գոչեց Նէմիալ՝ Սուլթանին քը-  
ղանցից ծայրերն համբուրելով :

## ԲԱԶԱՐ

Նէմիալ բաժնուեցաւ Սէֆէրէն՝ փոխադարձ խոս-  
առամներ ընելով ուրիշ անգամ տեսակցելու, երբ  
իրենց պաշտօնին պարտքերն ու իրենց հեռաւորու-  
թիւնը թոյլ տար այս մասին . զի Նէմիալ ստիո-  
ված էր բնակիլ ի Ստամբոլ, իսկ Սէֆէր՝ Կիզա-  
մր-ճէտիտի զօրաց հետ, Վոսփորի եւրոպական ա-  
փանց վրայ կառուցեալ բերդերուն հոկել պարտ  
էր, Պէօյիք-տէրէյի մօտերն :

Երբ առանձին մեաց Նէմիալ՝ առաջին փոյթն ե-  
ղաւ բնակարան մը ճարել, երկու սև ծառայներ  
գնել, և իր նոր պաշտօնին յարմար հաղուստ հայ-  
թայթել : Թէրային բաժնուած առեն՝ Ն. Վեհա-  
փառութեան կողմէն քսան քսակ դրամ պարզե-  
ցնուունեց, իրը նոր ապացոյց Սէլիմայ բարեմտու-  
թեանն, որով զինք պատուել բարեհաճեցաւ :

Հետեւեալ առտուն՝ Նէմիալ Բէրայի թաղն ուղ-  
ղուեցաւ, և Պէնֆէլտ Պարօնուհւոյն յայց ելու :  
Պարօնուհին՝ անոր անունը լսելուն պէս՝ փութաց  
ընդունել զանի յոյժ եռանդուն ուրախոթեամբ .  
յետայ, սպասաւորաց նշանացի դուրս ելնել և ոչ  
զոր ներս ընդունել հրամացեց,

— Պիմաց նստէ՛, Նէմիալ էֆէնտի, ըսաւ ոլու-

տանւոյն . կարեւոր նիւթերու վրաց խօսակցիւ կ'ու  
զեմ քեզ հետ :

**Այս** խորհրդաւոր խօսակցութիւնը , Պարտականուհան  
ոյն սպասաւորացն համար իրը հանելուկ մնալով  
գրեթէ ամբողջ ժամ մը տևեց : Դիտեցին միայն՝  
թէ Նէմիալ դուրս ելած առեն վշտացեալ և տիտուր  
էր , մանաւանդ թէ իւր աշաց մէջ արտասուաց  
շիթ մը նշմարել կարծեցին :

Բերայի փողոցէն իջած առեն՝ երիտասարդ դրն-  
դապետը կանգ առաւ պահ մը՝ Գիննատօք ասպե-  
տի տանն առջեւ , և բաւական առեն մէկը տեսնե-  
լու նպատակաւ պատուհանները դիտելէ յետոյ՝  
վճռեց վերջապէս դուռը զարնել :

— Պ . Ասպետը հո՞ս է , հարցուց ապաստորի  
մը՝ որ դուռը բացաւ :

— Այո՛ , պարօ՞ն , ներս հրամեցէք , պատա-  
խանեց : Պ . Ասպետը սենեակն է՝ Օ . Հերմի-  
նիայի հետ :

**Այս** ոլարդ խօսքերը մեծ տսլաւորութիւն ըրին  
օտարականին վրայ , որ խոտվեցաւ անմիջապէս , և  
գոյնը նետեց :

— Ոչ , ոչ , թոթովեց Նէմիալ , մխաք չ'ունիմ  
վեր ելնելու . միայն թէ կը պատուիրեմ քեզ ըսել  
Պ . Ասպետին , և միայն անոր , կը հասկնո՞ս , ը-  
սել անոր թէ Նէմիալ էֆէնտի երկու օրէ ի վեր բա-  
րիղէն վերադարձած ըլլալով՝ եկաւ իւր յարդանքը  
իրեն մատուցանելու :

Եւ սլատանին , դուռը քաշելով , շտապաւ իւր  
ճամբան շարունակեց :

Նէմիալ իր տունը դառնալով՝ 15 օր հոն փակ-  
ուեցաւ առանց մարդու հետ հաղորդակցելու . այ-  
սելութեան եկող բարեկամաց կ'իմացնէին սև ծա-  
ռայք թէ իրենց տէրն հիւանդ է , և անկարող՝ ոչ  
զոք ընդունելու : Այնը կ'ընէր նաև իրեն ուղղեալ  
նամակաց , զորս առանց բանալու կը ձգէր դրասե-  
ղանին վրայ :

Այս արտաքոյ կարդի վարման զանազան թիւր  
մեկնութիւններ կուտային ծանօթք , որք խօսակ-  
ցութեան կարեւորագոյն նիւթ չունենալով՝ գործը  
մտացածին զարմանալի եղանակներով կը ներկայա-  
ցընէին այլոց : Եւրոպիոյ ամենէն աւելի հետաքրք-  
րիր ժողովուրդ պարունակող քաղաքը՝ չը կրնար  
բաղդատուիլ Թուրք քաղաքի մը հետ՝ ջնջին իրաց  
վրայ տրուած երևակայական մեկնութեանց մասին ,  
իրեր , որք թէև ըստինքեան աննշան՝ այլ իրը հըս-  
կայական դէսլքեր կը ներկայացուին : Եւրոպիոյ մէջ՝  
ընդունելութեան սրահներն ու սրճարաննք կեղրոնա-  
տեղի են առանձնական կենաց վերաբերեալ ծիծա-  
ղաշարժ վէպերու . այլ Թորքաց մէջ՝ իրարմէ խխտ  
տարբեր երկու գործարաններ կան , յորս կը յօ-  
րինուին այդպիսի վէպեր , և այդ գործարանք՝ բիւր  
ճիւղերու կը ստորաբաժանուին : Նախ , այսպիսի  
մարդոց մեկնարանութիւնք՝ սրճարաններու , շա-  
քարանոցներու և սոյնօրինակ խանութներու մէջ

յաճախօղ դատարկապորտաց թուովը բաղմասլատ, կեալ, անսսլառ ճոխութիւն կը հայթայթեն առ ասակելախօսաց . ասոնց կը յաջորդեն կանանց մեկնութիւնք, որբ առաւոտէն մինչև իրիկուն տունէ տուն բաղնիքէ բաղնիք թափառելով՝ մրջիւնն ուղտի կը փոխսեն, որ իրր թէ թե առած և ամպերուն մէջ սլացած ըլլար : Աէճիսլայ՝ տան մէջ առանձնանալու համբաւն՝ աւելի սրճարանաց մէջ տարածուած ըլլալով՝ սու մեկնութիւնը կուտային թուրքք. Կ'ըսէին թէ կեավուոներու երկրին մէջ եղած ատեն՝ սատանան Աէճիսլի ներսը մտած ըլլալով չը թողուր զինք, և թէ Աէճիսլ՝ գիշեր ատեն՝ Փրանսերէն կը խօսի անոր հետ . անկէ հրաժարիլ ուղելով . զի Փրանսերէն լեզուն միայն հաճութեամբ կը լսէ մարդկային ազգի թշնամին : Իսկ կանանց դալով, կը հաւաստէին թէ Հնդկաստանցի աստուածասղեցիկ ծերունի ֆախըրէ մը լսած են որ Աէճիսլ կեավուրիստան եղած ատեն, վհուկ կնօջ մը հետ ամուսնանտլ խոստացած է, և թէ այժմ այդ կինը կը տանջէ զանի՛ գիշեր ատեն հրաշէկ երկաթէ մատնի մը զնելով անոր մատը խոստումը յիշեցնելու համար, և թէ այդ ցաւէն է որ խեղճը կը յառաջէ գիշերները :

Որ մը, երբ պատուհանը բաց էր՝ լոյս առնելու համար, անծանօթ ձեռք մը դրոէն նուռ մը նետեց, որ գլտորելով՝ եկաւ Աէճիսլին ոտիցն առջեւ : Անմիջապէս սրատուհանն ելնելով՝ երիտասարդը յսմ,

յաշարժ այլ չքեզ կառքերէն մէկը տեսաւ, որք Սաամպօլի մէջ պառոյտի համար կը գործածուին: Կառքին մէջի կանայք, ըստ սովորութեան, քողով ծածկեալ ըլլուլով՝ անկարելի էին ճանչուիլ, մանաւանդ իրենց ֆէրաճէներուն համար: Սակայն, անոնցմէ մէկը՝ սայլին յենարանէն դուրս ծռելով իւր գլուխը՝ անյաղաբար կը նսցէր երիտասարդ Յտա-պաշխին, որ պատուհանէն զիրենք կը դիտէր: և կամ դիտմամբ կամ անուշադրութեամբ դուրս ձգուծ էր իր մերկ քազուկը, հրաշագեղ փղոսկրեայ ծղին՝ որոյ մատերուն վրայ մեծագին մատանիք կը շողշողացին: Նէճխալ հառաջելով գոյեց սլատուհանը, և նուռը ոտից ծայրուկը մէկղի հրելով դիտեց թէ մէջ տեղէն ճեղքուած էր, և նամակի ճեռվ թուղթ մը կը պարունակէր: Սերենարար նամակը բանալով՝ թրքերէն գրուած հետեւեալ խօսքերը կարդաց:

« Գիտեմ շինծու հիւանդութեանդ պատուհաց, և ինձ ոչիմ ըրած արհամարհանքդ: Անտարբերութիւնդ աճնցուց քու վրայ ունեցած սիրոյս և սաստկութիւնը: Եթէ վաղը՝ արեւոն մարդ մը « տած ատեն՝ չը դաս ինձ հետ խօսիլ կյուպի տաւ և նըս պատուհանին առջն, վլէժինդրութեան պիտի գիւմեմ, որով թէ զքեզ, և թէ իմ ախոյեաչ և նըս պիտի պատժեմ: »

— Ի՞նչ յիմարութիւն, քիոխաց պատանին՝ սոմսաւկը արհամարհանօք նետելով. զրոյք Եըլոր կը

է, և ծաղրելին այն է, որ իր խօսքերուն մէջ ըստ  
պառնալիք ալ կը գործածէ . ծանօթ է ինձ մեր  
Թորքուհեաց այս սիրահարական կերպերը : Աչ,  
ո՞չ չե՛մ երթար : Աս, ընդհակառակն , հակակրու-  
թիւն ու զղուանք կը զգամ այս պժգալի կինչն :  
Սառագիւ կը զարմանամ կրկնեց, թէ ինչպիսի փո-  
փոխութիւն կրեցի Եւրոպոյէն դառնալիս ի վեր :  
Որբա՞ն փոխուեցան հոգւոյս զգացումները, որբա՞ն  
վաստ ու կոշտ կ'երեւան ինձ այսօր մեր կանանց սի-  
սարահարական դաւերը , որք սրտէ շեն բղխիր :  
Աւասիկ այս կինը ինձ կը յարի՝ օր մը ըստ դիպաց  
աղաստահած ըլլունուս համար . տարակոյս շըկայ օր  
այդ կինը , եթէ ինէ օր մը , ժամ մ'առաջ ուրիշ  
մը տեսնէր՝ անոր ալ սլիտի յարէր . ինչպէս նըկա-  
րագրելու է այսպիսի կիներն , որք ուրիշներէ չը  
պատառելով՝ իրենցմէ իսկ շեն ամըջնար . . . Առ  
ինչ կ'ըսեմ , միթէ ես իմ տէ՞րս եմ , կրկնեց քիչ  
մը ետքը՝ հառաջնով . ափսո՞ս , հոգիս ի՞նձ կը զե-  
րաբերի արդեօք . միթէ ուրիշ կին տիրած չէ՞ ա-  
նոր՝ զայն չարաչար խորտակելու և մատնելու հօ-  
մար : Կարելի՞ է որ այնչափ խոստումներէ և եր-  
դումներէ յետոյ՝ ներկացութիւնն իսկ զլանաց ինձ ,  
և ուրիշի հետ ուղէ ամսւսնանալ : Աւա՛զ , այսչափ  
մեծ է մելամաղճութիւնս , և ինչպէս կարելի է բր-  
ժըկնէլ . . . իմ առանձնութեամբս ու ամացութեամ-  
բըս : Վէրքերս խո՛ր են , շա՛տ խոր . . .

Այսուկը բաղմոցի բարձին յենած՝ և գլուխն ա-

փին վրայ զետեղած՝ վանդակին դուրս փողոցը կը  
դիտէր Նէմիալ : Յանկարծ , սուր ճիչ մը հանելով՝  
և շտապաւ դռնեն վար վաղելով՝ տունէն դուրս ե-  
լաւ : Երիու Եւրոսրացիք և շքեղ հագուստներ կրող  
կին մը ճիօվ կ'անցնէին փողոցէն . Քիննատօք աս-  
պետն ու Պանքրէտ Պլէմէնկհիմն էին , իսկ ուղղե-  
կից երխուսարդուհին էր Հերմինիա :

Նէմիալ ճիաւորաց ետևէն գնաց մինչև Մեծ  
Բաղարը կամ չարշուն (շուկայ) , որ Սուլթան Պէ-  
յազիտի մզկիթի ճամբուն վրայ է , և ուր խանութ-  
ներու մէջ կ'երեխին Թուրքիոյ ձեռակերտք , Պլէ-  
մէնկհիմ , իւր քովն եղած երխուսարդուհւոյն բա-  
րեմտութիւնը որսալու նպատակաւ , կը բացատրէր  
անոր՝ ճամբուն վրայ տեսնուած արտաքոյ կարգի-  
բաները . շուկային մէջ ո՞չ թէ միայն գնողք տու-  
րածուած էին , այլ և մեծ բազմութիւն մը կար  
Թորքուհեաց , որք թէև ևաշմաքներով իրենց երեսը՝  
և ֆէրաճէներով իրենց մարմինը ծածկած էին , ոյլ  
և ամեն կերպով կ'աշխատին ցուցնել իրենց սե-  
աչաց և նաղելի քայլուածքին հրապոյրները :

Թուրքիոյ այս բազարներն աւելի կենդանագրա-  
կան են քան շքեղ . քարայատակին անհարթու-  
թիւնը , և ճամբաներու ուրիշ թերութիւնքը հետա-  
քլրքիր անցորդը կը ստիալեն իրեն ոտից առջել նա-  
յիւ յաճախակի քան իրեն աչաց ներկայացող ի-  
րաց : Խանութները բոլորովին բաց ըլլալով՝ Եւրո-  
պակացւոց խանութներուն սկս ճոխ ապակիներով

զարդարուած չեն, Եւրոպա : ո՞չ աթոռ կը զըտ-  
նուի հոն նստելու, և ո՞չ վաճառականին հարստու-  
թենէն աւելի բան ցուցնելու փափագ ունին անցոր-  
դաց : Եթէ բան մը գնել ուզէ մորդ՝ հասարակաց  
ճամբուն մէջ պէտք է ոտից վրայ կայնի, կամ, չն  
շատը, եթէ խանութանը տրամադիր է մէկը պատ-  
ուելու փսիաթին վրայ կը հրաւիրէ զայն, ուր ինք  
աւ կը նստի կկղած (պաղտաշ) . յետոյ, շպուք քահվէ  
կը հրամցնէ, կամ լիմօնառա՝ եթէ կին մը կայ հետը :  
Այս բազարներուն մէկ քանիները քարաշեն և գոմեթա-  
ւոր ըլլալով կամարներով կը միանան՝ հրդահէ պատրս-  
պարուելու համար, և պէտքառէն մուսը կը հցեց :  
Ասոնցմէ մէկ քանին երեեվ հարստութիւններ կը  
պարունակեն, որք անցորդաց մովսւնի տես դրուած-  
չեն, այլ արկղերու մէջ կղզուած են : Իբր շտե-  
մարան կը գործածուին խաներն, ուր վաճառաց մե-  
ծագոյն մասը կը դրուին : Ա. Պօլոյ ականաւոր ան-  
ձինք կուգան յաճախ ու ամբողջ ժամեր կը նստին  
չարշըյին կամ պէղէստէնլիյին չէ թէ խանութին մէջ՝  
այլ անոր վար բացւող բեղկերուն վրայ, ուր համրիչ  
ի ձեռին իրենց անտարբեր ակնարկները կ'արձակեն  
ժողովուրդին վրայ : Այսպիսի երջանիկ դիրք մը եղ-  
րակացնել կուտայ այլոց՝ թէ այդ անձինք քէյֆ կ'ը-  
նեն, բա՛ռ մը՝ որ անթարդմանելի է : Թուրքք  
Նարօլիի Լազառօնիներուն և Անտալուսիոյ (Սպա-  
նիա) գեղացւոց պէս քէյֆ կ'ընեն, որք ընկողմա-  
նեալ ու գլանիկ ծխելով՝ կ'ըսեն թէ արև կ'առնեն :

Երեք ձիաւորք չառ դժուարութեամբ սնցան  
ոյս ամբոխին մէջէն , յ'որոց ոմանք հայկական և  
յունական ուշ զլիօարկիներ (դարբաք) իրենց զլոխը  
կը կրէին , ուսանք օսմանեան ճերմակ սարքքը , ու  
մանք երբայական կոսպոյտ պօնէդան , և խիստ քիւ-  
չեր եւրոպական զլիօարի : Խանութիւ մ'առջի կե-  
ցան , ուր Հնդկաստանի (լահու) շակեր կը ծախուէ-  
ին : Վաճառականն սովորեց իւր աղնուական յա-  
ճախորդաց որպէս զի հետեւին իրեն՝ չարշուին մօտ  
եղող Վալիմէ-խանն երթալու : Խանին դրանն առ-  
ջեւ ձիւն վար իջու . ~~Սապետն ու Գիանքրէտ~~ , որ  
ամենայն քաղաքավորութեամբ զրկելով զԱմազոն  
օրիորդն ձիէն վար իջեցուց : Երբ ձիերն սպասառ-  
աց յանձնելով Հայուն շանմարտը մոտան՝ Նէճիո  
ու դրաւ ասպետին ծառայիցն ու Պիէմէնկիմոց  
սպասառորացը մէջ տեղիւ ունեցած հետեւել իսո-  
սոկցութեան :

— Ուրեմն , տիրուհոյդ հարսանիքը որոշուեցաւ .

— Սա՞ , Պ . Գիանքրէտոց հետ :

— Կայէ մէյ մը մարդոց չար լեզուն . յանդըգ-  
նեցան ըսել թէ օրիորդ Հէրմինիա դաղոնի սիրա-  
հարած էր ուրիշին , և թէ ոչ երբէք հաւանիլ կ'ու-  
զէ իր հօրեւքորն ի վազոց առաջարկուծ հարսա-  
նեց :

— Չար լեզուները զուցէ իրաւոնք մ'ալ ունե-  
նան , կրկնեց Սապետին սօրասուորը : Խիստ ճըշ-  
մարիտ է որ օրիորդը շատ կը ողնղէր , և չէր ուզեւ

ամուսնանալ . բայց վերջապէս՝ չը գիտմա՞ ինչպէս՝ օր մը Պէնֆէլտ պարօնուհայն հետ խօսակցելէ յետոյ՝ արտասուալից աշերով եկառ ըսել հօրեղբօրք՝ թէ պատրաստ է հնագանդելու :

— Ի՞նչ կ'ըսես Յովսէփ , կրկնեց միւօք . ինձ կ'երեսի թէ տէրս գոհ չը պիտի ըլլար աղջկան այս պիախի բռնի հաճութենէն : Ինչ և իցէ գործը վերջացած է գրեթէ . զի հոս եկան այսօք՝ հարսանեաց սկսրդեներ գնելու :

Նէմիալ զայս խօսակցութիւնն ընդմիջեց՝ ծառաներն հրելով , և Հայ վաճառականին մթերանոցը մտաւ : Վաճառականը , օդուզ-պիրի աստիճանաւորի մը ներկայութիւնը տեսնելով՝ տոք երաւ ահարեկ . զի այն ատենուան վաճառականք վախով պաշտուած էին : Հէրմինիա ալ խռովեցաւ՝ Նէմիալ զայրացեալ դէմքը տեսնելով : Նոյնպէս Պէմէնկիմ յօնքերն ամփոփեց՝ իշխանաց կղզիներուն առջելիք վրայ յարձակող անձը ճանչելով :

Ասպետը դիմաւորելով՝ տաճիկ երիտասարդին ողջունեց զանի իր յաջող վերադարձին համար :

Այսոք է ուրախուկից ըլլոք եղբօրորդւոյս վրայ՝ շարտնակեց ուսովետը . զոր մատ օրերս պիտի տմուսնացնենք Պ . Պանքրէտ Պէմէնկիմ յուսովից ասրագայ ունեցող երիտասարդին հետ , զոր քեզ ներկայացնելու պատիւն ունիմ :

Նէմիալ՝ զլիսի թեթև շարժումով մը ողջունեց Հէրմինիացի նշանածը , յետոյ դէմ ի երիտասարդ .

դուհին դառնալով՝ — Երջանիկ եմ, ըստ, որ բարեգէալ ատենի մէջ եկայ իմ մաղթանքներս աւ միացունելու . . . — Եւ ես, ընդմիջեց Հէրմինիան, ոչ սակաւ բարեբազդ եմ առ իս ցուցած այս զգացմանդ համար, և շնորհակալ եմ քեզ պարոն . . . :

Ինչպէս Աէմիս, նոյնպէս աւ Հէրմինիան չը կրցաւ աւարտել իր խօսքն, որ սովորական քաղաքավարութեան պատիր քօղին տակ անփոխելի յամսութիւնը կը ծածկէր :

— Գիտե՞ս, ըստ, ասպետը գնդապետին, հաղիւ տասն և հինգ օր կայ որ այս ամուսնութիւնը որոշուեցաւ :

— Բարիզ կեցած ժամանակս, պարոն Առալետ, կրկնեց Աէմիս, բարեմտութեան ու բարեկամութեան այնչափ ապացոյցներ ունեցայ ձեր կողմանէ, որ վառք կուտամ բարձրելոյն որ հաճեցաւ պանդխոտութեանս շուտ վերջ տալ սիրելի եղբօրորդւոյդ երջանկութեան վկայ ըլլալու համար : Անշուշտ ինքն աւ չի տարակուսիր՝ որ շատ կը վառ վագիմ դինքը երջանիկ տեսնելու,

— Իբրև հին բարեկամ ընտանեաց, Աէմիս է ֆէնտի, ըստ ասպետը, մեր հրաւիրեալներէն մէկն աւ դուն ես :

— Աւ աւելի շնորհակալութեամբ պիտի դամ ձեր հանդիսին, պատասխանեց գնդապետը դառն ժպիտով մը, թէ որ օրիորդն աւ նմանապէս բարեհաճի զիս իր բերանացի հրաւիրովը պատուելու :

Հերմինիա զայրացմամբ և ըարկութեամբ լի աչքերը երիտասարդին վրայ սևեռեց :

— Չեմ գիտեր, պարոն, ըստ օրիորդը, թէ սլիտի ընդունիս հրաւերս, քանզի սյնչափ ժամանակէ ի վեր Ա . Պոլիս վերադարձեր էք, բայց ցարդութ միանգամ սցցելութեամբ չէք պատռած ըդմեղ :

— Պ . Տիկին Պէնֆէլտը տեսայ ըստ Նէճիալ, պարագաներէն իրր օգուտ քաղել կրցող մէկուն դացի և որպէս զի ձեր վրայով տեղեկութիւն առնեմ . բայց անկէ հասկցայ որ իմ սցցելութիւնն ի դերեւ պիտի ելնէին, որովհետեւ դոք հարսանեկան պատրաստութիւններու դրազած էք եղեր :

Մի մեղադրեր ուրեմն զիս, օրիորդ իրը պարտադանց, համարեցէք զիս սյլ իրրեւ խիստ ակնածող մէկը :

— Իրաւունք ունիք Նէճիալ էֆէնտի, սրատասիանեց ասպետը : Բայց հիմա հասկցէք, սիրելի երիտասարդ՝ որ մեծ շնորհակալութեամբ կը փախաքինք միշտ զքեղ տեսնել, և վստահ եղիր այս խօսքիս վրայ . որովհետեւ դուն միւսներուն նման Թիւրք չես :

— Թող ներէ ինձ սլարոն ասպետը, պատասխանեց Նէճիալ, եթէ քիչ անգամ պատեհութիւն կ'ունենամ անոր աղնիւ սրտին փափաքները կատարելու և միանգամայն ձեզ դալով իմ առանձին շնորհակալութիւնս յայտնելու : Իմ պաշտօնիս սլար-

տականութիւնը . . .

— Ե, երեցէք, բարեկամ, մոսցայ արդարեւ նոր  
առած աստիճաններն ուղղ վրայ ուրախակցութիւնս  
յայտնելու : Ուրիշ անգամ աւելի հանդարա կը իսու-  
ասկցինք ասկապացիու վրայ, առ այժմ քեզմէ փոքր  
բիկ ծառայութիւն մը կը խնդրեմ :

— Ի՞նչ,

— Ըսէիր մեզ թէ այս տահօռ շալէրէն, ո՞րն ա-  
ւելի արժան կը դատէք եղրուրդոյս համար :


— Անօդուտ է, ըստ Գանքրէտ մօտենալով,  
օրիորդը առջի տեսածը չառ հաւնած է :

— Յիրափ, օրիորդը գեղեցիկ դատողութիւն  
մ'ունի, ըստ գնդապետը : Մնաք բարեւու ուրեմն,  
երջանիկ եմ այս չափի բացակայութենէս յետոյ գձեղ  
վերատին տեսնալու : Ողջ եղիք :

Երբոր Նէմիս բարեկելով գլուխը կը ծուր, Հեր-  
մինիսն ըստ անոր :

— Եթէ պատուաւոր անձ մ'ես, պէտք է սցա-  
կրիկուն արել մարը մտած ատեն Բերայի ընդար-  
ձակ գերեզմանատան նոճիներուն տակ գտնուիս :

— Շատ աղէկ, սլատասխանեց Նէմիու, ու-  
ղուրս ելաւ :



ԹՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ Ի ԳԵՐԵԶ-  
ՄԱՆԱՏԱՆ

Ամենալ է ֆինտին՝ սկսած մանաժամկան շատ յառաջնաց որոշեալ տեղը, սովորական զայրզով մը ու կեղծեր ծոցին սնայնելով Թօփիհանէի ծովեղերքն եւ լու, Թօփիհանէի զորանոցը և զայն կտղմող չենքերը հիւ ոխառյին ափանց տաճկական թաղերուն և Պալաթիոյ վաճառականական արուարձանին կը յանդին : Պալաթիա հին Ճենովացւոց քաղաքն էր, և որուն խորդուրորդ ճանասարհները, որ պարդ խարիսուլ բերդերով շրջասրատուած են, կը հասնին մինչեւ այն սեպածե բլուրը, որուն նեղ տափին վը բայ կը բարձրանաց այն Եւրոպական թաղը, զոր Եւրոպացիք Բերա և Օսմանցիք Պէյ-օղլու կը կոշեն :

Բերայի ծայրը՝ բլրոյն դեռ ի Վասփոր իջնադղաս ի վայրին վրայ կը տարածուի նոճիտան մը, որ շատ մը տաճկական գերեզմաններ կը հովանաւորէ : Հպատակ ազգաց անշուք գերեզմանատուններն ալ մօտակայ դաշտին վրայ կը տարածին, սովորական սլույտներն այս մելամաղձու տեղերը կ'ըլլոյ :

Արեւելցիք՝ Եւրոպացւոց պէս մեռելոց վրայ նրա իրական յարդանաց դաղափարը չունին, վասն դի ասոնք կը կարծեն թէ անոնց մէջէն քեյֆ բնելու

Համար անցնողներն զերեղմանաց սրբոթիւնը չեն  
սլղծեր :

“Եմիալ” մտախոհ անցաւ երթևեկող բազմու-  
թեան մէջէն բոլորովին անտարբեր և իրը օտար  
իրեն հանդիսալող բոլոր տուարկուցից : Մէկ կողմէն  
Յունական մեռելոյ մը յուղարկաւորոթիւն կ'անց-  
ներ զոր երեսը բայց կը տանէին անոր ամենազե-  
ղեցիկ հանդերձներն հագուցած : Միւս կողմէն ծր-  
խողներն ու սուրճ խմողները շրջանակ մը կազմած  
նոտած էին , և մէջէրնին գուաններ ունէին , ու  
բանիք հերարձակ մաղերով ու շոլարեալ այտերով  
կը կոյթէին ու կը սրսրէին . քնարներու խժային  
արձագանգներն ու անտխորժ երզեր կը միանային  
այս սրարերուն : Աւրիշ տեղ մը աֆինէ ուտողներն  
քնոյ ծանրութենէն թմրած կը խորթսային . մէկ  
կողմէն տաճկուհի մը կը կովահարէր՝ իր վեհերոտ լը-  
ծակիցը . միւս կողմէն ալ Հրեայ մը երեսը ցըսե-  
րուն (ճանկոտելուն) համար իր ինիկը կը տիէր , նոյն  
ցեղին գարձեալ փերեղակ մը անխորժ Տաճկէ մը ծա-  
խած բանին երեքալատիկ զինը կ'առնէր . եկնիշէրի-  
ները բայս մը կը ծեծէին իր զլիստմարին տումակը  
իրենց չը ցուցնելուն համար , զոր խեղճը մէկ երկու  
անգամ կանխիկ վճարած էր :

“Եմիալ տռանձին ու տիսուր տեղ մը նոտած  
աչքերն իր ստից ներքեւ սրարզուած մոզիչ տեսա-  
րանին վրայ կը յածէր : Երկիրն այս գաղաթէն սե-  
պածեւ կը հակէր զեղեցիկ ձորի մը մէջ , որ տեղ

տեղ թղենիներ ու սօսիներ՝ գոյնզգոյն նկարակեր՝ տուած զանազան քէօշկէրուն մէջէն կը բարձրանացին : Հոն վասփոր իր չափիւղեայ հոսանքով Եւրոպայի սահմանը կը գծէ , իր միւս եղերքին վրաց հարիւր մեթր հեռաւորութեամբ Ասիան կը բարձրանաց , որ դեղնագոյն և ամարանտցներով ձևացած կողերով խիտ առ խիտ բլրեայ սկսակներ կը ներկայացնէ :

— Ի՞նչովի անզորրութիւն կը տիրէ բնութեան մէջ , և ի՞նչովի յուղմունք կը խոռվէ ողիս , կ'ըսէր պատահին , մանկութեանո ժամանակ նոյն խոկայս տեղոյն վրայ նատած քոնիցո Աստուծոյ հըրաշալեաց վրայ կը խորհրդածէի . այսօր ամէնն ալ մըտացս մէջ վշտակից ու ողբակի զաղախարներ կը ծընին : Հերմինի՛ա . . . արդեօք ինչո՞ւ համար ինձ հետ խօսակից ըլլուլ կ'ուզէ . անզամ մը զիս չարաշար մատնելին յետոյ , արդեօք կը յուսա՞յ արդարանալ . թերեւս իր ճարտարամտութեանը կը վստահի , և անով իր նենզամտութիւնը ներելի յանցանք մը ցուցնել կը փորձէ :

Այս , աւելի աղէկ էր որ չը համեմ զինքն հոսուանել , այլ անոր ըսէի բացարձակապէս . . . : Բայց ասիկայ անկարելի էր , ըսաւ , որովհետեւ իր հօրեղքօր ու նշանածին ներկայութիւնը արդիլեց զիս անոր պատասխանելէ : Հիմոյ չեմ կրնար այս ժամանակ զինքը մինակ ձգել այս վտանգաւոր տեղոյն մէջ :

ԱՅ, որչափ անխռելքութիւն ըրտու . ո՞չ, ո՞չ, ալխոփ տհոնեմ զինքը, ալխոփ լսեմ իր արդարացոցիչ խօսքերը . . . արդարանայ : ԱՅ, թող շրապանէ, ալ այսուհետե . սակայն ալխոփ զգուշանամ որ շրջոյ թէ ամենափորբիկ վարձանք մը պատահի իրեն, և մինչեւ վերջին շունչս զինքը ալխոփ պաշտպանեմ, մինչեւ իր բնակարանն աչքերա ետեն չը ալխոփ զատեմ :

Այս գակը հօրիզոնին վրայ խոնարհելով՝ իրու վերջին համբոյր մը՝ իր վերջին ճառագայթը կ'արձակէր այս մօղական երկրին վրայ :

Այսիալ մտախոհ ոտք ելլելով՝ զնոց դէպ ի նու հմատանը, վերջողուոյ մէկ քանի նուազեալ նշոյւներու ազօտ լուսվը տաճկական շիրիմներուն մարմարեայ ասրբները որոշուիի կը նշմարակին : Յդուզ սիրը ասերաւ առ ասերաւ օրուան հետ՝ բազմաթիւունը ալ հեռանազն ու աղմուկի դադրիլը տեսաւ : Եանց հեռուոր հաշխանները ու նամեաց տատերուն վրայ թառոզ գիշերաշրջիկ թօշնեկաց թե երտն բաղիւնները միայն կը լսուին . որոնք կը բաղնիւին Այսիոլի լսելեացը :

Խորին ու համատարած լութենէ մէկ քանի վայրկեան ետքը, երիվարի մը ատից տրոֆիւնը լուսեցու, Այսիալ լուսոյ նորախոյլ լուսվը որոշեց Հերմինիան, որ իր ամազոնական զգեստներն հագում՝ միայնակ ու անվեհեր զէպ ի իրեն կը յառաջանար : Զեռքն անձայն՝ երիտասարդուհւոյն երկըն,

շուց , որողէս զի դիւրաւ իջնէ երիվարէն , որուն  
ասնձն ալ գերեզմանի մը մարմարիոնին կառեց :

— Պատիւս , համբաւս , դուցէ և կեսնքս վր-  
տանդի մէջ դրի հոս դալուս , ըստ ասոլետին եղա-  
բօրորդին՝ հաստատ ծոյնով մը :

— Զը տարակութեցայ անվեհեր համարձակու-  
թեանդ վրայ , սրատասխանեց Նէմիս ; բայց դեռ  
պարտրդ կատարած չեղար :

Պէտք է հիմոյ համարձակիս ինձ աղատօրէն ը-  
սելու թէ ինչո՞ւ համար այսչափ խառութեամբ իրո-  
բեցիր զիս ընդ քեզ կապող սիրոյ թելը :

— Դուն այս հարցմանքն ինձ կ'ընես , ընդիմ-  
ջեց Հերմինիան ձեռքերն իրավու միացնելով :

— Անշոշտ մեծամեծ վաստեր ունենալու եօ  
որ կարենաս արդարանալ . քանի որ այսչոփ երդ-  
մանքներէ ու խոստմանքներէ յետոյ վճռեցիր մա-  
րել սրտիս մէջ նոյն խել յոյսը :

— Բայց զուն . աւելի իմ հաստատանոտ թենէս  
ձանձրացող ու իմ առ քեզ ըրած խոստմանքներո  
մուցողը չե՞ս :

— Զեմ հասկնար խօսքի վավառաց Նէմիս :

— Քաղաքն հասածիդ պէս Տիկին Պէնֆելու  
չը տեսա՞ր :

— Յիրաւի սրարտքս կատարեցի . քանոյի մեծա-  
պէս շնորհապարտ էի անոր , որ մանկութենէս ի  
պեր իմ պաշտպանուհիս եղած է :

— Պաշտպանուհին , կրկնեց երիտասարդուհին ,

օրտին կասկածը արտայայտող զօրութեամբ մը .  
վստահ ես որ ամենասլորդ համակրութենէ . . .

— Ինչ ըսել կ'ուզես , օրիորդ ,  
— Էսել կ'ուզեմ թէ , S. Պէնֆէլտը , դեռ  
զեղեցիկ է , և . . .

— Հէ՛րմինիա , գոչեց Նէճիս . ո'չ , ո'չ , քու  
աղիւ սրտիդ մէջ այսպիսի կասկած մ'երբէք չէ եւ  
իրեցած անկարելի է :

— Եւ ինչո՞ւ , ինչո՞ւ ուրեմն այսչափ ազդեց  
ութիւն ունի վրադ , ո՞ւստի է առ նա ունեցած  
քու մասնաւոր անձնուիրութիւնդ ալ . Ի՞նչ կը նը-  
շանակէ քեզ ցուցած այս խորհրդաւոր խնամքը .  
բաէ ինձ , ըսէ , ուրիշ ի՞չ կերպով կրնաս մեկնել  
ասոնց ամէնքը թէ որ զքեզ չը սիրէր :

— Կ'երդնում աշխարհի մէջ ինձ համար ամէնէն  
նուիրականին վրայ . կ'երդնում առ քեզ ունեցած  
սիրոյս վրայ Հէ՛րմինիա , որ կը խարուիս :

— Կը խարուիմ , ո'չ , ո'չ , և չեմ կարծեր  
երբէք թէ պիտի ուրանաս ինչ որ ապսպեցիր  
S. Պէնֆէլտին՝ քու կողմէդ ինձ ըսելու , թէ բո-  
լոր յարաբերութիւններն ընդհատենք :

— Ասոնց ամէնքը S. Պէնֆէլտն իմ կողմէ՞ս  
ըսաւ քեզ , յարեց Նէճիս , բայց ի՞նչ զարմանալի  
բան , քու կողմէդ ուլ ինձի ըսաւ որ զիս աղատ կը  
թողուս և ասոր փոխարէն իրաւունք կը պահանջես  
սիրոդ ու ձեռքդ ուրիշի նուիրելու , որովհետեւ՝ մեր  
սիրահարութիւնը՝ նախասլաշարմունքէ ու կրօնքէ

անդիմաղրելի արգելքներու սրատահելով՝ մեր երկուքնուս կորուստը կը սլատծառէ , վերջապէս այլևս զբեղ չը տեսնալու ու քեզի հետ չը խօսելու խօստումը տալու բաւական կտրիճ կը կարծէիր :

— Կարելի՞ է , կարելի՞ է , ըստ Հերմինիան սարսափահար :

— Այն զոհը՝ զոր խնդրեցիր ինձմէ կրկնեց Նենիպ , յանուն հանգստութեանդ ու կամացդ , երկնասուք պատուէրի նման ընդունեցի , սակայն իմ միսկ միսիթարութիւնս այս էր , որ խմանամ թէ դոհ ես Հերմինիա իմ վարժունքէս , ու թող մեռնէի :

— Երկուքնիս ալ ուրեմն խորեց , գոչեց օրիորդը հառաչելով՝ այս կինը բարեկամութեան դիմակով ջանաց զմեղ կործանել : Ոչ , մի ջանարդիս կրկին համոզել , բարեկամ , պարոնուհին դրեղ կը սիրէ , և չես կրնար ինձ հակառակն հաւատացընել :

Մեր բաժանման ու Պէմէնկհիմի լծակից ըլլալու համար եղած բոլոր այս դժոխային դաւագրութիւններն , հոգերն ու փոյթերը զորս առատաբար կը մատակարարէր քեզ . բոլորն ալ սիրահարութենէ զատ ի՞նչ կը նշանակեն : Այս՛ , ալ այսուհետեւ պիտի ատեմ զինքն ու սլիտի գարշիմ իրմէ : Իմ միակ վրէժինդրութիւնս ալ թող ըլլայ ուրանալ ու մերժել այն հարսանիքը զոր այնչափ փախարանօք կը խնդրէր :

— Պիտի ուրանաս ուրեմն այս հսրանիքը ։  
շնորհակալ եմ, շնորհակալ եմ միմնջեց Երխուսար-  
դը մեղմ ձայնով մը :

— Այս այս պիտի ուրանամ՝ զայն, եթէ  
հաւաստես ինձ որ միշտ կը սիրես զիս :

— Զբեղ սիրելուս ուրիշ օրինակ մի խնդրեր  
բայց եթէ այն ծանրաթախիծ յուսահատութիւնը,  
զոր լքեալ վիճակիս մէջ յիս զգացի և քու կամա-  
ցրդ ցուցած հըւթիւնս Երբոր Տ : Պէնֆէլոէն  
խարուելով անոր խիստ խօսքերուն հաւատացի ։ Եր-  
բէք չես կրնար երեակայել թէ ինչե՞ր կրեց սա  
թշուսու կուրծքս :

— Կը մառնաս, ըստ Հէրմինիան, որ իմ նետա  
ալ անցաւ ատկէց :

— Փառք Աստուծոյ, կրկնեց Նէճիակ . հիմայ  
ամեն բան մոռցուեցաւ . բայց երջանկութեան մէջ  
անգամ, ըսեմ քեզ, կը դողամ՝ քեզ համար :

— Ինչո՞ւ

— Հօրեղբօրդ զայրոյթէն . Երբոր իմանոց քու  
յանկարծուկան յեղամտութիւնդ :

— Կախիին դիմադարձութիւննէրովս դինքն այն-  
պէս վարժեցուցած եմ, որ առ ինքն ունեցած սէ-  
րըս ու յարգանքս կարծել պիտի տան թէ իւր կա-  
մաց դիջուծ եմ . և թէ հիմայ դիտաւորութենիւ-  
խախտած տեսնալով զիս, սիտի հասկնաց որ դար-  
ձեալ առաջին ցատկուտ խիստ բնութեանս ենթա-  
կոյ եղած եմ . դոնէ ներողամիտ սիտի դանոի :

— Պէտք է տեսնենք Տ. Պէնֆէլան, յաւելցուց Նէճիպ, որպէսզի հասկնանք իւր թակարդած որոգայթին իրական պատճառը, ու այս դազտնիքը դուրս չը հանելու իստումն առնենք անկէ :

— Ահաւասիկ իմոցուեցաւ թէ ովէ է եղեղ մեր թշնամին, ըստ Հերմինիան. և ովէ է վերջապէս մեզ կօրուստ սպանացողն։ Այս, ոյն անէ արդարեւ իմ բոլոր արկածներուն աղբիւրը։ Եւ ի՞նչովէս սլիտի ամոքես այս կնոջ յամառաթիւնը երբոր տեսնէ որ իր դաւերն ալ նշանակացան և բոլոր նպատակներն ալ ապարդիւն մը նացին։

— Տակաւին չը դատարարուենք վանի։ Գոցէ ինքն ալ իտարուած ըլլայ, և շըլլոց թէ մեր դատապարտութենէն պակաս ըլլայ իր յանցանքը։

— Դո՞ւն, Նէճիպ, դո՞ւն զանի կը սկսչուած նեմ։

— Կ'աղաչեմ մախկ ըրէ, Հերմինիա, մանկութենէս ի վեր ինչովէս որիշ տեսն բած եմ քեզ, անիկոյ վրաս դրավեցաւ, երբոք աղքատ ու որք Աստուծոյ ու մարդկանց երեսէն ինկոծ թշուամ'էի։ Մեր օգոստավիառ վեհապետ Անդիմ իսոնի (Աստուծ պահէ իր օրերը), զահակուլութեան ու ոտզին տարին անզից ունեցած սրատերազմներուն տեսն ծնողքս կորուսնելով ծերտնի Եւնիշէրիի մը քով դաստիարակուեցայ մինչև տասնամեռ հասուն, չունենալով որիշ աղակոյ մը, ոյլ միայն օր մը օհա-

զի մը օրուային մէջ դաստելու յոյսը , § . Պէնֆէլտըն . որ կ . Պօլիս գտնուող Գերմանիոյ գեսալաններէն մէկուն կինն էր , գորովեցաւ տարաբախոդ մանկանս վրայ իր աստիճանը հանձարը և երկու լեզին վրայ ունեցած ներհուն հմտութիւնը Ն . Վեհափառութեան սարայը մտնալու արտօնութիւն տուին իրեն , ու այսպէս Սուլթանին մօրը բարեկամն ու խորհրդակիցն ըլլալով՝ մեր ամենասիրելի վեհապետին քոյրերուն հետ ալ սերո յարաբերութիւններ ունեցաւ , և իմ անունս ալ սարային մէջ յիշելու չափ զիջաւ : Անմիջապէս Սուլթանն իր ծառայութեանը ընդունեց զիս , ալ բաւական երջանիկ եղայ , որովհետեւ հինգ տարի շարունակ իմ բարձր տիրոջս համակրութիւնը գրաւեցի : Վերջէն Սէլիմ՝ զիս Եւրոպա դրէեց , ուր զքեզ ճանչելու բարեբասղդութիւնն ունեցայ և դարձեալ այս նոր բարեբարութիւնն ալ § . Պէնֆէլտին կը պարտիմ : Կը տեսնես ուրեմն , Հէրմինիա , որ իմ դոյութիւնս , տուացուածքս և առ քեզ ունեցած սէրս § . Պէնֆէլտին գործերն են : Կը հասկնաս թէ ո՛րչափ ցաւալի է ինձ զայն ատելն :

Մէլիտէցի ասպետին եղբօրորդին խորին ուշադրութեամբ լսեց այս պատմութիւնը , որ իր միտրը հրարի խոռվեց :

Անտարակոյս § . Պէնֆէլտի աղքատիկ տղուն համար բռնած ընթացքը վեհանձն ու բարերար կը նոջ մ'ընթացք էր :

Հերմինիա ասոր վրայ իր ոգւոյն բոլոր համակը-  
բութիւններն յիշեալ տիկնոջ նուիրեց : Առաւել  
ևս նա շնորհապարտ էր անոր, քանզի առանց անոր  
երջանկառիթ միջամտութեանն ո՛չ երբէք սկիտի  
ճանչէր ՂԵՇՃԻԱԾ, որուն հրապուրիչ ձիրքերը կը մո-  
գէին զինքը : Բայց նոյն խոկ այս կինը կուղէր միան-  
դամայն անիմոնալի մատնութեամբ իրմէ հեռացնել  
այն երիտասարդն՝ որուն նուիրած էր իր որտին ա-  
մենանուրբ թելերն : Ի՞նչ նսլատակաւ երկուքն ալ  
խարեց : § . Պէնֆէլտ այս արտասուառիթ գործէն  
ի՞նչ շահ ունէր : Զարմանալին այն է որ միշտ բա-  
րեկամ կանուանէր զանոնք զորս միանդամայն այն-  
չափ պաղութեամբ ու անխղճութեամբ կը զոհէր :  
Երիտասարդին աշացն ու մոռաց ուրիշ աւելի հա-  
ւանական բան մը չէր նշմարուէր բայց եթէ խոր-  
հրդաւոր սիրահարութիւն մը, որով տիկինը այս-  
ովիսի խստութեանց կը զիմէ : Չուղելով վշացու-  
նել իւր տարփածուն, պատասխանեց որ § . Պէն-  
ֆէլտի համար ըրած խնդրոյն լուծումը ետ ձդէ,  
բայց իւր կասկածներն ստուգելու համար կը խորհէր  
միշտ ետևէ ըլլալ ամեն տեղ զայն լրտեսելու :

Աղէկ, ըստու, սկիտի տեսնեմ Պարոնուհին,  
սկիտի ստիպեմ զայն յանուն մեզ միացունող բա-  
րեկամութեան ըսել ինձ այս դաղտնիքը :

Եթէ բաւսկան արդարացուցիչ խօսքեր ունի և  
կամ յանցանքը խոստովանի, կը խոստանամ քեզ  
որ ներեմ անոր, ու առաջուան սկս դարձեալ

յարգեմ : Բայց զիտես որ միմիայն աղասի ու մը-  
տերմական խոստովանոթիւն մը կրնայ զիս համո-  
ղել : Եթէ զայն ուրանայ , իրաւունք սլիտի ունե-  
նամ այսուհետեւ զայն իբրև մեր խաղաղութեան  
ոխերիմ թշնամին նկատել :

— Ես ալ քեզի հետ կը խոստովանիմ որ իւր  
ընթացքը շատ զարմանալի է , ըստ Կէճիս , բայց  
կը յուսամ որ կ'արդարանայ :

— Այսալիս ուրեմն , ըստ Երիտասարդուհին ,  
նորէն քեզ կ'ուխտեմ , Կէճիս , մինակ քեզ սիրել  
և մեռնիլ քան թէ ուրիշի մը հետ ամուսնանալ  
մինչդեռ դուն կասլրիս ու հաւատարիմ կերպով կը  
սիրես զիս : Առ քեզ ունեցած սէրս ցորեկուան  
լուսոյն նման պարզ է , բնաւ խիղճս զիս չը յան-  
դիմանէր :

— Հերմինիա , պատասխանեց Կէճիս , վկայ  
թող ըլլան բոլոր այս շրջակայ նուիրական գերեզ-  
մաններն , ինչ որ ալ պատահի՝ Երբէք աչքս ուրիշ  
կնոջ վրայ չը պիտի դարձնեմ . Աստուած պատու-  
հասէ զիս եթէ դրժեմ Երդմանս :

Լուսինն աստեղազարդ կամարին վրայ կը բարձ-  
րանար , և իւր նշոյլները լուսեղէն նետերու նման  
նոճեաց ստուերամած ոստոց մէջ կը թափանցէին :


— Բաժնուելու ժամանակն է , ըստ վերջապէս  
Հերմինիա՝ քակելու է Երիվարին տանձը շիրմին մար-  
մարիոնէն , որուն կապած էր Կէճիս . մոտածէ , թէ  
ինչ կերսլով դարձեալ կրնանք միանալ կարելի

եղածին չտի շուտ : Երևակայէ թէ քեզ համար  
որչտի վտանգներ շնորհակալութեամբ յանձն առի :

Նէճիպ շրթունքներն երխտասարդուհւոյն ձիւ-  
նաթոյր ձեռաց վրայ տալաւորելէն յետոյ , օդնեց ա-  
նոր յերիվար ելնելու : Իսկոյն Հերմինիա ձիարշաւ  
աներեւութայաւ դէպ ի Բերա :

Առյն վայրիենին Նէճիպ մերձակայ զերեզմանին  
մէջ խշրոոց մը կը լոէ , ու ձեռքը դէպ ի դաշոյն  
կ'երկնոյնէ . բայց ամէն բան դարձեալ կը խա-  
զաղի :

Քիչ մը ետքն երխտասարդը զերեղմանսկան  
անտաքաց մուսյլին մէջ խխտ հեռուն մարդու մը  
կերսլարանք նշմորեց , որ շուտով մը անյայտ ե-  
ղաւ , և չը կրցաւ զայն ճանչել :



## ԲԱՂԱՆԻՔ

Ուրբաթ էր . այս օրը Թուրքերը կը տօնեն ինչ-  
ովէս քրիստոնեայք զկիրակին : Որովհետեւ Մահ-  
մէտի կրօնական օրէնքն ալ մասնաւոր լուացում-  
ներ (ապտեսո) և մաքրութիւններ սպառուիրած ըլ-  
լալուն թրքուհիք սպառաստուած են խմբովին դի-  
մել նոյն օրն ի բաղանիս :

Այս ժողովատեղիները Պոլսոյ ամէն կանանց  
խիստ բաղձալի դրօւանքներէն մին է : Բաղանիքը  
խօսակցութեան սասպարէզ կ'ըլլոյ : Հոն կ'երեսն  
ծանրագին ու շքեղ զարդարանքներ , հոն կը տես-  
նուին շողջողուն քարեր , հոն սիրոյ , կասկածանաց  
ու յուսոյ վրայ կը խօսակցին , հոն լուրեր կը յօրին-  
ուին ու կը հրատարակուին , հոն ամուսինները , դր-  
բացինները , կառավարութիւնը և նոյն խոկ Առաջա-  
նը կը բամբասուին : Խնչալէս արեմն ամէն կանայք  
հոն չը վաղեն . թէև հարուստներուն կիներն իրենց  
առնց մէջ մասնաւոր բաղանիքներ ունին , սակայն  
իրենց լծակիցներն եթէ զատոնք չարգիլեն ուրիշ  
բաղնիքներ երթալու , ամենայն շնորհակալութեամբ  
հասարակաց բաղանիքը կուգան իրենց բարեկա-  
մուհեացը հետ . եւ եթէ ամբոխին հետ խառ-  
նուիլ չուզեն՝ ամբողջ օր մը զայն կը վարձեն :

ԵՌԵՄԸՊ՝ օթուզսուրի չորսամին կինը , ուրիշ

կանանց ալիս իր մասնաւոր բաղանիքը թողուց հասարակացն երթալու համար . բազմեցաւ կառքը՝ որ թանկագին վարագոյրներով ու ոսկի ծոսկերով զարդարուած էր . և իւր երկու նաժիշտներն իր երկու կողմը նստեցուց :

Զոյգ մը եզներ՝ որոնք կարմիր մետաքսեայ ծոպերով զարդարուած ճակատնուն վրայ բազմանկիւն հայելիի կտորներ կը կրէին , ժամ մը ամբողջ քաշելով դանդաղաշարժ կառքը՝ հասան մինչև Եհնիշերիներուն թաղը՝ Սուլթան Ահմէտայ ճամիին մօտ : Մէկ քանի տիկիններ՝ որոնց մէկն աւ Եըլտրղն էր , ամբողջ օրուան համար բաղանիքը վարձած էին : Զօրպաճիին կինը , շղարշներով ու վերարկուներով փաթթուած ծանրութեամբ մը կառքէն իջաւ՝ իր երկու նաժիշտներուն յեցած . որոնք ևս մետաքսեայ ճոխ սաւաններու մէջ փաթթուած կը կրէին իրենց Տիրուհւոյն զարդարանացը ալէտք եղածները : Բաղանիքին զրան վարագոյրը վերցուեցաւ , ու Եըլտրղ ներս յառաջացաւ հաղիւ ոտքերը վեր առնելով , և սիդամէմ քայլերով իր դեղնագոյն կաշիէ սրածայր մուճակները փսխաթին վրայ Խըլրտելով՝ կը սահեցնէր , որ ներքնասենեակը կը զարդարէր :

Հաղիւ հասաւ առաջին սենեակը , որ իրր ըստասելու սրահ է , և ուր թէ բաղանիք չը մտած և թէ բաղանիքէն դուրս ելսծ ատեն հանգիստ կ'առնէն , խսկոյն Եըլտրղի նաժիշտներն եսշմաքն ու ֆէ-

բանին վրային առին . և այն առեն տիկինն իր ամենայն շքեզութեամբն Երևեցաւ :

Իր բարեկամուհիներն՝ որոնցմէ ոմանք նստած , ոմանք ընկողմնած էին՝ տախտակներով բարձրացած անկողիններու վրայ . որ սենեակին շուրջը սպատերուն կրթնած էին , ( որուն բարձրաբերձ դրմբէթներուն ապակեայ լուսանցքները քաղցր ըստ մը կը սփռէին ) , աղմուկով մը ողջոնեցին իրենց ընկերուհին . « բարի Եկաք , բարի Եկաք , » զոշելով . եւ իրենց քով անոր տեղ մասուցին վերջին աստիճան սլքրասէր և իլուրու նախանձընդէմ վարմանքով :

Այս զեղեցիկ Երիտասարդուհեաց սիրահար ակումբը հրասպուրելի տեսարան մը կը ներկրայացնէր : Երկայնածխգ հերաց խոսրակիրները մանրիմ հիւտածքներու բաժնուած մարդարակեայ ճարմանդներով պնդուած՝ իր մետաքսահիւս կամ ոսկեքղանց օթոցին վրայ կը ծածանէին , և կը ծփային անոր փափուկ ուսոց վրայ՝ որոնք նեղ լանջակասլներէ չեն տղեղայած , զորս Եւրոպացիք կը դործածէին : Աղնիւ ցիսիէ ( լահօր ) գոտիներ կամ ոսկի ճարմանդներ Հնդկաստանի թեթև սղօֆանները կը հաստատէին մէջքին վրայ , որոնք քղանցքին բոլոր ծայրերուն վրայ կտրուած եւ կուրծքին վրայ բացուած էին . այն կուրծքին վրայ՝ որ բաղնիքին որմերը զարդարող մարմարիսներէն աւելի սպիտակ էին : Մեծագեղ ու սեաթոյր ականողիքները , որոնք արտես-

նանց եղերը քաշուած գրչտող թեթև գծիկով մը  
աւելի կ'ընդլայնին, աղեղնածւ ու կարակնեալ յօն-  
քերով սլսակուած՝ երկու կողմէն կը փարփլսյին :  
Ոմանք փախուկ ու հինայաներկ մատոքներով շր-  
պուզին խաղովակը բռնած ծուխի ամսեր կը յարու-  
ցանէին, որոնք ոլորտապտոյտ դէսկ ի առաստաղին  
գմբէթը կը բարձրանային. ոմանք ալ փայտեայ փոք-  
րիկ թմբկահարներով երկաթալար նուազարան մը  
դարնելով՝ իրենց ձայներուն ծանր ու մելամաղձու-  
հնչիւնները դաշնակին եղանակաց հետ կը միացնէին :  
Դարձեալ ուրիշներն ալ ասրբանչ կամ մանկակա ըս-  
տած խաղը կը խաղային . միանգամայն ալ խանվէ-  
մը կամ համեղաճաշակ սլտուղներէ գոյացած հիւթէ-  
շերպէր մը խմելով : Շատերն ալ իրենց անձնական  
հրապուրանքներէն դիւթեալ, սսխսուհեաց բռնել  
իուտային հսցելինին իրենց առջե . ու իրենց դիմաց  
վրայ մէկ քանի սիսակներ կամ զգեստնուն վրայ  
մէկ քանի սեթեեթներ կը յաւելցնէին կամ կը  
սրակսեցնէին :

ԵՌԼՈՐԸ, որ գեղեցկութեամբ դամենն ալ կը գե-  
րազանցէր, ու իր թանկաղին աղամանղներով և  
զարդարեալ զգեստներով ամենէն կ'որոշուէր, առ-  
ֆան ելնելով՝ բազմեցան փոքրիկ ակումբին մէջ, ուր  
խօսակցութիւնը աւելի եռանդուն էր : ԵՌԼՈՐԸ խա-  
ժունը շերպէրին պարպած բաժակը սլասուհւոյն  
տալով՝ և ձեռքը սրտին ու ձակտին տանելով ող-  
ջունեց իր բարեկամուհիները, որոնց ամենն ալ օ-

ձաղի Երևելի սլաշտօնակալոց կամ կիները կամ  
ազգականներն էին :

— Ե՛, Եւլուղ, ըստ ցած ձայնով մը՝ նոյն ա-  
կումբին ամենազեղեցիկներէն մին . Սուլթան Պա-  
յաղիտի մէտրէսէի(1) սօֆրային հետ ունեցած սիրա-  
հարութիւննիդ ինպէ՞ս են :

— Ամիսէ մ'առելի է որ զանոնք մոռցոյ , սրա-  
տասխանեց Երիտասարդ կինը՝ հառաչելով :

— Ի՞նչ խենդ եմ եղեր , ըստ քիչ մ'առաջ  
խօսող կինը . որ սօֆրային վրայօք քեզ հարցմանք  
կ'ընեմ . քանի որ դու ինքդ ըսկը ինձ որ կը խենդէ-  
նաս «Աճիալ էֆէնտիին համար , որ Եւրոպայէն ե-  
կաւ . և շատ զարմանալի բաներ կը սկսամուին վրան :

— Ա՞ր մի , Ախլ-Պահար (2), սրատասխանեց  
Եւլուղ՝ իր բարեկամուհւոյն ձեռքը ոեղմելով . մի  
ոյդ անունն արտասաներ . որովհետեւ «Աճիալ գուզլա  
Եւրոպացուհւոյ մը համար զիս կ'արհամարհէ , ան-  
հաւատարի՛մը . . .

— Վտո՞յդ կ'ըսես :

— Շա՛տ ստոյգ . կ'ուզես նէ յայտնասէս ըսեմ  
քեզի , Երէկ անոր բարբարոս լեզուն հասկցող ըս-  
տասուհւոյ մը լրտեսել տուի զանի : «Աճիալ անհա-  
ւատ կնոջ հետ տեսակցեցաւ Պիյողլուի դերեզման»

(1) Վարժարան , կամ տեսակ մը աստուածաբանական համալ-  
սարան :

(2) Այս յատուկ անունը «վարդ զարնան» , կը նշանակէ :

նոյն, ու հոն . . . : Ինձ ձգէ մասցածներն ալ՝ Ակրելիդ իմ Ավուլ-Պահար, ինձ չը վերաբերիր ալատմել իմ խայտառակութիւնս :

— Ովք սարսափանացս. եի՞նչ սլիտի ընես հիմոյ, Երլորդ, ըսէ ինձ, ի՞նչ սլիտի ընես :

— Սաստիմ վրէժ սլիտի պահանջեմ :

«Քիչ մը վերջը խօսակցութիւնն աւելի ընդհանրացաւ լուացւող զեղեցիկներուն մէջ . և վերջապէս հասան այն մեծ խնդրոյն, որ իրենց հաւաքման նախառակն էր :

— Տիրուհիներս, ըստ լուացւողներէն մին՝ որ Հաղիութա կը կոչուէր, ու մեծ միւֆրիին քոյրն էր. ինձ նման դուք ալ ստուգապէս համօղուած եղէք որ մեր ընտանիքները սլիտի վճանան եթէ ծիավարներուն Սուլթանէն խնդրած բարեկարգութիւններն գործադրուին : Այն առեն իւղեմաններուն (1) բոլոր զօրութիւնը և Եէնիչէրիններուն մեծագումար բանակին ամեն աղղեցութիւնը այլ ես կը դադրի, մեր հարստութեան աղբիւրը կը ցամքի, մեր սցրերը նոյն խոկ տէրվիշներէն ալ աւելի աղքատ կ'ըլլան . և մենք կ'ստիպուինք ծախոել մեր բոլոր աղամանդները որ ալէս զի զանոնք սնուցանենք :

— Երբէք չը կրնար ըլլալ այդ, երբէ՛ք զոչեցին այն առեն բոլոր կանայք :

— Իմ սցրս, ըստ չօրպաճիի մը կինը, իր գըն-

(1) Խրէմա, սցսինքն կզեց սըբակեաց :

Դին հետ պատրաստ է չարաչար մեռնիլ՝ քան այս պիսի բանի մը կատարուիլը տեսնել :

— Իմ այրս ալ, ըստ ուրիշ մը, եթէ այն չափ երկչոտ ու անարի երևնայ, որ չը կարենայ փառաւոր սաները (գաղաճ) դուրս հանել. ես ինքս հողաթափովս պիտի մեռցնեմ զանի :

— Իսկ ես, յարեց Երլարդ, իմ սիրելի լըծակից Վահիր Պէյի կողմէն կը սկստասխանեմ թէ կամքս յայտնած եմ այս բանիս նկատմամբ :

Այսօր արդէն օրուզպիրի բոլոր պաշտօնակալները անոր քով կը հաւաքուին. իմ պատուէրիս համեմատ, և կը վճռեն այն միջոցները՝ որոնցմով կը նան աղստիլ Սուլթանէն, որ իսլամութեան շահերը չը հոգար :

— Եւ ի գահ պիտի բարձրացնեն յաւելցուց Համբա. շահզատէ Սուսթափան, կրօնից յոյսը, որ պիտի ներէ մեր այրերուն որ առաջուան պէս հարցստանան և մեղի նոր պարզեներ ու սկաճուճանքներ սկսուի շնորհեն :

— Կեցցէ՛ Շահզատէ Սուսթափան, դոչեցին կանայք :

— Լոեցէր, ըստ Բիսթղիի քոյրը, եթէ Սէլիմ կեավուրը լիք մեր նսկատակները՝ անտարակոյս խեղճ Սուսթափան պիտի մեռցնէ, մեր բարեկամներուն զանի վրկելու համար դեռ սէրային պարիստներէն ներս չը ցատկած : Մի՛ բարձր խօսիք ուրեմն աւ սիրելի՛ բարեկամուհիներս : Ամենէն առաջ ձեւ

զի սա կը պատուիրեմ . Խրաքանչիւր ոք իր ամուսնոյն քով մտնելուն սկս , հանգիստ չը թողու զանի , մինչեւ որ ապստամբութեան օդնելու խօստում չ'առնէ բերնէն , և չը թողու որ կատարման նշանաւոր վայրկենին ի դէն դիմելու չը գրգոի :

— Կը խոստանա՛մք , կը խոստանա՛մք , գոչեցին դարձեալ բոլոր կանայք :

Այն վայրկենին սպասուհիները եկան իմացուցին տիկիններուն թէ կամաց կամաց բաղանիք մըտնելու ժամանակն է : Այս բաղանիքները մարմարիոնեայ սենեակներ են , Հոռվմսցեցւոց , Յունաց բաղանեաց սենեակներուն նման ստորերկրեայ վառարանով կը տաքնան ու խողովակներով կը զովանան , և դրեթէ Ռէօմիւրի 35 աստիճան անփոփոխելի ջերմութեամբը օդ կը պարունակեն : Լոգարաններ ունին . որովհետեւ Արևելցիք փոխանակ առատահոս ջուրին մէջ ընկղմելու , քիչ բասերով գաղջ ջուր կը թափեն լուսցւողին վրայ , օճառ քրսած ու շիշփած առեննին . վերջապէս սպասուհեաց յօժարակամ ինամոցն յանձնուեցան , որոնք ուկեժան ու արծաթահիւս զենջակներով ծածկեցին դանոնք և քակեցին անոնց մազերը որպէս զի վարդի թերթերէ բաղադրուած տեսակ մը կառով մաքրեն : Մարզարտայեռ թեթև հողաթափներն՝ որոնք յատակի տաքութեան համար անհրաժեշտ ալէտք են , առաջնորդեցին դէպի դաւակցաց գեղեցիկ սենեակը , ուր դուռն անմիջապէս ինքնիրեն գոցուեցաւ :

## ՀԱՐԻՄ:

Նէմիալ այն միջոցին օրագույրի ուրիշ սլաշտօն նակալաց նման իր չորսամիին քով հրաւիրուած ըլլով, սլաշտօնական համազգեստն հագած դուրս ելաւ, Վահիր Պէյին տունն Երթալու համար, որ կյուսի արուարձանին կողմերն էր :

Առջի օրուան տեսակցութեանց համար ամենասխորին մտածմանց մէջ ընկղմած բոլորովին մոռցացած Երտըզի սպառնալիքները, նա մանաւանդ մոռցած էր նաև գերեզմաննոցի նոճիստանին մէջ զիշեր ատեն տեսնուած երևոյթը՝ որ զինքն այն աստիճան խոռվեց : Պաղճէ-Գարուի նաւահանգիստըն անցնելով՝ մինչդեռ ձեռքով գայլզահի մը նըշան կընէր դալու որսէս զի զինքը կյուսի արուարձանը տանի, յանկարծ ծանր ձեռք մը իջաւիր ուսերուն վրայ, ետևը դարձաւ տեսաւ որ իր օրբայի Աշճի-Պաշի Ամի-Օսման առջել կեցած է :

— Բա՛րե գնդապետ, ըստ Նէմիալին, ծերունի Եէնիչէրին, ես ալ մեր չորսամիին կ'երթամ . օն որեմն երկուքս ալ այս գայլզը մտնենք նստինք :

— Շատ աղէկ, ուստա, սլատասանեց Նէմիալ, անբացատրելի ուրախութեամբ, իր հին բարեկամին վերադարձը տեսնելով, երկուքն ալ լոիլ մնջիկ նստան գայլզը և նաւախարներն հեռացած

Ամեր-Չուման քաշեց զօտիէն թիւրիւնին քէսէն (ծխաւ պարկ), աղէկ մը լեցուց իր չպուքը ու զանի վառեց . յետոյ՝ իբրև թէ իրենց խօսակցութիւնը զայդահներէն չը լսուի, կամաց մը ծռելով Նէճիալի ականջ ի վայր ըստւ անոր :

— Երդուընցայ որ գքեզ քու բաղդիդ յանձնեմ, և ալ երեսդ չը տեսնեմ. Բայց առ քեզ ունեցած սէրս իսմ զայրոյթս ու քու յանցանքդ յաղթեց : ԵՎ հաւատամ որ պատուասիրութեամբ կընամ զքեզ ուղիղ մտածմանց մէջ առաջնորդել, ցուցնելով քեզ այն գահամիժը՝ առ որ կ'ընթանաս, և բաւ ցատրելով քեզ այս ժամաս այն առելութեան չարժառիթը՝ զոր կը սնուցանեմ ընդդէմ քրիստոնէից, զորս քեզի բարեկամ ընորած ես :

Եթէ Նէճիալ, վերջէն առած դաստիարակութեանդ պակասութիւնները սրտիդ մէջ երախտագիտութեան հետք մը թողուցած են տակաւին, պիտի յիշես որ ես հայրդ եղայ . . .

— Ինչ որ ալ պատահելու ըլլայ, ոստա, երբէք չը պիտի մտնամ առ քեզ ունեցած պարտաւորութիւնս, պատասխանեց Նէճիալ յարգանօք, և եթէ կարենամ առ քեզ ունեցած զզացմունքներս ցուցնել մահուամբս անզամ՝ հրամայէ, և պիտի հնագանդիմ :

— Այդչուի խստապահանջ չեմ, ըստ խոհաւարապետը : Մտիկ ըրէ ինձ, և պիտի խմանաս գաղտնիք մը՝ զոր և ոչ մէկու մը հաղորդած եմ, և

որ գիշեր ցորեկ աղիքներս կ'երէ ու կը մրկէ . տասն  
և ութ տարիէ ի վեր զանի սրտիս մէջ գաղտ պա-  
հած եմ . գիտես որ, Նէճիալ, վրէժխնդրութիւնը  
աշխարհի վրայ մարդու հոմար տմենաքաղցր զգայ-  
մանց մէկն է, մանաւանդ երբոր վրէժխնդրութիւնը  
արդար է, և մանաւանդ երբ վրիժառուն Միւղիւ-  
ման է . և անոր դէմ անիրաւողը անհաւատ մ'է :

— Եւ այսչափ տարիէ ի վեր, Անասա, պատեհ  
ժամանակ մը չը կրցա՞ր ունենալ վրէժդ լուծելու :  
Այսու տմենայնիւ սլատրաստ եմ մտիկ ընելու զըժ-  
բաղդութեանդ արեածը . և հիմակուընէ երջանիկ կը  
համարիմ ինքզինքս, եթէ տկար բաղկացո օգնու-  
թիւնը . . . .

— Եթէ ճակատագիրն ըստ, Ամի-Յահան ընդ-  
միջելով զՆէճիալ, ներէր ինձ դէմ եղած հայհոյան-  
քը սկսովել, բաւական էր նաև մինակ իմ բաղու-  
կը որուն վրայ հրացայտ սլողավատիկը օրուզպիրի  
խարիսխը դրոշմած է : Բայց մտիկ ըրէ ինձ ու մի  
ընդմիջէր : Տասնեւութը տարի անցաւ, ինչու ըստ  
քեզ, հիմակուան փատիշան Սոլթան Սէլիմի թա-  
գաւորութեան տոաջին տարին էր . իր նախորդն,  
Աստիւլ-Համիտ մեռնելով, մեղի թողոց Առևսաց  
դէմ եղած պատերազմը, մինչդեռ մեր բանակներն  
արխութեամբ կը մարտնչէին Պանուրի մօտ . միւս  
անհուատներն ծովահէններ կը խորէին որպէս զի  
կողոստեն վաճառական նաւերը, որոնք խաղաղու-  
թեամբ ու հանդարտիկ տէրութեան մէկ դատառէն

միւսը կը նաւէին :

Ես երբեմն դէսլի յ'Եղիպտոս ճանասլարհորդած  
ըլլովլ՝ Պահիրէ մոլլա մը ճանչցոյ, որ բարե-  
կիրթ ու տառքինի մարդ մ'էր, և որուն ի կնու-  
թիւն տաւ որոշեցի միածին Ալշէ շնորհալից դըս-  
րիկը :

Կոստանդնուպօլէն Աղեքսանդրիա վերադար-  
ձող Թրքական նաւ մը մտայ աղջկանս հետ . զանի-  
իր ապագայ Ճակացին տանելու համար, որ 50 քառէ-  
օժիո տուած էր և բուռն անձկանօք կը ալասէր  
մեղ : Բայց, վա՛ռք Աստուծոյ, իմ ճակատողիրս  
էր որ այս ծանր հարուածին տակ իյնայի : Մեր ծո-  
վագնացութեան կէսն հաղիւ ըրած էինք՝ երբ յան-  
կարծ դէսլի մեղ ու զղուող թնդանօթակիր նաւ մը  
տեսանք : Մենք ի վախուստ կը խուճաղէինք, բայց  
թշնամին մեզմէ սրընթաց էր . կը մօտենոյ և իր  
զինուորները մեր նուռն տաղտակամածին վրայ  
կը հրատէ : Բարբարոսներն առանց հասակի ու ցեղի-  
զանազանութեան նոյելու, ձեռքերնիս, ոտքերնիս  
կը կապեն, մերճակայ կրզի մը կը տանին, որուն ա-  
նունըն էր Մալթա . որ իրենց կը վերաբերէր :

Հոն զիս զատեցին Ալշէէս, և մինչ ես կ'ողբայի ու  
կ'արտասուէի՛, զիս ի բանտ նետեցին . տակախն ա-  
րիւնաթաթախն էի ոյն հարուածէն, որուն սալին դեռ  
դէմրիս վրայ կը տեսնես ահա : Համբերեցի զլխու-  
ելոծ դժբաղդութեանը՝ միշտ առ Աստուծ յո-  
սալով :

Գերութենէս տարի մը վերջը ինձ գերեկից ու  
բիշ Միւլիւմանաց հետ յաջողեցոց փախչել նա-  
ւաստիի մը օգնութեամբ, որ մեծամեծ վարձառ-  
րութեան խոստմունքով, զմեղ Ելաղայի ծովեղեր-  
քըն հանեց, ուր փրկուեցանք:

Բայց աղջիկս, Այշէ հետո չէր այլ ես: Կո-  
տանդնուալոլիս վերադարձայ և ծածկել ողելով  
խայտառակութիւնս լարով որիշներուն ըսի որ աղ-  
ջիկըս սլատերազմին մէջ մեռաւ. Սո՞ւտ . . .

Դժբախտ Այշէն աւոր ըլլալով անհուատից  
գլխաւորին որ ծովահինից նաւը կը կառափարէր,  
նախ և առաջ անպատճեցաւ անկէ. իսկ յետոց  
թշուառականը երեսի վրայ թողոց աղջիկս: Երկա-  
մեայ արհամարհելի կեանքէ մը յետոյ այն կղզւոյն  
մէջ մեռաւ տարաբախտ Այշէս, իր մահուան վրէժ-  
խընդրութիւնը թողլով ինձ . . . :

Ամի-Օսման կսկծանաց ցաւալի աղջեցութենէն  
ընկճուած՝ ընդմիջեց խօսքը. չոր ու բացացայոր աչ-  
քերը կը ցցնէին որ շատոնց ի վեր արտասուաց աղ-  
քիւրը դաղրած ու ցամքած էր: Քիչ մ'ետքը ծե-  
րունի Եւնիշէրին ատելութենէն ողի առած վերըս-  
տին սկսեց իւր սլատմութիւնը.

— Այսսկիսի նախատանաց համբերեցի, շարու-  
նակեց, և տակաւին չըտեսի այն օրը՝ յորում ձաւ-  
կատադիրն աղջկանս սպաննիշը սրոյս հարուածին  
տակ պիտի ձգէ: Անկէց ի վեր ոկիզր առաւ անհու-  
ատից դէմ ունեցած անհաշտ ատելութիւնս, Եւ-

Ֆիալ, անկէց ի վեր այն մեծ միտումն առ հին սովորութիւն մեր Աղջին, և այն որոշումը՝ որ սրատերադմիմ այնամեն պատճոյ արժանի նորոգութեանց դէմ, որոնք միշտ Միւսլիւմանները բարբարուներէն բաժնող արխանաների զիծը ջնջել կ'ուզեն : Այժմ դաղտնիքս հասկնալէդ յետոյ, կը մնայ քեզ, որդեզիւրը, որ արդէն սրտիս մէջ Աժշէի տեղը կը բռնես, կը մնայ քեզ, կ'ըսեմ, խորհիլ ու որոշել : Այո՛, որոշէ խղճմտանքով, թէ ինձի հետ՝ քու եղբարցէ հետ Միւսլիւմա՞ն, եթէ նոր բարեկամացդ հետ անհաւատ ոլիտի ըլլաս : Որոշող ժամանակը զուցէ հեռի չ'է : Ու այս խօսքերն ըսելով Ամի-Օսման զայրգին դուրս ցատկեց . որովհետեւ արդէն իշխուսի ծովեղերքն հասած էին :

“Եմիալ մտախոհ և լոիկ Թոջիկ անոր հետեւեցաւ : Քիչ մ'ետքը Վահիր-Պէյին տունը հասան : Ակամալի դոներն կռնակի վրայ բաց էին, և սպասաւորք սիւներուն տակ իրենց տէրոջ բարեկամները կ'ընդունէին :

“Եմիալ առաջնորդուեցաւ այն մեծ սրահը՝ ուր օրուգիրի պաշտօնակալներն և վերջին օճազի մէջ բնակող ուրիշ զանազան պաշտօնակալներ ժողովածնատած էին :

Օրուգիրի երկրորդական պաշտօնակալներն քովի սրահը ժողոված էին, ուր խոհարարակետ Ամի-Օսմանը հիւրընկալի տեղը բռնեց, ներս մտնողներն ընդունելով ու անոնց ծառայելով :

Կամաքներու գլխաւորը (պաշ-դարա-գովլուդ-ձին), օրբային ևամաքները և ջրկիրները (սաղա) ոչ-ինչ նուազ սլերճութեամբ նստած էին բազմոցներուն վրայ իրենց սրաշտօնակալուներուն նման, և ճաշին սպասելով ըրպագինու ևարկիվէին ծուխը կը կըւ էին հեշտութեամբ :

Նէմիալ նստարանին վրայ բաղմելով ու ոռքերը ծալլելով բարեւեց հոն գոտնուողները, սպասելով որ իր չորսպահին խօսք ուղղէ իրեն : Այս միջոցիս միւս հրաւիրեալներն իրենց գալստեանն համեմատ ճաշի կը սկսէին կամ ճաշէ կ'ելնէին : Ինչովէս որիշներուն նոյնալիս ալ Նէմիալի համար առանձին ճաշ տրուեցաւ : Սպասաւորներէն մին նոխ և տուջ մետաքսեսց ու արծաթահիւս սուան մը փոեց զետինը, և այս տաւանին վրայ վորրիկ սեղանը զետեղէց, ինչովէս Օսմանցիք կ'ընեն : Պարծուած ուղանին չորս ոռքերուն վրայ զրաւ հետեւաղէս պըղընձեաց փայլուն սկսաւակը (սինին), և տարմէջտեղը Թուրք խոհարարին բազմատեսակ խորտիկներըն շատ մը անաղեայ վոցուած փայլուն անօթներով հետ զհետէ քովէ քով զետեղուեցան : Առելորդէ ալ յիշեցնել որ 1808 ին Եթիշերիներուն սրաշտօնակալներէն ի վեր սեղանին վրայ ոչ սլնակ, ոչ լանակ, և ոչ սրատառաքաղ տեսնուած էին, որոնք բարեկարգութեան զղուելի հնարքներ են : Եւ կոչնականներն ըստ Թորքական սովորութեան մասներով կ'ուտեն, միոյն հեղուկ կերտկուրներու

և բիշախ համար վիզուելք կամ վայտէ դրդալ կը դործածեն :

Տաճկաց ճաշը տասը վայրկենէն կը լմնայ, բայց նոյնալէս աչքիդ առջեւէն տասնեհինդէն մինչեւ քսան տեսակ կերակուր կ'անցնի, որոնցմէ իւրաքանչիւր բազմական հաղիւ կրնայ քիչ մը բան ուտել : Ճաշի տտեն ըմպելեաց վրայօք խօսք մ'անգամ չըլլըր. իսկ ճաշէն ետքը հազիւ թէ . անալ քու իւընդրանօքդ գաւաթ մը մաքուր ջուր կ'առնես : Ասկէ ետքը կուզայ ձեռքի և մօրուաց լուայումը որդնածի կամ արծաթի կոնքով և շոնիկով (լէյէն եղագրիս), զորս տան տպասաւորները կը ներկայացնեն, ինչպէս որ միջին դարու տաենները Արևմտեան Եւրոպայի մէջ կ'ըլլար : Աեղանը վերցուելուն սկզ գանվին ու շրպուգը կը մասուցուի, և ապա կ'սկսի խօսակցութիւնը :

Օրուզպիրներուն զլիուառը սովորական բարեները տալով իւր երիտասարդ միաժիրին՝ սրտուհուն աչք ըրաւ նուազահարներուն և գուտաններուն (չէնկի) որոնք բակին մէջ կանգնած սենեակը մտնելու հրամանին կը սպասէին, և նուազարտանաց առաջին ձայները, որոնք արդէն սանդուխէն կը բռեին՝ բազմականաց դէմքերը զուարթացուցին :

Վեց սնձերէ բաղերացեալ խըմբիկ մը որոնք անցարդար հնդաղեաց (բիօլիա) քնարներ և թըմքաւեր (թէֆ) կը զարնէին, որահին մէկ անկիւնը միսխաթին վրայ նստան. իսկ գուտանք մէկ զծի վը-

ըսյ կոչնականաց առջին շարուեցան։ Ասոնց ամենը 14տարեկանէն մինչև 18տարեկան պատանիներ էին, և իրենց երկայնաձիգ վտրսերը օդին մէջ զանգրած կը ծածանէին։ դաշնակ մը կը զարնէին որ մասներնուն մէջ կրած բանդոիկներէն (չալփարա) շատ մեծ չ'էին։ Այս պարերը Սպանիոյ (գաշխաշ) ըստած պարերուն շատ կը նմանին։ և թերեւս միեւնոյն արաբական սկզբունքն ունին։ բոյց Թուրք պարողներուն սլարզութիւնն ու դիւրութիւնը . . . Սպանիացւոց տալոկացուցիչ ազատ պարելը կը գերազանցէ։ Կուագածուաց խմբակին ալ չոր ու ցամաք դաշնակին կը ձայնակցէին մէկ քանի անախորժ երգերու աղմկալից արձագանգներ, որոնք գրեթէ միշտ հնգաղեային բարձրագոյն ձայներովը կը վերջանային։

Կոչնականաց ուրախութիւնը մեծ էր, որն որ օշիի մեծամեծ շիշեր անյագաբար պարսպուելէն ալ յայտնի էր. այս օղին զանազան պտուղներէ գոյացած ըմսելիք մ'էր, որն որ բոլոր Արևելքի մէջ շատ գործածելի ըլլալովն անգամ աղէկ կերպով բաղադրուած չ'է։

Ոչ մէկ կրօնական արգելք մը կարող եղաւ ամենամեծաղի մոլեսանդութեան ժամանակներն անդամ այս ասլօրինաւոր նորութիւնը խափանել։

Վահիր-Պէյ այն ատեն բազմոցին մէկ անկիւնը անշարժ նստած էր. մեքենայի մը նման դլոյն առ անդին կը տարուբերէր՝ երբ մէկէ մը կ'ողջուն

տէր : Եթ կիսաբաց աչուրներն , չոր ու նիհար դէմքը ,  
որ իրեն գաղանային կերպարանք մը կու տոյին ,  
կը ներկայացնէին զրիրեաքին , այսինքն ափիոն ծխո-  
ջն , որ քիչ մ'ետքը պիտի թմրի : Երկու սաղառաւոր  
ներս մտնելով իրենց բազկաց վրայ վերոցին դա-  
նի ու սրահէն դուրս հանեցին . որպէս զի այն ձանձ-  
րացուցիչ աղմուկէն իր երջանկոթիւնը չը վըր-  
դովի :

Ծիծաղն աւելի շատցաւ , և օղին իր շրջանն ա-  
ւելի բազմապատկեց , երբ հրաւիրեալք տանտէրոջ  
ներկայութենէն այլ ևս տպատ էին . այնպէս որ օ-  
ճարի գործակալներն ու օրուզպիրի սպաշտոնատէրերն  
սրահին մէջ խոնող երկրորդական պաշտօնակալաց  
հետ խառնուեցան . որպէս զի անոնք ալ երգն ու  
պարը վոյելեն . քիչ մը ետքը երկու առանձին կար-  
դերու բաժնուած կ'երեւային , կէսը արրեցութենէ  
թուլցած բազմոցին վրայ կամ դետնի վրայ փըռ-  
ուած էին . և կէսն ալ տակառին սարսափելի հեղու-  
կին չը յաղթուած գուսաններուն ու երգողներուն  
հետ կ'ուտէին ու կը խմէին :

Աճիսլ այսպիսի տեսարանէ մը գարշելով ոտք ե-  
լու , ու դէալի դուռը քայլել սկսաւ , բայց սլարող-  
ներէն մէկը բաժակ մը օղի ներկայացուց անոր :

— Պարպէ այս բաժակն , գեղեցի՛կ սպաշտօնա-  
կալ ըստ մէկէն ի մէկ , ասս թէ ոչ օրուզպիրի  
քաջերուն մէջ անարժան պիտի ըլլսս երևելու :

Աճիսլ վոխանակ սլատասխանելու բաժակն ա-

ոտծին ալէս զարկու տախտակամածին, ու կտոր կտոր ըրաւ:

Այ, այ, գոչեց պաշտօնակալներէն մին որ տագափ տիտղոսը կը կրէր. մեր գունդին կը հայհոյէս. և որովհետեւ չ'ես ողեր բաժակ մը խմել, պիտի ստիստենք զբեղ ամբողջ շիշ մը օդի կուլ տալու:

— Տէսէք կեավուրը, գոչեց ուրիշ մը. բարեկարգիչ Սէլիմոյ հետեւորդ է: Սեղը որ տսիկայ ալ էշիկ-գալրազներուն հետ չը դասեց:

Եէնիչէրիներն այդ անունը կու տային նորակաղմ բանակներուն այսինքն Նիզամը-Շիտխոի:

— Տէրոջը չը դարձած՝ ալէտք է ծառան սպաննենք, յարեց ուրիշ մը:

Ինչու որ այլք նոյնուկու և Պանքրէտ Պլէմէնկ-հիմ՝ հետաքրքրութեան համար Հիւնքեար-Խսկէլէսի եկած էր, և ինքզինքն ամբոխին աղմուկէն ազա-տելու համար հովիտն ի վեր ելնել սկսաւ, և հա-սաւ առուակին մէկ ծոցը՝ թանձրախիտ ծառի մը հովանւոյն ներքեւ, յորում շատերուն աչքերէն ծած-կեալ կը մնային ճոխաւէտ գորգի մը վերայ նստած երկու թրքուհիք : Թէև անոնց երկուքն ալ երի-տասարդը տեսածնուն ուկու անմիջապէս իրենց ձեռքը ֆէրահէներնուն տարին, բայց գեղանի

թրքուհիք չը կատարեցին բաւական արագութեամբ  
այս շարժումը, որով կ'ուղէին կամ կը ձեւացու-  
նէին ծածկել ինքդինքնին երիտասարդ զեսպանա-  
գիտին աչքէն : Դանքրէտ կրցաւ որոշ տեսնել  
որ այս թրքուհիներէն մին հրաշագեղ օրիորդ մ'էր :  
Դեսպանագէտն այս սլատահման զուարձութե-  
նէն յախշտակեալ, և տեսնելով որ իւր ներկայու-  
թիւնը տիկինները չէր զայրացնէր այնչափ, և որոնք  
խօսակցութիւննին շարունակելով իրարու հետ կը  
խնդային . համարձակեցաւ քիչ մ'ալ անոնց մօ-  
տենալ . Երեսոյթներէ գուշակեց որ այս կիներէն  
մին տիրուհի՝ և միւսն աղախին էր : Այն կինն որոյ  
դէմքն որոշ տեսաւ, փափուկ քողին տակէն նըշ-  
մարեց բիւրեղեց ճակատ մը, որոյ վրայ ամենա-  
վայելուչ կերպով զետեղուած էր անդամանդազարդ  
մահիկ մը շողոզոն ասողերով ընդելուզեալ :  
Համարէ թէ զիսպուածով ըլլայ կամ թէ զիտմամբ  
այն մանկանարդուհւոյն ֆէրամէն վար ընկաւ, և  
փութով դայն բանալու և վերստին ուսերուն վրայ  
ձգել ուզելուն ժամանակ, երիտասարդ անհաւառը  
կրցու դիտել նաև հրապուրիչ զեղեցկութեամբ հա-  
սոկ մը . ոսկեթել և մետարսեայ զգեստ մը իւր  
փափկասուն զեղանի անդամներն ու մարմինը կը  
ծածկէր, մերկ թողլով ծիւնափայլ սլարանոցն և  
ուսերը : Դանքրէտ քոյլ մը ևս յառաջացաւ, և կի-  
ներն ասոր վրայ ոչ միայն ուրախութիւն ցուցին ոյլ  
և իրենց մեծ ու ոչերն անոր ուղղելով հրապուրիչ

թոյլսուութեամբ մը քաջալերեցին զինքն աւելի  
մերձենաւ իրենց : Զըկայ դիւթիչ բան մը քան զայն  
նրբահիւս ևաշմագներն , որ վայելչաբար կնոջ դէմ  
քը կը ծածկեն և անոր վրայ գտնուած թերու-  
թիւնները թաքուցանելով՝ նորա չքնաղ երեւոյթը  
զարմանալի կերպով կը դեղեցկացնեն :

— Որպիսի դժբաղղութիւն , տիրուհիդ իմ , ը-  
տու Պլէմէնկհիմ ժոլոելով , որ չեմ կարող բա-  
ցատրել թէ ինչպէս յափշտակուեցայ ձեր սքանչե-  
մի կերպարանքն և քաղաքավարական ցոյցը երէն :

Կ'երեի թէ աղախինն իւր տիրուհւոյն թարգ-  
մաննեց Գանքրէտի խօսքերն , և սկսան երկուքն աւ  
տուել բարձրածայն խնդալ :

— Կեառ' որ , սկստասխաննեց աղախինը թոթո-  
վելով Կալօ-խտալական բարբառով մը , ամենասպառ-  
ուական տիրուհիս կը հրամայէ ինձ հարցունել քեզ  
թէ դո՞ւ ես այն երիտասարդն որ Բերս բնակող  
ծերունի անհաւատ Գիննատողի եղբօրորդւոյն հետ  
պիտի ամուսնանաս :

— Ես ինքն եմ , սկստասխաննեց Գանքրէտ՝ ի-  
քեն ուղղուած այս հարցումէն զարմանալով :

— Ուրեմն , յարեց աղախինը տիրուհւոյն սկս-  
տասխանն առնելով , Նորին աղնուութիւնը Գատըն  
էֆէնտին մեծ ողատիւ և շնորհ կ'ընէ նստելու  
հրաւիրելով դքեզ :

Գանքրէտ երկրորդ հրաւիրման մը շըստասելով ,  
գորդին մէկ ծոյցը նստաւ և մերձակայ ծառին երկա-

րաճիկ ոստերուն ներքեւ ինքղինքը լաւ մը ծածկեց ,  
որպէս զի անցորդներէն անտեսանելի մնայ :

Իսկ աղախինն այս միջոցին ոտից վրայ կանգ-  
նած՝ յարգանօք իւր ֆերաճէին երկար թեղանիքը  
վրայ բերելով բարեւ կը բռներ , և պատրաստ էր  
իւր թարգմանչութեան սլաշտօնը կատարելու :

— Կանածդ գեղեցիկ է , հարցոց թրբուհի  
տիկինը :

— Մեծ սուտ մ'ըրած պիտի ըլլամ Տիկին եթէ  
հարցմանդ՝ այո՛ պատասխանեմ :

— Եւ ինչո՞ւ :

— Որովհետեւ այն դէմքը զոր քիչ մ'առաջ հա-  
ղիւ կրցայ տեսնել , զիս խիստ դատաւոր մ'ըրաւ  
գեղեցիկութեան վրայ :

— Ուրեմն գեղեցիկ կը կարծես զիս , ըստ տի-  
րուհին իւր հագուստին մէկ ծայրն՝ իրը թէ անու-  
շադրութեամբ ուսին վրայ նետելով :

Ի սլատասխանի՝ Պանքրէտ խնդրեց տիրուհւոյն  
ալաբասստրէ ձեռքը բռնելու , բռնեց և համրու-  
րեց զայն , որուն վրայ ուրիշ սլակատթիւն չէր  
գտած , բայց եթէ թրբական սովորութեան համե-  
մատ եղունգներն կարմրցընող հինայի գործածու-  
թիւնը :

— Կեառնր , ըսէ՛ ինձ , ըստ տիրուհին , թէ ին-  
չո՞ւ համար քու խմանդ տակաւին քեզ չէ սլսակած  
ծերունւոյն եղբօրորդւոյն հետ :

Այս հարցման վրայ Պէմինկիմ չուարեալ մը .

նաց , որովհետև ի սպառախսանի կը սլարտաւորէր , ենթադրեալ գաղտնիք մը յոյտնել անոր , որ ցարդ անբացայաց մնաց ասպետին լռութեամբն , երբ ասպետն իւր ամուսնութեան յասլաղումը իրեն իմացուց :

— Պատասխան չե՞ս տար , շարունակեց տիրուհին , կը նմանիս էֆենտիի մ'որ իւր սիրած աղախնոյն վրայ կը կատկածի : Եւ սակայն , դուք կեսառոքդ , դուք որ թոյլ կուտաք ձեր դստերց և լծակցաց ի հրապարակի երեսնին բաց շրջագայելու (ապաքէն գարշելի և անվայել բան կնոջ մը գլխաւոր սլարտքն եղած պարկեցութեան) , դուք կ'ըսեմ , լսած եմ թէ ամենելին չէք զայրանոր եթէ ձեր սիրուհիներն ուրիշ տարիածուներ ալ ունենան , չըլլայ որ դուն ալ նախանձած ըլլաս Նէճիակի բարեբաղդութեանը վրայ :

Դանքրէտի դէմքն աղախնոյն թարգմանած սյս խօսքին վրայ դեղնեցաւ , և հազիւ կրցաւ իւր կըսկիծը զսպել տեսակ մը ժպտով :

— Զեզ սխալ տեղեկութիւն տուեր են տիրուհիդ իմ ըստ , երբէք ասպետին եղրօրորդին այդպիսի ամբաստանութեան մը չէ ներած :

— Տե՛ս սա շոնը , գոչեց տիրուհին , կ'ուզէ դիս սուտ հանել . ի՞նչ , քեանքիր , յարեց նա , կ'ուզե՞ս որ ըսեմ թէ ես այն ֆրէնկ շուն աղջիկը լրտեսել տուած եմ սյս հաւատարիմ աղախնոյս միջոցաւ , որ այնովիսի ժամանակ մը զանոնք եր-

կոքն ալ բռնած է , երբ Պէյ օղլու գերեզմանատունը երեկոյեան մթութեան ատեն իրարու հաւատարմութիւն և յաւխտենական սէր կ'երդնուին , կ'ուղե՞ս իմանալ նաև թէ ես ալ քեզ նման զոհ եղայ . և թէ Նէմիալ այն անամօթ Երխտասարդուհոյն համար դիս կ'արհամարհէ , ինչպէս որ այս Երիտասարդուհին ալ զրեղ Նէմիալի սիրոյն կը զոհէ :

— Շնորհակալ եմ ձեր տուած այս տեղեկութեանցը վրայ , ըստ Պանքրէտ կանգնելով , և կը յուսամ որ անոնցմէ օգուտ պիտի քաղեմ :

— Ասլրիս , ապրիս ուրեմն , կրկնեց կինն , այլ ի՞նչ սլիտի ընես , ըսէ ինձ :

— Զեմ կրնար անսլատիժ թողուլ զանոնք , նախատանացս վրէժը սլիտի առնում :

— Եւ ո՞ւր սլիտի գտնես մատնիչ Նէմիալ . իմացա՞ծ ես թէ ինք ալ այս օրերս մայրաքաղաքը վրդովող խոռվութեանց մէջ գտնուելով Վահիր Պէյի մը խնդրանօք , որ օրուզպիրի գնդին չօրպաճինէ , Եէնիչէրեաց ազային առջև ամքաստանուած է , և իւր զլխովը սլիտի վճարէ յանցանքը՝ եթէ բռնուի :

— Մատնէ զայն , կեանոր , վրէժխնդրութիւնդ անմիջապէս կը կատարուի :


— Ոչ , իմ ձեռքովս կ'օւզեմ պատժել զայն :

— Բայց ո՞ւր միտք ունիս զայն փնտուելու , հո՞ս կ . Պօլիս է , եթէ Եւրոպացւոց նա՞և մը խոյս տուած :

— Պէօյիւք-Տէրէ ընակող Եւրոպացւոյ մը՝

Պէնֆէլտ Պարոնուհւոյն տունն ապաստանած է .  
ուր չը հասնիր Սուլթանին արդարութիւնն , որով .  
հետեւ Եւրոպական դրօշակի սլաշտանութեան ներ-  
քեւ է :

— Լու , ըստ կտրուկ կերալով Թրքուհին և  
ուր ելաւ , եթէ չես ուղեր որ զոհդ ճեռքէդ փախ-  
չի , փոթա ի վրէժինդրութիւն , որովհետեւ ես ալ  
նոյնակէս ծարաւի եմ կարելի եղածին չափ շուա-  
վրէժ առնելու անկէ :



## ՊԱՐՏԻՉԻՆ ՀՈՎԱՆՈՑԼ

Հետեւեալ օրը Կէճիսկ որ Սուլդան Աէլիմայ  
անկումին ետքը իւր թշնամեաց հալածմանէն վախ-  
չելով ստուգիւ Պէօյիւք-Տէրէ Պէնֆէլտ տիկնոջ  
տունն ապաստանած էր . առտուն կանուխ դուրս  
ելաւ , գնաց Գանբրէտ Պէմէնկիմի հետ մենա-  
մարտելու , որմէ հրաւիրեալ էր յայն . և քիչ  
ատենէն իւր պաշտպանուհւոյն տունը բերուեցաւ  
կործքէն վիրաւորեալ :

Տասն օր ամբողջ այսպէս վտանգալի կերպով  
վիրաւորեալ երիտասարդին մասնաւոր ինամք և  
հոգ տարաւ պարոնուհին առանց հեռանալու անոր  
անկողնոյն քովէն : Այն ատեն միայն ուղեց քիչ մը  
հանգիստ առնուլ , և զայն իր ծառաներուն խընա-  
մոցը յանձնել , երբ բժիշկներուն կրկնակի հաւա-  
տիքն ապահովեցին զինքն որ այլ ևս իւր բարեկա-  
մին կենացը վտանգ մը չըկայ :

Սակայն Կէճիսկ , իւր հիւանդութենէն զատ ու-  
րիշ վտանգ մ'ալ ունէր . Վահիր Պէյը յանուն օ-  
ճազի խումբ մը դրկած էր օրուղիրներէն սպառա-  
զէն , որպէս զի երթան պարոնուհւոյն տունը սր-  
շարեն , և արդարութեան ձեռքէն վախչող երիտա-  
սարդ օտաւ-պաշին ուղեն որ իրենց յանձնուի , ըս-  
տառնալով որ եթէ իրենց սլահանջումը չը գործադ-

րուի , գեղն ամբողջ պիտի այրեն : Այլ նոյն ժամայն Պէմէնկհիմ ցուցնել ուղելով թէ ինք խիստ աղնիւ և վեհանձն հակառակորդ մ'է , ելու գնաց Վոտիորի բերդերուն այն նոր կառավար Գապագճը օղլուին քով , որ իւր նոր ստացած աստիճանին միջոցաւն և հզօր աղղեցութեամբն անմիջապէս ղեսալանատանց հետ յարաբերութիւններ ունեցեր էր , և Կէճիալ պաշտամելու համար անկէց գունդ մ'առաւ , որք պառէր ընդունած էին ամէն ուժգնութեամբ զսպել ո և է ապատամբական փորձ , որ կը հակառակէր Բարձրագոյն Պրան և Եւրոպից դահլիճներուն հետ եղած դաշնադրութեանցը :

Այս աղնիւ անձնութիւնը իրեւ աղօտ երկնից մէջ փայլող ասող մը՝ լուսոյ և շնորհակալութեան շառաւիղ մը ճառագոյթեց Կէճիալի վշտաբեկ սրտին մէջ :

Գուցէ , կ'ըսէր ինքնիրեն , այս նախանձորդն իւր սիրոյն և խորհրդոցը մէջ բնաւին չը յաջողելով՝ ոչ ևս կ'ուղէ Հէրմինիայի հետ իմ ըրած տեսակցութեանցս գաղտնիքը ասալետին հաղորդել , գաղտնիք մը , զոր երիտասարդուհին վճռեց խոստվանիւ Պէմէնկհիմի՝ կանխաւ անկէ պատուոյ խօսք առնելով : Միայն Հէրմինիայի հանգստութիւնը չը վըրդովի , և ես ամենայն սիրով կը տանիմ այն անձկութեանց որք յերկնից ինձ սահմանուած են :

Կէճիալ Պաղչէ քէօյի տեսակցութեան օրէն դատակաւին երիտասարդուհին չէր տեսած :

Անտարակոյս իւր հօրեղբոր խիստ պահպանուց  
թիւնը ժամանակ չէր թողած որ զրէ իրեն, և  
ինչպէս կրնար նա իւր ապաստանած տեղն իմաւ-  
նալ . արդեօք Եէնիչէրեաց զինքը ձերբակալելու  
համար սլարոնուհւոյն տունը սլաշարելուն համբաւն  
ականջ հասե՞ր էր : Բոյց այսպիսի սրարագայի մը  
մէջ իսկ ի՞նչպէս Հէրմինիա կրնար կալծել թէ իւր  
սիրոհարն իրենց երկուքին ու այնչափ վիշտ սլատ-  
նուով և իրմէ մանաւանդ միշտ թշնամի նկատուած  
ինոջ մը տունը կարելի էր մնալ :

Բոյց և այնպէս սլարոնուհին իւր դրոթեանը  
մէջ անողոք էր , և արհամարհելով Կէճիալի արտու-  
սուքն և ողերսանքը ոչ միայն անոր իր քովն ա-  
սրատանիլն Հէրմինիայի չիմացոց , այլ և առանց  
սրատճառ մ'ալ ցուցնելու միշտ սլատրաստ կը ցուց-  
նէր ինքղինք անոնց միոթիւնն ամենայն դօրու-  
թեամբ խափանելու :

Հիւանդը մահմին մէջ սլառկած՝ աչքերն իւր սե-  
նեկին դոց սլատուհանին վրայ սեւեռած էր , ուրկէ  
Վոսփորն և Պէօյիւք-Տէրէի ծովեղերը կը տեսնը-  
ւէր , մտացը մէջ կը բերէր կոկծագին խորհուրդներ  
և կը մտածէր մանաւանդ իրարու հակառակ քաղա-  
քականոթեանց դառն յիշատակին վրայ , որ քանի  
մը օրուան մէջ կատարուեցաւ դահընկեց ընելով  
դժբաղդ և բարեսիլս Սէլիմը : Կէճիալ այնչափ սերտ  
կապուած կը կարծէր բարեկասրդութիւնը հայրե-  
նեացն ապագային հետ , որ անկեալ ինքնակալին

թշնամեաց յաղթութիւնը պիտի նորոգէր այն անհուն թշուառութիւնքն ու զեղծմունքն այս զեղեցիկ բայց տարաբաղդ երկրին մէջ :

— Ո՞վ դիտէ կ'ըսէր ինքնիրեն , թերեւ ըլլոյ օր մը , յորում ուրիշ կայսր մը ենէ և Սէլիմայ աղնիւ և մարդասիրական զգացումները սրտին մէջ ունենալովն հանդերձ՝ յաջողի իր նպատակաց մէջ հաստատամութեամբ յառաջ երթալու :

Առա տակաւ առ տակաւ միաքը եռանդնալից բորբոքելով կը յուսար թէ օր մը կրնար Սէլիմը իւրենց նախկին տիրոջ հաւատարիմ մնացող անձանց դլուխն անցնելով ազատել , և աստուածամոլ և յողդողդ Սուսդաֆա Պ. որ Եէնիչէրեաց և իւղեմայից ստեղծուածն էր , իւր մառացման բանտին մէջ թողուլ : Այլ ուստի<sup>o</sup> կրնար քաջալերուիլ՝ այսպիսի յանդուդն գործի մը ձեռնամախ ըլլալու համար : « Փիչ ժամանակէն հրատարակուեցաւ որ Անդրիանուալույ բանակը՝ որուն մէջն էին մեծ վէզիրն և Պիրան յանուանէ ալաշտօնեայք՝ յեղափոխութեան մասնակցեր են , և Եէնիչէրիք յօշոտեր են իրենց աղայն Սէլիմայ դոյզն ինչ համակրութիւն ցուցնելուն համար : Այս բռնաւոր դորքն այսպիս ամենուրեք յաղթանակելով կը խրոխտային տեսնելով որ էն աշաւոր չարիքներ ալ անպատիժ դործելու կարող էին :

Առանցի ձայն մը Նէմիալի խորհուրդներն ընդմիջեց . այս ձայնը պարտիզէն կուգար . սլարտիզէն սենեակ տանող սանդուխէն : Նէմիալ վեր ցատկեց ,

անմիջապէս դուռը բացաւ և Հէրմինիա իւր գըր-  
կաց մէջ նետուեցաւ :

Այս հառաջանօք և հեծութեամբ խառն շուա-  
րումէն ետքն երիտասարդն հազիւ իւր սրտին յուղ-  
մունքէն քիչ մը հանդարտելով՝

— Դարձեալ վերջապէս զքեղ կը վայելե՛մ, գո-  
չեց Նէմիպ, դարձեալ յոյս կը տրուի յուսահատե-  
լոյն, վասն զի Աստուած անտարակոյս ինձ այս ըն-  
աիր սփոփանքը զրկեց վշտացս մէջ, յորոց կը ճշն-  
շիմ, որպէս զի այլ ևս չընկղմիմ միայնութեանս  
անվախճան մթութեան մէջ :

— Ի խորոց սրտէ կ'օրհնեմ անոր անունը, ալա-  
տասխանեց Հէրմինիա, որովհետև մեր հանգստու-  
թեան թշնամեաց կամքին հակառակ ներեց որ վեր-  
ջին անգամ մ'ալ զիրար գտնեմք :

— Ի՞նչ կ'ըսես, աղաղակեց Նէմիպ, և ի՞նչպէս  
չարիք կը գուշակես :

— Զարի՛ք, ըստ Հէրմինիա, ցաւագին նայ-  
ուածք մը նետելով, միթէ՞ Պէնֆէլտ տիկնոջ ըստ-  
րուկը չե՞ս :

— Մարդասպաններէ հալածուելու և անոնց  
ձեռքն ընկնելով կեանքս ընդ փոյթ անոնց զոհելո՞ւ  
էի առանց զքեղ տեսնելու, առանց քեղ հառա-  
տելու թէ իմ վերջին հառաջանքս քեղ համար է :  
Ուրեմն ապաստանեցայ այս պարտիզին մէջ, որոյ  
դուռը բաց էր և յորում գտայ ձեռնտութիւն և  
պաշտանութիւն :

— Ահաւասիկ անհասկանալի կինը , սրատասխառնեց Հէրմինիա , որ մէկ ձեռքով կը զարնէ և միւսովն կը չոյէ :

— Բարեկամուհի՛ղ իմ , Եթէ գիտնայիր ո՛րսկիսէ հիւրասիրութեամբ վարուեցաւ ինձ հետ հիւանդութեանս միջոցին , քանի սիրով զիս նայեցաւ՝ չէիլ արդեօք ատեր զայն :

— Այս ամէնը , Կէճիսլ , մանաւանդ թէ առաւել ատելի կ'ընեն ինձ զայն : Կեանքդ փրկեց , բայց ասով իւր առ քեզ ունեցած սիրահարութեանը ծառայեց : Աւելորդ է զիս վերստին համոզել . . . : Այո՞ , այո՞ , զքեզ կը սիրէ և իր բոլոր ճիգերն , իր բոլո՞ր աշխատանքն , զորոնք քեզ համար կ'ընէ իր վրայ տիրող այս թշուառ կիրքը ծածկելու համար , առաւել ևս զայն երեան կը հանեն : Ո՞վ գիտէ թէ բուն ինքը չէ գրգռած քու դէմ Պ. Պէմէնկիմի զայրոյթը :

— Անկարելի բա՞ն , Երբէք չեմ կ'ընար հաւատալ :

— Այս ժամուս , կ'ընեց Հէրմինիա , ուր է զիտե՞ս Պէնֆէլտ տիկինը . հօրեղբօրս տունն է , իւր սիրեցեալ Դանքրէտին հետ , և ասոր համար միայն այս բացակայութեանս շնորհիւն կրցայ մինչեւ իւր տունը մանել և այս հովանոցը գտն առանց իւր գիտութեանը :

— Եւ ի՞նչ կ'ընեն Պ. Ասպետին քով :

— Այն ալ . դու ինքնդ մակարերէ , Կէճիսլ :

Անշուշտ մթոթեան մէջ նոր խոչընդուռ մը իը խորակին, որպէս զի վերջապէս և բոլորովին ի զերեւ հանեն մեր ջանքերը :

— Որպիսի՛ գաղափար :

— Չես գիտեր, Նէմիսլ, թէ կնոջ մը նախանձորդութիւնը մինչեւ ուր կրնայ հասնիլ։ Այս, նա քեզ մահուանէ վրկեց, բայց կրնա՞ս վարանիլ թէ բիւրիցս նախամեծար կը համարի քումեանիլը քան թէ իւր նախանձորդին հետ միացեալ տեսնելը։ Ինչո՞ւ ալահենք, բարեկամ։ այս ժաման մեր կործանումը կը դաւեն։ յաւիտեան զմեղ իրարմէ բաժնել կ'ուզեն։ Այս վայրկեանէս զատ ուրիշ առեն չը պիտի թողուն քեզ տեսնելը, և այս ալիտի ըլլայ անտարակոյս մեր վերջին տեսակցութիւնը։ Բայց եթէ արդարեւ մեր ճակատագիրն է ոչ ևս զիրար տեսնել երկրի վրայ՝ յիշէ, Նէմիսլ, յիշէ ինձ ըրսած նուիրական երդումը։ Իսկ ըստ իս ինչ որ պատահի՛ ինքոյինքս անքակտելի կերպով քեզ հետ կասլուած կը համարիմ։ Եթէ կամքս վրադ սակրաւ ինչ աղղեցութիւն մ'ունի, կ'աղաչեմ երեսանկեալ որ ձգես Տ. Պէնֆէլոփ տունը, ձգես անմիջապէս երբ քեզ շուրջ սրատող վտանգները քու օրերուդ ըստառալէ դադրած տեսնես։

— Կը հնազանդիմ քեզ, Հէրմինի՛տ, այլ կ'երդնում քեզ որ գէշ գաղափար ունեցար այս կնոջ վրայ, և ասով արդարացունել չեմ ուզեր զինքը,

նա մանաւանդ քանի որ անոր մեր դէմ բռնած վարմունքը կը յիշեմ : Սակայն և այնպէս անոր ամեն մէկ խօսքերը ամենամաքուր խղճի յատկութիւնն ունենալով՝ այնալիսի խորհրդաւոր պարտականութեան զգացումէ մ'առաջ կուգան, որոնց խորը թափանցելու ցարդ սնկարող եղայ :

— Սիրահարեալ կնոջ մը սիրտն յարմարագոյն դատաւոր է քան թէ քու մտածմունքդ, ըստ ասպետին եղրօրորդին :

— Բայց գահավէժ դատման շատ անգամ վախճանն է զղջումն, ըստ Երիտասարդ գնդասլետը : Մեր Պաղչէ-Քէօյի տեսակցութենէն ետքն ես աշքեղ պէս վատ մատնութենէ մը կասկածեցայ, զայրութով լի և սրտմտութեամբ՝ նախատանաց ու անորդական խօսքերով յանդիմանեցի զՏ. Պէնֆէլտն իւր վարմունքին համար :

— Եթէ լսէիր ինչպէ՞ս կը ջատագովէր դինքն իմ բողոքանացս դէմ՝, եթէ տեսնէիր այն աղնիւ զայրոյթն որով նորա դէմքը կը կենդանանար, այն մեծ վայելչութիւնը՝ որով կը դիմադրաւէր իմ կատաղութեանս, և ոյս ամենքն անոր վրայ կ'երևէին առանց ցուցնելու դոյղն ինչ սրտմտութիւն, և առանց ինձ ըրած բարիքներն յիշեցնելու համար բառ մ'անգամ արտասանելու . և ոչ իսկ առ նացուցած ապերախտութեանս դէմ : Եթէ դու ալ չերմինիա, ներկայ ըլլայիր հոն ինձ նման, տեղի պիտի տայիր այն անդիմադրելի աղղեցութեան, և

այն ձայնին, որ թերեւս ակամայ՝ յիս յարգանք աղպեց : Բնաւին չեմ տարակուսիր թէ անոր ծանօթէ այն տարօրինակ դաղտնիքը, որ ծննդենէս ի վեր ուիս կը շրջասլատէ, և կեանքս կը ծածկէ թանձրախիտ ամսերով : Բայց վերջապէս՝ ինչ որ աւ ըւլոյ՝ ալէտք է որ իմ առջևս բացայացտուի այն դաղտնիքը . որպէս զի իմանամ թէ սիրել ալէտք է մեզ թէ ատել : Աերդնում քեզ, Հէրմինիա , որ Եթէ Պարոնուհին այսօր չուղի տալ այս դաղտնեաց բացատրութիւնն , որմէ կախում ունի մեր երկարանչիւրին էութիւնը , անմիջապէս այս տունը պիտի թողում վերջնական կերպիւ , և երբէք չը պիտի սպասեմ իմ բոլորովին առողջանալուս , և ոչ այլ ևս ոտք պիտի կոխեմ հոս :

— Թո՛ղ կամքդ կատարուի Նեմիալ , ըստ Պարոնուհին Պէնֆէլտ , և ուժգնակի հովանոցին դուռն հրելով ներս մտաւ :

§ . Պէնֆէլա դաշիաղէմ և դողդոջուն աչքերով վլն Հէրմինիայի կշտամբանք և միանդամայն ցաւակցութեան նշաններ տղղելով՝ զնաց անոր քով նրատաւ . Երկուքն ալ շիոթած կ'երեւէին այս անակընկալաւ . պատահման վրայ : Քանի մը վայրկեան ամենախորին լուռթիւն մը սրահելնէն ետքը , զոր երեք անձերէն և ոչ մէկը համարձակեցաւ խղելու , § . Պէնֆէլտ այսուկէս խօսիլ սկսաւ :

— Ինձ այնուկէս կ'երեւէր , Նեմիալ թէ բաւական սիրոյ նշաններ տուած եմ քեզ , և դու մինչեւ

ցարդ ինէ խլոծ բացատրութեամբքդ զոհ կ'ըլլայիր,  
և նաև չ'էիր ուղեր խզել տալ ինձ այն լռութիւնը ,  
զոր սլարագայք իմ վրաս կը դնէին , և որուն լռ-  
ծումը մեծ վտանգ կրնար սլատմառել թէ ինձ և  
թէ քեզ : Քայց որովհետեւ չես խղճեր զիս իբրև  
անիրաւ և անհաւատարիմ դրսլարտելու , և չես վրս-  
տահիր իմ մտերմութեանս և անձնուիրութեանս ,  
և նաև չես ուղեր սպասել որ սպատեհ սլարագանե-  
րըն ներեն ինձ յայտնել գաղտնիքը , որ որչափ քեզ՝  
նոյնչափ և ինձ համար ծանր բան է , հարկ կ'ըլլայ  
որեւմն որ խօսիմ քանի որ այնպէս կուզես : Նմա-  
նապէս դու ալ , օրիո՞րդ , շարունակեց խօսքն աս-  
սկետին եղբօրորդւոյն ուղղելով , դու ալ իմացիր իմ  
ջառագովութիւն : Այո՛ , կը բաղձամ , կը պահան-  
ջեմ որ դու ալ մտիկ ընես , մինչդեռ դուն կը  
կառկածիս իմ պատւցո վրաց , ես ընդհակառակն  
մեծ վտահութիւն ունիմ քուկինիդ վրայ , և անոր  
համար իմ գաղտնիքս քեզ յայտնելու չեմ վարա-  
նիր : Քեզ վերաբերեալ իրաց դեռ չեկած , Նէմիսի  
հարկ է որ նախ իմ վրաս խօսիմ , որպէս զի իմա-  
նաս թէ ո՞վ եմ ես , ինչե՛ր կրեցի , ո՞ր մասին ու-  
խալեցայ , և ո՞րսլիսի դժնդակ և ձախորդ սլարա-  
գաներ իմ էութիւնս քուկինիդ հետ կը կապեն :  
Ուստի երկուքնուդ ալ ուշադրութիւնը կը խնդրեմ :  
ինչպէս որ դիտէք՝ Ա . Պօլիս ծնած եմ : Հայ-  
ըլս Քերայի մէջ Հայ սեղանաւոր մ'էր . զիս հրն-  
գետասանամեայ հստակիս մէջ ամուսնացուց Ոյ .

Պէնֆէլտի հետ, որ վախսնակեայ ծերունի մ'էր, և Բարձրագոյն Գրան քով Գերմանիոյ իշխանութեանց մէկուն կողմանէ դեսպան։ Երեք տարի չարունակ Եւրոպա ճանասլարհորդութիւն ընելնէս ետքն այս տեղ վերագարձանք . բայց ո'րպիսի թըշուառութիւն մը այն ատեն անմիջասկէս դէմս ելու . Քիչ մը յառաջ փոքր հրդեհ մը սկատահեր էր, և այս հրդեհէն իմ հայրենի տունս կը ծխէր . սոսկումով իմացայ որ բաւական ժամանակ կար որ տունս արդէն բոլորովին կործանած և աւերակ դարձած էր, որովհետեւ բոլոր մեր ընտանիքն Եէնիչէրւեց մէկ ապստամբութեանն ատեն ջարդուեցաւ , Այսպէս կորուսի աշխարհի մէջ ամենայն միսիթարութիւն : Այն հարսանիքն՝ որոյ զոհել ուզեց դիսթուտ հայրս՝ անպատճառ սլարդ փառասիրութենէ շարժեալ՝ ինձ չը պատճառեց գոնէ այն մտաւորական զոհունակութիւնը, այն առոնին կենաց խազաղ և անդորր կեանքն որ երբեմն երջանկութիւնու սէր կը հայթայթեն : Պ . Պէնֆէլտ այն մարդոց կարգէն էր որոնք քաղաքական զբաղմունքով կը ցամքեցունեն սրտերնին : Մէր, բարեկամութիւն, բարեմտութիւն, բոլոր այս զգացումներն անոր համար շինծու և զանազան դիմակներէն, որոց ներքեւ կը թաքչի սովորաբար անձնական շահն իւր նպատակին հասնելու համար : Ի ըսկը դրան կարծեցի թէ կը խնդրէր իմ ձեռքս՝ չը կարենալով դիմագրաւել այն մեծ տպաւորութեան՝

զոր գեղեցկութիւնս աղղեց անոր : Սակայն շուտով ճանչեցի ճշմարտութիւնը , և մեծաւ շուտրմամբ դիտեցի թէ Պարոնը նենդամտութեամբ զիս իրը գործի խորամանկութեան գործածել ուղեց զիս իւր քաղաքական պիտոյիցը . Փաշաներու կանանց և Կայսեր հարեւին հետ ունեցած յարաբերութիւններս , ուր միշտ սիրով կը վարուէին ինձ հետ , անոր յարմար միջոց մ'երևեցաւ իւր ճոխութիւնն յաւելցնելու , ինչպէս նաև կառավարութեան առջետ դեսպանագիտական արժէքը : Ամէն ջանք ըստի ինէ խնդրած միջամտութիւնը մերժելու՝ իրը անյարմար թէ՛ իմ մատաղ հասակիս և թէ սնձնական պատուոյս . գարշելի հարկ մը բռնի տեղի տալ ստիպեց զիս զիջանելու կամաց տիրոջս , զոր արդէն կ'ատէի , և զոր չը յատաղեցի բոլորովին արհամարհելու :

Հոս սլէտք է խոստովանիմ յանցանք մը որ մեծ աղղեցութիւն ունեցաւ կենացս վրայ , և որուն հետեւանքներն զիս ցղերեղման սլիտի հալածեն . և օրոնք արդէն բոլոր կեանքս թունաւորածեն : Որչափ որ խիստ ենթաղրեմ ունկնդրացս դատաստանը , սակայն անվեհեր կ'սպասեմ անոր , որովհետեւ համողեալ եմ որ ունկնդրացս սակաւինչ համոկրութիւն աղղելով զայն սլիտի չափաւորէ : Նշանաւոր Օսմանցի մը , յորմէ յանուն ամուսնոյս շնորհ մը սլահանջեր էի , տեսնելով իմ հարկւմտնելս , ու հոն կանանց սրահներուն մէջ սոմբողջ

ժամեր անցնելս , ինձ հետ քանի մը վայրկեան տես-  
սակցելու փափաք ցուցուց : Հրամանաւ նորին՝  
ներբինիք առանց ինձ իմացունելու դիս սենեակ մը  
տարին , ուր ինքն առանձին նստած էր , և որոյ  
դոներն ետևէս գոցուեցան :

Այս տեսակցութիւնը՝ հարկ է որ լսեմ թէ  
պատկառելի և խիստ ազնիւ կերպով կատարուեցաւ .  
դովեստներ միայն տրուեցան իմ գեղեցկութեանս  
ու հրամուրանաց վրայ , որք անտարակոյս արժե-  
քէս վեր էին . հազիւ թէ այն խորհրդաւոր սենեակէն  
դուրս կենէի , նորս ինձ ուղղած սիրահարական  
խօսքերէն և նայուածքներէն հասկցայ որ կը յուսոք  
քիչ առենէն դիս վերստին տեսնել : Պարտականու-  
թիւնս էր իմ վիճակիս վտանգը Պէնֆէլտ Պարոնին  
յայտնելու . և ի ծունը իջած ջերմ տրտաստոք ա-  
ղոչեցի անոր , որ այսուհետեւ սյսպիսի միջամտու-  
թիւններէ դիս աղատէ : Քաղցրութեամբ դիս կանգ-  
նեցուց և ժակտելով պատասխանեց որ շնորհակալ  
էր իմ համեստութենէս , և մէկ օր սրայմանաժամ  
խնդրեց այս մասին մտածելու : Հետեւեալ օրն հր-  
ամայեց ինձ վերստին հարէմ երթալ , դայի և  
վերջապէս քերի այն շնորհը , զոր Պարոնն այնչափ  
յամառութեամբ կը խնդրէր . յափշտակեց առաւ-  
ձեռքէս թուղթը , որ կը սլարունակէր իւր յաղթա-  
նակն իմ անարդանօքս դրոշմուած :

Ուրախութեան ճիչ մ'արձըկելով նոյն օրուան  
երիկունը սուրհանդակաւ ճամբաւ ելաւ Գերմանիա

Երթալու :

Պարսնուհին վայրիկ մը պատմութիւնն ընդհաւ-  
տեց՝ սյնչափ կոկծագին յիշատակներէ խոռվեալ :  
Հերմինիս և Ամիսի անշարժ աչքերնին անոր վրայ  
սեւեռած մտիկ կ'ընէին Պարսնուհւոյն առանց հասկր-  
նալու թէ ի՞նչ յարաբերութիւն ունէր այս սրատ-  
մութիւնն իրենց տեսակցութեան հետ : Պարսնու-  
հին չարունակեց .

— Մինչդեռ Պէնֆէլտ օպարոնին վառքը քա-  
ղաքական աշխարհին մէջ կը վայլէր , մինչդեռ ա-  
մէնքը կը զարմանային անոր գործոցը վրայ , որոնց-  
մով այնալիսի խորադիտութեամբ օղնեց իւր կո-  
ռավարութեան , և մինչդեռ դեսպանագէտն ամե-  
նաբարձր պաշտօններու և պատիւներու հասնելով  
իւր վեհապետէն՝ ամէն կողմանէ համբաւ կը ստո-  
նար ի Գերմանիս , ես հրամայուած էի լծակցես  
Բէրա մնալու . կոկծանաց և ամայութեան մէջ  
սովորելով զԱստուած կ'աղաչէի որ օրերս համառօ-  
տէ , և ափոխանքո զիշեր ցորեկ թափած արտա-  
սուացս մէջ կը գտնէի : Կարեւոր սէտք մ'այս  
միջոցիա զիս ի կետնս դարձուց . մեղքս անջնջելի բլ-  
յալու համար Աստուած զիս մայր ընելու բարեհաղ-  
դութեան մը համար շնորհակալ պիտի ըլլայի ,  
բայց հիմայ չեի զիտէր թէ ի՞նչ կը զգացի սրտիս  
խորերը :

«Բանի՛ խիստ են անոնք որ զմեզ իրրե անզգոյ

կ'ամբաստանեն , մինչդեռ պարտաւոր էին մեզ կուրեկից ըլլալու . . . :

Այն սիրելի գլուխն՝ որուն ծննդեան վայրկեաւնէն ի վեր բոլոր կենացս անդորրութիւնը զոհեցի՝ Հայ դայեակի մը յանձնեցի որ խնամէ , մայրաքաղաքիս մերձակայ դիւղի մը մէջ , և ծածուկ հոն երթալով վրան արտսուք կը թափէի :

Օր մ'որդւոյս կաթնտուն վազելով քովս եկաւ , և գողալով և սոսկմամբ երեսի վրայ գետին ընկաւ սոքերուս տակ : Հազիւ համբերութիւն կրցայ ունենալ սկստճառանօք մը ճամբոյ տալու այն ձանձրալի օտարականաց որ նոյն ժամուն բազմախուռն ինձ այցելութեան եկած էին : Երբ մինակ մնացինք , կոթընտուն ըստ ինձ որ տաճիկները գիշերանց եկան իւր զաւակն յափշտակեցին . որոնք ոչ թէ միայն իրեն չարիք մը չըրին , այլ և տարած ատեննին ետևնուն ոսկւով լի քսակ մ'ալ նետեցին իրեն : Վազելով որդւոյս հօր արքունիքը գացի , ուր անկէ ի վեր չէի դացած : Անոր սովոն համբորելով աշաչեցի իրեն որ զիս չը նետէ այն ահռելի յաւսուհուսութեան մէջ , և հաւասարէ ինձ որ իմ սիրոյս և ցաւոցս առարկոյն վտանգի մէջ չէ . բարեհաճեցաւ նա մխիթարել զիս՝ բացատրելով ընդորձակօրէն սյն վտանգն որ կոսկասնար ուղուն եթէ իւր ծնընդեան յանցանքը գուշակուէր :

Եւ ես ահաւոր երդումով խոստացայ որ չուզեմ զայն կրկին տեսնել , և մանաւանդ չը յայտնել

ոչ իրեն և ոչ ուրիշ որ և է մեկու այն քսանների  
գաղտնիքն որ նորա զլխոյն վրայ կախուած էր իրեւ  
մահու սուսեր մը :

— Եւ այդ զաւակը՝, տիկին, ըստ Նէծիսլ  
թոթովելով և շփոթութենէն վրան սարսու դալով,  
այն զաւակը՝, դեռ ո՞ղջ է :

— Ողջ է, այս, ողջ է, սկսասխանեց Պա-  
րոնուհին :

— Եւ իւր հայրը . . . :

— Նէծիսլ, սկսասխանեց տիկին Պէնֆէլտ,  
երդմնաղանց գտնուեցայ, և քու արհամարհանացէ  
ենթարկուեցայ, որովհետեւ նախատանացս այս  
յայտնութիւնը կարեւոր էր ինէ սլահանջած ջա-  
տագովութեանդ : Բայց ի սէր Աստուծոյ մի խընդ-  
բեր ինէ սցս բանիս վերարերեալ ուրիշ գաղտնիք-  
ներ ալ խմանալու . ինչ որ ըստ՝ բաւական է ըսելիք-  
ներու հասկնալու :

— Վերջացուը ուրեմն խօսքդ, տիկին, սրտիս  
մէջ խարոյի կը վառես : Խօսքերուդ դաղանիքը դիա-  
կը մեռցունէ, և այսալիսի դժնղակ անօրոշութեան  
մէջ ո՛չ կրնամ ասլրիլ և ո՛չ մեռնիլ : Այն տղայն,  
այն տղայն, ի՞նչ եղաւ :

Նոյն վայրկենին սանդուղին վրայ մարդու մը  
քողերու ձայնն առին : Պաւուը բացուեցաւ, և  
Պարսուհոյն մէկ սպասաւորը Պէմէնկիմ Պահք-  
րետի գալուստն խմացուց :

— Կորսուեցայ, մըմնջեց Հէրմինիա, ձեռքե-

բովս դէմքը ծածկելով :

Պէմէնկհիմ Գանքրէտ առանց բերնէն բառ մը հանելու լոիկ բարեւեց, և Պէնֆէլտ տիկնոջ հրատիքանօքն աթոռ մը քաշեց և անոր քով նստաւ : Այս ձիալ հակառակ զգացումներէ յուղեալ մէկ մ'երիտուստրդը կը դիտէր, մէկ մ'ալ Պարոնուհին, և անրացատրելի անձկութեամբ այս նոր սրատահման վախոձանին կ'սպասէր :

— Ուրեմն, բարեկամդ իմ Գանքրէտ, ըստ Պարոնուհին անոր՝ իւր սպորտական կերպարանքն առանալով : Այն որոշումն ասպետին խմացուցի՞ր :

— Այո՛, տիկին, պատասխանեց Երիտոստրդ դեպանագէտն, և այս իրիկուն Վիկնու կը վերադառնամ :

— Կ. Ազնուութիւնը կը բաժնուի՞, հարցուց Այս ձիալ, այս լսածին վրայ որպէս թէ ուրախանալով և զարմանալով :

— Այո՛, տէ՛ր, կրկնեց Գանքրէտ . Կ. Պօլիս ձկել ուզած առենս հարկ համարեցի որ զամքեղ հրաժեշտ տամ և աղաչեմ որ ինձ ներես, այս ներես . վասն զի արդէն զիտեմ որ քեզ անիրաւութիւն շընելով չէի կրնար երբէք վայելէլ վափաբած երջանկութիւնս :

Եւ օրիորդը շարունակեց խօսքը դէալ Հերմինի այի ուղղելով, պէտք չէ որ այլ ևս ինձ կարեւոր աչօք նայի, քանզի ինձ տուած խօսքը իւր քեռույն դարձուցի : Հաւասարի եղի՞ք . շարունակեց դէալ եր-

իու երիտասարդաց ողղելով խօսքը . բաղդին իմ  
ձեռացս մէջ ձգած գաղտնեացը զեղծում մը չըրի  
երբէք :

Պէնֆէլտ տիկնոջ աղօչանքները պէտք չեին զիս  
դրդելու որ պատուաւոր մարդոյ մը սլաքարքը կա-  
տարեմ :

— Տէր , ըստ Նէճիալ Պլէմէնկհիմի , որ նոյն  
տաեն ախտէն ելնելով անոնց հրաժեշտ կուտար ,  
ամենափոքր բան մը չեի յուսար ձեր ընդարոյս  
ազնուութենէն , և այս օրէն անջնջելի իրաւունք-  
ներ ստացած էք իմ երախտազիտութեանս վրայ :

Դուռը դոցուելով դարձեաւ Նէճիալ Պարոնուհ-  
ոյն առջեն ընկաւ , և

— Տիկին , գոշեց , ի ծունք իջած ձեր ներու-  
մը կը խնդրեմ : Երբ ևս զքեզ կը բամբառէի , զու-  
կը սրաշտանէիր զապերախտն ընդդէմ սոսկալի  
յարձակմանց , հիմոյ այս տեղէն չեմ շափմիր մին-  
չե որ չը հեռացունէք զիս տոջորող խղճիս յանդի-  
մանութիւնը ձեր վերջին բարերարութեամբն ու-  
ազնիւ ներողութեամբը : Այն զաւակը , Տիկին ,  
զոր իր ծննդենէն ի վեր մայրական զթով տածե-  
ցիր . . . :

— Անոր գործերը դիտեցի , Նէճիոլ , և սլա-  
հել ուղեցի իւր հօրն համար անոր էութիւնը , ո-  
րուն զոհուիլը վայրկեանէ ի վայրկեան կլնար խրնդ-  
րել ինը : Երեկ այս հզօր և կարող հայրը իր որդ-  
ոյն փառքն ու աւագութիւնը կ'երազէր . ընդհա-

իսուակն այսօր դժբաղվացած՝ իւր որդւոյն բազեացը  
չիրայ հանգչելու իրաւունքն ունի . այս որդին, վըս-  
տահ եմ որ չը սկսի զանց առնէ այն ազնիւ և  
նուիրական պատուէրը, եթէ հարկ ըլլոյ նոյն իսկ  
կեանքն անդամ դնել անոր համար :

Այս, այս, աղէկ դատեցիր, սիրելի՛դ իմ մայր,  
զոշեց Կէճիալ ուրախութեան արտասուօք լի Պա-  
րսկուհւոյն գրկացը մէջ նետուելով :

— Որդեակ իմ, սկսելի՛դ իմ Կէճիալ, թոթո-  
վեց Տ. Պէնֆէլտ հեծեծախառն արտասուօք ղերի-  
տուսորդը գրկացը մէջ սեղմելով .

— Իսկ ինձ, Տիկին, զոշեց Հէրմինիոս հառա-  
չանօք Պարսկուհւոյն ոտիցն առջև ընկնելով . իսկ  
ինձ չէր ներէր . ահաւասիկ ոլատրաստ եմ մաս-  
նակցիւ Կէճիալի հետ թէ սիրոյդ և թէ մեր վրայ  
դնել ուղած ո՛ւ է զոհողոթեանդ :



## ԱՐԻԽԱՇԱԴԱԽ ԶԵՄՆ

Դատախոյս Յրուզակիր Երիտասարդը քանի մ'օր  
Պէօյիւք-Տէրէի ապաստանարանին մէջ մնալով  
բոլորովին իւր ասթաբինութիւնը գտաւ։ Քաղցր և  
հեշտագին զգացում մը զուարթացուց իւր հոգին,  
և բաղմաթիւ վիշտերէ ընկճեալ կենացը յոյսերն  
նորոգեց, որք ի վազուց շիջեալ էին։ Ա երջասէս  
առացաւ մայրական սէրն, զոր ցարդ չէր ճանչած։

Տիկին Պէնֆէլտի լոռութիւնն յարգելով չէր հա-  
մարձակած խնդրել անկէ իւր կակծալի պատմութեան  
վախճանն։ այլ կը տանջուէր փափաքէն՝ մտածելով  
որ իւր հայրը կ'ապրի, և դժբաղդ էր, և թէ օր  
մը թերես իւր որդւոյն օդնութիւնը կոչէ։ Ամէն  
բան կը զոհէր, որպէս զի լսէ այս չարաբաստիկ հօր  
ձայնը, որ պիտի փարստէր անշուշտ զինքն ի վա-  
զուց շրջապատող մթութիւնը։

— Անտարակոյս, կ'ըսէր ինքնիրեն, հայրս Աէ-  
լիմայ հաւատարիմ՝ նախամարտիկներէն մէկն ըլլալու-  
է, զորս Եէնիչէրիք մահուան դատապարտած են։  
Աղետից կողմանէ միւսներէն բարեբաղդ՝ ինձ պէս կը  
պահուի սպասելով արդարութեան և վրէժխնդրու-  
թեան ժամուն։ Այս ժամն Աստուծով պիտի գայ  
. . . և երբ կրակ և երկաթ ի ձեռին երկուքնիս ոլ  
մատնչաց մէջ երեւնանք՝ թափուած արեանց զինք

խնդրելով, փոխադարձաբար սկիտի ճանչուինք եր՝  
կուքնուս առ մատնիչս ունեցած ատելութենէն և  
յօժարութենէն, զոր պիտի ունենանք թշնամիներէն  
վրէժ առնելու մասին:

Երիկուն մը Պարոնուհին հովանոցը մտաւ յու-  
զեալ :

— Ի՞նչ ունիս, մայր իմ, հարցուց Կէճիպ  
շտարմամբ :

— Զգուշացիր, որդեակիդ իմ, պատասխանեց  
Պարոնուհին իւր դաղդոջուն ձեռքերովն երիտասար-  
դին ձեռքը սեղմելով . Ենիչէրիք տակուին ոխե-  
րիմ են քեզ . կրնան խողխողեւ զբեզ քնացոծ ա-  
տենդ, ինչպէս ըրին մեր անքաղդ ընտանիքը :

— Մի վախնար, մայր իմ, պատասխանեց Կէ-  
ճիպ . իւր մէջըի սուրը ցուցնելով :

— Լոէ . վախսաց Պարոնուհին, ականջը դէսլ  
ի դրան տալով . բան մը չե՞ս լսեր :

— Աչ ի՞նչ, հովու է, որ որարտիզին նոճիները  
կը շարժէ :

— Կը կարծեմ թէ չեմ խարուիր . ոլոսու-  
հանես տեսայ որ մարդ մը սրտէն վեր կելնէր, և  
իր վաթթոցին ձեէն Ենիչէրի ըլլան որոշեցի,  
վրան զէնքեր ալ նշմարեցի

— Վայ այն յիմարին, զոչեց Կէճիպ, եթէ  
յանդղնի զիս հոս վնտուելու :

— Ուր կերթաս, թոթովեց Տ. Պէնֆելտ,  
զրանն առջեւ կեցոծ և ձեռքերն երկնոյանելով,

որպէս զի՞ Կէճիպի դուրս ելնելն արգիլէ . չըլլայ որ ելնես կը հրամայեմ քեղի . . . կաղաչեմ . . . եթէ զիս կը սիրես , մ'ելներ :

— Բայց ալէտք է խմանանք թէ ի՞նչ կուղէ այս մարդը :

— Անմիջապէս կիմանանք : Սպառաւորներս պարտիզին մէջ կը պտտին սպառազինեալ և ջահերով , անտարակոյս այդ թշուտականը ձերբակալ պիտի ընեն , և տիտի ստիսլեն զինքը յայսնելու իր կոմքը :

Կոյն ստեն խառնաշխոթ ձայներու աղմուկ մը կը ըստի դրսէն : Սպասաւորաց մին ներս մանելով իմացոց Պարոնուհեռյն իւր տեսած մարդուն ձերքակալիլը : § . Պէնֆէլտ հրամայեց որ զինքերն վրայէն առնեն , որպէս զի մէկու մը չարիք չէ հառցունէ :

Քիչ մը ետքը ջահերուն լցուը մօտեցաւ , և ձերունի Եէնփէլի մը սպասաւորներէ տոտջնորդեալ հովանոցը կը բերուէր : Հովը ծերունոյն երկայն և ծաղկեալ ալիքը կը ծածանէր , իւր մերկ և ջղուարդիացը վրայ դրոշմուած էր խարխխս մը , որ օրողպիրներուն նշանն էր :

Ալի Օսման , գոչեց Կէճիպ ծերունին տեսնելուն պէս : Եւ ինքն իր ձեռքերով անոր կուպերը լուծելով մտոց հովանոցը : Բոլոր հոն դանուողները կը զարմանային . խոհարարասկետը բազմոցին վրայ ծանրութեամբ նստելէ յետոյ՝

— Այս ժաման ի՞նչ բան ունիս հոս , հարցուց  
Նէձիսլ ,

— Նախ հրամայէ որ չպուդ մը բերեն ինձ ը-  
սաւ ծերունին սլեխերը ոլորելով :

Երբ զայն բերին , ծերունին լիով կուլ տուաւ  
ծխալամորչին առաջին ծուխը , նման այն ծարա-  
ւատանջ մարդուն , որ սնապատին մէջ աղքեր մը  
կը հսնղիսի : Հետեւաբար իր յարուցած ծուխերուն  
մէջէն դժկամակութեան և միանգամայն զարմաց-  
ման ակնարկ մը նետեց Տ . Պէնֆէլտի և անոր հո-  
վանոցը զարդարող կարստեաց վրայ : Վերջա-  
պէս խօսիլ որոշեց և ըսաւ .

— Կը տեսնեմ Նէձիսլ , որ դուն ալ անհաւատ  
և հանդերձեալ կենաց յաւխոենական տանջանացն  
անդառնալի կերսլով արժանի եղեր ես . կը տես-  
նեմ որ սլստկերդ ոտնակոխ ըրած ես , և իմ վաղեմի  
բարեկամութեանս արժէքը այնպէս կը ճանչես ,  
ինչովէս թէ որ այս չպուգն առանց սաթի և այս  
սրատեանն առանց սուրի ըլլար . բայց օրհնեալ ըլ-  
լայ Տէրն , ես չեմ կրնար մսոնալ որ մատաղ հա-  
սակդ ինձ յանձնուեցաւ , ուստի թէ այս կեանքս  
յայտնի վտանգներու ենթարկելով և թէ հանդեր-  
ձեալ կենաց վրկութիւնս վտանգի մէջ ձգելով կու-  
պամ քեղ խւացունելու որ վաղն առաւօտ արեւուն  
ծագելու ժամանակ քեղ պիտի յափշտակեն այս  
տունէն . և քաշկրտելով օրդայի դատաւորին առջին  
սիստի տանին զքեղ անմիջապէս սպաննելու համար :

— Ամենակարող Աստուած իմ, գոչեց Պարունուհին . . . . և ինչպէս զայն վրկենք այս ահանելի մատնութենէն :

— Աւանակ սլիտի կարծէիք դիս, պատասխանեց խոհարարապետը, ծանրութեամբ բերնէն ծուխի ամպիկներ հանելով, եթէ ըլլալիք չարեաց գոյժը ծանուցանելու համար հեռուէն եկած ատենս բերած չըլլայի միանգամայն անոր դարմանը :

— Վեհանձն և բարի մարդ, գոչեց Տ. Պէնֆէլտ, Աստուած քեզ հատուցանէ :

— Աղէկ մտիկ ըրէ, Նէմիպ, շարունակեց ծերունին իւր գոտիէն թղթեր հանելով ահանասին այս թէսքէրէն (անցագիրը) գրաւած է փնծող անուամբ. և ճամբորդութեան ատեն զբեզ ամեն յահակումէ պիտի պահպան : Անմիջապէս այն դիշեր պէտք է որ երթաս, ապա թի՞ ոչ մ. . . .

— Այո՛, այո՛, սլիտի երթայ, սլիտի երթայ պատասխանեց Տ. Պէնֆէլտ :

— Արդարեւ սաստիկ կը ցախիմ և սիրտս կը տուշորի ըստ. Նէմիպ հառաչելով. սակայն կը տեսնեմ որ պէտք է հեռանամ այս տեղերէն եթէ հարկը պահանջէ :

— Հա՛րկ, և խիստ ստիլողական հարկ . առջի իջևանիդ պէտք է որ Առլիանդակի ծիեր և առաջնորդ մը փնտոես : Թէսքէրէն զոր քեզ կուտամ, խիստ օրինաւոր է, և բացատրութեանց պէտք չըթողուր :

— Եւ դէալ ի ո՞ւր Երթալու համար սլատրաստուած է այդ :

— Ի Ռուսմուգ՝ Պանուալի վրայ. ուր կը կառավարէ Մուստաֆա Պայրագուարն :

— Սէլիմայ ամենաքաջ բարեկամներէն մին. ըստ Նէմիալ ինքնիրէն . սկետութեան փաշաներուն էն հաւատարիմը . այն պաշտօնեայն, որուն բացակայութիւնը կողքար դժբաղդ Առլթանը. ասկէ աւելի ապահով միջոց մը կրնայի գտնել :

— Երթալու սլատրաստ ես ուրեմն .

— Այս :

— Առ ուրեմն այս նամակը , շարունակեց Սէլիման. Ռուսմուգի փաշայն Երրեմն ինձ նման զինուոր ճանչեցի , և իրաւունքներ ունիմ հաւատալու որ զիս չէ մոռցած . անոր խնամոյն զբեղ յանձնեցի , որովհետեւ հիմակուընէ օհագին աստիճանները գոյուուած են քեզ համար . Մուստաֆա փաշայն կրնայ զբեղ ընդունիլ իւր գաւառական զօրացը մէջ : Զգուշացիր , որդեակ , որ նոր տէրոջդ սիրոյն արժանանաս , և եթէ երբէք դարձեալ զդաստանսա , մի՛ մոռնար որ Կ . Պօլտոյ մէջ բարեկամ մ'ունիս , իր տկար ազդեցութիւնը վտանգի մէջ ձգելու յօժար՝ զբեղ քու նախկին աստիճաններուդ հասցունելու համար :

— Պարոնուհին վութաց սլէտք եղած հրամանները տալու , իրեն այնակս կ'երեւար թէ այն գիշերը որ հաղիւ հասած էր , ի քթթել ական

պիտի անցնէր, և մայրենի սէրը իր աչքին կը ներ-  
կայացնէր իւր զաւակը քաշկրտով և դահճին սուրին  
տակ նետող վայրագ Եէնիշէրիները : Ամի Օսման  
անձամբ փութաց ախոռն իջնել իր բարեկամին ձին  
սրատրաստելու :

Երբ Շէճիալ առանձին մնաց, բազմերանգ թշր-  
թէ լապտեր մը վառելով, կախեց զայն պարտիզին  
սլատուհաններուն մէկուն վրայ, յետոյ մէկ հայեց-  
ուածքով մը Պէօյիւք-Տէրէի լերանց ամայութիւնն  
անցնելով, որ պարտիզին սլատուհաններուն ետե-  
էն կը բարձրանան, հառաչեց ի խոր սրտէ, յիշելով  
այն սիրելի էակները, զորս սլիտի թողուր :

— Հնարն ըլլար, կը փախար ինքնիրէն, և  
Հէրմինիս դիտէր նշանս, զոնէ աքսորանոցս չը  
գացած, անգամ մը տեսնէի զինքը և վերջին ող-  
ջոյնս տացի իրեն :

Պարտէզն իջաւ անհամբեր, և լերան կողմի  
դուռը բացաւ : Խորին և սրտաշարժ լութիւն մը  
կը տիրէր այս վայրի և միանգամայն վսեմ տարա-  
ծութեան վրայ, որ ազօտաբար լուսաւորուած էր  
աստեղաց մերթ ընդ մերթ ընդհատեալ նշոյլներէն :

Ամի Օսման անմիջապէս հասու Շէճիալին ձին  
առնձէն վարելով,

Հէրմինիս տակաւին չերեիր :

— Ի՞նչ կը յարաղենք, ի՞նչ կ'ուշանանք, ըստ  
խոհարարապէտն, ժամանակն է երթալու, վասն  
զի չի լուսցած ոլեաք է որ Ա. Պօլոյ ամրութիւն-

Ներէն դուրս գտնուիս :

— Հիմա անմիջապէս, պատասխանեց Նէճիալ, անդադար նայուածքներ նետելով պարուիզին դուրսի ճամբռն վրայ : Կը տեսնես որ դեռ լուսինը չերևաւ, և մինչև արեւուն ծագման ատեն ժամանակ ունիմ շատ հեռուները գտնուելու :

— Զէնքերդ քո՞վդ են, ըստ Ալի-Օսման՝ բընազդմամբ մ'իր անզէն գօտին խուզարկելով, որովհետեւ Տիկնոջ սպասաւորներն առած էին զանոնք :

— Այո՛, քովս են պատասխանեց Նէճիալ :

— Ահաւասիկ անցագիրդ, ըստ խոհարարապետն աղղողագոյն ճայնով մը և գլուխը շարժելով :

Պարոնուհին սպասաւորով մը ձիուն մօտեցաւ, և անոր ետին կաշեայ պարկ մը կասեց, որ կը պարունակէր քանի մը ճամբռ կտրեռ քաներ և ստակով լի քսակ մը, զոր Տ. Պէնֆէլտ գաղոնի ճամբորդին ծրարներուն մէջ զետեղեց :

— Արդ, ողջ Եր, ողջ Եր փախաց մայրն Նէճիալի ականջն ի վոր՝ զայն ողջագուրելով :

— Կերթա՞ս, գոչեց յսնկարծ կանացի ճայն մը, որուն արձագանգը զՆէճիալ խոռվեց :

— Հէրմինիա, գոչեց, դէպ ի. երիտասարդուհոյն դառնալով, որ հազիւ պարտիզին դռնէն մտածէր, միոքերնին դրած են վաշը զիս սպաննելու :

— Որպիսի անխոհեմութիւն, փախաց Տիկին Պէնֆէլտ ցած ճայնով : Դո՞ւ ալ հոս, այս ժաման . եթէ ասպետը կասկածի քու վարմանց վը-

րայ . . . .

— Եւ կարելի՞ է , Տիկին , որ թողում դայն երթաւ , և չը տեսնե՞լ զինքն անգամ մը :

— Ինչ կը յապաղէք , ինչ կը յապաղէք , ժամանակը կ'անցնի , ըստ ծերունին , ձիուն ասպանդակը բռնելով :

— Վերջին հրաժե՛շտ , վերջին հրաժե՛շտ , ըստ Հերմինիա՝ իւր տարիածուխն վիզը փաթթուելով արտասուալից :

**Յանկարծ** նոր անձ մ'երեցաւ պարտիզին մուտքը՝ զոյրացիոտ և տիրագին դէմքով . ասոլետն էր , հազիւ հագուած , և իր անութին տակ սուր մը պահած : Հովը իւր գլխուն սալիտակ մազերը կը ծածանէր , և աչքերը գիշերուան մթութեան մէջ կոյծակի պէս կը փալիլէին :

— Զես կրնար բաժնուիլ , Պարոն , ըստ ասուետն՝ Նէճիպի բազուկը դէպ յինքն քաշելով , քու առ իս ըրած անիրաւութեանդ հաշիւը չը տըւած :

— Պարոն , ըստ Տ . Պէնֆէլտ ահարեկ՝ այս նոր թշնամիին դէմն ելնելով :

— Գթութիւն , գթութիւն , հօրեղբայր իմ ըստ Հերմինիա՝ զինքը վանող ծերունի ասոլետին ձեռքը բռնելով :

— Թո՛ղ զիս , սլատասխանեց ասոլետն մոլեգնութեամբ . իմացայ վերջապէս այն զաղտնիքը , զոր ամէնքնիդ մէկտեղ ուղեցիք ինէ ծածկել . Ահաւասիկ

ինչ վախճան սկսուի ունենար արդեօք սրբապիղծ և  
ամբարիշտ սիրահարութիւն մը . . . : Գործդ լմնցուր,  
և արիւնս ալ առ իմ ընտանեացս սլատուոյն հետ ,  
կամ որ լաւագոյն է ըսել , եթէ Աստուած արդար է ,  
ընդունէ քու չարեացդ փոխարէնը : Մարդ մը որ  
կոյս օրիորդ մը կ'անպատուէ , չը վարանիր անտա-  
րակոյս սպաննելու ծերունի մ'ալ :

Այս անակնկալ տեսարանը այնալիսի խոռվու-  
թեան մէջ ձգեց ներկայ գտնուողները , որոնցմէ  
ոչ ոք կրցաւ դիտել թէ ինչ տարապայման տար-  
որութիւն մ'ըրաւ օրուզպիրի խոհարարապետին վը-  
րոյ ասպետին ներկայութիւնը , ոչ ալ անոր առ-  
շեալ բերնէն թուած խորին և վայրի հասաչանքը :

— Իբր վագը յանկարծ վեր ցատկելով Ամե-  
Օսման նորեկին բալուկը ուժգնութեամբ կը բռնէ ,  
և զայն սլասաւորաց բռնոծ ջահերուն մօտեցու-  
նելով :

— Հարցուր այս մարդուն , ըստ դէսլ ի Տելին  
Պէնֆէլտ դառնալով . հարցուր ասոր թէ դիս կը  
ճանչէ՞ :

Պարոնուհին թարգմանեց թրքական լեզուաւ  
խոհարարապետին խօսքերը , իսկ առակետն զանի բո-  
լորովին չը ճանչելն իմացունելով՝ ի զուր կ'աշխա-  
տէր ազատել իր բաղուկն անոր երկաթեայ անուրի  
պէս սեղմող ձեռքէն , սակայն ուստան հրացայտ աչ-  
քերն ասպետին վրայ սեեռելով ,

— Դժոխոց անդունդն անգամ սուզուիս ծած-

կույս, հոն ալ քեզ պիտի հետեւիմ. աղբկ նայէինձ, աղբկ : Դէմքիս վրայ ունեցած այս վէրբո, որոն սպիտակ տառիչն ի վեր մնացած է իրը անմոռանալի յիշատակ քեզ դէմ ունեցած վրէժխընդրութեանս, այս վէրբը դուն ինձ առիր :

— Ես :

— Այո՛, դուն, զի. դու կը կառավարէիր այն ատեն Մալթայի ծովասպատակները, որոնք չարացար կողոպտեցին թրքական նաւը, որոն վրայ եւ կը գտնուէի իմ աղջկանս՝ այն գեղեցկութեան և առաքինութեան հրեշտակին հետ, անողոք և վայրագ գաղանի պէս յափիշտակեցիր գրկերէս սկրելի դաւակո՞ քեզի ծառայեցնելու համար : Զիա քանտունետելէն վերջը թառամեցուցիր այն անմեղ ծաղիկը, որ կենացս պատիւն ու պարծանքն էր . բռնադատեցիր զայն իւր հայրենի կրօնքն ուրանալու, և յետոյ թշուառութեան մէջ լքեր զայն, որ իւր մահուամբը լրացուց իւր աղետից և յուսահատութեան կշիռը . իմացա՞ր հիմայ որ գքեզ ճանչած եմ :

— Թո՛ղ զիս, թո՛ղ ըստ ասպետը, և կսկծագին դէմքին վրայ, զոր պատած էր գալուկը, դըրոշմեալ կերեսէին սարսափի և խղճի յանդիմանութեան նկարագիրը :

— Ոչ, զոհս չեմ թողուր կրկնեց Ալի-Յաման, ի սպակասութենէ զինուց կեանքդ եղունդներովս ու ակռայներովս սիտի վերջացունեմ . և Եւնիչէրին սպրդիլ ուղղ ծերունոյն վրայ յարձակելով՝ զայն

դետինը տապալեց , և վրան ընկնելով կը ճգնէր ա-  
նոր դէմքը փողոտելու : Հէրմինիա վայրի ձայներ  
հանեց . և ներկայ գտնուողները մեծ դժուարու-  
թեամբ կրցան ազատել մոլեգնեալին բերնէն իւր  
զոհը :

Ասպետը նուաղեալ՝ անմիջապէս իւր տունը  
տարուեցաւ . սարսափէ , կատաղութենէ և մոլեգ-  
նութենէ ինք իրմէ դուրս ելած իւր ինքնաշարժ չըր-  
թունքը սա անորոշ խօսքերը կ'արտաքերէին :

— Աստուած զիս կը պատժէ , Ախէ՛ , Ախէ՛ ,  
ինչ կ'ուզես , գթութիւն , գթութիւն , արհաւիրք  
վրէժխնդրութեան , վերադարձիր զերեղմանդ . . .  
խոստովանահայրը , խոստովանահայրը . . . արիւնս  
առ , այլ հոգիս միրկուի :

Աստան իւր զոհն ճեռքին խլած տեսնելով , և դինքն  
Պարոնուհւոյն սպասաւորներէն զսպուած՝ կը մոըն-  
չէր մահացու վէրք ընդունող օրհասական առիւծի  
նման . տարին զայն ի հովանոց , ուր Նէմիալ ի զուր  
կը ջանար զայն իր զոյրոյթէն իջուցնել : Ատկայն  
գիշերը կը յառաջանար , և բաժանման ժամը կը  
մօտենար : Երիտասարդն իւր մօրն համրոյներն ըն-  
դունելով , և այս տարօրինակ տեսարանին հաւանա-  
կան հետեւանացը վրայ մեծապէս անհանգիստ ըլլա-  
լով ցատկեց իւր ձիուն վրայ , և քիչ մը ետքը ան-  
յայտ եղաւ Պէօյիւր-Տէրէի լեռներուն ետեր :

Ալի-Օսման մեկնեցաւ տունէն զեռ առաւօտեան  
ըյսը չը ծագած , քիչ մը խաղաղած կ'երեէր , և


Պէնֆէլք տիկնոջ առ Նէմիալ ցուցած մարդասիրութեանը համար շնորհակալութիւն յայտնեց : Աակայն արժան չը դատեցին իւր դէնքերն իրեն վերադարձունել , թէ և ինքը շատ աղաչեց :

Ուստան դուրս Ելնելով բռնեց այն ճամբան , ուրկէ ասպետը տարուած էր , և լուսնին դողդոջոն լուսովն իր թշնամոյն թողած հետքերը կը փընուէր : Ասպետին ուղեկից սպասաւորաց ոտքերուն հետքերը աւազին վրայ դրոշմուած էին , որոնցմէ առաջնորդեալ հասաւ առանձնակի տան մը դրան առջեւ : Հոն կայնելով ըսաւ ինքնիրեն .

— Հո՞ս է .

Յետոյ գնդասեղն իւր գլխէն առնելով զայն քարի մը վրայ սրեց , և իր մետաքսեաց շատկին թեղանիրը վեր առնելով բազկերակը ծակեց . յորմէ անմիջապէս արիւն ցայտեց . յետոյ արիւնաշաղախ ձեռքը դրան վրայ դնելով՝ փափսաց :

— Պիտի վերադառնամ , սլիտի վերադառնամ :



## ՈՐԻՍՃՈՒԳԻ ՓԱՇԱՆ

Նէմիալ բաղմօրեայ ճամբորութենէ մ'ետքը հո-  
տու ի Ռուսճուգ համանուն գաւառին մայրաքաղա-  
քը , որ Գրանուսի ախանցը վրայ ամուր քաղաք է ,  
և է սլատնէշ Օսմանեան պետութեան ընդդէմ  
յարձակման Ռուսաց : Այս գաւառին կուսակալն  
Վուլթան Սէլիմէն երեք բուղլու վաշայութեան աս-  
տիճանի հասած էր , ըստ հրամանի իւր տիրոջը 16  
հազար գաւառական զինուոր ժողվեց , և կը սկսո-  
րաստուէր գետէն անցնելով դիմել ի Պուրբէշ , ուր  
բանակած էր Միքէլսըն զօրապետն Մոլոյ-Վալա-  
քիոյ իշխանութեանց մէջ . միւս զօրքերն աւ Նոյն-  
պէս Գրանուսին ոլխոի անցնէին Ռուսաց վրայ  
յետիւսէ յարձակելու , որպէսզի սոփակեն զանոնք  
երկիրը թողնելու :

Այլ ըստ որում Կ . Պօլոյ նոր յեղափոխու-  
թիւնը անձնական երկիւղներ ներշնչած էր պետու-  
թեան կուսակալուց . վասն որոյ հարկադրեցաւ  
իրեն քով պահել ժողոված զօրքերն , որով ընդ-  
դէմ Ռուսաց ըլլովիք արշաւանքը ետ մնաց ,  
Նոյն ատեն Կարուէոն Թիլլողի մէջ դաշնադրու-  
թիւներ կստորագրէր , որոնցմով յետնագոյն բա-  
նակցութեանց կը ձգուէր Վուլթանին և Ռուսիոյ

կառավարոթեանց մէջ եղած ինդրոց լուծումը .  
այսպէս իրեն զաշնակցին ունեցած սլարտքերը տո-  
նակոխ ընելով , որուն քիչ մը յառաջ կը խոսա-  
նար Գրըմի և Պետրասլիայի երկիրներուն յանձնը-  
վիլը , և կանխաւ արդարացնելով թրբաց ասլագայ  
վարմունքը , որոնք 1812ին վրէժ առնելու նպատա-  
կաւ չուղեցին դինուիլ ընդհանուր թշնամոյն դէմ ,  
և արշաւել Գանաւոլի վրայ . որնոր Մոսկուայի ար-  
կածը կամ պիտի արգիլէր և կամ ուղղէր :

**Նէճիալ՝ Ամի Օսմանայ նամակը** քո՞վս ունենալով  
գնաց փաշային ասլարանքը , իր գտնելիք ընդունե-  
լութեան մասին շուարման մէջ ըլլալով : **Եէնիչեր-**  
**եաց օրդայի խոհարարասլետին:** յանձնարարարու-  
թիւնը խիստ աննշան բան մը կերևէր իրեն փաշա-  
յին աստիճանին նկատմամբ :

— **Ի՞նչ եմ . կըսէր Նէճիալ ինքնիրեն , ո՞չ ա-**  
**սլաքէն աղքատ դինուոր մը , զոր դժնդակ պարա-**  
**գայներ իւր դիրքէն դրկեցին , և զոր ստիպեցին**  
**վարձել իւր սաւը առջի հանդիպողին՝ ասլրուստ**  
**հայթայթելու համար :** Գահակորոյս Առլթանին ու-  
նեցած անձնուիրութիւնս , **Եէնիչերեաց օրդայէն**  
**այսպիսի ժամանակի մէջ արտաքսում** անուա-  
րակոյս լաւ ներկայացուցիչներ չեն պետութեան  
բարձրաստիճան պաշտօնէի մ'առջեւ . և եթէ տա-  
կավին Ուուսճաւգի փաշայն , ինչպէս որ կը հաւա-  
տեն , **Առլթան Աէլիմայ ամենահաւատարիմ ծառա-  
յից մին է և Եէնիչերեաց ոխերիմ թշնամին ,**

բարձեալ չը պիտի համարձակի յայտնել այնովանի  
կարծիքներ , որոնք կրնան իւր գլխուն վրայ բերել  
թշնամանք և վոխաղարձ վրէժխնդրութիւնք :

Վէճիալ ապարանքին մօտենալով՝ զիտեց մեծաւ  
դարմասցմամբ ճամբայներուն և գետին ափանցը վր-  
ռայ նատող զինուորներն , պատրաստ իրենց ծրար-  
ներովն ու զէնքերովն՝ իրր սյն ինչ արշաւելու վր-  
ռայ էին : Պուլկար զիւղացիք հրամանաւ փաշային  
ձիեր և սայլեր կը բերէին , և սլաշտօնաւորք կը  
փութացնէին զանոնք բեռցնելու սփաշարներն , հա-  
գուստներն , զէնքերն և վրաններն : Այս գաւա-  
ռական զինուորներն մեծ եւանդեամբ և յօժա-  
րութեամբ վաստած կ'երևէին . որոց արժանա-  
փայել բարեկարգութիւնն ու հլութիւնը բոլորո-  
վին կ . Պօլոյ Եէնիչէրեաց մէջ տեսած անկար-  
գութեանն ու անհնաղանդութեանը հակառակ էր :  
Գտւառական Եէնիչէրի զինուորաց քով , որոնք բո-  
լորովին հակառակ դաղախորներով կը շարժէին  
մայրաքաղաքին Եէնիչէրեաց նկատմամբ , նստած  
էին Զայիմներն ու աւատականները , որոնք Պառ-  
ճուզի իրաւասութեան ներքեւ էին : Յետոյ կու-  
գային հաղարապետութեան բաժնուած թոշակաւոր-  
ներն , որոնք Կուսակալէն վարձուելով հուաքուած  
էին Ալսանիայէն , Պօմնայէն և պետութեան միւս  
դաւառներէն : Վերջիններուն մէջ նշանաւոր էին  
իրենց խոժոռագիմութեամբն ու վայրագ նայուած-  
քովն սուսերամերկներն (տալ քըլըճ) և Սէրտէն-

Կէտիներն , որ կը նշանակէ զլսանուէր : Ասոնք  
տեսակ մը նախամարտիկ դինուորներ էին , ամե-  
նէն վտանգաւոր ձեռնարկութեանց մէջ : Այս գուն-  
դը կը բաղկանար բազմութիւ կամաւոր անձերէ ,  
որոնք կողոպտելու յուսով զինեալ էին :

Երբ Նէծիալ ապարանքին դռներուն առջև տե-  
սաւ փաշային երեք բուղը դետինը մխուած , և  
զարդարուած յատկացեալ ծովերով , որ գաւառին  
վերնագոյն իշխանին որոշիչ նշանն էր , չը կասկա-  
ծեցաւ այլ ևս որ զօրքերն պատրաստ էին շարժե-  
լու : Ուրեմն կ'ըսէր , Թիվողի մէջ դաշնադրու-  
թեամբ եղած դինագաղարն լուծուեցաւ . և ար-  
դեօք Պանուալէն պիտի անցնուէր , և ի Վալաքիա  
պիտի փոխադրուէր պատերազմը , և կամ թէ պե-  
տութեան գաւառին վրայ ուրիշ թշնամի՝ մը յար-  
ձակած էր : Նէծիալ եղածներուն անդէտ շէր կըր-  
նար այս խնդրոց լուծումը գտնել :

Սակայն որոշելով արշաւանաց մէջ մասն ունե-  
նալ , ուր որ աւ ըլլայ , մտաւ համարձակութեամբ  
սպարանքը , և կուսակալին աղայներուն մէկին  
մօտենալով աղաչեց և ծանոյց անոր որ փաշային  
ունկնդրութեան շնորհը կը խնդրէ :

— Ն . Վսեմութեան քեզ ընդունելուն վրայ  
կը տարակուսիմ , ըսաւ Աղայն , վասն զի այս վայր-  
կենիս խիստ կարեւոր գործերով զբաղեալ է : Ե-  
թէ կ'ուզես , սպասէ հոս , փաշային բերած նամա-  
կըդ իրեն կը յանձնեմ :

Աէմիալ հոն սպասող բազմութեան մէջ խառնը՝  
և լով՝ հաստատալիս որոշեց մինչև գիշեր հոն ըս-  
տասել :

Քանի մը վայրկեան յետոյ դէալ ի վաշային տի-  
վանը տանող սանդուխին վրայ կեցող բազմութեան  
մէջ շարժում մ'ընկաւ, և ապարանքին աստիճա-  
նաւորաց մին զինուորական խիստ չքեղ հագուստով,  
որուն առջեկն շավուշները կ'երթային, դէալ ի յա-  
ռաջ եկաւ, նոյն ատեն՝ «Աէմիալ էֆէնտի՛» ձայնը  
լսուեցաւ :

Երիտասարդ ճամբորդը մտածելով որ գուցէ  
այս անունը կրող ուրիշ մ'ալ կրնայ ըլլաւ, իւր  
տեղին չը շարժեցաւ, բայց պատահմամբ Աէմիալ  
աչքը դէալ ի ապարանքին աստիճանաւորին վերցու-  
նելով՝ տեսաւ որ Աէֆէր է, և վազեց նետուեցաւ  
անոր գրկացը մէջ :

Երկու բարեկամք Եէնիչէրեաց Սէլիմի անկումն  
հրատարակելնէն ի վեր զիրար տեսած չէին, և եր-  
կուքն ալ պարագայից բերմունքէն այն վայրագ Եէ-  
նիչէրեաց ատելութեանը զոհ եղած կը համարէին  
զիրար : Աէմիալ Աէֆէրէն ապարանքին սենեակնե-  
րէն մին առաջնորդեալ, կրցաւ իւր թշուառու-  
թիւնը հաւատարիմ բարեկամին պատելու : Քիչ  
մը ետքը Աղայ մ'երեցաւ, որ Մուստաֆա փաշտ-  
յին կողմէն չքեղ հագուստ մը կը բերէր իւր հիւրին :  
Աէմիալ զարմանալով այսպիսի մորդասիրական հիւ-  
րընկալութեան վրայ, և Աղային հետեւելով մոտ

փաշային տիվանելը :

Մուստաֆա փաշայն, որ պայրագուար (դրօշակիր) տնունը կը կրէր, Եէնիչէրեաց գնդին մէջ նոյն աստիճանին ոլարտքերը կատարած էր ամբողջ թէւ կրտճահասակ մէկն էր, այլ զօրութեամբ հըսկայանման : Հազիւ այն ատեն քառասնամեայ էր: Իւր արիւնային խառնուրդը, լայն և քառանկիւն տոերը, կարճ և ջղուտ պարանոցը, խոշոր սև և հրացայտ տչքերը, զորոնք կը շքաւորէին իւր թաւյոնիրերը, կերպարանքը և զինուորական խօսուածքը, որ առաւել յարմար էր բանակաց աղմուկներուն քան թէ ասլարանաց մանրանկատ արարողութեանցն, անհակառակելի կերպով կը ցուցնէին՝ որ իւր անձնական արիութեամբն ու համարձակութեամբը հաստծ էր իւր այս բարձր սլաշտօնին : Իւր բաղդին յառաջդիմութիւնը Աէլիմայ սրարտական էր: Արեւելից անհարազատ որդին, ուր միջին դարու բարքերը տակաւին խոր քանդակուած են, և ուր մարդու առ մարդն ունեցած անձնուիրութիւնը ցարդամենամեծ և ամենէն աւելի տիրող առարինութիւնը է, թէև Մուստաֆա պայրագուարն, այն երջանիկ զինուորը, չէր կարող իւր տիրոջ քաղաքական գաղափարներուն արժէքը ճանչելու, սակայն և այնուհետ իւր կեանքն տնդամ՝ անոնց կը նուիրէր: Եէնիչէրեաց գնդէն ծնած՝ ոչ նուազ ուժգին և բուռն էր իւր կրիցը մէջ, և անոնց ոլէս կը օնաւագու, այլ սակայն անհաշտելի թշնամի մ'եղած էր Եէնի:

չէրեաց՝ այն օրէն ի վեր, երբ կատաղութեամբ լը-  
սեց այն պարագայներն, որոնք Աէլիմայ անկումը  
նիւթեցին :

Նէճիպ իր մտած սրահին մէկ անկիւնը նստած  
տեսաւ Ռուսմուգի փաշայն, որ մէկ ձեռքով նար-  
կիկին ճգական մարրուճը կը բռնէր, յորմէ մերթ  
ընդ մերթ կը քաշէր անուշահոտ խոտին ծուխը,  
և միւս ձեռքով սաթէ համբիչ կը շարժէր. գծի  
մը վրայ դռնէն մինչև իւր նստած տեղը շարուած  
էին սպասաւորք լրիկ և երկիւղածութեամբ, և ի-  
րենց տիրոջ ակնարկութեանը մտադիր :

Երբ Աղայն Ղնէճիպ փաշային ներկայացուց,  
անոր անունը տուաւ, և Նէճիպ ըստ սովորութեան  
փութաց փաշային քղանցը համբուրելու, սակայն  
նա նոյն ատեն ոտք ելնելով՝ բարեեց զերիտասար-  
դըն իրեւ իւր նմանը, և ստիպեց զայն իւր քովը  
նստելու : Յետոյ սպասաւորաց ակնարկ մ'ըրաւ որ  
օտարականին ըստուգ և քահվէ բերեն :

Նէճիպ կը կարծէր թէ կ'երազէր : Իրե՞ն ար-  
դեօք կը տրուէր սյսչափ պատիւ : Ի՞նչ իրաւունք  
ունէր այսպիսի ընդունելութեան գոռոզ փաշային,  
զոր իր կենացը մէջ առաջին անդամ կը տեսնէր,  
և առ որ ուրիշ յանձնարարութիւն մը չունէր սյս  
աղքատ պատանին՝ օդուզպիրի խոհարարապետին  
նամակէն ի զատ :

Երիտասարդ օտարականին շուարումն ևս առա-  
ւել աճեցաւ, երբ սովորական փոխադարձ բարեւ-

ներէ և որոշեալ առացուածքներէ յետոյ Մուսամաֆա պայրագտարն հոն եղող մարդոց հրամայեց որ դուրս ելնեն, և առանձին Նէճիալի հետ մնաց :

— Ո՞վ երխտասարդ, ըստ անոր վշտագին ձայնով մը, կ'օրէնքեմ զԱստուած, որ զբեզ տոխ զրկեց . այս շնորհը՝ զոր անիրիպելի նշան կը համարիմ իմ յաջողութեանս, պիտի սլսակէ իմ յանդուդն ձեռնարկութիւնս :

— Զինուորներդ հաւքուած տեսնելով, կարծեցէ թէ՝ պատասխանեց Նէճիալ, նպատակ ունիս զինուց վառքն ու սարսափը թշնամական երկրի մը մէջ ածելու : Անտարակոյս բարեբազդ սիխի համարիմ զիս, եթէ Ռուսմուղի անդրդուելի վաշայն ներէ ինձ իւր վառաւոր զրօշուն շուքին ներքեւ տեղի մ'ունենալու :

— Զիս չը սիխի ճգես, Նէճիալ, կրկնեց Մուսամաֆա պայրագտարը, դեռ Աստուծոյ և Մարդարէին օդնութեամբը՝ արդարութեան և երախտագիտութեան գործը չը կատարած, զոր ըմբոնեցի յուսահատութեանս երկար տքնութեանցը մէջ : Սակայն պէտք է հաղորդեմ քեզի իմ նպատակներս : Դուն մինակ պէտք է որ զանոնք ճանչես՝ դեռ անոնց կատարումն զալետութիւնը շուարմամբ չը սարսափեցուցած : Այս տեսած զօրքդ դէսլի կ. Պօլիս սիխի առաջնորդեմ . . . Լսէ՛, հանդարտութեամբ յառաջ սիխի խաղանք անցնինք Պուլկարիոյ ընդարձակ դաշտերէն, Պալքան լերանց ահռելի և երկնարերծ շար-

քերուն մէջէն , և Ռումէլիէն , ուր կը բարձրանայ Աղ-  
րիանոսի կայսերական քաղաքն , որ գրեթէ Կ. Պօլ-  
սոյ սլարիսալներուն հետ կապակցութիւն ունի : Մեր  
երեսումը մատնչաց ջնջմանը նշան պիտի ըլլոյ , ո-  
րոնք իմ սիրելի տէրս ի բանտ նետեցին , ուր հիմայ  
ցաւագին կը հառաչէ նա : Կամ բանտավետներուն  
ձեռքէն աղատելով կ'ելնէ Սէլիմ իւր հարցը գահոյից  
վրայ , և կամ նորա գլուխը Եէնիչէրեաց սրովը  
կընկնի , ահաւասիկ խորհուրդս . երդուած եմ Ս.  
Գրքին վրայ որ յարատեեմ ցվախճան առանց ո և  
իցէ վտանգի մէջ վհատելու :

Տէր , գոչեց Նէմիպ , Պայրագուարին ոտքերուն  
փարելով . արդարև բանից շնորհապարտ եմ ձեր  
ազնիւ և նուիրական ձեռնարկութեանը , որուն  
մսսնակից ընել բարեհաճեցաք ղձեր ծառայն . այո՛ ,  
կամօքն Սատուծոյ ոճրագործաց սուրերուն ներքւ-  
ընկնող նահատակայ վրէժը մե՛նք սիտի առնենք ,  
և Օսմանայ սուրը սիտի վերադարձնենք Սէլիմոյ  
ձեռքն , յորմէ մատնիչը ղայն խլեցին :

— Դո՞ւն իմ ոտիցս փարիս , դո՞ւն , գոչեց  
Ռուսածողի Փաշայն՝ Երիտասարդը ոտք հանելով ,  
աւելի ինձ անկէ է քուկիններուդ փարիլ . . . . :

— Ինչ կ'ըսէք , կրկնեց Նէմիպ . աքսորեալ ,  
աղքատ և անփառունակ մարդ մը կրնայ արդեօք  
արժանանալ՝ չեմ համարձակիր ըսելու բարեկա-  
մութեան , այլ բարեմութեան , զոր քեզ նման  
դիւցազուն մը կը զիջանի ինձ ցուցնել : Արդեօք ե-

բաղ մ'է որ զգայարանքներս կը մթագնէ ցնորքնենով, որոց ունայնութիւնը քիչ մ'ետքը իրերը սիստեցնեն : Գիտէք, Տէր իմ, թէ որո՞ւն հետ կը խօսիք, դարձեալ կ'ըսեմ՝ թէ աղքատ աքսորեալ մ'եմ ես՝ իւր հայրենեաց մէջ ամայացեալ . ծնելասէր շրթունքի մը համբուրից դեռ քաղցրութիւնը չը վայելեցի . հայրական մաղթանք մը Աստուծոյ ալորմութիւնը չը խնդրեց ինձ համար :

— Մի՛, մի տրտնջեր Աստուծոյ դէմ . ըստ Պայրապտարն՝ ձեռքը երիտասարդին ըերնին տանելով . վասնդի չես զիտեր թէ գուցէ հայրդ աշխարհիս մէկ անկիւնը քաշուած՝ ամէն օր քեզ համար կը բարեմաղթէ առ Աստուծ , կամ իւր արտասուաց տուրքը կը մատուցանէ իրը զոհ իւր և մեր մեղայն համար :

— Հայրս կապրի, զիտեմ : Արդէն իմ ծննդեանս գաղտնեաց մէկ մասն տժի ի լոյս : Ճանչեցի մայրս . . . . :

— Լոէ՛, ըստ Ոտաճուզի վաշայն՝ ահարեկ նայուածք մը նետելով դէպ ի գուռը :

— Բայց ինչո՞ւ հայրս կը զրկէ զիտ զինքը ճանչելու, սիրելու և պաշտպանելու երջանկութենէն՝ եթէ իրավէս թշուառութեան մէջ է :

— Որդէ՛ակ իմ, ճակատազիրը չը վրիպիր երբէք (զրամէրտէն զիտէ օրմազ) : Իրաց հասանքին հետեւ, Աստուծ մեծ է և բազմուզութ , և զքեզ սիտի առաջնորդէ իւր կամաց : Ինքն անտարակոյս ու

սաջնորդեց զբեղ ցարդ բազմաթիւ տագնասներու և վտանգներու մէջէն . ինըը չուղեց իմ արդար ձեռնարկութիւնս առանց քեղի կատարելու . բարեւ եկար ուրեմն իմ բանակս . ծածկէ ինքինքի մեղ հետ լուսթեան քողին ներքեւ , և հար և ուր ի ձեռին երենանք ի միասին ի կ . Պօլիս՝ անհաշտելի կերպով հաւատացեալներն անհաւատներէն բաժնելու :

Մուտաֆա պայրագտարե անմիջապէս ոտք եւ նելով՝ սրատէն կախուած ոսկի սուրը վար առաւ , և բարձրածայն գոչեց իւր աստիճանաւորներն և Աղայներն , որոնք անմիջապէս ժողովեցան ի դահլիճ : Նոյն առեն դրսէն սրինգներն ու թմրուկներն հնչել սկսան , և զինուորք աղաղակելով սրատախոնեցին այս սրատերազմական հրաւէրին :

— Կերթանք , կըսէ Պայրագտարն Աէմիսին . կերթանք դէպ յԱնդրիանուպոլիս , ուր սկիտի գըտնեմ մեծ վեղիրն և անոր զօրքերը , զօրս վստահ եմ առ իս ծղելու անուղղակի կերպով բացատրելով անոնց թէ նախտակ ունիմ զԱռլիթան Մուտափան ազատել Եամագներուն լրբութենէն և փոխել Շէյխ-Խոլամն և անոր կուսակիցները , վերահաստատելով անոնց տեղ իրենց դիրքը կորուսդ հաւատարիմ սլաշոնեայներն , իսկ քեզ , Աէմիս , ինչպէս նուե ինձ հաւատարիմ Համբ Սալին , որ իմ աստիճանաւորացս արխագոյնն է , թագոն ձեռնարկութիւն մը կը յանձնեմ , յորմէ կախեալ է մեր

Նպատակաց յաջողոթիւնը :

Քաջագոյն ձիւորներէն հարիւր հողի առնելով  
դէսլ յառաջ խաղացէք . . . և միւսներն . . .  
Տէրը դիտէ : Յետոյ եկեք զիս դիմաւորելու Ա .  
Պօլոյ տաջեւ , և հոն ի մխասին սկիտի կատարենք  
աստուածային խորհուրդները :

Նէմիալ էֆէնտին հրաժեշտ տալով այս վեհանձն  
բարերարին՝ Համի Ալիին հետ մեկնեցաւ անմիջասլէս  
Ուուսմուգէն գեղեցիկ երիվարի մը վրայ հեծած՝  
հետն ունենալով հարիւր ձիւոր զօրք : Այս յա-  
ռաջընթաց զօրքը կարգու դէսլ ի լեռներն ուղղուե-  
ցաւ , ուրիէ Սեւ ծով կերթուի : Իսկ Մուստափա  
Պայտագտարին բանակը , որ բաղկացեալ էր 16 հա-  
զար գուառական զինուորներէ , կուրօրէն իրենց  
Պլիսաւորին կամացը նուիրեալ՝ յամրաքայլ և հան-  
դարտօրէն դէսլ յայլոց անծանօթ նպատակին կը  
դիմէր :

Այս միջոցիս Վոստորի նորընտիր կառավարիչ  
Գասլագճը օղլուն բաւականանալով իր աննշան  
Դիրքին մէջ , զոր ստացաւ ի փոխարէն իւր զործակ-  
ցութեան վերջին ապստամբութեան , որ զՄուլթան  
Մուստափա Պ . ի գահ բարձրացուց , Եէյլս- իս-  
լամին և Սէրայի կուսակցութեան թողուց Սէլլմայ  
ասլու և անմիտ յաջորդին կառավարութեան հո-  
գը : Եամազներուն զլխաւորը Սև ծովու բերանը  
գտնուած ֆէնէոր երթալով հոն ժամանակ կան-  
ցունէր իւր մարմնական հեշտութեանց առհաւատ-

չեայն վայելելու, զոր Գոռանը կը խոստանայ իս-  
լամեան դրախտին երջանիկ բնակչացը : Քաղաքա-  
կան իրաց մէջ ըրած միջամտութեամբը նշանաւոր  
եկամտից անբաւ աղբիւր գտած էր . և առանց զո-  
նոնք քաղաքական խորամանկութեանց վասնելու՝  
ընդհակառակն ինքն ուրիշներուն խորամանկու-  
թեանցն օգնելով կը հարստանար :

Եւրոպից դեսպաններէն և Գրան սլաշտօնեայ-  
ներէն իրր պարգև ընդունած սոտակներովն Գոռ-  
պաղճի օղլուն խիստ շքեղ պալատ մը շինեց ի Ֆէ-  
նէր : Գերավաճառք ամենագեղեցիկ կիներն ի հա-  
շիւ անոր գնելով կ . Պօլսոյ և Տրապղոնի մէջ՝ կը  
դարդարէին նորա հարկմը : Փակեալ այս հեշտագին  
տեղն անուշաբոյր և հաղուադիւտ ծաղկանց մէջ  
կը հանգչէր՝ Գապագճը-օղլուն իրը Մեհմետ Գ . իր  
հոյելեաց սպալստին մէջ : Այս երջանիկ դիմուորը կը  
փութար վայելել իրասէս այն երազը, զոր կը տես-  
նէր առանց վաղուան համար հոգ տանելու :

Գիշեր մը երբ երկու մանկամարդ օրիորդը կը  
սրսրէին, զորս ընծայ առած էր Շէյխ-իոլամէն,  
որ ամէն կերպով կը ճգնէր Գապագճը-օղլուի բա-  
րեկամութիւնն անխղելի պահելու . իւր ներքին-  
եաց մէկը ներս մտնելով իմացաց իրեն որ մարդ  
մը Մելքթիին կողմէն կարեւոր յանձնարարութիւն  
մ'ունի իրեն ընելու, և կը խնդրէ իրեն ներկայա-  
նալ :

— Ըսէ՛ այդ շունին, սպատասխանեց իամազն, որ

վաղն առաջին աղօթքէն ետքը կրնայ դիս տեսնել  
Ակամլրգու : Գիշերն հեշտութեանց նուիրեալ է . ես  
թագաւորական գոհոյից տասն և եօթ խորհրդակա-  
նաց գլուխները կորեցի և նոյն խակ Սուլթանն ա-  
նոր համար գահընկեց ըրի , որովհետ զի ձեռացու ա-  
րարածներն ինձ օրէնքներ չըտան :

Եւ Գասկագմին վերստին իւր ականակուռ չպա-  
զը ձեռք առնելով , զոր վայրիկ մի շրթունքներէն  
հեռացուցեր էր , հրամայեց երգեցիկ կանանց որ  
շարունակեն իրենց երգերը : Պարող օրիորդներն  
սկսան թոշիլ օղին մէջ իրենց մասուցներնուն մէջ  
բամբիոններն հնչեցունելով : «Ներքինին երթալով Սէ-  
տամլրդի դուռը բացաւ , որ եկողմարդուն իւր տիրոջ  
սկասասխանն հաղորդէ , բայց ներքինին դեռ բերա-  
նը չը բացած չորս դինեալ մարդիկ իւր վրայ յար-  
ձակեցան և կըստիպէին զինքը Գասկագմի օղուին  
սենեակն առաջնորդելու դիրենք :

— Միւսիման չէ՞ք , դոչեց ներքինին դաղալով ,  
և անտարակոյս չը սկիտի բոնաբարեք տէրս սկաշտ-  
աբանող նուիրական առաստանարանը :

— Մէքքէ սուրբ քաղաքին սև քարն ալ համ-  
բուրած ըլլոյ , սկասասխաննեց օտարականներէն  
մին , անոր դլուխն անխնայ մարմնէն սկիտի բաժ-  
նեմ : Զահովդ , ստրուկ , առաջնորդէ մեղ , եթէ  
ոչ՝ զրեղ ալ սկիտի սպաննեմ , և քու արիւնդ չը  
սկիտի փրկէ տիրոջդ կեանքը :

Երբ Հաճի Ալին և իւր երեք բարեկամքն հարեւին

մէջ տեսնուեցան , շանթահարած մնայ դըշբաղլ  
Գապագմի-օղլուն : Անուշահոտ զինեաւ վի ոսկի բա-  
ժակն ձեռքէն ընկնելով՝ նստած գեղանկար գորզը  
ներկեց : Կանայք փախսան , աշտանակներն ընկան :  
Հաճի Ալին անզէն Եամագն իւր մետաքսեայ եր-  
կար թեղանիքներէն յափշտակեց : —

— Գթութիւն , գոչեց ողորմելին՝ յուսահատու-  
բար :

— Դուն գթացի՞ր քու զոհերուդ վրայ , սլա-  
տասխանեց Նէճիսլ :

— Դուն չարաշար չը սպաննեցի՞ր Մահմատէ-  
ֆէնտին Պէօյիւք-Տէրէի ախանցը վրայ , աւելցուց  
ձխաւորներէն մին :

— Դուն Սէլիմայ ամենահաւատարիմ և փա-  
ռահեղ խորհրդականաց մահուան դատակնիքը չը  
դրեցի՞ր , կրկնեց զայրութով Նէճիսլ , գուն անոնց  
գլուխները արիւնազնդ բարզի սկիս չը դիզեցի՞ր ,  
Դահիճ , Ադ-Մէյտան հրապարակին մէջ :

— Այսօր քուէն քե՛ղ ելսծ է , փախաց Հաճի  
Ալին ծանրութեամբ , և իւր սուրը բարձրացուց  
յանցաւորին զլխուն վրայ :

— Գոնէ , գոչեց Գապագմի-Օղլուն , զինքն ըս-  
ուննելու սրստաստուելու անձանց ոտքերուն տակ  
քաշելուելով , ժամանակ տուէք ինձ աղօթելու :

— Ոչ , սրստասխանեց Հաճի Ալին :

— Եւ իւր սուրը դժբաղդին կործքը միսեց ,  
և որով Գապագմի-Օղլուն զլուխը մարմնէն

բաժնուեցաւ :

Եւ Նէճիալ Գասլագմը - Օղուի ջղասարսու զը-  
լուխն առնելով դնաց կ . Պօլսոյ բերդերուն առջին  
ԴՊայրագտարը դիմաւորելու :

Հաճի Ալին և իւր ձիւսւորները Մեծին Վէղիրի  
ֆէրմանիը վրանին կը կրէին , որ կը հրամայէր Գա-  
սլագմը - Օղուին մահը . և անձկաւ կը սպասէին այն  
օրուան , յորում սկսուի հաղորդէին Ֆէնէոի ևամագ-  
ներուն Վէղիրին հրամանը :

Եւ Նէճիալ Գասլագմը - Օղուի ջղասարսու զը-  
լուխն առնելով դնաց կ . Պօլսոյ բերդերուն առջին  
ԴՊայրագտարը դիմաւորելու :

## ԳԱՅԻ ՍԼ

Մինչդեռ նոր ապստամբութիւնը կը սպասնար ազետութեան և նոյն իսկ Սուլթանին, և սարսափը կրկին կը տիրէր մայրաքաղաքին մէջ Պայրագտարին և Մեծին Վէզիրի գօրոց ներկայութեամբ, որը կ . Պօլսոյ բերդերէն անդին տարածեալ էին Տառա- Փաշայի դաշտին վրայ, վերջին ծայր անհանգստու- թիւն կը տիրէր սերային մէջ, ուր Մուստաֆա Գ . անխոյթ իւր օրերը կ'անցնէր հեշտութեան և զուար- ձութեան մէջ :

Իսկ Աէլիմ իւր Շահզատէ Մահմուտ Հօրեղբօ- քորդւոյն հետ, քէօշիին մէջ փակեալ ուր ինքնայոր- դոր գնաց իւր գահընկեցութիւնն հրատարակուած- օրը, մոռցած էր իւր գահը, մեծութիւնն ու ջանքերը, և իւր հօրեղբօրդւոյն դաստիարակն եղած էր : Այս մենարանին խոր լուսութիւնն ուրիշ բան մը չէր քննդմիջած երբէք, այլ ներբինեաց ոտքերուն ձայնն ու մօտակայ նոճիաստանին թոշնոց դայլոյլիկներն : Անկեալ ինքնական զժողովուրդը կառավարելու արուեստը կ'աւանդէր երիտասարդ արքայազին, որ օր մը կառավարութեան զեկը ձեռք առնելով՝ սլիտի ճգնէր նոյնպէս ընդդէմ բռնութեան Եէնի- չէրեաց : Աէլիմ փորձառութեամբ լուսաւորուելով իր անցելոյն թերութեանցը վրայ՝ կը ջանար թա-

վիճ սիրով իւր աշակերտին որտին մէջ հաստատոն  
կամք և առոյգ գաղափարներ , ցուցնելով անոր միան-  
գամայն ծովուն թագուն ժայռերն , որոց վրայ իւր  
մեղմ կացութիւնը դժբաղպարար խորտակուեցաւ :

իսկ Մահմուտ ի փոխարէն՝ Աէլիմոյ սփոփոկան  
խոռքեր կ'ուղղէր , ցուցնելով անոր իւր անկեղծ ցա-  
ւուկցութիւնը , վեց գոչելով զԱստուած , որ օր մը  
վրէժ սլիտի սլահանջէ եթէ երբէք ճակատագիրն  
յանձնէ իւր ձեռայն Օսմանոյ ահարկու սուսերը :

Սուլթան Մուստաֆայի գահակալութենէն ի  
վեր Գրաֆէսին մէջ ըանտարկեալը խիստ հրամաննե-  
րով սահմանափակուած էին իրենց ընակարանին  
մէջ : Գըզլար - Աղասին , այսինքն ներքինեաց  
գլխաւորը , որուն խիստ օրահոլանութեան ներքին  
էին երկու իշխաններն , կ'արդիլէին անոնց ամէն  
հաղորդակցութիւն՝ չէ թէ միայն զրսի մարդոց հետ ,  
այլ նաև արքունեաց սպասաւորաց հետ ալ , և ա  
նոնց պահպանութեանը սահմանեալ ներքինիք իրենց  
գլխաւորը գոհ ընելու համար պարտք համարած էին  
ամէն պարագայի մէջ անոնց հետ խառութեամբ և  
դժնէութեամբ վարուելու , և դժբաղդ բանտարկե-  
լոց անընդհատ հարցմանց շատ անգամ պատասխան  
ալ չէին տար :

Այս արհամարհելի անձանց մէջ միայն մէկին ա-  
նոնց դժբաղդութեանը ցաւակից կ'երեւէր . Երիտա-  
սարդ գերի մ'էր այս , որուն յանձնուած էր Մահ-  
մուտի սսլասահագիւթիւնը : Գիշերը երբ Գըզլար-

Աղասին Սուլթանին բնակարանը կ'երթար, և այլ ևս  
չը կար այն խիստ հսկողութեան երկիւղը, երիտա-  
սորդ ներքինին գաղտուկ Սէլիմսց և Մահմուտի-  
բանար կը մտնէր, որուն դռներն զգուշութեամբ  
ուղելով և վանդակներն իջուցնելով կը պատմէր ա-  
նոնց ինչ որ կը լսէր սպալատը մտնողներէն :

Գիշեր մը Ճաֆէր (ներքինւոյն անունն է) ներս  
մտաւ ըստ ոռվորութեան ուրախ դէմքով . և երբ  
գաֆէսին մէջ առանձին էր երկու թագաւորականց  
հետ կը լսէ անոնց ցած ձայնով .

— Աւետիս, աւետիս . Մեծ Վէղիրն հաստ  
Տառտ-Փաշայի դաշտը իր բանակաւը : Մուստա-  
ֆա Պայրագտարն ալ եկաւ 16,000 զօրքով, զորոնք  
Ռուսացէն հաւաքած էր :

— Մուստաֆա Պայրագտա՞րը, գոչեց, Սէլիմ.  
և ուրախութեամբ փայլեցաւ իր դէմքը :

— Ինչո՞ւ եկած են Կ. Պոլիս, հարցուց Մահ-  
մուտ մտախոհ :

— Կուգան ևանագները ջնջելու և պաշտօնեայ-  
ները փոխելու, սլատասխանեց ներքինին : Գասպար-  
ճը-Օղլուն երեկ սպաննուեցաւ ի Թէնէռ, և Սուլթա-  
նը այս առաւօտ պաշտօնէ հրաժարեցոց Շէյխ-  
Խալսմն և աքսորեց, ինչու նաև բոլոր առժամա-  
նակեայ պաշտօնեայներու խորհրդականներն, ո-  
րոց համար Մեծ Վէղիրն և Ռուսացի Փաշան  
կանխաւ զեկուցած էին :

— Ուրիշ փոխառութիւններ տեղի չունեցա՞ն

կրկնեց Մահմուտ .

— Ոչ , բարձրաշուր Տէր .

— Հը , Մուստաֆա Պայրագուա՛րը , Իրկնեց  
Սէլիմ զարմացմամբ :

— Կը կարծե՞ս , կ'ըսէ իր հօրեղբօրորդւոյն  
դառնալով , Մահմուտ , որ Պայրագուարն իր գաւա-  
ռէն եկաւ այնքան զօրքով միմիայն դժբաղդ ևանազ-  
ները ջնջելու և տկար Աէզիր մը հաստատելու ,  
մինչ դեռ ինք օրէնքներ ևս կրնայ դնել :

— Տէր իմ , գոշեց Ճաֆէր Սէլիմայ ոտքն իշ-  
նալով , վաղուան արևը կարեւոր բաներ սկսով լու-  
սաւորէ :

— Ի՞նչ ըսել կուղես , կը հարցնէ ահաքեկ՝  
Սէլիմ :

— Թէ Աստուած արդար է , կը պատասխանէ  
Մահմուտ , իր հօրեղբօրորդին գգուելով , և թէ օգ-  
նութեամբ հաւատարիմն Պայրագուարի պիտի վերա-  
դարձընէ զքեզ ի գահ , որուն արժանի ևս քան  
զոյս տոտալ :

— Ես կարծիս և ես կը կարծեմ , կ'ըսէ , ների-  
նին :

— Ե՞ս . կը փախայ Սէլիմ ցաւազին ժողովր-  
դեալ , դարձեալ իմ տկար ձեռացս այնքան դժո-  
ւարատար ծանրութիւն մը , քանի որ անգամ մը  
պարտասեալ եմ : Ոչ , ոչ , որովհետեւ ժողովր-  
դեանս երջանկութիւնը չի կրցի յարդարել ,  
աստի այժմ որիշ բանի չեմ փախարիր բայց մի-

այն հանգստութեան, և արդէն եղածներն մռանալու :

— Սէլիմ, գոչեց Մահմատ, կընա՞ս արհամարհէլ ամենակարողութիւնը :

— Ինչ, մէկ նայուածքով շարժել զԵւրոպան, զԱսիան, և զԱվրիլէն, կոխել յԵրկիր և զօրքեր ծնանիլ, ամենուն երեսները խոնարհեցնել քո ոտիցի փոշոյն, երեսիոխան և շուք Աստուծոյ ըլլու, միով բանիւ ամենակարող, ասոնք ամենը չե՛ն դիւթեր զՔեզ : Այո՛, այո՛, օր մը միայն թող ճաշակեմ՝ ես բայցարձակ իշխանութեան հեշտութիւնը և յետ այնորին մեռնիմ :

— Աղէկ, ըստ Սէլիմ զՇահզատէն համբուրելով : Ժամանակիս թշուառութիւններէն չը ծանեար բաղդին անհաստատութիւնը : Այս ժողովուրդը, որ յաղթանակաւ այսօր իր ուսերուն վրայ կը կը զքեզ՝ վազը կը զոհէ : Այս քու զօրութեանք արարիչներուն ի՞նչ սկիտի ըսես երբ սարջանալով գան և զլուխող ուզեն :

— Բայց դեռ չը յանդզնած դլուխու ուղելու, ես անոնց զլուխու կը կտրեմ լի կատալի բարկութեամբ : Ասկայն հիմայ խօսքը իմ վրաս չէ, շարունակեց Շահզատեն . Պայտագուարը եկաւ անտարտ կոյս զքեզ վրկելու և ոչ թէ զիս :

— Թէ՛ վրկէ և թէ կործանէ, կըսէ Սէլիմ . կը յանձնեմ ինքինքս Աստուծոյ նախախնամութեան ձեռքը :

Հանգստութեան ժամն հասաւ և գաֆէսին մէջ ջինները բաժնուեցան իրարմէն տարբեր գաղափարներով, բայց և այնպէս համոզեալ էին որ հետեւ նալ օրը կործանում մը սկիտի ըլլոր :

Այսն սկսաւ փայլիլ հօրիզոնէն վեր և պսցծառ կերպով ծաղիլ : Այսօր 1808 տարւոյն Յուլիսի 28: երրորդ օրն էր : Իւր բարձր դրիցը մէջ հաստառած Մեծ Վեղիրը, Բ. գուոր գայած առենք Ռուսմուզի Փաշային նամակ մը ընդունեց, որով կը հրաւիրուէր իւր բանակատեղին, ուր իրեն հետ սկիտի խօսակցեց կարեւոր և խիստ ստիսլողական նիւթոյ մը վրայ :

Պայրազտարն ընդունեց Մեծ Վէղիրն իր վրանը շրջապատեալ իւր սատիճանաւոր անձինքներէն և ամենէն հաւատարիմ ու անձնուէր զինուորներէն . Հոն առանց յստաջարանի և առանց մեկնութեանց խմացոց անոր թէ իր նսկատակն է շարժել սէրային դէմ իր զօրքերն և գահընկեց ընել զՄուստաֆա, և վերահաստատել զՍէլիմն իւր գահոյիցը վրայ : Մեծ Վէղիրը զարմանալով այսնպատակներուն վրայ, որոնք երբէք մտքէն անցած չէին, քանի մը անյարմար խօսքեր թոթովեց, ժամանակ խնդրեց, և ուզեց մէկդի քաշուիլ : Սակայն Ռուսմուզի Փաշան յանդիմանելով զոյն իրը Երկչու և իրը տսկառամք կը հրամայէ իւր պահապաններուն որ զայն ձերբակալ ընեն, և անոր վրային առնելով տէրութեան կնիքները ու բանցմով կնքել սովորութիւն եղած էր Սուլթանին

անուամբը կատարուած դործքերը :

Պայրագտարն հոչտկեց անմիջապէս բանակին՝ թէ Ասեճագր - Շերիֆին այսինքն Սուհամմէտի նորական դրօշակը պիտի տանէին աշխայը , որով բոլոր զօրքերը կը սկարտաւորէին հետն երթալու : Իւր առաքեալները շրջելով զինուորաց մէջ տարածած էին լուր մը՝ այս վճռոյն իրր սկանձառ որ եղած էր Ռուսաց հետ եղած Տաճկաստանի համար իսկառ շահաւոր դաշնաղրութեան մը վրայ :

Զօրքը յստաջացաւ և քաղքին մէջէն անյաւ ժողովրդեան կեցցէներուին : Պայրագտարը շրեղապէս սկառաղինեալ՝ կոյտառ և գեղեցիկ ձիռ մը վրաց հեծած յաւաջ կ'ընթանար ի գլուխ իւր զօրաց , իրր յաղթական զօրապէտ մը Ասեճագր-Շերիֆին ներքիւ : Տիրագին ճակառը խոշոր ասրդգով մը ծածկուած՝ աւելի յանդուզն և ահոելի կերպով բարձրացաւ , երր զԵհնիչէրիներն մէկ կողմ քաշուած գլուխնին Մարդարէին դրօշակին առջին խոնարհած տեսաւ . որոնք Սուլթաններուն աշխային առաջին դուռը կը սկահալանէին :

Վերջապէս պայրագտարին ճգոնոց վախճանը կը մօտենար . և այս յանդուզն երդմանկցութիւնը , որուն օրինակը երբէք աղգաց ժամանակադրութեան մէջ չէ տեսնուած , պիտի արդարանար յաջողութեամբ . միայն մէկ սկառուար մը կոր տակաւին դինքն իր տիրոջմէն բաժնով , սակայն ներքնագաւթին կիսափակ դոնէն նշմարեց կոյսերական բընա-

կողանը, և այն խորհրդաւոր դաները, որոնց և ախն կը դտնուէր անկետալ թաղաւորը, զոր հեռաւոր երկիրներէն վնտոելու կուղար ։ Քանի մը վայրկենէն ետքն իւր յաղթանակն ի զլուխ սկիափ ելնէր, վասն զի դիտէր թէ Սուլթան Մուստաֆան աշխայէն դուրս ելոծ էր Ասովիօրի հովտացը մէջ գրունելու :

Բայց երբ Պայրագտարն և իրենները սէրային ներքնագաւթին մօտեցան, յանկարծ կայսերական քնակարանին մուտքը սկահպանող ամուր դուռն իւրենց դէմ գոցուեցաւ : Պայրագտարն խելասլէս վախնալով՝ հրամայեց իր ջակաշներուն որ իրենց արծաթեայ դաւազաններովէ դրան զարնեն : Այս հրամանէրին Պօստանձի-պաշին բերդին պատնէշին մէջ եղանգնած :

— Ի՞նչ կ'ուղես հարցուց Պայրագտարին :

— Չե՞ս տեսներ, ըստ, որ Սանճազը-Շերիֆը կը բերենք : Բայց դուռն անմիջապէս, ասկո թէ ոչ անհնազանդութիւնդ զլխովդ կը վճարես :

— Այն տտեն կրնամ մուտքն ազատ թողուլ, պատասխանեց Պօստանձի-պաշին, երբ ինքն Սուլթան Մուստաֆա ինձ հրամայէ :

— Թշուառական, գոչեց Պայրագտարը, սրովն անոր սպառնալով . Սուլթան Ակիմին՝ քու օրինաւոր թաղաւորէ՛դ այսուհետեւ հրամաններդ սկար է ընդունիլ, զի կուգանք դարձեալ զինքն իւր կայսերական գահոյից վրայ հաստատելու, յորմէ մատ-

Նիչք խլեցին զայն : Հնաղանդէ , ապա թէ ոչ յա-  
նուն կենդանւոյ Աստուծոյ թէ զբեղ և թէ քու-  
կիններդ անխնայ կը ջարդեմ :

Սէրային երկչոտ ստրուկներն այս սալառնալիք-  
ները լսելով , Պօստանձի-պաշիին ոտքերն ընկան , և  
կ'աղաչէին անոր որ աւելի չը զայրացունէ յաղթա-  
կան զօրքը : Բայց Պօստանձին վեհանձնաբար խուլ  
կ'ըլլար թէ Պայրագտարին սալառնալեացը և թէ ըս-  
տըրկաց աղաչանացը ,

— Ուրեմն , գոչեց Պայրագտարը մոլեգնեալ .  
թնթանօդներն յառաջ անցնին . ամբողջ զօրքը ի-  
րենց զօրապետին հետ զայրացեալ աղաղակեց .

— Սուլթան Սէլիմը կուզենք . թո՛ղ ի տես գայ-  
կեցցէ Սուլթան Սէլիմ . անկյուն Սուլթան Մու-  
տաֆա .

Նոյն վայրկենին Սուլթան Մուստաֆա վերա-  
դառնալով շրջագայութենէն յանակնկալս կը մըտնէ-  
մէրայը ծովեղրի կողմի դռանց մէկէն : Ազմուկին  
սլատճառն հարցնելով և եղելութիւնն իմանալով  
այս ցաւալի բօթին վրայ դէմքը դալկացաւ և Գրգ-  
ուր Աղասիին բազկին յենլով .

— Աստուած իմ , գոչեց , ինձ զարան կը զոր-  
ծեն . . . ո՞ւր վախչիմ , ո՞ւր պահուըտիմ :

Զինուորաց աղաղակներն և աղմուկին շարունա-  
կութիւնը իւր վախն ու շուարումն աճեցուցին :  
Պօստանձիններուն պաշտօնաւորաց մին շնչասպառ  
վաղելով՝ իմացուց ահարեկ կայսրին թէ Պայրագտա-

թին թնժանօթներն առջի գտւթէն անցեր են . և  
թէ իւր կեանքը վտանգի մէջ կը թողու եթէ չի վըճ-  
ռէ անմիջապէս հնազանդիլ անոր :

— Ուրեմն սպատախանեց Մուստաֆան աչքե-  
րը բարձրացնելով , վաղեցէք ըսելու Պայրագտարին  
որ սկսային , հարմերուս և սպասաւորներուս խը-  
նայէ . քանի մը վայրկենէն յետոյ կը խոստանամ  
նմա յանձնել իմ հօրեղբօրորդիս Սէլիմը :

Լրաբերը վերադարձաւ զինքն առաքողաց : Առւ-  
թան Մուստաֆան ժպտելով իւր աթոռին վրայ  
նետուեցաւ և հրամայեց ներքինեաց որ իր շուրջը  
բոլորին անմիջապէս : Ճողովելէն ետքն սպասաւորք  
լուելեայն անոնց բաշխեցին սուրեր և կաշեայ օձա-  
ձև խեղգեր , յետոյ Գրզդար Աղասին իւր տէրոջը  
դաղտնի հրամաններն ստանալով սենեակէն դուրս  
ելաւ իր բազմաթիւ սեւերուն հետ : Կէս օրուան ա-  
ղօթքին ատենն էր , և ապստամբաց աղմուկին  
վերեւէն մուէզզիններուն սուր ճայները կը լսուէ-  
ին , որոնք քաղաքին բոլոր մինարէից վրայէն ցերե-  
կեայ էզանը կ'երգէին : Սէլիմ փակեալ իւր սենե-  
կին մէջ ծնրադրեալ կ'աղօթէր , և իւր հաւատարիս  
սպասաւորքն անոր շուրջը կանգնած կը դիտէին բա-  
րեսլաշտութեամբ զաղօթողն : Յանկարծ սենեկին  
դուռը կը բացուի և Գրզդար Աղասին իւր ներքի-  
նեաց հետ ներս կը մտնէ : Սէլիմայ սպասաւորներն  
անուարեր կեցան անոր ներկայութեան ատեն ,  
քանիզի սովորած էին տեսնել անոր խիստ պահպա-

նութիւնը որ կ'ընէր անդադար կայսերական բանտարկելոց վրայ . միայն աղաչեցին որ սսլառէ մինչև ի լրանալ սոզօթիցն յարգելով իրենց տէրոջը բարեմաշտութիւնը :

Նոյն վայրկենին , յորում Սէլիմ Աստուծոյ անունը կ'արտասանէր , և խոլամեան կրօնին վերջին երկրագութիւնը կ'ընէր՝ դաւաճանք յաճակեցան անոր վրայ , և անոնց մէկ քանին մինչդեռ նորուանդին սպասաւորներն իրենց սուրերովն կ'արդիէին , Գրղիւր Աղասին արագութեամբ խեղղը իւր դոհին պարանոցն անցուց :

Սակայն հսկայ Սէլիմն յաղթելով ներքինեաց գլխաւորին զայն գետինը տապալեց : Յետոյ իւր քսանալերիչ ձայնովը խրախուսելով իւր սպասաւորներն յարձակեցաւ վերջին ճգամբ ինքզինք ազատելու միւս դաւաճանաց ձեռքէն ալ : Սակայն ներքինեաց գարշելի գլխաւորն ոտք ելնելով՝ նենդութեամբ խոցեց զդժբաղդ ինքնակալն՝ երբ նա միայնակ միւս դաւաճանաց հետ կը մարտնչէր . խեկոյն ցաւէն նուազեալ գետինը փռուեցաւ :

Սփրիկեցւոց սուրերը գործը վճարեցին :

Սութսն Մուստաֆա այն ատեն դրան վարագուրը վեր առնելով ակնարկ մը նետեց անոր դիակին վրայ որն որ այսպիսի պարագաներու մէջ . միշանոր օրեւըն յարգած էր . և ցրտութեամբ ըստ Գրղւար Աղասիին ,

— Սպասամբք հիմայ մեր յապաղմանը համար

անհանդիսութեան . աչտք է փառիշտահին որ իր իսու-  
քին վրայ հստատութեայ : Յանձնեցէք զԱռոլժան  
Եկիմ Մուստաֆա Պայրագտարին :

## ԳԱՀՈՅԻՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գլուխ Աղասին սէրային Երկրորդ դաւթէն  
անցնելով, ուր Պայրագտարն և իւր զօրքերն անհան-  
գիստ կը սպասէին Սէլիմոյ, ննջեցելոյն յուղարկա-  
տութեան հանդէսը սպատրաստեց հարկմին ներքեւ.  
և իւր զոհին դիակը ծածկող արխւնաթաթախ քողը  
մէկդի առնելով դարձուց աչքերը դեսլ ի սէրային  
սպատուհաններն, որոց փեղիերն անմիջապէս բացուե-  
ցո՞ւ : Այս կէտին սպատուհանները կանանց բաղմու-  
թենէն լեցուեցան, որոց ներդաշնակ և հրապուրիչ  
գլուխոներն իբրեւ փունջ ծաղկանց բոլորովին հակա-  
ռակ էին իրենց դիմացը վրայ դրոշմեալ տմար-  
դութեանը : Անոնց մէջ կը նշմարուէին Գատղննեռն  
և Յուղգները, Զերբեղիստանի և Կիւրճիստանի  
ամենէն գեղեցիկ կնիկներէն ընտրեալ գեղանի ե-  
րիտասարդուհիք՝ ի հաճոյս վասիշահին : Ասոնց մէջ  
կային նաև Յամանցուհիք, որոնք բաղաքէն եկած էին  
յայցելութիւն իրենց բարեկամուհեաց, որոց մէջ ընտ-  
րելագոյնն էր Եըլտըլ օրուզպիրներու չորպամիին կի-  
նը, այս կանանց զայրացեալ նայուածքները սեւե-  
ռեցան անմիջապէս ցաւալի տեսարանին վրայ : Աւ  
հասրէին վէրբերը, յորոց տակաւին դժբաղչ  
ինքալին ջերմ արխւնը կը հոսեր, այն շնորհալի և  
շիւթիչ շրթունքները բիւրաւոր նղովքներ կը թա-

փեին . ուրիշ կանայք պատուհանաց առջև եղած բազմութենէն տեղ չը գտնելով կը խնդային երգելով սենեակներուն խորերը , իրենց վայրի ուրսխութեան երգերուն կը միացնէին դաշնակներու և կիթառներու ձայները :

Այսպէս ծիծաղներ և նզովքներ հետղէետէ շարունակ դէպի Սէլիմայ դիակլը կ'ուղղուէին , զոր ներքինիք իրենց ուսերուն վրայ առած կը տանէին սահմանեալ տեղը :

Պօտանձի-Պաշին վերջապէս բերդին վրայ ենելով հոչակեց Պայրագտարին՝ թէ իւր կամքը կը կատարուի , և թէ Սուլթան Սէլիմը կուզար իրեն յանձնուելու : Զինուորք այս լուրն առնելով ալսղակեցին :

Նէմիալ և Սէֆէր ինքնայորդոր իրենց կարգերէն դուրս ելան և ուրախութեան արտսունքներ թափելով եկան լոիկ և համբուրեցին Ռուսակի Փաշային ծունկը յուրախակցութիւն անոր յաջողութեանը : Յանկարծ երկրորդ գաւթին դռները ճռնչելով կը բացուին . Պայրագտարն անմիջապէս ձիէն վար կ'իջնէ և կը վազէ դուոր որպէս զի նախ ինքն համբուրէ իւր սիրելի տիրոջը ծունկերը : Սակայն տեսնելով Սէլիմայ արիւնաշաղախ դիակը ահուելի ձայնով մ'սոլաղակեց և ի ծունր գալով անոր առջև դառնապէս կուլար :

— Տէրդ իմ , թոթովեց հեծեծախառն ձայնով մը , զքեղ վրկել ուղելով քու կորստեանդ սլատճառ եղայ :

Եւ իւր չբթանցը վրայ թագուորին ստոած ձեռքերը դնելով, ընկղմեցաւ քիչ մ'ատեն իւր յոտհատութեան մէջ :

— Մեծանձն Փաշա Ռուսացի, գոչեց Ա՛ճիպ' անմիջասլէս ոտք Ելնելով. արտաստաց տեղ արխան կը սրահաջէ Սելիմայ սոսուերը : Պատժենք դաւանները և նախ հոգանք որ զզուելի Մուսաֆան չ'ըլլոյ թէ ծածկէ իւր բոլոր բոնարարութիւնքը մահուամբ Շահղատէ Մահմուտի, որ վերջին շառավիղն է Օսմանայ կոյսերակ ոն ցեղին :

— Թող ձերբակալ ընեն Սուլթան Մուսաֆան, սրատասխանեց Պայրագտարը ուուրը բաշելով, դօրքը իմ բերնովս կը հռչակէ Սուլթան Մուսաֆային ան'լումն և Սուլթան Մահմուտ խանի ինքնակալութիւնը : Յառաջ, դահիճք, ոյս սարսափելի և ահուելի յանցանաց մասնակիցներն անմիջասլէս թող սորսննուին : Մէ՛ ինայէք ոչ ասինի, ոչ ցեղի և ոչ հռակի, յարձակեցէք և կատարեցէք անմիջասլէս հրամանս :

Մինչ Պայրագտարին զինուորներն հեղեղաբար կը թափէին սրահը կատաղի ճիչերով, անզըթար բոնելու և կապելու բոլոր կասկածի տակ եղողները և զանոնք դրասկետին առջև բերելու, Ա՛ճիպ և Սէֆէր երկու գնդերու հրամանատարք հրամայուեցան որ մին Մուսաֆան ձերբակալ ընէ և Միւսը դէս է գաֆէս վաղէ զՄահմուտն արձակելու :

Սեւերը մտան ի Գյաֆէս իրենց հագուստներուն  
ներքեւ սուր և կաշեայ օձամեւ խեղղեր սրահած .  
սակայն ո՞րբան զարմացան՝ տեսնելով թէ իրենց ինող-  
րած զոհը հոն չէր : Ընդունայն կը հարցնէին սպա-  
սուորաց երիտասարդ թագաւորազին ապաստամա-  
րանը : Ոչ սպազանքներով և ոչ սպասնալեօք կը ը-  
ցին բան մը համեմալ , միայն հաւաստի էին թէ  
Մահմատ չէր կը հար փախչիլ իրեն համար սպա-  
մանեալ բանուն , վասն զի բաղմաթիւ Պօստան-  
ձիներ կը սրահալոնէին զայն : Ական զննել Գյա-  
ֆէսին բոլոր անկիւնները : Այլ սակայն բոլոր ի-  
րենց հետազօտութիւններն ի զերեւ ելին :

Վերջադիմ տան առաստաղին ստակ դտնուող  
սենեկի մը հասնելով , ուր զորդեր , փախոթներ  
դրուած էին , դոց սլահարանի մը բանալին ու զեցին :  
Զը կարենալով զայն առնուլ սլատրաստ էին դուռը  
խորտակելու . սակայն Ճաֆէր Մահմուտին երիտա-  
սարդ ներքինին սուրը քաշելով առանձին դիմադ-  
րաւեց շատերուն իր տիրոջը տկար պատուարին սո-  
ջե՝ ըսելով թէ դեռ ինքը չընկած ոչ ոք կը նայ մօ-  
տենալ Շահզատէին : Պաւաճանք նախ վախցան՝  
տեսնելով երիտասարդ ներքինւոյն հաստատամու-  
թիւնը . սակայն յետոյ փոխադարձար իրենց խոս-  
տացեալ փոխարինութեան յուսովը խրախուսեալ ,  
և իրենց բաղմութեանը ապահնելով՝ յարձակեցան  
ամենը մեկանց հաւաստարիմ Ճաֆէրին վրա :

Բարեբաղդարար նոյն վայրկենին Պայրագաւա-

ոին զինուորները Գաֆէս մտան, և միւս գերիներէն եղածներն իմանալով անմիջապէս վեր ելան ցրուեցին զներքինիս դեռ չընկած Ճաֆէր :

Մահմուտ իւր ապաստանարանէն դուրս ելնելով, ուր դորգերու դեզի մը վրայ նստած ամեն մէկ վայրկեան իրեն մահուանը կսպասէր, առաջնորդուեցաւ դէպի սէրաց զօրաց մէջէն՝ կեցցեներու ազաղսկներով :

Նէմիալ բերաւ դՇահզատէն Պայրագտարին սուշեւ : Ասիկա մէկէն ոտք ելնելով և երկրապատմթիւն ընելով ակնածութեամբ համբուրեց անոր ստքերը, իմացնելով միանգամայն թէ զօրքը զինքը խողիմ և Սուլթան կանուանէր Սէլիմաց արեամբը սրդեալ Մուստաֆային տեղ :

— Ոտք ելի՞ր, վրկի չդ իմ, սլատամխանեց Մահմուտ խօսքը Պայրագտարին ուղղելով . Ունիս բոլոր հաւատարմութիւնս և բոլոր բարեկամութիւնս : Պատժէ յանցաւորները յանուն իմ՝ վերահաստատելով ժողովրդեանս խաղաղութիւնն ու բարեկարգութիւնը, քեզ կը հաւատամ իմ ամենակարողութեանս սուրն և մեծ վեղիր կանուանեմ զրել :

Հստ սովորութեան առաջնորդեցին նոր ինքնակալը ազօթելու համար սէրայի այն սենեակը, ուր դրուած են Մուհամմետի նշխարները :

Պայրագտարն յանձն առնելով անմիջապէս իւրայս բարձր պաշտօնը, հրամայեց որ նոյն օրը երեսուն երեք զլուխ կտրուին, որոնք դրուեցան սէրային

երմանութ գաւթին դրանն առջեւ , և ամբոխն եկաւ  
համրելու զանոնք նոյն ուրախութեամբ , ինչ ուրա-  
խութեամբ որ Գաալագմի-օղլուխն ատենն համր  
էր : Ասոնց մէջ կը նշմարուէին Գլուխ Աղասիին  
և Պուրամեծի Պաշիին գլուխները , որք արծա թե այ  
սկաւառակին մէջ դրուած էին իրենց պաշտօնին  
համար :

**Նոյն օրն Երեկոյեան ատեն Սուլթան Մուստա-  
ֆային կիներն և անոնց յայցելութիւն եկող Օս-  
մանյուհիք զօրաց ներկայութենէն իրենց տոները  
վերադառնալու արդիլուելով՝ պարկի մէջ կարուե-  
ցան և նետուեցան ի ծով Խրիսուսօլույ դիմոց  
գտնուող Գըղ-Գուլէսիի առջեւ , որոց մէջ էր նաև  
դժբաղդ Եղլուզը**

ԺԵ ·

## ՌՈՒՄԷԼԻ ՀԻՍԱՐԸ

Այնքան կտառուսծէ և այնքան վրիժառու գործէրէ ետքը , փափաքեցաւ Նէճիալ իւր աշքերը դարձունել հեշտ տեսարաններու , և դարձեալ իւր սիրու բանալ զուարթ ղդասցմանց : Կոր վէզիրն իւր սրութառը տեղաւորուելուն ալէս , երիտասարդ Պտահ-պաշին որ առանց բոլորովին իւր սրարոքերէն վը բիսկելու կրնար սակաւ ինչ հեռանալ , գնաց շապաւ ի Պէօյիւք-Տէրէ , և նետուեցաւ իր մօրը զըրկացը մէջ :

— Վերջառիէս զքեղվերստին կը տեսնեմ , գոշեց Նէճիալ , մատնիչներուն պատժին գործակցելու բարերազդութիւնն ե'ս ալ ունեցայ . որոնցմէայս երկիրս այնչափ թշուտութեամբ կը տանջուի . թէ և կողբանք մեր սիրելի Սուլթանին մահը , զոր փրկելու եկանք , սակայն Աստուած յսղթութիւնը մեզ տալով՝ կը ներէ ինձ զեռ յուսալ երջանկութեան օրերու : Մայր , այո , որբան սիրելի է ինձ այս անունը . բացակայութիւնս խիստ երկա՞ր երկու ինձ . կսկծաղին նախաղղացութիւն մը մեկնած առենս կը տանջէր դիս , բայց ստիսուած էի երթալու : Հէրմինիան ի՞նչուի է . անտարակոյս իւր հօրեղբայրն իրեն ներած է : Ես , ես ղժբաղդարար սրատճառ եղայ իւր վշտացն ու արկածիցը , վասն

արոյ կաղաչեմ քեզ, մայր իմ, ըսէ ինձ անոր վերաբերեալ բաներն :

Պէնֆէլտ պարոնուհին երիտասարդին թողլով իւր ձեռքը, զոր տենջանօք կը համրուրէր, ծռեց իւր գլուխը՝ տիսրագին և մատիսհ։ Նէճիալ անոր դէմքին վրայ նկարեալ վշտացն հսմար սարսափած մնաց :

— Աստուած իմ, ըստ, իւր աչքերը մօքը վրայ սեւեռելով, ի՞նչ պատահեցաւ, բացատրէ ինձ, ապա թէ ոչ կը մեռցունես զիս :

— Սրիացի՛ր, որդեակ իմ, պատասխանեց Պարոնուհին՝ Նէճիալի ձեռքերն իւր ձեռացը մէջ շոյելով :

— Իմացայ բանը, կրկնեց Նէճիալ ծանր ձայնով մը, ասպետն ու իր գուտորը կ. Պօլսէն մէկնած ըլլալու են :

— Իցի՛ւ թէ, իցի՛ւ, ըստ Պարոնուհին արտասուելով. իցի՛ւ թէ բաժնուած ըլլային այն ահոնի արկածը իրենց շը պատահած :

— Մեռա՞ւ, գոչեց Նէճիալ, և մահուան դարսկը դէմքը պատեց :

— Ոչ, այսակէս չըսի՛, պատասխանեց անմիջապէս սրարոնուհին, սակայն . . . շը կրցի իմանալ թէ այն ահոնելի գիշերէն ետքն ի՞նչ եղան, յորում Սլի-Օսման հետը բազմաթիւ Եւնիշէրիներ առած . . . :

— Ո՛հ, անիծածը, փսփառց Նէճիալ մօլեպնա.

բար, խօսքդ շարունակէ, մայր իմ, յանուն Առտուծոյ :

— Ուրեմն ո՞րչափ տմարդի ըլլալու է որ այնպիսի գեղեցիկ օրիորդ մ'ըսպաննէ :

— Դաւաճանեցին զԱսպետն լոիկ իւր տունը մոնելով . . . :

— Իսկ Հերմինիա՞ն :

— Զիու մը վրայ զայն կապելով առեւանգեցին, և գեղը կրակի տալով կողոսկոեցին :

— Եւ ո՞չ ոք այս աւազակաց օրատիժը սրահանջեց : Ես ուրեմն սկսոք է որ այս տմարդի յանշանաց վրէժն առնում :

— Ունայն է աշխատութիւնդ, ըստ Տ. Պէնֆէլտ : Ալի-Օսմանայ և իւր ընկերաց հետքերը չը դժնուեցան, թէև գլխաւարտութեան դաստիարակուած էին . անշուշտ հեռաւոր երկիրներ խոյս տուած ըլլալու են :

— Այսպէ՞ս ուրեմն, կրկնեց Նէմիալ նուազեալ ձայնով մը . սյսպէ՞ս մէկ վայրկենի մէջ կը կորուսկմ. ամէն բանի հետ վրէժինդրութեան յոյսն ալ: Ո՛հ, ո՞րքան բախտն ինձ դէմ խստացեր է, շարունակեց արտասուելով : Հաղիւ ի կեսանս մտի, ճաշակեցի անոր բոլոր դառնութիւնքը : Արդեօք ո՞րպիսի սնիծած ժամանակի մէջ ծնած եմ :

— Լոէ, Նէմիալ, մի տրանջեր մօրդ առջև,

— Մայր իմ, փսխաց երիտասարդն՝ հեծեծախառն, քեղ չէ, դժբաղլդ կին, քեղ չեմ յատ-

կացումէր վշտացս ծանրութիւնը . սակայն և այն ոլէս սարսափելի . և որուն՝ կը զգամ թէ չը սկսի կարենամ . դիմանալ : Հերմինիա , քաղցր և սիրուն էակ . որ վայրիկ մի մողեց իմ աշերս . ո՛րսկիսի դժոխաշունչ հով մը բնաջինջ ըրաւ - զբեղ իմ տեստոթեանս հօրիզոնէն : Եւ ի՞նչ , . . . . քէնէ այլ ևս ուրիշ բան չը մնար ինձ , ոչ նշխար մը՝ ձեռքերովս զայն ամփոփելու , ոչ ալ գերեղման մը , որուն սդազդեաց ծաղկունքը ոռոգեմ իմ արտասուօքս : Վայ ինձ , վայ ինձ :

— Որդեակ իմ , կ'ըսէ Պարոնուհին , կսկծանոց այս աշխարհիս մէջ պիտի ճանչես նաև թէ Աստծոյ կամացն անձնուիրարար ձկտիլն առարինութեանց կարեւորագոյնն է :

— Քիչ մ'ետքը՝ կը յուսամ ըստւ Նէմիալ , որ այս աշխարհս այլ ևս չը սկսիտանջէ զիս :

— Ապերախտ , կրկնեց Տ . Պէնֆէլտ , որդեսիրարար յանդիմանելով զերիտասարդը , որիշ սիրեմի բան մը շունի՞ս աշխարհի վրայ :

— Ներէ , մայր իմ , քեզ արհամարհելու նըսպատակ չունէի . հաւատա ինձ , այլ սսկայն այնքան դառնապէս կը տանջուիմ . . .

— Փոխանակ ինքովինքդ յուսահատութեան մատնելու արիացիր , Նէմիալ :

— Ես ցարդ ընդունայն աշխատեցայ գտնել զօրիորդ Քիննատոքն և Ասպետը դաւաճանողաց հետքերը . սակայն դուն գուցէ ինէ աւելի սյս մասին :

յաջողիս : Ուրեմն մի՛ յասլաղեր , հետազօտէ՛ զս .  
նոնք , գործածէ աղբեցութիւնդ Մեծ Վէղիրին իշ-  
խանութեամբը . որպէս զի այս ընդարձակ մայրա-  
քաղաքին մէջ անհետազօտելի տեղ մը չը մնայ :

— Այո՛ , պատառխանեց Նէճիպ , ուժգնու-  
թեամբ ոտք ելնելով , վկայ կը կոչեմ զԱստուած  
որ վայրկեան մ'անգամ հանգիստ չը սկսի ունե-  
նամ սոյն ոճիրը գործողներն չը յայտնած և չը  
պատճած . . . ողջ լէ՛ր , մոյր իմ , եթէ Աստուած  
արդար է , քիչ մ'ետքը զիս սկսի տեսնես :

Այս միջոցիս Պայրագուար Սէլիմայ յուղարկաւո-  
րութեան շքեղ հանգէուը կը սկսորաստէր : Հասա-  
րակաց մունետիկներն հրասլուրակներու և փողոցնե-  
րու մէջ հանգուցեալ ինքնակալին ցաւալի մահը կը  
գուժէին ժողովրդեան՝ անոր առաքինութիւններն  
հռչակելով : Կայսերական դադարը՝ զոր շքեղազարդ  
Պալթաճիք կը կրէին , պալատէն դուրս երաւ : Ա-  
նոր վրայ սև միետուրներով զաւոսութեալ ասրգ մը  
կ'երեւէր . և ամբողջ դադարը ծածկուած էր Մէր-  
քէի նուիրական ծածկութով : Պետութեան բարձ-  
րաստիճան սրաշտօնեաններն , Շէյխ-Խոլամն , Ճա-  
ֆէրն՝ ներքինեաց արդի գլուխն ու Մեծ Վէղիրը  
ուղեկցեցան մինչ ի բիւրպէն այսինքն ի գերեզ-  
մանն , յորում Սէլիմ սկսի ամփափուէր : Անոր  
զրանն առջև ճամփին աւագ իմամը կայնած էր ճեռ-  
քը ուկեղին խնկանոցով մը : Խոկ ներքինեաց մա-  
տակարարը ժողովրդեան սոսկ կը ցրուէր , անկէ

ետքը ժողովուրդը ցրուեցաւ . և հետեւեալ օրը քա-  
ղաքն ուրախութեամբ լի էր՝ նոր փառիշահին դա-  
հակալութիւնը տօնախմբելով :

**Սուլթան Մահմատ Բ.** իւր պաշտօնեայներէն  
շրջասլատեալ՝ և սէրային աստիճանաւորներովն ու-  
բարձրագոյն պաշտօնեայներովն դէսլ յէյուս կեր-  
թար երկու կարգ շարուած Եէնիչէրեաց մէջէն անց-  
նելով , որոնք խորին և երկիւղած լութեամբ կեցեր  
էին , զոր այսպիսի պաշտօնական պարագայից մէջ  
սովորութիւնը կը պահանջէր :

Երկու աստիճանաւոր ձիաւորք անոր առջևէն  
կ'երթային՝ խրաքանչխրն իրենց ձեռացը մէջ կը-  
րելով կայսերական ականակապ սարրդը , զոր բար-  
ձողը ժողովրդեան դառնալով ի ղիմաց ինքնակալին  
զանոնք կ'ողջունէին : Թնթանօթներն ամեն կողմէ  
իմացուցին նոր Սուլթանին Մէհմէտ Բ . ի շիրիմն  
իջնելը , և քանի մը վայրկեան հոն աղօթելն : Յե-  
տոյ կրկին որոտացին թնթանօթը երբ Սուլթանը  
կյուսի մզկիթը մտաւ :

**Ըստ** սովորութեան պաշտօնեայք և զինուորք  
պարտին այսպիսի հանդէսներու մէջ անզէն ներկա-  
յանալ . իսկ Պայրագուարն իւր անուան սարսափն  
աւելցնելու նպատակաւ ուղեկցութեան մէջ 300 Աւ-  
պանիացի սպառազէն զինուորներով կ'երթար : Ինքն  
ալ իւր ձեռաց մէջ առբճանակ մը բռնած՝ կը ցուց-  
նէր թէ սրատրատ էր գործադրել խատիւ իւր  
բացարձակ իշխանութիւնը , զոր քիչ մ'առաջ ըն-

դունած էր : Շեյխ - Խոլամն՝ Էմիրներուն զվատորը ,  
Մւծ Վէզիրն և Եէնիչէրեաց Աղայն Օսմանաց  
թուրք Նորօնտիլ գահակալին մէջը կապելուն պէտ  
խայրի յիսուն ոչխար մորթուեցաւ ճամիկին պրոի գա-  
ւիթը , և ողեկցոթիւնը լութեամբ ճամիաց ելու-  
գէստ ի սէրայ՝ թնթանօթոց կրկին որսամամբը :

Պայրագտարն՝ որ մեծ վէզիրութեան պարտը .  
ըլն ստանձնած էր . անոր առաջին փոյթն եղաւ  
Առթանաց գահը ամրացունել բարեկարգ զօրաց  
հաստատոթեամբ : Ռուսաց զէմ ըրտծ արշաւա-  
նոց մէջ իմացած էր Եթէ որքան օդուտ կը քաղէ-  
ին թշնամիք իրենց զօրաց բարեկարգութեամբը ,  
Աւզելով փախչիլ այն դժուոլ խութին , որուն վը-  
րաց Սէլիմ խորասկեցաւ Եէնիչէրեաց տեղ նոր-  
դօրք կազմել ողելուն համար , որոշեց բարեկար-  
գել նոյն խել զԵէնիչէրիս , և թէ կամաց և թէ ըլո-  
նի զանոնք կոչել նախկին կանոնադրութեանց ճշ-  
ղիւ դործադրութեանը :

Բայց որովհետեւ զեղծմանց բարձումը սիտիխա-  
վանէր միանդամայն բոլոր ապօրինաւոր առանձնա-  
շնորհութիւնքն , որովք կ'ասլիէին օճացին բալոր  
պաշտօնեացք , ուզեց որ տակաւին այս բարեկարգու-  
թեան չի ձեռնարկած պետութեան բոլոր նախարա-  
րաց հաւանութիւնն սուսաց . և զայն վաւերացնէ-  
կրօնից և օրինաց դիսաւորին վճռովք : Այդ մայ-  
րաբազուքին մէջ արտաքոյ կարդի նախարարաց ժո-  
ղով մը դաւարեց , որ նու հրաւիրուեցան ամէն

դաւառաց Երևանկալներն որոնք սպարտաւորեալ էին  
ներկաց գումարի անձամբ կամ լիազօր երեսիոխան,  
ներով :

**Մեծ Ահեղիրը Ներկայանուրավ ժողովոյն՝ խնդրեց**  
**Հետեւեալ առաջարկութեանց հաւանութիւնը .**

**Արցիկոհի Եղինիշերնաց պաշտօններն առակով վա-**  
**ճառեցր :**

**Ամորի զինուորք զօրանոցները կենան և երբ**  
**պաշտօնի մէջ չեն . բոշակ չառնեն :**

**Թոշակի տոմակաց վաճառման դադարումը և բո-**  
**շակաւոր պաշտօնագերժ անձանց ցուցակին վերաբրե-**  
**նուրիւնը :**

**Եկեմին Սուլթան Ահրությանաց զինուորաց հետազա-  
դորնան և հրահանգաց վերաբերեալ կարգադրութեանց  
վերահաստատութիւնը :**

**Պետութեան բոլոր զորաց հրամայուի որ անմիջա-  
պէս ընդունին Երրորդական զենքերն և զինուորական  
կարգադրութիւնքը :**

**Փաշոյներն Պայտագուարէն ոչ նուազ մափա-  
քելով Եղինիշերեաց բոնութենէն ազատիլն , անմի-  
ջապէս հաւանութիւն տուխն Եսանդեամբ այն ա-  
ռաջարկութեանց ընդունելութեան . և նոր Շէյխ-  
իալանն իւր պաշտօնն առաստամբութեան սպարտա-  
կան բլլուրվ՝ ֆէրվայով վուերացոց այս առաջար-  
կութիւնքը :**

**Եթէ Պայտագուարն այնքան հշանառ անձանց  
հաւանութենէն օգուտ քաղելով՝ չարունակէ՛ իւր**

գործը, զոր ցարդ իւր խոհեմութեամբը ցոյց տը-  
 ւաւ, անտարակոյս պիտի սլահալանէր ղալետութիւնն  
 այն բոլոր թշուառութիւններէն, որոնք այն ատենէն  
 ի վեր կը ճնշէին զայն, և զինուորական և վարչական  
 բարեկարդութիւնն առանց նոր արիւնհեղութեան.  
 պիտի հաստատուէր : Սակայն այս զինուորականը  
 որ աննշան դիրքէ մը բարձրացած էր, ուրիշ ձիրք  
 մը չունէր, այլ յամառութիւն, որով քիչ մը  
 ետքն արհամարհեց ամէն խորհուրդ : Գոռողու-  
 թեամբ արբեցեալ և զինքն ամէն յանդիմանութե-  
 նէ վեր կործելով՝ թէ իւր բարեկամներուն և թէ  
 թշնամիններուն վրայ իւր արտառոց վճիռներուն բը-  
 նութեամբը կը ծանրանար . և որովհետեւ իւր հարըս-  
 տութիւնքը չէին բաւեր իւր կենաց անսանձ սլեր-  
 ճութեանցը, սկսաւ վերանորոգել այն հարստահա-  
 րութիւնքն ու յափշտակութիւնքը, զոր իւր նա-  
 խորդները կը զործէին : Իւդիմայք վախնալով նորա-  
 անյագ փառասիրութենէն, որով բացայսյոտ կըս-  
 պսոնար ճամիններուն դանձերը իւրացունելու, մի-  
 ացան արդէն ըմբուտանալու վրայ եղող Եէնիշէր-  
 եաց հետ, և կ . Պօլոյ բոլոր ժողովուրդը դժկա-  
 մակելով այս անյագ և գողանաբարոյ տիրոջ դէմ-  
 իր նախորդ բոնաւորներուն կը փափաքէր, և կը  
 մասնակցէր ատելութեան զգացման, զոր Պայ-  
 տղտարն ամենուն կաղղէր : Այս միջոցիս Պայ-  
 րագտարն ինքզինքը զեղխութեան տուած ըլլալով՝  
 Այմեններուն բարեկարդութիւնը դանց ըրտւ, զոր

ինը Սէլիմայ Նիզամը-ջէտիտ զինուորաց հետ դասած էր : Զօրքն ալ կանոնաւոր թոշակ չառնելուն պատճառաւ երթալով մայրաքաղաքիս ամբոխէն կը լրանար

Մեծ վէզիրին թշնամիներն այն ատենէն ի վեր անոր զօրութիւնը տկարացունելու ձեռք զարկին . և ուղելով կ . Պօլսէն հեռացունել իր հետ բերած գաւառական զօրքերը , որոց զօրութեանը վլոյ կը յենուր , դրդեցին Այան անուն հռչակաւոր մողա աւսզակապետը , որ Ֆիլիպէի կառավարիչն էր , Ռուսմաւդ յարձակի և սպառնայ նոյն գաւառին մայրաքաղաքին : Մինչդեռ Պայրագտարն իւր տեղակալներուն նորանոր զօրքեր կը դրկէր , Եէնիչէրիք և իւշէմայք լոիկ նորա կործանումը կը նիւթէին . յարմար ստթի մը սպասելով որպէս զի ազատին այսպիսի վտանգաւոր թշնամիէ մը :

Մուստաֆա Պայրագտարին վէզիրութեան երբորդ ամիսն էր , յորում՝ Նէճիալ իւր շուրջն անցածներուն բոլորովին օտար՝ միայն մէկ մտածմունք մ'ունէր , այս էր Սմբ Օսմանսյ և Շէրմինիա առևանգողաց հետազօտութիւնը : Քաղըին բոլոր անկիւնները խուզարկեց , բայց բան մը չը կրցաւ շահիլ , և համբերեց մինչեւ ցարդ իւր վրէժխնդրութեան ծարաւին լկանացը , սակայն այժմ տեղի տալ սկսաւ , և ունեցած ցաւալի յոյսն ալ կորուսնելու վրայ էր . բայց յանկարծ իրիկուն մը Սէֆէր անոր խուցը մտնելով գոչեց :

— Հետո եկուր, Նէմիսլ, հետո եկուր . Ամբաշանայ տպաստարանը կտայ :

Նէմիսլ յափշտակեց ղէնքերը , շտագաւ անդուղէն վար իջաւ և շուտով ձին պատրաստելով Աէֆէրի հետ մէկտեղ փոյլուկի նման Ստանակովի ամօյի փողոյներէն անցաւ :

— Ո՞ւր կը վաղենք , ո՞ւր կերթանք հարցուց Նէմիսլ Աէֆէրի :

— Ի Ռումէլի-Հիսար , սրտատօխանեց Աէֆէր . և ուրիշ բան մը չըսելով նաւահանգստէն անցան , և Քեաղըտ - Խանէի բլուրներու վրայէն ժամ մը ճամփարդութենէ յետոյ հեւալով հասան Պէպէրի ծոցին եղերքը :

Այս դեղը մտնելով և բռնական ատեն Ալտափրի Եւրոպական ափանցք վրայէն երթալով , աչքերնին միշտ սեւեռած ունէին զէտ իրենց ճամփռն վախճանը , յորմէ փոքրիկ ծոց մը կը զատէր զիրենք , և որուն վերերը կը բարձրանար Ռումէլի-Հիսար կոչուած բերգը :

Լուսինը Մուհամմէտ Բ . Ի շէնքին սոլիտակ և ամուր աշտարակներն ու բերդերը անզրադարձ ցուցմանը կը լուսաւորէր , որոնք հսկայական սանդալոց նման զէտի ծովեզքը կ'իջնեն : Մթաղին նոճիստան մը Թօրքական շիրփմները ծածկելով կը սլարփակէր Եէնիչէրեաց այս բանով , միայն թնթանօթի մը որոտմունքը կ'ընդմիջէր անոր ուղարկյալ լութիւնը , որ ատեն անոր մէջ բանտար-

կերոց մէկուն մահուան դատակնիքը կը տրուէր :

Այս բերդերուն ստօրտառը Վասիլորն միօրինակ ալեաց ծփմամբ հոսելով՝ որ կը նմանի եռացող ջուրին խօխոջիցն, կը վարէ կը տանի ի ծով դատապարտելոց դիտեներն պարկերու մէջ կարուած, որոց ոտքերէն մէկ մէկ գունտ կապուած է :

Սէֆէրի Մեծ Վէղիրին քով ոնեցած տառի ձանին պատճառաւն բերդին դոներն անմիջակէ ո իրեն դէմ բացուեցան, թէև ժամանակն ուշ էր : Բանապաղետներուն մին ծխալամորջը ճեռքը թւղթէ լսալոերի մը մէջ բարակ մում մը տնկած՝ վահաց տառջնորդել զօտարականներն օրուզպիրի խոհ հարարապետին բանաը :

Այի Օոման վսիաթի մը վրայ տօքածուած և քարձի տեղ գլխուն տակ խոշոր քար մունենու լով ի խոր քոմ կը խորդոր երբ իր բանախն դոները բացուեցան :

— Ո՞հ, հրաշք, ըստ Նէմիող, կորելի՞ է որ այսպիսի յանցանիք մը անխոռով թողու զայն գործողն : Զինուորը ոտքովը մշտեց բանաբարկելոյն և խմացուց անոր որ կուղեն իրեն հետ տեսնուիլ :

Դեռ արելը ծաղելու շատ կուզէ, ըստ խոհարապետան, դէսլ ի սրտին կողմը զտոնու լով, վասնդի ճրագին լոյսը տչքերը շլցուց : Արովչեաւ վճիռը զիս դատապարտած է վաղը առուօտեան աղօթէն ետքը մեռնիլ, թուղ որիմն համոզիսաւ քնանամ վերջին գիշերու :

— Պատասխանէ՛ թշուառական, զոչեց Ահանգիսլ՝ զԱմի Օսման սլատին միացնող երկաթէ օղակին յափշտակելով .

— Պատօն ես, դուն, պատասխանեց ուստան՝ հանգիստ նստելու համար շղթային օղակը քաշելով, փա՛ռք Աստուծոյ, շատոնցմէ ի վեր քեզ կըսալասէի :

— Եւ կարելի՞ է որ փափաքիս իմ ներկայութեանս՝ հազիւ իւր զայրոյթը զսպելով :

— Եւ ի՞նչու չէ .

— Չես անգիտանար անշուշտ, որ անիշխանութեան ատեն ես սլարտաւոր էի սլատժել քու յանցանքդ :

— Մեծ յանցանք ստուգիւ անհաւատի մահը, կրկնեց Ամի Օսման՝ այնսլիսի ծիծաղով մը, որուն արձագանգ տուին բանտին կամարները :

— Այն օրիորդն ի՞նչ ըրիր, դահիճ, հարցուց Ահանգիսլ արտասուալից :

— Այն օրիո՞րդը .

— Այո՛ . . . սլատասխանէ . . . կը հասկնամ, թշուառական . . . մեռա՛ւ . . . ան ալ ծերունիին պէս մեռա՛ւ .

— Ասի գաղտնիք մ'է սլատասխանեց Ամի-Օսման, զոր միայն ես և Աստուած դիտէ .

— Բայց ես, ես խոստովանիլ սլիտի տամքեզ .

— Ո՛րեմն զիտցի՛ր, տղեկ, զիտցի՛ր որ ոչ

առանջանք և ոչ սակառնալիք կրցան ցարդ այս  
դաշտնիքն իմ բերնէս խլելու։ Բայց և այնովէս  
եթէ ուզէի . . . .

— Լմեցուր . . . . ինչ . . . .

— Այն անհաւատ աղջիկն ուրեմն շատ կը սի-  
րէր զբեզ, հէ՛ .

— Գիտես, թշուառական որ իմ կեանքս ան-  
գամ կուտայի զանի փրկելու համար .

— Եւ ինչո՞ւ կուղէիր զայն, սիրուհի՞դ էր :

— Վկաց կը կոչեմ զԱստուած . կրկնեց Նէ-  
ճիալ, որ անոր հետ լծակցելու օրս իմ կենացս ա-  
մենէն երջանիկ օրերէն մէկը սլինի համարէի :

— Կը ցաւիմ, ըստ Ալի-Օսման, սակայն ա-  
նոր հօրեղբայրն իմ արեանս չը դթաց, ինչո՞ւ ես  
զթամ իրենին . . . .

— Ա՛հ, սպաննեցի՛ր, անիծա՛ծ, գոչեց Նէճիալ  
մոլեգնեալ :

— Թերես, ինչօյէս կուզես այնպէս համարէ :

— Ա՛հ, ասոր մինակ կը ցաւիմ, կրկնեց Նէ-  
ճիալ ակոաները կճրտելով, որ չեմ կրնար զբեզիմ  
ձեռքովս սպաննելու :

— Մաղթանքդ համոյ է Աստուծոյ, և ըստ ա-  
մենայնի արժանի քու տիրոջդ, Մեծ Վէզիրին, որ  
ատենով զբեզ իմ խնամոցս յանձնեց, երբ ինքն  
ատենով մեր գնդին մէջ զրօշակի սլաշտօն կը վա-  
րէր : Զեմ գիտէր թէ երկրիս որ կողմէն գտաւ  
սյդ տղան և ինձ յանձնեց . սակայն ինձ հաւատա-

Քի կ'երեխի թէ գուն ոտտանայի մարմարացեալ որդին ես. խակ Վէղիրը դժոխոց մէկ ծակէն փախած անօր տրբանեակներէն մին է :

— Ուրեմն բան մը չհ՞ս խոստովանիր, ընդմիշեց Աէճիոլ .

— Թուրես . . . . .

— Շարտնակիէ ուրեմն և լոեմ ,

— Քեզի հետ մինակ խօսակցիլ կուղեմ , բառ խոհարարակեալք կախացոկ մը երիտասարդին ու կանջն ի վայր փափառլով , և կառկածոտ նայուածք մը նետելով միւռ ներկայ պանուողոց վրայ ,

— Մինուկ ա՞յս , հարցուց Աէճիոլ .

Ազաշեց Ուժիքին ու որ զինքը վայրիկ մը բանառորկելոյն հետ ստանձին թողու : Զինուորն իր լուսուերը սրտոէն վար կախեց . ու յբապուզը վերը տին լեցնելէն ու վառելէն յետոյ Մեծ Վէղիրի ոլոշտօնակալին ետեէն դուրս ելու .

— Հիմու հստ միտինուկ երկուքնիս ենք , բառ անոր Աէճիոլ . ըսէ , ի՞նչ ըսիր զօրիորդը . մեոցուցի՞ր զայն .

— Ա՞չ :

— Գեռ կապրիէ ուրեմն , սրատախանեց երիտասարդին ուրախութենէն այլ յոյլմէ լեալ .

Սակայն Եէնիչէրիին ձակատը տիսրած տեսնելով , վախցու որ չ'ըսլոց թէ նա իր սրտախանը չորաչար ըմբռնած ըլլոյ .

— Յանուն Աստուծոյ , բառ անոր Աէճիոլ խը-

զէ ալ զիս սպաննող ըստթեան կառլը՝ և հաւատու  
որ իմ կետնքս քու ըսելիք խօսքերէդ կա-  
խում ունի :

— Գիտե՞ս, անշուշտ ըստ խոհարարակետը թէ  
ինչու համար դատապարտեցի Մալթայի սապետն,  
որ աղջկանո յուստիադութեանն ու ցաւագին մահ-  
ուանը սլատմառ եղաւ :

— Գիտեմ, ըստ Աէծիու շփոթելով մը .

— Խեցիք ալ անշուշտ թէ մեր օրդայէն վեց  
կորիճ հաւատարիմ բարեկամներ տոնելով զիշե-  
քանց իմ Այիշէիս սպանչին տոնը մտանք ու զին-  
քըն սպանմելին ու տունն ալ ոյրելէն վերջն իր եզ-  
րօրորդին ալ տոեւանգելով մեր Հարեմը բերինք :

— Թշուառական, զոչեց Աէծիու, ստափիկ զոյ-  
րացած :

— Բայց հանդարտ կերպով, կրկնեց ծեր Եէնի-  
չէրին մտիկ ըրէ պրատմաւթիւնս՝ զոր սյնչափ հետա-  
քըրքիք ես զիտելու . լմոցնելիս ետքը ազտոտ ես ու-  
զածիդ չափ զայրանաղու և հոյժոցելու . Վերջապէս  
երխատարդուհին բերի իմ տունս, ար ինձ կ'ըս-  
տառէր կին մը . զոր դան կը ճանչես . և որն ու-  
ինչ պակաս չ'առէր . քու սիրած երխատարդուհիդ .

— Եըլլըզը .

— Այո՛, նոյն ինքն Եըլլըզը . որան եաւէն  
կ'երթար սպասուհի մը , որ կեալուրներուն լեզուն  
կը հասկնար . ասոր միջոցաւ կրցոնք սապետին եղ-  
քօրորդոյն հետ խօսքի մտնել . առաջին անգամ ա-

նոր բերնէն նզովքներ ու գանգտուննը լսեցի . և  
եթէ յուսահատութենէ դրդեալ իր գեղեցիկ խօսքն-  
րուն հաւատք ընծայէի , ինքզինքս անողոքելի վի-  
շապ մը սկիտի համարէի այս ամենանուիրական պար-  
տուցս կատարմանն համար , պարտք մը զոր կրօնքն  
ու խիոլը կը դնեն զրաս . սակայն ես իմ անմեղու-  
թեամբս ու արդարութեամբս հանգստացած՝ թողու-  
ցի որ իր կակծանաց հեղեղներն անցնին , և յետոյ  
խմացուցի իրեն որ ի շնորհս «Աճիսլի դինքը դատա-  
պարտելու շէի իւր հօրեղբօրը բախտին , ըսելով մի-  
անգամայն իրեն թէ նոյն օրը ի Պարսկաստան գը-  
նացող գերեվաճառի մը ձեռքն յանձնելու գիտառ-  
ութիւնն ունիմ :

Բայց նա սկստաւսխանեց . «Արէժինդրութիւնդ  
կատարեալ ըրէ . քան զանսլատութիւն նախապա-  
տիւ կ ընտրեմ զ մահ» , և իր քնրուշ ու սպիտակ  
ձեռքերովը կուզէր սուրս յափշտակել , և առջևս ի  
ծունդ իջած կը պաղստէր ինձ արտասուալից որ  
դինքը մեռցնեմ : Ես ալ իրեն դաղկահար դէմքին ու  
գողղոջուն բաղկաց նայելով՝ որ յուսահատութեան  
հրեշտակի մը կը նմանէր , աղջկանս սկատկերը միտ-  
քըս ինկաւ . և յետոյ արտասուելով ըսի ինքնիրենս  
«Իմ Ս.Ալիշէ՛ս ալ սյսուէս կըսկաղատէր զինքն յափշտա-  
կողին , այսալէ՛ս կը համբուրէր անոր ծունկերն , այլ  
անիծածը չլսեց անոր» : Այս անազորոյն մահուսն  
գառն յիշատակը եռանդս վառեց , և հասկցուց որ  
երիտասարդուհւոյն սրստիւը պահստանելովս իրեն

մեծ շնորհ մ'ըրտծ պիտի ըլլայի : Զեռքէն դինքն  
յափշտակելով ըսի անոր , «աղջկանս արիւնը ՀՅ  
գնուիր : Աղջկանս մահուան փոխարէնը կուզեմ .  
մտածէ և որոշէ՝ Կամ գերի պիտի ծախուիս և  
կամ պիտի մեռնիս անմիջասլէս » : Որոշեցի , ըստ  
ինձ և բացաւ իր կուրծքը .

— Մեօիր , ուրեմն կը գոչէր Վահիր-Պէյէ  
կինը . նորա զլխուն մազերէն քաշելով , և սուրն  
անոր գլխէն վեր բարձրացնելով :

— Վայ ինձ , գոչեց Նէճիակ ձեռքերովս երեսը  
ծածկելով ,

— Դեռ չամբողջացուցի պատմոթիւնս , շարու-  
նակեց խոհարարակետը , մինչդեռ ասպետին եղա-  
քօրորդին կը ջանար սուրը իր հակառակորդ կնոջ  
ձեռքէն յափշտակել , մետաքսեայ կանաչաղոյն կապ-  
իլը պարանոցէն քակուեցաւ ու ոտիցս առջեւ ընկաւ .

— Աս ի՞նչ է , գոչեցի , և հեռացնելով անկէ-  
երլուղը . անհաւատուհայն վղէն ինկած կապն  
առի .

Ճանչեցի խոկոյն որ Մէրբէի նուիրական քողի  
մը մէկ կոռորն էր , զոր ո խոտաւորք սուրբ քաղ-  
քէն կը բերեն .

— Այս կապը մայրս կապած է վիզս , պա-  
տասխանեց օրիորդը խորին հառաջանքով մը , մայ-  
րըս՝ որ ինչպէս կըսեն՝ զիս ծնած ատեն մեռեր  
է :

Քակեցի սրբազան ծրարն և ործաթեայ մա-

տանիի մը կէսը գտայ . ասիրայ տեսածխ պէս դալ . կահարեցայ և կարծես թէ խորին ասլշոթեան մէջ բնկայ . քիչ մ'ետքն ոթափելով հանեցի զօտիկս մատանիին միւս կէսն ալ , զոր երկիւղածութեամբ կը սրահէի քառկիս մէջ : Այս երկու կտորները իւրաք հետ միացնելով ամբողջոցոցին զոյն մատանին , զոր մատս կը կրէի այն օրը երբ Վալթայի ծովասպատակները մեր նառակն իսքէնաէրունի մօտ իւր ճամբէն արգիլեցին : Այնա երեսկայել ուրախութիւնս , Նէմիալ , Այիշէկս բաժնուած վացրկենիս ես իմ ակրայներովս կոտրեցի այն մատնին , ու անոր կէսն ես առի կէսն ալ Աշջիանս առի որպէս զի ատենով մեր վերառին զիրար ճանչնալու նշան մը ըլլոց . Ասպետի եղրօրորդին ըստածը իմ Այիշէիս աղջիկն է եղեր , Արիւնս վերըստին ինձ կը յանձնուի :

— Փառք քեզ Աստուած իմ , զոչեց Նէմիալ ծնրադրելով և ձեռքերը դէսլի երկինք բարձրացրնելով :

— Խմացա՞ր հիմոյ թէ ինչո՞ւ համար պահութեցոյ , կրկնեց Ամի-Օսման . եթէ այս չ'ըլլար , դահճին երկայն ժամանակ զիս խուզարկելու աշխատութիւն չէի տար : Արդ Այիշէիս աղջիկը դտայ . մէկ քանի օր ալ կուզէի վայելել այն բարեբարազդութիւնը , զոր Աստուած այնչափ ուշ սրազիւց :

Եւլողի նախանձայոգութիւնը քնացուցի և անմիջապէս տունս ձգելով դէսլի որիշ ճանապարհ

մը ուղղուեցայ, Թրբական կելպարանքով ծալտելով  
աղջիկն ալ, զոր Նախախնամութիւնն ինձ պարգև-  
ւեց. բայց ճակատագրիս մատեանը վերջին էջին կը-  
մօտենար : Եթեր օրէ ի վեր ըստ պահանջման ան-  
հաւառ զեսարաններուն, որոնք մեր երկշտո պաշտօն-  
եայներուն օրէնք կաւառն, ճամբան ձերբակալ ե-  
ղայ, և օրդայի դատաստորին առջև սրաբուեցայ, որն  
որ մեծ ցաւով զիս մուհուան դատապարտեց, վասն  
զիս ոց հրամանն առած էր Բ. Պոնէն : Այսպակը  
ճառագայթածին ալէտ դատավճիռը սիխափ կատարուի :  
Զքեզ տեսնելուս համար խիստ որբախ եմ, Նէ-  
միս, բովս սիխափ կենաս մինչև այն վերջին վոյր-  
կենին, որ կարծեմ մօտեցած է արդէն. երբ մարմի-  
նքս պարկի մը կարաւած՝ նետուի ի կեր Վոսփորի  
ձկանց, զուն անցիր զնա՛ դէպի Մեծ Վէզիրի  
ոլորտէզը տանող ճանապարհը և հոն մէկ անկիւն  
մը եղաղ Հիսէին Աղայի տունը հարցուր, այն տանն  
իմն է, և հոն սիխափ զանես որեանս արխանը՝ իմ  
սիրելի Աղջկանս աղջիկը :

Թո՛ղ քա ամուսինդ ըլլայ, որովհետեւ զանի շատ  
կը սիրես, ըսէ որ իմ առ ինքն ունեցած վերջին  
վասիաբա այնէ որ, օր մը ճշմարփաւ հաւատքին դառ-  
նոց .

Եւ ես կերթամ իրեն սարսաւելու երանելեաց զը-  
րախտը, ուր արդէն իմ դիրքս որոշուած է :

— Ամի-Օսման, բնակիջեց Նէմիս, եթէ Բեր-  
դապետը քու մահուան պայմանագամը հաւանի յո-

պաղեցնելու, Մեծ Վէղիրէն քեզ համար շնորհք  
կը խնդրեմ,

— Այն մտանիչէն բան մը չեմ ուղեր, սլա-  
սասխանեց ուստան ծանրութեամբ, Պայրագտարը  
քիչ ատենէն ինձ սլիտի հետեւի ի զերեղման, որով  
հետեւ ժողովուրդն իրեն դէմ սլիտի ասլստամբի և  
նորա մարմինդ յօշյօշ պատռելով սլիտի ցրուէ, ինչ-  
ով քամին կը ցրուէ դիոշին:

— Վնաս չունի, կըսէր Նէճիալ, սլարոքս սլիտի  
կատարեմ զքեզ վրկելու փորձ փորձելով.

— Աստուած մեծ է, կը մրմնջէր ծերունի Եէ-  
նիչէրին, կրկին փսխաթին վրայ բաղմելով, մինակ  
Նա դիտէ զասլագոյն:

•Քիչ մ'ետքը միւեղղինին ձայնը մինարէն հնչեց,  
Ռումէլի - Հիսարի դլխաւորը մերժելով յասլաղեցը-  
նելու խնդիրը, Ամի - Օսմանին բանտը մտաւ ընկե-  
րութեամբ Նէճիալոց ու Աէֆէրի. անոնց ետեէն  
կուգային դահիճներն ալ, որոնք իրենց զգեստին  
ներքե կը կրէին խեղդերը.

— Պատրաստ ես, հարցուց Բերդապետը դոհ-  
ձին,

— Քիչ մը ջուրով լուսուիմ և երկու վայր-  
կեան աղօթեմ, այս շնորհը միայն կը խնդրեմ,  
պատասխանեց խոհարարապետը. բացին դինքը սլը-  
լող անուրը և ջուրի սափորը բերին. ծեր Եէնի-  
չէրին բարեսլաշտութեամբ իր թեղանիքը մինչեւ որ-  
մուկը ոօթթելով, կրօնական լուսացման համար մէկ

քանի խորհրդաւոր խօսքեր մրմնջեց . և փախ-  
թին վրայ ի ծռւնք իջնելով դէմքը դէպ ի սուրբ քա-  
ղաքը դարձոց ու շամ ձայնով ազօթեց : Յետոյ  
անխոռով ոտքի ելնելով պարանոցն երկնցուց այն կե-  
նազրաւ խեղղին :

**Ա.յ** Եղբայրներ , պատժեցէք Միւոլիւման մը ,  
որ իր կրօնքին մէջ անյողղողդ հաւատք ունենալին  
դատ՝ ուրիշ յանցանք մ'ունեցած չէ . վաղը կը յու-  
սամ որ վրէժս սկսի առնուք . և մէկ քանի վայր-  
կենէն ետքը Ռումելի - Հիսարի կատաղի ալեաց մէջ  
նետուեցաւ պարկի մը մէջ կարուած , ուր սնղըն-  
գասոյզ անյոյտ եղաւ :

**Թափանօթն** բերդին սրատնէջներէն որոտալով ի-  
մայոց ժողովրդին որ Եէնիչէրի մ'ալ մեռաւ :

## ՀՐԴԵՀ

Թողունք զՆէմիալ որ Ռումէլի - Հիսարէն ի Ա .  
Պօլիս իջնէ , և ըստ տեղեկութեանց Ալի - Օսմանին  
Հէրմինիայի հետքը խուզարկէ , մենք սնայնինք պատ-  
մելու մայրաքաղաքիս մէջ պատրաստուած սոսկալի-  
անցքերը , որք արհաւրեաց մէջ պիտի ձգէին բոլոր  
բնակիչը :

Եէնի - Ճամիի արքայական աղօթարանին դրսի-  
բակը առաւօտէն ի վեր անթիւ ժողովուրդներով  
լցուած էր , որովհետեւ փաղարի օր էր : Այն ըն-  
դարձակ հրապարակը կը հովանաւորեն նոմիքն ու-  
լայնտերենիք , որոց ներքեւ շաբաթն անգամ մը ա-  
ռուծախ կ'ըլլայ . և քաղքին ամեն կողմէն գնողը  
և վաճառողը հոն կը հաւքուին .

— Ողջոյն , Մէհմէտ Սլո , ըստ Եէնիչէրի մը  
վոճառականին մէկուն , որ ինքն ալ սնոր պէս  
օնագի խոշոր սարլու գլխուն վրայ Էկրելով նըս-  
տած էր փսխաթի մը վրայ՝ փոքրիկ սեղանի մ'առջե ,  
որուն վրայ խմորեղէններու կոյտ մը դիզուած էր :

— Սստուած փրկէ մեր գնդերը անհաւատ Վէ-  
զիրին ճիրաններէն , սլատասխանեց շաքարագործ  
Մէհմէտն . աջը դէպի շրթունքն ու ճակատը տա-  
նելով , այս առաւօտ ուրիշ դատապարտութիւն  
մ'ալ կատարուեցաւ , սիրելիդ իմ Եռւսուֆ , ուրիշ

Եւնիչէրի մ'ալ Վոսփորի ալեաց մէջ նետուեցաւ :

— Ո՞վ է այս նոր զոհը :

— Սմբ-Օսմանը, օրուզպիրեանց խոհարարաւ սկետը պատասխանեց ցած ձայնով նոյն գնդին հետեւող մրգավաճառ մը՝ գլուխն ասոնց դարձնելով, որուն շապիկը իր մազուտ կուրծքին վրայ արծաթէ խարսխաւ մը՝ կ'ամփոփուէր .

— Խոհարարապե՛տը . ինչ ամբարշտութիւն, մրմնջեց Փիլրտ-Եռոտով . ալ նուիրական բան մը չունի՞ ուրեմն այս ուրացեալը . եթէ թողունք Պայրագուարն որ ուղածին համեմատ իւր զոհէրը շարունակէ և աղատ գործէ, մեր փառաւոր կոթսաներուն և ոչ մէկը զերծ պիտի մնայ անոր լրութենէն :

— Յանցանքը ձերն է, ըստ ներկայ եղող ուրիշ անձ մը, որ նոր ձերմակ վերարկու մը և յերշիշներու թաղեաց զլսարկ մը կը կրէր գլուխը, դուք զձե՛զ ամբաստանելու էք, վասնդի չէք համարձակիր թշնամոյն յաղթելու :

— Սէլիմայ կուսակիցներուն կոտորածին ատեն զայն փորձեցինք, ըարեկամ, կրկնեց Փիլրտ-Եռոտով՝ իւր գոտիին մէջ զետեղուած արծաթեայ ասորմանակներուն յեցուցած իւր արմուկը : Իսկ հիմայ դարձեալ բա՛ւ է որ Խոկմոյք զմեղ չը մատնեն . . .

Պատրաստ են ձեզ օդնելու, ընդմիջեց տէրմիկը ցած ձայնով, արքայութեան արժանի չ'ըլլամ եւ

թէ սուտ կըսեմ . ձեր Աշոն պատրաստ է յօժաւ բակամ վախճան տալ այն բռնոթեան որոն ծանը բռնոթեան ներքեւ ամէնքս ալ կը հեծենք :

— Եւ ինչո՞ւ չը յայտնէր այս :

— Թո՛ղ նախ ասիթը տրուի , թո՛ղ անգամ մը օրդաները սլալատին առջեւ սպասազին ժողովին , մէկ տեղ առնելով իրենց կոմիտաներն՝ առաջնորդեալ իրենց պատկառելի խոհարարակետներէն ու կամազներէն . արիաբար թող յայտնեն իրենց կամքը , իսկոյն ոչ միայն Աղան և Խոլէմայից գունդը , այլ բոլոր Միւսլիման ժողովուրդը մեղի հետ սփոտի յարձակի բռնաւորը զարնելու տառալելու համար . Հաճի—Պէկիթաշն , իմ ու ձեր սուրբ սրաշտանը զիս յանդունդս գժոխոց գահավիժէ եթէ իրերը գուշակածիս ալէս չելնեն :

— Բայց անիծած սէյմէներն իրենց սուխուոր հրացաններովը խմբովին սիխոի շրջապատեն Պայրագտարն՝ ըստ մրգավաճառ Մուստաֆան :

— Ակյմէներն քաղրին մէջ ցրուած են , սրատասխանեց տէրվիշը , և մենք մեր զէնքերովն ու հրդեհին ջահերովը չենք թողոր զանոնք որ հաւքուին :

Կոր բա՞ն մ'է սախկոյ . կորի՞ճ Եէնիշէրիներ . կը վեհերոտի՞ք , համբերեցէ՞ք ուրեմն որ չարաչար սանջուիք , եթէ ոչ ձեր փառաւոր անուանը համեմատ վարուեցէք . մզկիթին դրափ բակին ծայրէն աղմուկ մը լսուեցաւ , որուն անմիջապէս խոր լւ .

ութիւն մը յաջորդեց , յանկարծ 200 սպառազէն  
Ալպանիաց ոց գունդ մ'երկացաւ , որոց գլուխ կե-  
ցած էր լոխատակիր խմբակ մը . որտնք խկոյն ի-  
րենց զգեստէն հասկցուեցան թէ մեծ վեղիրին չա-  
փուշներն էին :

Պայրազտարը շրեղապէս թամբած զեղեցիկ ձիու-  
մը վրայ հեծած՝ իր զինուորներովն կը յառաջա-  
նար :

Ենիշէրիներն անոր սարրզը նշմօրածնուն պէս  
ամենքն ալ ահարեկ ու շփոթած իրարմէ զստուե-  
ցան . և խրաբանչիւր փերեղակ աճապարեց իր  
շարժական վաճառքին առջեւն իր տեղը բռնելու :

Մեծ վեղիրն իր պաշտօնին օլարտուցն համե-  
մուտ կուգար ըստ սովորութեան անձամբ սոուզելու  
թէ չափով ծախողները շինծու կշիռ կը գործա-  
ծե՞ն , և թէ կը սլահե՞ն այն օրինաւոր գինը զոր  
ք . զուոը որոշած էր սնննդեան ամենակարեւոր ըս-  
տառելեաց համար :

Մրգավաճառ Մուստաֆան դլիուն մինչեւ ոտքը  
կը դողդըզար , երբ մեծ վեղիրի լոխատակիրը . անոր  
կշիռը ծեռքերնին առած կը քննէին . և երբ խմացու-  
ցին թէ թաթերէն մէկը նենդեալ էր ներքեւ կա-  
պար դրուած ըլլալուն համար , մօրուքը կը փետ-  
տէր և ողորմելի կերպով գութ ու շնորհ կը խնդրէր:  
Ընդհատակը Պայրազտարն աչք մ'ընելուն պէս  
հանեցին անոր Ենիշէրական վաթսունկանգնեաց  
սարրզը ու դինքը տարին լոյնտերեիին տակ : Հոն

լախտակրաց գլխաւորը մուրճը ձեռքը՝ ստիպեց  
ԵԵՆԻՀԵՐԻՆ որ իր ոտից մատանց ծայրերուն վը-  
րայ կենայ, և ասանկով ականջը ծառին բունին  
գամեց : Պայրագտարն արհամարհելով անոր ող-  
բալի աղաղակներն ու հեծկլտանքը՝ մտրակեց ձին  
ու շարունակեց իր քննութիւնքը . երբոր շաքարավա-  
ճառ ՄԵՀՄԵԹԻՆ քով եկաւ, հարցուց անոր լախտակ-  
րաց գլխաւորը .

— Քանիի՞ կը ծախես շաքարեղէններդ :

— Երեսուն փարայի, պատասխանեց ՄԵՀՄԵԹ՝  
համարձակութեամբ :

Բայց այս անհաւատը կըսէ թէ երեք դրչի զը-  
ներ է պատասխանեց գլխաւորն՝ խեղճ հրէի մը ա-  
կանջէն քաշելով, որ լեզսսպատառ չէր գիտեր թէ  
ինչպէս ինքղինք արդարացունէ :

— Առաջ կըսէ, պատասխանեց քառասուն և  
չորրորդ օրդային երկրորդ աստվածաւորը :

— Վկայ ունիմ, էֆէնտի, ըստ հրեայն լոլով՝  
յանցաւոր ԵԵՆԻՀԵՐԻՆ ոտքն ընկնելով :

— Է՛հ, ըստ Պայրագտարն ուժգին ձայնով  
մը, երեսուն գաւաղան ոտքերուն :

— ԵԵՆԻՀԵՐԻ եմ, դոչեց շաքարագործը՝ կա-  
տաղաբար . օրէնք է որ մինակ ոսերուս զարնէք .  
բայց խօսքը դեռ չըլմնցուցած մեծ վեղիրի լախտա-  
կիւներն յերկիր թաւալեցին շաքարագործ ՄԵՀՄԵ-  
Թը, և ձեռքերն ալ կապեցին որսլիսղի կարենան

յաղթել անոր : Շուտ մը անոր մուճակներն հանեցին ու շուանով ոտքերը փայտի մը (1) վրայ սլրկեցին , երկու լախտակիրք ալ խեղճին սրունքները վեր կը բռնէին երբ անոնց գլխաւորը վճիռն անզըթաբար կը կատարէր :

**ՄԵԾ** վէպիրն իր դիտողոթիւնքը շարունակեց շուկային մէկ ծայրէն միւսը նոյն խստութիւնը բանեցունելով , յորում յաջորդաբար իւր արդարութեան յայտնի օրինակները կը թողուր : Երբ Պայրագտարն իրեններովը Եէնի-Ճամիկ դռնէն դուրս պիտի ելներ , որովհետև ժողովուրդը չէր կրցեր հասնիլ եկողներուն ճամբայ բանալու , լախտակիրք իրենց լախտերովը բոլոր հոն գտնուողները ցրուեցին . իսկ վիրաւորեալը անոնց հեռանալու ատեն Առլթանին մեծ պաշտօնէին երթաս բարեաւն անէծքներով ըսին :

**ՄԻՆՉԵռ** ժողովուրդը զայրացած մեծ վէպիրի գաղանային արդարութեան զոհ եղող խղճալեաց ետեի կողմն եղող սրճարանները կը դիմէր , և ապօտամբութեան արբանեակներն ալ այսպիսի դիպող ժամանակէ մ'օգուտ քաղելու նսկատակաւ կը գրդուէին զառանձնացեալ Եէնիչըիս և կը դրդէին զա-

(1) Տանջանաց այս հանգուցեալ դործին , որ ֆալագայ կ'ըսուի , սլատանեկաց՝ անուամբ միայն ծանօթ է , իսկ ծերունեաց՝ փորձով , որովհետև եթէ ոչ Պայրագտարէն և Եէնիչըիննըէն , անշուշտ դպրոցներու մէջ քան դԵէնիչըիս անգթաղոյն վարժուպետներու ձեռօք ճաշակն առած են :

նոնք որ սպառագինեալ իրենց Աղոյին բնուկարանը  
դիմեն . Պայտագտարն իր լոխտակիրներէն և Աղու-  
նխոցիներէն շրջասրտեալ հանգարաօրէն իր ասրա-  
րանքը կը մտնէր , բալրովին հոգ շը տանելով այն  
գոյրութիցն ու ցաւոցը զորս իւր ետին կը ձգէր :

Պայտագտարը մշամլրդ երթալով ու իր զինքե-  
րը վար դնելով առժային մէկ անկիւնը քաշվեցա-  
նատաւ ու միաւ իր նարկիղին քաշել . և հրամացեց  
որ Աէֆէրն իրեն ներկայանայ :

— Մօտեցիր , Աէֆէր , կը ալուր , իմ սպառաւոր-  
ներուս ամէնէն հաւատարիմը դուն ես . կուզեմ  
քու բերնէդ լաել թէ քաղրին մէջ վրաս ի՞նչ կը  
խօսին , Եէնիչէրիները զիս կընզովեն . աւելի՝ աղեկ ,  
ես արդէն զանոնք խոնարհեցնելու ոշնչացնելու և  
յուսահատեցնելու համար եկայ : Խոշիւններն ի ծա-  
ծուկ ինձ դէմ գաւաղրութիւններ կընեն . զանոնք  
խարազանով և օճազն ալ խեղդով ու սուրավ սկի-  
տի սպատժեմ : Քանի որ սյս գերագոյն իշխանու-  
թիւնն ի ձեռին ունիմ , կուզեմ որ ամէնքն ալ դո-  
զան իմ ակնարկէս . և Վտամալօի ժողովուրդն որ ե-  
րեկ յանդուդնէր , իմ սրոյս սրբավատիլին տակ  
գայ խոնարհի : Խեղճ ու տղէտ ժողովուրդը թա-  
գաւորաց արխագոյնն աղաննեց , թող հիմա իմ  
սուրերուս տակ սովոյ և մինչեւ իմ վերջին շուն-  
չըս թող տառապի չարչարանօք :

— Թշնամիներդ բազմաթիւ են , տէր իմ ,  
սպառախաննեց Աէֆէր . երբոր անոնց դէմ խառու-

թինդ կրկնապատկես, կրնոյ ըլլու որ զանձնք քեզ  
զի դէմ ապստամբեցնես : Ուսւածողի գուառին  
սրաշտանութեան սլէոյը խիստ չառ անօրացաց  
զօրացդ խոմբը, որու վրայ կրնոյիր վասահ ըլլու :  
Խոչեմութեամբ վարուած չենք ըլլար թէ որ Ալյո-  
մեններուն բարեկարդ խումբերը ապարանքիդ  
չորջը ժողովենք, որոնք տաղին անդին քաղրին  
արտադաններու զօրանոցներուն մէջ ցրուեալ են :

— Ենիչերիներն ինձ դէմ կոտասամբի՛ն,  
սրատասխանեց մեծ վեզերն ուսերն ամփափելով :  
Այս մօրուքիս վրայ կերդնում որ անկարելի է սցո-  
րաց ո՛չ . ո՛չ, մտքէդ անզամ մի անցներ եթէ առ-  
մենափոքք շարժում մշշնելու կարող սիտի ըլլան .  
կրնա՞ն երբէք համօրձակիւ այդ երկչուաները : Ա-  
մէն սրարագոյի մէջ իմ լոխտակիրներս բաւական  
են զանձնք ցրուելու :

— Բայց ժողովուրդին մէջ մեծ եռացում մը  
կ'երեի ըստ Աէֆեր, ըստծնուն նոյելով իւլէմա-  
ներն են որ սյս գրգիոը կը շոյեն :

Ապարանքիդ մէջ անդամ՝ ձեր դէմ կուսակ-  
ցութիւններ կաղմուած են . . . .

— Թէ Ենիչերիներն, թէ իւլէմայներն, թէ ժո-  
ղովուրդն, թէ արքունիքն և թէ նոյն ինքն Առլիմա-  
նըն, պատասխանեց հեղօրէն Պայտագարն . ա-  
մենքն աւ կ'արհամարհեմ, և անսոյ դառն կերսով  
սիտի ճանչցունեմ թէ ինէ զատ և ոչ մէկն իրա-  
ւունք անի հստ հրամացելու . յանուն Ամենակաղին

Աստուծոյ կ'երդնում . ինչ որ ըրի կրնամ ըրածները ալ ետ առնել . եթէ Մահմուտ ու Մուստաֆա անգամ պակսին , միթէ Գրըմի իշխանաց երակներուն մէջ Օսմանայ արխոնը չը հոսի՞ր . եթէ հարկը սլահանիջէ գահուն վրայ կը նստեցունեմ կիրայի Սէլիմ Խանը , եթէ ան ալ սպակսի , է՛հ , այն ասոեն իր զաւակներն ու եղբայրներն ողջ ըլլան : Անհոգ Եղիր , Սէֆէր , Խաղիֆայի սուրը Երքէք յաջորդէ չը պիտի զրկուի :

Մուստաֆա այս խօսքերը ծանրոթեամբ մ'ըսելով գետինը նետեց իւր նարկիլիին մարիխաճը և ներքինիները կոչելով դէպի հարէմ ուղղուեցաւ : Գրան վարագոյրը վերցնելով դարձաւ դէպի Սէֆէր ու ըստ :

— Այս գիշերուան աշխատանքներէն սլարտասեուլ՝ հանգիստ պիտի առնում : Ինչ որ ալ սպատահի , հիմակուրնէ բացարձակավէս արգելք կը դնեմ , որ չըդայ մէկն իմ հանգիստս խռովէ : Վեզ կը յանձնեմ մինչև այս երեկոյ ապարանքիս ապահովոթեանն հոկելու պաշտօնը :

Սէֆէր գլուխը ծոեց , բայց բեկեալ սրտով . վասնղի կը նախատեսէր այս անհոգութեան ու յիմարութեան մահածու հետեւանքները :

— Գոռողութիւնն այս մարդը կործանե՞ց , ըստ ինքնիրեն դառն ժայխոտով մը : Անշուշտ Աստուած զանի սպատել կուզէ . իրեն նմանել փափաքողաց օրինակ մը տալու համար յիմարեցուց հզօր

ու անյողդողդ ոգւոյ տէր մարդը : Ո՛հ , բաւական չե՞ն այն դժուարութիւնները որոնք ճշշեցին այս երկիրն , արդեօք . դատապարտուած ենք վերստին տեսնելու այն տեսարաններն , որոնք գահընկէց ըրին զԱռլիթան Սէլիմ :

Կանանց երգերուն և նուագարանաց ձայներն հեռուէն Սէֆէրի ականջին հասան , որոնք կ'իմաց ցունէին թէ Մէծ Վէղիրը մասնալով հասարակացին ու իր անձնական ապահովութիւնը՝ իւր հարեմին մէջ կը զբունուր :

Սէֆէր ուղելով տեղեկանալ թէ այս միջոցիս որշափ հաւանական էին իւր երկխաղներն , և ըստ այնքամ իւր պատասխանառութիւնը ապահովցունել , մարդ զրկեց որ երթան լրտեսեն Եէնիչէրիներուն շարժմունքներն : Արկած մարդիկը քիչ մ'ետքը սարսափիահար վերադառնալով խմացուցին որ կոթօսայներըն սկսան զօրանոցներէն դուրս հանուիլ , և ըստ պառազինեալ մարդերու անթիւ բազմութիւն մը Սղային բնակարանին առջև խոնեալ կեցած են , որոնք աղաղակիներով Պայրազտարի գլուխն ու Սութան Մահմուտի գահընկեցութիւնը կը սկահանջէին :

Սէֆէր անմիջապէս ծիսուոր մը զրկեց սկրայը , որոկէս զի սկսեալ ապատամբութեան լուրը տանի և օգնութիւն խնդրէ : Զըսպասելով խնդրուած օգնութեան հասնելուն , որշափ որ կրնար Մէծ Վէղիրի տալարանքը սկահպանող փոքրիկ բանակը կարգի գըրաւ , և շուղելով որ առանց ստիսլողական պատ-

Ճառի տոնակոխ ընէ խր տէրոջը պատուելիները և կը պատրաստուեր ինքն անձամբ հեռացունել առաջին յարձակումը :

Եհնիշերիք շուտ մ'երենաւ ոկտան ճանապարհին երկու կողմէն գտնող կտնդ կը յառաջանային, և իրենց սովորոթեանն համեմատ խորին բութիւն կը պահէին քաղաք առեննին :

Մեծ Աէզիթի ապարանքին քիչ հեռու կտնկ տուին . և որովհետեւ ապարանքին պատուհանները սրաշտպանող Աէյմէններուն դէմ ատրճանակ չըստար մլեցին, անոնք ալ ապատամբութեան նորատակը ըսւ հասկցած չըլլանուն չուզեցին. նոխ իրենք յարձակիլ : Բայց շուտով հասկցան նոցա դաւաղրութիւնը . սարսափմամբ դիտելով որ Եհնիշերիք պաշտպանէին այն ճամբայներն ուսնց մէջ տեղը կը գտնուէր Պայրագտարի ապարանքը, և կրակի կուտային դրացի տուները և որբան կրակը կը յառաջանար, իրենք ալ կը յառաջանային իրենց թըշնամոյն բնակարանը :

Աէֆէր զդալով մօտալուտ վտանգը, ապարանքին վրայ ելաւ որոկէոզի յարձակուլոց դիօրը քննէ . տեսու որ Պայրագտարի բնակարանին սպառնացող հրդեհին շրջանին ետե Եհնիշերեաց բաղմաթիւ օրդույներն երկրորդ շրջան մը ձեւցուցած էին, որոնք զհրդէհը կարծարծէին, և ոյս սպառաղինեաւ զօրաց և ահարկու խուժանին ետեին կուզար ժողովրդեան բաղմաթիւնը, որ կատաղի աղաղակներով Պայրագ-

տաղի և նորա բարեկամաց դէմ մահ կըսսպառնային ,  
ու կոտորածին և յափշտակութեան մասնակից ըլլաւ  
կուգէին : Ավելի անմիջապէս սրահն իջաւ՝ ուր Ալյ-  
մենները հաւքուած էին . և զէնք մը յափշտակելով  
հրամայեց որ յարձակումն սկսին : Եէնիչէրիք աւ  
անմիջապէս իրենց հրացաններովը պատասխանեցին  
և միւնոյն ընթացքով հրդեհին ետևէն յառաջ կը<sup>1</sup>  
խաղացին . և իրենց թանձրախիտ ու անթափանցե-  
լի գոնդերը պատռար կանգնեցին սրտահմամբ զի-  
րենք շրջապատող բոցերէն խուսափել կրցող թրշ-  
առառաց դէմ :

Յանկարծ Ավելի իր կեցած պատռհանէն ներս  
բաշուեցաւ և զալկահար ու խռովեցաց դեպի ի հա-  
րէմին դուռը վաղելով՝ սաստիկ կերպով զարթաւ  
հրացանով , ու բարձր ձայնով կոչեց Անձ Վէդիրն,  
վերջապէս դուռն իր ծխնիներէն կորպուելով ընկաւ  
և Պայրագտարն երևեցաւ , որ բարկոթենէն ու գի-  
նովոթենէն խելայեղ՝ դէպի ի դուռն եկաւ ճեռքն  
ոնելով արծաթէ գարապինան՝ որուն վրայ կը յե-  
նոր իր սասանեալ մարմինը :

— Ստրուկ , գոչեց , ի՞նչ բան համարձակու-  
թիւն տուաւ պատռէրս ունակովս ընելու :

— Մօտալուտ վտանգը . աէր իմ , պատասխա-  
նեց սէֆէր :

— Հիմա կը հասկնաս որ Ուսմանգի փառային  
տնհնաղանդ գտնուողը անպատիժ չը մնար , ըստ  
ու զէնքն ուղղեց իր հաւատարիմ բարեկամին կուր-

ծրին :

— Բայց այս դասը տարաժամ է, մրմնջեց Սէֆէր արիւն լուսյ կուրծքը ցոյց տալով . Եւ կոթնելով պատին հատկլեալ ճայնով յաւելցուց :

— Վիրաւորեցա՛յ, տէր իմ, Եէնիչէրիները . . . հրդեհը, խոյս տար, կաղաչեմ. եթէ ժամանակ ունիս . իսկ ես . . . կը մեռնիմ : Սէֆէր տաղալեցաւ ոտքերուն ներքեւ, անշարժ և մնաց . Այս արիւնաթաթախ զոհին տեսիլքն սթափեց Մեծ Վէզիրն իր գինովութենէն : Հրացաններուն անդադար ճայթիւններն . Եէնիչէրիներուն աղաղակները, հրդեհին ճարճատմունքն, որ արդէն մօտեցեր էր իր ապարանքին առաստաղին, հարէմի կանանց հեկեկալիր վայնասունքը, որոնք հերարձակ սէրամլրգը վազելով փախստեան ելք մը կը փնտռէին, անմիջապէս Մեծ Վէզիրի սրտին մէջ նախկին արիւթեան հուրը վառեցին, և իրեն զգալ տուին ըստառնացող վուանգը : Շուտ մը սէյմէններուն մէջ նետուեցաւ, որոնց կէսն արդէն սրակոտոր ու շընչասպառ գետին սիռուեր էին : Ողջ մնացողներն ալ մեռելոց դիակներն իրենց պատնէշ ըրած կը կռուէին :

— Մի վախնաք, գոչեց, Պայրագտարն, զարկէք : Մեր եղբայրակիցներն հիմա մեղ օգնութեան պիտի հասնին : Առլթանն իր գա՛հն անդամ վրտանգի մէջ կը ձգէ զիս փրկելու համար, որովհետեւ առանց ինձ ոչ փնչ է նա . իր վեհասկետութեան

նեցուկն ես եմ :

Եթէ Աստուած արդար է , Պայրագտարին ան-  
կումը չուղէր :

Մեծ Վէզիրն երևածին պէս Եէնիչէրիներուն  
աղաղակներն ու մոլեգնութիւնն ալ աւելի սաստ-  
կացան , և վերջապէս հրդեհին բոցերն ամենուրեք  
ապարանքը պաշարեցին : Աէյմէններն չ'ուզելով  
թշնամեաց ձեռքն ընկնիլ , քաջասրտութեամբ կը  
կոռէին , ու հետզհետէ կիյնային Եէնիչէրիներու-  
խումբերէն ու տուներէն ընկած կիսայրեաց սիւ-  
ներէն :

— Ծխոյ թանձրախիա ամսլ մը վերջապէս այս  
ահռելի տեսարանը ծածկեց . այս դժոխատեսիլ  
տեղւոյն արհաւրաց մէջ տակաւին վայրի գաղսնի  
մռնչմանց նման կը լսուէին Պայրագտարի անէծքներն  
զորս կը ժայթքէր ընդդէմ Սուլթանին , և մինչեւ  
իսկ ընդդէմ Աստուծոյ՝ զինքը լքանելուն համար :

Այս միջոցիս ամսպատամբութիւնն ու հրդեհը  
տակաւ առ տակաւ մօտակայ բոլոր թաղերը ծաւա-  
լեցաւ , և Աէրայը որ իր խիտ բերդերովն հրդեհէն  
պահպանուած էր , հուսկ ապա զինուք ամբոխին  
ու Եէնիչէրեաց յարձակմանը դիմադրել սկսաւ :  
Սուլթան Մահմուտ սէրային պարտիզին էն բարձր  
աշտարակին մէկուն վրայ ելսծ կը դիտէր այս ա-  
հազնագոռ խառնաշփոթ աղմուկը և կրակին ահաւոր  
ծաւալումը , որ արդէն մայրաքաղաքին մեծ մասը  
շրջապատած էր : Սուլթանին մօռ կեցած էր Գար:

առն - Փաշան , որ ապստամբութեան ծառալումն  
ինչ կերպով և ինչ միջոցաւ արգելովը կը բա-  
ցարէր : Հստ կարգադրութեան նորա հրացանա-  
ւորք զլացան իրենց հրացանները ժողովրդին , ու-  
ստի խումբը զօրանոցներու մէջ փակեալ՝ հանգիստ  
ժամանակ կանցնէր . որով անկարող կրուար արուար-  
ձաններու մէջ եղողներն քաղքին շաժ մանը մաս-  
նակցելու :

Կաւահանգիստը կեցող երկու եռակայմ նաւեր  
Եւնիշերեաց աղային տպարանիցը կըսսրառնացին .  
և սլիտի արգելուին աւելի բազմաթիւ ապստամբաց  
գումարտակներուն դէպի հան ժողովիլը : Գարտան-  
Փաշան առկէ զատ պաղատը մտոց 3000 զինուոր ,  
զորոնք Գատի-Փաշան Քաղկեդոնէն (Քատը քէօյ)  
բերած էր , նաև իր ջանրով պօտանձիններուն հետ  
էկած սէյմէններն ալ միացան զօրաց , որպէսզի  
արքային պալատին շրջապատ բերդը պաշտպանեն ,  
Գատի-Փաշան ներս մտածին սկս 3000 զինուորաց  
զլոխն անցած յարձակեցան ապստամբաց խում-  
բերն յետու մղելու , որոնք արդէն պօտանձիններուն  
ու սէյմէններուն վրայ յարձակած էին սրտլստին բեր-  
դին ներքեւ :

— Ի՞նչ նոր լուր կայ , հարցուց Մահմուտ ,  
Գատի-Փաշային դառնալով , որ հազիւ բանակովն  
հան հասեր էր : Պայրագուարը . . . :

— Իր ասլարանիցը տեղ աւերակաց կոյտեր  
ժիայն գտույ . սլստասխանեց տխուր կերպով Գա-

Թի-Փաշան :

— Մեռածու .

— Պարսպաներէն կը գուշակեմ . բայց Եէնիչէ-  
րեաց վրայ իւր անուան ազդած երկիւղէն օդուտ  
քաղելու համար հռչակեցի թէ Մեծ Վէզիրը կըծ-  
կեր փախէր է , և թէ քիչ մը վերջը իւր Սլուսնի-  
ական դօրսոց դրուխն անցած պիտի երևի .

— Բայց երբ հառկնան թէ խարուեր են , սրա-  
տասխանեց Մահմուտ , այն ժամանակ աւելի՛ սլիտի  
դայրանայ իրենց յանդզնութիւնը : Համարձակ ըսէ ,  
շարունակեց Սուլթան , կը կարծե՞ս որ մեզ մնա-  
ցած դօրութեամբը կրնանք զսպել ապստամբու-  
թիւնը :

— Մեր թշնամիներն այնչափ շատ են , պատսս-  
խանեց Գատի փաշան , որ հոս գալու համար գնդո-  
վը հաղիւ կրցի ըռնի անցնիլ անոնց բազմութեան  
մէջէն .

— Սակայն ասկէ ինչ կ'ելնէ կրկնեց Գարտան-  
Փաշան . Եթէ Զեր Վեհափառութիւնը ներէ որ իւր  
առջեւ մեռնինք , արիութիւնն անշուշտ սլիտի  
յաղթէ բազմութեան :

— Եւ ի՞նչ կուզեն , հարցուց Մահմատ՝ տիսուր  
նայուածք մը նետելով բոցածաւալ հրդեհին վրայ  
որ ահագին ճարճատմամբ կը յառաջանար :

— Զեր Վեհափառութիւնը , պատսախանեց  
Գատի-Փաշան , Սուլթան-Սէլիմայ դէմ անոնց  
ըրած յանցանքը կը յիշէ անտարակոյս :

— Այսինքն իմ գահընկէց ըլլալ կուղեն . Կը սկզբաննէն որ իմ գահուս վրայ ասլու Սուսաժանն ըազմեցնեն , որ խոր բարերարին արեամբը պըտծուած է : Լաւ . ուրիշ ի՞նչ կուղեն , սրաշտօնեայներուն և իմ խորհրդականացո գլուխները : Երկու Փաշաներն աղ անձայն գլուխնին խոնարհեցուցին .

— Վ կայ ըլլայ Ամենակարսղն Աստուած , ըստ Մահմատ , ձեռքը դէպի երկինք բարձրացընելով , կ'երդնում որ ոչ իմ և ոչ ձեր կեանքը տնոնց ձեռքը պիտի յանձնեմ : Այսային գաւիթն ելքը ինձ հետ , խլախուսենք մեր զօրաց արխութիւնը , և եթէ մեր զօրութիւնը նուազի . նենգամութիւնը ձեռք կոռնենք : Օ՞ն ուրեմն . . . նուազ ցաւի առարկացի վրայ աչքերու դարձնել փափաքնցոց : Այս հրդեհը սոսկալի է . ամեն վայրկեան հոգմըն անոր բոցերուն ուժգնութիւնը կը յաւելու , և իմ ժողովրդեանս ազիտոլորմ ճիշերը մինչեւ ականջս կը հասցունէ . Երանի թէ քիչ ժամանակէն այս շարիքը դադրեցուցած ըլլայինք :

Հետեւեալ օրն հրդեհը զրեթէ նոյն կատաղութեամբ կը յառաջանար . և այն մեծ բարձրին երրորդ մասը կրտի բոցերուն ներքեւ տնհետ եղու : Առլթանին Խարրի - Շերիֆը Եհնիչքիներուն Աղյին զրկուեցաւ . կրոյսը նոխու և առաջ ապատամբաց այս Պետին կը յանձներ հրդեհին շիջումը , որ գքաղաքը կը լոտիեր . և զանի մահու սկսուածով

ոլատասխանատու կ'ընէր հրդեհին շիջմանը մասին :

Աղան համբուրելով կայսերական ֆերմանը քանի մը վայրկեան պաշտոնին վրայ եղած յարձակումն ընդմիջեց, ու աճապարեց հրդեհը մարելու հրամաններ տալ ։

**Մինչդեռ սպառազին ժողովուրդն ու օրբաները սկսայի բերդերուն ներքեւ կը մարտնչեին. վախճանով միշտ որ չըլլայ թէ յանկարծ Պայրագտարն իր Աւունիացի գնդին գլուխն անցած երեխ, մէկ քանի Եհնիչերիք Մեծ Վէզիրի ճամբուն աւերակաց մէջէն գաղտնագողի Պայրագտարի վլած ապարանքը մը տան, յուսալով որ թանկագին կողոպուտ մը կը բռնան գտնել : Իրենց դոցոյններովն ասդ անդ գլունըւած տան կիսավառ գերանները տասղալելով բարացէն վորքիկ տշտարակի մ'առջև կանկ տին, որ հրդեհին ծախիչ բոցերէն աղաւ միացած էր, և որուն մուտքը երկաթէ դուռով մ'ամուր զոյուած :**

— Քիւրտ Եղուափ, ըստ անկողնակարն Հիւմէին իր ընկերոջը, ո՛վ զիտէ թերմու Մեծ Վէզիրը վախած տոեն իր գոնձերն հոս պահած ըլլայ :

— Հաւասարապես ովիտի բաժնենք դանոնք մեջ, ըստ մրգավաճառ Մուստափան :

— Ես ալ հաւատոր իրաւանք ունիմ ձեզ հետ, յաւելցոց անդին շաբարագործ Մէհմէտը. զի սպառաւոր է ինձ այն հաւատորացն մէկ քանի որ առաջ իր շախտներուն ձեռքով ոտքերուս տուած հարուստներուն հասացաւմը :

— Ուրեմն ևս ալ կրկին բաժնի իրաւունքն ունիմ , կրկնեց միւս կողմէն Մուսաաֆան , որովհետեւ ևս ալ ականջիս կէաը Եէնի-Ճամփի լոյնութրկին վրայ թողուցի :

— Ամենքնիս ալ հաւասար , եղբայրներս , հոգմի ընէք , հաւասար ըստ Քիւրտ Եռևսուֆ . բայց պէտք է որ աճապարենք , կրնայ ըլլալ որ հիմոյ ուրիշ բարեկամներ ալ դան և մեր բաժիններն նուազցունեն :

Եէնիչէրիք իրենց բոլոր ճիգերն ու ջանքերն իգործ դնելով անմիջապէս խորտակեցին երկաթիդուն և խմբովին ներս աշտարակը խոռոշեցին :

Ոսկի ու աղամանդ դիզուած էր հոն . և այս բազմահարուստ թանկագին դանձին քով երկու դիմկներ փռուեր էին , որոնցմէ մին Աւեծ Վէջիրինն էր , իսկ միւսը Զէրբէզուկի աղախնոյն , զոր Պայտագտարն իւր հետ այս ապաստանարանն առած էր , ուր կը յուսար մահուանէ ազատիլ :

Աւարոսուք տեսնելով անոր ահարկու դէմքը , որուն դիմաց գծաղրութիւնը կրակէն բնաւ այլայլած չէր , և նոյնպէս ահարկու և վայրի մնացած էր , մէկէն սարսափեցան , բայց վերջալէս անոնցմէ էն յանդուգը շարժեց գիւակն ոտքով , ու ըստ մօտենալով՝ — էհ , մեռեր է :

Առաջին անգամ անոր թանկագին զէնքերը վրայէն առին , յետոյ այն աղամանդներն և ուկիններն իրենց մէջ բաժնելով դուրս քաշեցին այն մարդուն

մեռած մարմինը՝ որուն կենդանութիւնն այնչափ  
դարձուրելի եղած էր իրենց։ Եւ ամենքն ալ երեսը  
թքնելով վատութեամբ կ'անարգէին ու կը հայհոյէ-  
ին զմեռեալն և դիակին դէմ կատաղի ցոյցեր կ'ը-  
նէին։

**Յետոյ Մեծ Վէզիրի դիակն խայտառակարար**  
ցիցն հանելով քաղաքին մէջ կը սպատցնէին՝ այսակէս  
քաջալերելով թէ զօրքերն և թէ ամրոխը։ Աէրայը  
ուսշարող ապօտամբները տեսնելով Պայրագուարի-  
դիակն ու ստուգելով որ իրենց այս ահարկու թշնա-  
մին այլ ես չը կար, աւելի քաջալերուեցան, ընդհա-  
կոռակը սկզբներն ու պօստանձիները սաստիկ տըխ-  
րութեամբ համակուեցան։ Այն ատենէն յարձա-  
կումն ալ աւելի՛ կը սաստկանար, և ընդ փոյթ  
Սուլթանը սրաշտպանողաց թիւը պակսիլ կը սկսէր։

**Գատի Փաշան ու Շովապետն վերջապէս վա-**  
**զեցին Մահմուտի ոտքն ընկան, իմացունելով որ**  
**քոլը յոյսերնին ի գերեւ ելան. և յարձակողը իրենց**  
**հրացաններով բերդը խորտակելու կը պատրաստ-**  
**ուին, որպէս զի Շահ-Զատէ Մուստաֆան սունեն**  
**և իր նախահարց գահուն վրայ թագաւորեցունեն։**

— Երեկու խոստացայ, սրատասխանեց Մահմուտ  
անխոռով, թէ ո՞չ իմ և ո՞չ ձեր կեանքն Եէնիչէ-  
րիներու ոլիտի մատնուի։ Հիմայ ես իմ խոստու-  
մըս կը կոռարեմ։

**Գատի Փաշա, հետդ առ ներքինիներն որք**  
**Մուստաֆա եղրօրս հրամանին համեմատ իւր Սուլ-**

թահ Անդիմ բարերարը խեղղամահ ըրին . և քանչ  
զի Աստուած սյնազէս կուղէ , թող արիւն հոսէ փո-  
խանուկ արեան :

Յետոյ ինքնակալը պօտանձիմերուն գլուխը  
կանչելով ըստ .

— Բոլոր այն սլաշտօնեայներո զորս ապստամ՝  
բութիւնն ի մահ դատապարտեց , թող նառը մտնեն  
որ ի ծայր սլալատին կը սալատէ , նա զոնոնք ի Ան-  
դիմիրի սկիտի հանէ , ուստի սկիտի անցնին Ռուսմա-  
դի գաւառը : Երբոր ոմնոնք մօտալուստ վտանգէն  
բոլորովին ազատին , այն ատեն բայցէր սէրային  
դոներն . թող դայ ժողովուրդն , թող դայ բանակն  
իր խոնարհ յարգանսց հաւաստին մատուցանելու  
կայսերական գահուս առջև :

Ապստամբաց հեղեղն սերային առաջին պրնէն  
անցածին սկէս , որ կայսեր բացարձակ հրամանաւը  
բացուած էր , յանկարծ կանչելով մեծաշուկ  
աղմուկներով յետո յետո ընկրկեցաւ : Արևնուա-  
քողի մը տակ ծածկեալ ու Ափրիկեցի սեւըու-  
խումբէ մը շրջասրատեալ Մուստաֆա Փ . անկեալ  
ինքնակալին անշունչ դիակը ներս մտնողաց աչքին  
ահարկու տեսիլ մը կընծայէր ,

Մահմատ միայնակ կենդանի սերունդ կայսերա-  
կան արեան , հրամայեց որ օճազի գլխաւորներն և  
իւղեմաններն դիմեն ոռ ոտս գահուն . որոց՝ սէյ-  
միններուն բարձումն և անցածներուն ներողութիւն  
խոստանովէն եւքը՝ իրենց կասկածելի հաւասար-

մութեանն համար երդում տառ . և ոյն բազմու-  
մարդ մայրաբաղաքն վերասոխն ստացու իւր նոխ-  
կին անգործութիւնն և Եկեղիչերեայ հասպանու-  
թիւնք :

## ՄԱՐԳԱՐԵԱՅ ՀՈՎԱՆՈՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴԼ

Այս միջոցիս Նէմիպ Ռումելի - Հիսարի ու Կ-  
Պօլսոյ մէջտեղ պառող տւարառու զօրաց խումբե-  
րէն արգիլուած՝ մեծ դժուարութեամբ հազիւ կրցաւ  
շարունակել իր ճամբան՝ ծածկելով իր անունը, որ  
կրնար օրդայի դատաւորէն իրեն դէմ վճռուած վը-  
րիժառու պատիժն ի յսցու ածել :

Բիւրաւոր վտանգներէ ազատելով վերջասկէս  
մինչև Մեծ Վէզիրին ճամբուն ծայրն հասաւ, և  
արդէն իւր սիրտն կը բարախէր Հէրմինիան իրեն  
յանձնուելու և այնուհետև և ոչ մէկ արդեկք զի-  
րենք իրարմէ բաժնել չը կարենալու գւաղափարովն :

Բայց ո՞ր աստիճան հասաւ իւր սարսափն եւ յու-  
սահատութիւնը, երբ յառաջանալով՝ իւր առջև ան-  
թափանցելի պատուարի մը նման շարուած տեսաւ  
ասրստամբաց խումբերն որոնք զիրդեհն ա'լ աւելի  
կարծարծէին և ամենուրեք մահ կը սիրէին. քանի  
թշուառներ անոնց կազմուած ահռելի շրջանակին  
մէջ կը փակուէին. ինքն իսկ այն մոլեզին և կատա-  
ղի մարդոց ոտքերուն ներքև կոխկոտուելով՝ անոնց  
ունայն ջանիցը դոհ ըլլալու վտանգին մէջ կը գըտ-  
նուէր : Բայց Պայրագուարի ապարանքին յանկարծ

փլիլն աւարասուաց բազմութիւնը մէկ կողմ քաշուելու ստիպեց :

Երիտասարդն իւր շուարմունքն օթափելով անապարեց անցաւ այն ամայոթենէն, զոր քիչ յառաջ բազմութիւնը գրաւած էր, և յառաջ զընաց գեռ միսացող աւերակաց մէջէն՝ առ ոտն կոխելով այն կիղանող աճիւններով ու հրածախ բեկորներով լցուն ուղիներն որոնք պահ մ'առաջ չէն էին սուներով ու մարդկանց բազմութեամբ. կը հարցնէր ցաւադին նայուածքով մը այն հրաջինջ աւերակաց՝ թէ արդեօք իրեն համար բաղդն ինչ ճակատագիր սահմանած է : Մինչև իրիկուն հոն ժամանակ անցուց դիտելով այն ջնջումն, և բնաւ տեղեկութիւն մը չը կրցաւ առնուլ . վերջապէս երբ արելը մարը մը տաւ ալ ուրիշ առաջնորդ շունեցաւ իրեն՝ բայց եթէ հրդեհին հրաշէկ բոցերը . և գետինը նստելով սկսաւ տղու նման արտասուել :

**Ա.** Խայութեան այս տիսրալից տեսարանին վրայ կը թափառէր իրեն սիէս ծերունի մ'ալ լալով և կոծելով իւր աճիւնացած տան և ապստամբներէ ջարդուած ընտանեացն համար : Երիտասարդն անոր մօտենալով տեղեկացաւ անկէ թէ հրդեհին ոկիղբներն երիտասարդուհի կին մը տաճկական հանդերձներով հադուած ու ու աղախին մ'ետեր ձլդած **Ամի-Օսմանայ** տունէն դուրս ելած էր : **Այս** երկու կիներն՝ յաւելցուց ծերունին, կերեսար թէ աճապարելով ուղղակի դէպի ի նաւահանգիստը կեր-

թոյին : Այս խոհեմ շարժումը Օսմանցւոց մէջ սովորական չըլլալով՝ (որովհետեւ կրօնական նախապաշտմունքները կտոխալեն դիրենք մնալու վտանգին մէջ . մինչդեռ կրնան անկէ վրկուիլ .) երիտասարդին հոգւոյն մէջ կասկածներ յարուց :

Անմիջապէս նաւահանգիատը վազեց ու նաւալը մոնելով թիտվարաց քսակ մը նետեց :

— Եֆէնտի , ո՞ւր պիտի երթանք , հալցուցին նաւավարք թիակնին սրատքսատելով .

Այս ալարդ հարցումը դարձեալ զԱէճիպ չըտարման մէջ ձգեց , այլ յանկարծ ըստ .

— Ի Պէօյիւդ - Տէրէ .

Թէթեաշարժ և բարսկ նաւակն անմիջապէս շարժիլ սկսաւ տեղի տալով թիտվարաց զօրութեանը , քանի մը վայրկենէն ետքը Թօփհանէի ծայրէն անցնելով դէպ ի Վասիոր ուղղուեցաւ :

Գիշեր էր երբ նաւորդը Պէօյիւդ - Տէրէի տփունքն ելաւ : Եւրոպական ծովեղը շրջապատող լեռներէն վեր դէպ ի Կ . Պօլոյ կողմը հորիզոնին վրայ կարմիր ժամանէնի նման ծիր մը կը տեսնուէր :

Վէճիպ յու ու երկիւզի որտմաշուքով հալոծմաշմած Տիկին Պէնֆէլտին սրահը մոածին ոլէս , կին մը իւր դրկացը մէջ ընկաւ , այս կինն Հէրմինիան էր : Այնչափ տառապագին դժուարութիւններէն ու վերահաս վտանգներէն վերջը Բարձրեալըն համեցաւ զանոնք դարձեալ միացնել . և ի-

բենց համար ասիկայ վշտաց վերջին փորձը կերեւքը ,

Պարոնուհին ալ կը մանակցէր իւր որդւոյն բերկրանացը , և իւր զրկին վրայ օեզմելով կը փայփայէր իւր երկու սիրավիր դլուխներն , զորս իւր որտին մէջ այլեւս սնբաժան ուներ իրարմէ : Այս առաջին սրատղին ողջագուրանքին յետոյ Հէմինիան խօսքը Տիկին Պէնֆէրոի ուղղելով՝

— Հիմա , տիկին ըստ , պէտք է որ մեր փրրկութեան վրայ մտածենք : Երեքնիս ալ փախչինք այս օտարատեաց երկրէն , որ այնչափ աղեկառը յիշատակներ կըզարթուցանէ մեր մէջ :

— Անշուշտ այս ապստամբութիւնը , պատասխանեց Պարոնուհին , սոսկալի դաւազրութիւններ սիստի պատճառէ : Եէնիչերիք նոր զոհ մը շրմնար ռած՝ փախչինք :

— Փախչինք , ըստ Նէմիտ , մինչդեռ Սէլմայ սովորիչներն զուցէ Մահմուտի կենաց կըսպառնան : Բայց ո՞չ , ո՞չ , սլարաքս է որ կենամ : Այս դժբանով վայրն արդարեւ երջանիկ տարիներ սիստի տեսնէ տակաւին : Եւ ասկէ զատ , չըսիրինձ թէ հայր մ'ունիմ , որուն օդնել ու վրէժը լուծել կը սլարախիմ :

— Որդեւակ իմ , բնդմիջեց Պարոնուհին , ալ այսուհետեւ քեզ ըսն մը շրմնար դինքն ողբավէնի իշղատ :

— Մեռաք .

— Այո՛, մեռաւ և զո՞հ եղաւ այն արիւնուուշտ  
վայրագներուն՝ որք ընտանիքս ու դժբաղդ Ասոլե՛  
տըն ի միասին խողխողեցին :

Եէնիչէրինե՛րը, մօմնջեց Նէճիալ, Ե՞րբ, Ե՞րբ  
ալիտի գայ վերջառիս այն վրէժխնդրութեան օրն՝  
յորում հատուցանեմ արիւն ընդ արեան : Հոյ-  
րըս . . . . ո՛հ, Տիկին . շարունակեց Նէճիալ Պա-  
րոնուհեոյն առջև ծնրադրելով, որովհետեւ երկինք  
դլուցան ինձ վերջին համբոյրներս անոր նուիրելու  
սփոփանքը, կաղաչեմ . քեզ որ գոնէ անունն  
ինձ իմացնէք, որ օրհնեմ զայն :

— Ոչ, գերեզմանն անգամ կարող չէ լու-  
ծել իմ երդումս, պատասխանեց Պարոնուհին :

Սակայն սոյն մահն զբեզ աղատ կը թողու, կը րկ-  
նեց Պարոնուհին՝ գորովալից նայուածք մը նե-  
տելով Հերմինեայի վրայ, և զբեզ տէր կընէ քու  
ապադայդ ուզածիդ պէս տրամադրելու :

— Դեռ քանի մ'օր, պատասխանեց Նէճիալ,  
սպասուենք այս վերջին ապստամբութեան վախճանն  
ու արդիւնքը իմանալու . Եթէ հայրենիք ու թա-  
գաւորա մեր բազկին օգնութեանը չը կարօտին, այն  
ատեն կը փախչինք :

Եէնիչէրիներու յաղթանակն եւ նոր կարգադ-  
րութեանց խափանման ու հին զեղծմանց վերա-  
հաստատելուն նկատմաբ Սուլթան Մահմուտի  
ակամայ զիջումը զամենքն յուսահատեցուցին :

Պայրագտարի բարեկամաց և Մահմուտի խոր-

Հրդականաց փախուստն յայտ յանդիման կը ցուցնէ  
թէ կուսակցութեան դաւադրանաց դէմ հակառա-  
կելու բոլոր փորձերն այսուհետև անօգուտ ու վր-  
տանգաւոր պիտի ըլլան : Ավերջապէս Նէմիակ յու-  
սահատելով վճռեց որ ինք աւ Ռուսնուգ փախչի-  
Գատի Փաշայի , Պայրագտարի արբանեկաց և  
Գտարտան Փաշայի նման , որ Գըրըմի կողմերէն սե-  
րած ըլլալով եկաւ նոյն գաւառին կառավարչին  
քով ապաստանարան խնդրելու . և Ռուսիոյ կայս-  
րէն բարեսիրական ընդունելութիւն գտաւ :

Պէնֆէլտ Պարոնուհին դատախոյս երիտասար-  
դին վրայ բոլորովին անտեղեակ կեղծելով ինքզին-  
քը՝ խիստ հաւատարմութեամբ գաղտնի պահեց ա-  
մէն անոր վերաբերեալներն , այնպէս որ իւր թշնա-  
միներն ապստամբութեան ժամանակ մեռած կամ  
անկեալ կառավարութեան նախարարաց հետ փա-  
խած կարծեցին , հետեարար Բերայի մէջ եղող  
ծանօթներուն խմացուց իւր մօտակաց ըստանումը ,  
ինչպէս նաև օրիորդ Քիննատօքի ի Մալթա երթա-  
լըն ասպետին ժառանգութիւնն առնելու համար :  
Նաւահանգիստն հասած Անդղիսկան նաևն իւր  
բեռներն ամբողջ առած էր յիշեալ կղզին երթալու  
համար : Նաւապետին հետ խօսք դրին որ գիշերէն  
առաջ ճամբաց չելնէ , և թէ արևը մարը մաներէն  
ժամ մը վերջն անծանօթ նաւորդ մը ալիտի ըն-  
դունի : Նէմիակ իւր Եւրոպական դգեստները պիտի  
հագներ դժուարանաշելի վերարկուով մը ծած-

կուած , և արեգական վերջին ճառագայթներն մարտօնին պէս իւր մօր նաւակը մտնելով Պէօյիւղ-Տէրէէն դէսլ ի նաւը սլխոի երթար : Այս պէս իրենց նաւարկութեանը յաջողութեանն համար հարկաւոր ու զգուշաւոր բոլոր միջոցներն ի դործ դնելով անհամբեր յաջողակ հովի մը կ'սպասէին : Վերջապէս Անգղիացի նաւաստի մը դոլով խմացուց իրենց որ նոյն իրիկունք սլխոի նաւեն , երկու կիմներն ալ սլատրաստուեցան նաւն երթալու :

**Պարոնուհին** իւր զաւկէն բաժնուելուն համար մեծ սարսափի ու մոտասնջութեան մէջ էր . ոյլ մայրական սէրն իրեն ոյժ տուա , որով կրցաւ ծածկել իւր սրտին վրդովը թեթև ժպիսներու տակ . Հէրմինիան իւր տարփածուին գիրկը նետուեցաւ , խել այս սրտակտուր բաժանման առեն չը կրնովով իւր սրտին սաստիկ յուղմունքները զսպել , թողոց որ տչրերէն արտասաւց հեղեղներ հափն . առանց ծածկել կրնալու այն կալծագին նախալդացութիւնը , որոնք զինքը կը խռովիին :

— Ասուու՞ծ իմ , դոչեց , արդեօք բնդ միշտ կը բաժնուիմք :

— Բարձրեալը , սլատասխանեց Կէմիալ , ոյնչտի անդութ սլխոի շըլլոյ մեղ համար որ զմեղ իրարմէ բաժնէ . քանի որ ինքն հաճեցաւ զմեղ միայնելու ոյնպիսի տաեն մ'երբ մարդկան հալածմունքն այն չտի մեծ ու խխատ էր մեղ դէմ : Հէրմինիա , միշտ

Հատիր, անտարակոյս եղիք որ առուազանաց վախ-  
ճանին կը մօտենանք . քիչ մ'ետքն աքսորանքն ա-  
մէն վտանգներու դէմ զիտ սլիտի ասկահովի և սլի-  
տի ներէ որ յաւիտեան իմ բախսա քուկինիդ հետ  
միացնեմ :

— Բաժնուելու ժամանակն է, ըստ Տ. Պէն-  
ֆէլտ, իրիկունն Աստուծով զարձեալ դիրար կը-  
տեսնենք : Զգուշութիւն զաւակտ . իրիկունք :

— Իրիկուն, պատասխանեց Երխուասարդն վեց-  
ջին ցաւագին նայուածք մարձակելով Երկու կանանց  
սրայ . վերջապէս անհամբերութեամք տղատուած  
մեկնելու վայրկեանն հասու : Արեգակը Երկնից  
վրոյ իւր ճառաւգայթներուն վերջին նշոյլները ձը-  
գելով Ասից ծիւնարատ լերանց Ետե հակելուն  
ոլիս, Երկու յոյն թիուփսրմերն որոնք խորհրդաւոր  
նուորդն Անգղիտիան նաւք սլիտի բերէին, հասան  
դիւղին ծայրը գտնուած մէկ փոքրիկ և ամոյի ծոյ-  
մը, ուր իրենց նաւակն ի ցամաք համած էին :

— Գէորգ, կըսէ նաւավարներուն մէկն իր բն-  
կերին, որոշելու ժամանակն եկած է : Երկու հա-  
րիւր ոլոյներն կառնես քեզի համաք կամ ոյս  
զումարը ես կառնեմ, և դարձեալ դործը տեղը  
կերթոյ :

— Ար վսիսնամ մեղքէն, պատասխանեց Երկ-  
ուրդ թիուփարը :

— Հիմա ալ մեղք չ'ըկայ :

— Քոյց վաղը խոստվանելու սլիտի Երթամ .

և Եթէ միայն մեղքս այն ըլլար վնաս չունէր .

Անհաւատն իր նմաններուն մատնելու աններելի մեղք մը չէ . մանաւանդ երբ ասոր համար կանխիսիլ չորս հարիւր դահեկան առնես :

— Գուցէ իրաւունք ունիս , պատասխանեց Գէ-որդ՝ Գլուխը քերելով . տո՛ւր գուն հիմա երկու հարիւրը , ճամբան խղճմտանքիս հետ կը խօսիմ :

— Խիստ լաւ . բայց լուսթիւն , որովհետեւ աւազին վրայ ոտքի ճայն կը լսեմ . գուցէ մեր ճանապարհորդն է որ այդ կողմէն կուգայ :

— Ի քթթել ական նաւակն ի ծով իջուցին . Կէճիսպ Վոսրորի ուժգին հոսանքին վրայէն կը առհէր : Աստեղաց բեկրեկ լուսովը տեսաւ իւր առջեւ այն հռչակաւոր նեղուցին երկու եզերաց դիմիչ տեսարանը , ուր Եւրոպան և Ասիան իրար խառնուած կերեան , և շուտ մը դառնալով դէպ յայն ծովածոցին՝ որ զուկի քաղաքն (Խակիւտար) Աէրայի բերդերէն կանջատէ , քիչ ատենէն Անդզ . նաւուն սպիտակ առագաստները նշմարեց , և լսեցնաւուն խարիսխը քաշով շղթային շառաջիւնը :

Թիակները ներդաշնակաւոր ելեէջով կը ճեղքէին ծովուն կապոյտ մակերեւոյթը , և նաւակն յոյն թիւավարաց քաղցր երդերովը սահելով վերջապէս մօտենցաւ նաւուն , որուն վրայ Կէճիսլ ճերմակ թաշկինաւիլի մը ծածանումը կը տեսնէր զոր կերևէր թէ կին մ'էր ծածանողն ի նշան իրեն . բնաւ շը կառեւածեցաւ որ այս նշանն ընողը նոյն ինքն Հերմինիանէր . և Կէճիսպ

Հերմինիայի յայտնած անձկազին վիտիաքանաց իւր շնորհակալիքն յայտնելու նպատակաւ նաւավարներուն եռանդը կը գրղոէր :

Բայց ասոնք քանի մը վայրկենէն յանկարծթիերնին թողուցին :

Ծովուն հանդարտ ալեաց վրայէն ուրիշ նաւակ մը խաղաղ ու համբ ընթացքով սահելով եկաւ մօտեցաւ Նէճիսլի նաւակին . և ահա Նէճիսլ սարսափահար իւր առջին տեսաւ Գարուճի-Պաշին , սյսինքն սէրային դահճապետը .

Ոյս մարդը գլխէն մինչեւ ոտքը կարմիր հաղած էր . իւր աներկիւղ ու գժնէ հայեաց աչքերն անմիտագրելի սարսափ կ'ապդէին նոյն խակ գիշեր տուեն իրեն հետ ուղեկցող դահիճներուն : Նախ Նէճիսլի արտախուրակն ու վերարկուն մերկացուց , և յետոյ ձեռքերն անոր ուսին վրայ դնելով , հրամայեց որ իր նաւակն անցնի : Գմբաղդն անտրտունչ հնազանդեցաւ հրամանին . և տեսնելով որ մատնուած է , արհամարհոա նայուածք մը նետեց թիավարաց վրայ , որոնք անմիջապէս հեռացան : Պահճապետին ու ձերբակալ եղող երիտասարդին նաւակն արագութեամբ անցաւ նաւարկելու վրայ եղող նաւուն քովին , և Վէրայի ծովեղերեայ դըռներէն մէկուն առջեւ ցամաք հանեց իւր նաւորդները : Կարմիր մարդը Վէրայի սկարտէղներուն մէջէն քիչ մը յառաջանալով մտուց զՆէճիսլ հովանոցի մը մէջ , ուր պարտաւորէր երկրորդ հրամանի մ'ուրասէլ :

— Ո՞ւր եմ, հարցուց Կէճիպ ,  
— Սարդարտեայ հովանոցին մէջ , պատասխանեցին :

— Ո՞վ հրամայեց իմ բանտարկութիւնս .  
— Առլթանը .

— Եատ ժամանակ սլիտի սպասեմ մահուան .  
— Մեծ է հետաքրքրութիւնդ , պատասխանեց ներքինսապետը . քսան տարիէ ի վեր կայսերական վճիռներն ի գործ կը դնեմ , գույշէ և ոչ մէկը քեզ նման այսպիսի յանդզնութիւն մը ցցուց իմ առջեւս , թէև քուկինէդ աւելիթանկաղին դլուխներ ունէին , եւ դուն ալ անշուշտ չես պահանջեր գլխուդ համար արծաթեայ 53 րդ ախտէին բարձր պատիւը :

Կէճիպ չը պատասխանեց , և Գարուճի-պաշին արհամարհու կերպով մը հովանոցին դուրս ելաւ : Երբ բանտարկեալն առանձին մնաց , տիրութեամբ համակուեցաւ , վասնզի միտքը կը բերէր այն բարիքներն որոնցմէ սլիտի զրկուէր : միտքը կը բերէր այն կծու կսկծանքը զոր իւր ետեւ սլիտի թողուր :

— Այո , անշուշտ եմ կըտէր , որ Առլթան Մահմուտ այսպիսի հրաման մը տուած չէ . ինչու որ կըսեն . այլ նորա անունով կուղեն իրենց որսը կեանքէ զրաւել :

Ես՝ Պայրագտարի ամէն արբանեակներէն անբախտու շը կրցի օդուտ քաղել այն վեհանձն սլաշտ սլանութենէն՝ որով կայսրը իւր հաւատարիմներուն փախստութը ապահովցուց՝ դեռ Եէնիչէրիներուն

Հլու զերի չեղած : Իմ արխւնս թող իրեն յանցանք չը համարուի :

Մինչդեռ այս գառն մտածմանց մէջ ընկղմած կը խօսէր , և միտքը կը բերէր Հէրմինիսյի և իր մօրն արտառքներն ու հառաջանքներն՝ երբ իր դժբաղ զութիւնն խմանային . հովանոցին սանդուղն ի վեր ոտքի ձայն մը լսուեցաւ :

— Ա՛հ , ըստ վեհանձնութեամբ մը , ահա ժամանակն հասած է . և ոտքի ելաւ իւր դահիճները դիմաւորելու :

Դրան վարագոյրը բայուեցաւ , Սուլթան Վահմաւա երեցաւ , քմծիծաղով մը յառաջացաւ գէպ յերիտասարդն՝ որ այս անակնկալ սլատահման վրայ ափ ի բերան եղած յերկիր անկաւ և իւր հոգւոյն մէջ յոյսը վերստին ծնունդ առաւ :

— Կէմի՞ալ , ըստ Փատիշահը , այդ միտքդ դրած վախուսառն ինձ խմացուցին և ուղեցի մեկնելէդ առաջ զբեղ տեսնել : Աղէկ դիտցիր որ ոչ հաւատարիմ ծառայութիւն կը մոռնամ և ոչ նախատինք . և որ մ'իմ արդարութիւնս խրաքանչիւրին հատուցումը ալիտի ընէ :


Աղնիւ և կտրի՞մ երիտասարդ , Աստուած իւր արքայութեան զրունքը բացաւ այն բարերարին՝ զոր երկուքնիս ալ հաւատարապէս կ'ողբանք , և որ իւր իշխանութեան վերածնութեան վատքն ու նեցուկն ի քեզ կը գուշակէր , բայց իմ սլաշտանութիւնս կընայ իրենին տեղը բռնել , և ուր որ երթաս քեզ հետա-


մուտ պիտի ըլլայ այն : Գնա՛ ուրեմն , որովհետեւ  
բռնաւորք ինէ զլուխտ կը խնդրեն . բայց մի մոռնար  
հայրենիքդ ու թաղաւորդ , երկուքն ալ վիշտ կը  
կրեն , և զուցէ տակաւին շատ ալ կրեն , բայց ոյն  
ժամն աւելի սոսկալի՛ պիտի ըլլայ :

Այն առեն քեզ և քեզ նման բոլոր հաւատարիմ  
պաշտօնեայներուս պիտի կարօտիմ : Գնա՛ , յա-  
ւելցոց Մահմուտ՝ թանկագին սուր մը տալով Նե-  
միակի ձեռքը . այն արիւնը որ երակացդ մէջ շրր-  
ջան կընէ , առաւել նուիրական սրարոք մը կը յա-  
ւելու քու վրադ , Առ այս, զոր իբր ժառանգութիւն  
հայրդ քեզ թողոց , զաւակդ Վելիմոց , ոչաղիք  
եղիր ու հօրդ վրէժը լուծէ :

Մահմուտ դուրս ելաւ մարդարտեայ հովտնոցին  
այս խօսքերն արտասանելով . և Նեմիակ սարսուելով  
իւր սրտին յուղմունքէն՝ շանթահարեալ մնաց : Համ-  
բուրեց այն նուիրական զէնըն որուն վրայ կը յե-  
նուր իր ասրագայն :

Գարուճի-Պաշին մարդարտեայ հովտնոցը մտաւ  
բանտարկեալէն աւելի շուարած . որովհետեւ  
մինչդեռ կը սլատրաստէր խեղդն անոր վիզն անցը  
նելու , ընդհակառակն հրաման ընդունեց տոաջնորդել  
դՆեմիակ այն նաւը , որով ոլիտի մեկնէր : Անգղիա-  
կան նստն իր առագաստներն արդէն սլարդած էր  
և միանդամայն իւր սանդղիկն իջուցած էր որ նս-  
տորդը վեր առնել , և յաջողակ հողմերու շնորհիւ  
Քիչ մ'ետքն աներեւյթ եղաւ :





«Ազգային գրադարան



NL0243387

